8.21
87
90
1073

№ 197

Александровская гор.
№ 1662
Библиотека-читальня

А. Александров. городская
Цѣна кн. 1 р. — к., пер. 10 к.
БИБЛІОТЕКА-ЧИТАЛЬНЯ

208.2
Բ-8
№ 1662

ԲՈՍԻԷ

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ՅԱՒԵՏԱՐԱՆՆ

Բ

ԲՈՍԻԻԷ

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ՅԱՒԵՏԱՐԱՆ

ԿԱՄ

ՅԵՏԻՆ ՇԱԲԱԹ ՅԻՍՈՒՍԻ

ՄԱՍՆ Բ.

ԸՆԹՐԻՒ ՅԻՍՈՒՍԻ

31945
Александропольская гор. библиотека-читальня № 1662
Гос. Публ. Библиотека ССРА им. А. Масникяна Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ
1890

30665-58.2

2001

13558.58

ԱԶԳ

Գերահռչակ հեղինակ մատենկանս՝ քաջ ծանօթ է մերոց բանասիրաց եւ հայերէն թարգմանութեամբ ընտիր ընտիր գրուածոցն, որպիսիք՝ Դամբանականքն, Ներբողեանք եւ Խօսք ի Վէպս ազգաց. քան զորս յաւէտահրաշ եւ պիտանի ամենայն քրիստոսասիրաց վկայեալ են Մրոժ-Ռիւ-Ն+ նորին ՅԱ-ԵԿՈԲԱՆՆ, եւ յատկապէս՝ ի գործս եւ ի բանս ՑԵՊԻՆ ՀԱԲԱՆՈ- տնօրէնութեանց Փրկչին. — այսինքն, ի վերջին մտիցն ՅԵՐՈՒՍԱՂԷՄ՝ ց'ելան ի վերնատանէն, եւ անտի ի մուտս կեդրոնեան ձորոյն ի ԳԵԹՍԵՄԱՆԻ. — ոչ այնքան բարձրագոյն իմաստիւքն, որովք Աստուծի վերասլացիկ դատեցաւ անհամեմատն այն յեկեղեցական գրիչս նորոց դարուց, որքան խորագոյն խաղացիւքն՝ յամենախոնարհն յամենազանչն եւ յամենատենչիկ խորանն խորհրդոց եւ կրից մարդասիրին եւ մարդակեցոյցն Յիսուսի, յաստուածայրական Սիրոն. յորմէ, եթէ չիցէ ժպրհութիւն

ասել, զերազոյնք քան որ յառաջն երբեք՝ բղխեցին բանք՝ ի վերջնումն երեկոյի կենսաբեր կենացն, որպէս եւ գործք անդրադոյնք՝ զերածայրեալ ցածութեամբ լուացման ոտից աշակերտաց, եւ զերածայրեալ ամբարձմամբ մարդկութեանս ի Խորհուրդ Հաղորդութեան։ Բանք եւ գործք՝ յորս սլանայ եւ խոյանայ արծուիս մեր՝ զհետ աւանդողի նոցին առաջնոյ աղաւնեգոյն արծուի, բունելոյ ի լանջս վարդապետին իւրոյ եւ սիրողին Յիսուսի. — Բանք եւ գործք՝ յորս ամենայն քրիստոնեայ միաք՝ եթէ հզօրք եւ եթէ տկարք՝ հրաշաստին ի դարս դարուց, մինչեւ ի միւս անգամ գալուստ Կենարարին։— Բանք եւ գործք անզուգականք, յորս՝ եթէ օրքան սքանչացեալ ներակրթէր մտահարուստն Բոսիւէ, եւ տակաւին անհաս կամ անյագ մնացեալ զանձն վարկանէր, զայն՝ սխրացուցիչ իմն օրինակաւ յայտնեաց ինքնին յիւրումն կենաց կատարածի, մինչ յանկանգնելի մահիճս անդ անկեալ գնէր, աւելի քան վաթսուն անգամ՝ տալով ընթեռնուլ զկտակն զայն Քրիստոսի, զոր վաղ ուրեմն մեկնաբանեալ էր. եւ ունկն գնէր որպէս նորալուր ինչ երկնաւոր աւետեաց։ Շատ լիցի այս ի ծանօթութիւն ցոգւոյ հեղինակին եւ արժէից խորհրդածութեանցս նորին. որք՝ եթէ թողուն ինչ պակաս յոգիս հոգեսէր ընթերցողաց, այն է՝

զի ոչ յառաջ եւս խաղացոյց նովին ոճով զբաղխաւորել ի գիր՝ եւ զանցս անցս կրից եւ բանից Փրկչին՝ ի վերջնումս պահու ահեղագին գիշերոյն եւ ի կարճատեալ վաղուի մեծի ուրբաթուն։

Իցիւ թէ չթողոյր միւս եւս պակաս՝ թարգմանութիւնս այս նուազեալ ի շնորհաց բնագրին. զոր՝ բազում անգամ ընթերցեալ եւ յառաւել զբօսանս հոգւոյ յեղեալ ի հայրենի բարբառ, յայժմս՝ ի շշուկ Յոբելէնի յիսնեակ ամաց քահանայութեանս (նախաշաւիղ անեղրականին), ժամիմ յանարգամեծար սիրոյ Հարց իմոց եւ Եղբարց հոգեկցաց, յոր այնքան ամս վայելեցի եւ վայելեմ՝ առաւել քան զիմ արժանն, ընդունել ի յիշատակ փոխադարձիկ հաճութեան, զայս՝ ըստ պատեհի եւ ըստ փութոյ ժամուս՝ մասն թարգմանութեան գրոցս, զՄտածութիւնքն ի Խորհուրդն Հաղորդութեան կամ ԸՆԹԵՒ+ ՅԻՍՈՒՍ. — այլում թողեալ ժամանակի՝ եթէ լցեն նոցա կամք եւ դիւր՝ տալ ի տպագրութիւն եւ զԱռաջին Մասն՝ զոր անուանեմ ԵՐՈՒՍՂԷՄ, քանզի ճառէ զմտից Փրկչին անդր եւ ի Բեթանիա, մինչեւ յԸնթրիսն. եւ զվերջինն, որ է ՅԻՍ ԸՆԹԵՑՍՆ՝ է ՎԵՐՆԱՊԱՆՆ եւ ՀՆԱՆԱՊԵՐՀԱՅՆ որ ի ՁԻԹԵՆԻԱՆ անդր. — Աղերսելով զմի մի ի պատուական Եղբարցս վիճակակրցաց եւ զճայնակիցս նոցին բարեմաղթուս

ինձ եւ Զուգից իմոց օծելոց, ոչ միայն հաճութեամբ ընդունել զփոքրս ի փոքուէս, այլ եւ կրկնակի հաճութեամբ յիշել՝ յաւէտ յօրըստօրեայ պաշտաման սրբազանի եւ ահեղ խորհրդոյ Պատարագին, — յոր այնքան երկար բանիւ խորհրդածէ հեղինակս, առ ի հաստատութիւն հաւատոց իսկական լինելութեան Մարմնոյ եւ Արեան Քրիստոսի, ի հերքումն բարբանջանաց նորոց աղանդաւոր թերահաւատից, եւ ի յաւելումն հաւատոյ եւ մանաւանդ սիրոյ հաւատացելոցս եւ կատարողաց խորհրդոյս. որ՝ որպէս իմ անարժանիս՝ եւ ամենայն աստիճանակցաց՝ գերագոյն եւ զգուշագոյն գործառնութիւն է ի վերայ երկրի. եւ վասն որոյ՝ առանձինն համար եւ հաշիւ մի է քահանայի ի քահանայապետէն Քրիստոսէ. — եւ եւս առաւել յիշել՝ յետ հարկաւորապէս եւ վաղ քան թէ անագան հրաժարմանս ի ներկայիցդ, եւ ամփոփելոյ առ նախընթացս՝ Միւս զոյգ օծակիցս եւ առ այլսն համօրէն. ընդ որոց երկոցուն դասուց մէջ (կենդանեաց եւ հանգուցելոց), հաւատարիմ վկայ յուսոյ եւ սիրոյ արձանացի, հայցեմ, սուրբերիկս սուղամասնեայ:

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ Մ. Մ.

ԸՆԹՐԻՔ

ՓՐԿԶԻՆ ՅԻՍՈՒՍԻ

Ա. Վերնատունն պատրաստեալ: — Մտթ. ԻԶ. 17–9: Մարկ. ԺԴ. 12–17: Ղուկ. ԻԲ. 7–13:

«Յառաջնումաւուրբաղարջակերացն, (յետ որոյ օրէն էր զենուլ զգառն պասեքին), մատեան աշակերտքն առ Յիսուս». և զի գիտէին զնա յամենայնի հրամանակատար օրինացն, «ասեն. Ո՞ւր կամիս՝ զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն»: Աշակերտքն են որք զայդ ասեն: Արժան է տերանց, ըստ օրինակին Յիսուսի, հրահանգել զամենեսին՝ զորս ի սպասու իւրեանց ունէին, ինքնին զմտաւ ածել զոր միանգամ օրէնքն Աստուծոյ և պաշտօն նորին պահանջեն, և առնուլ վասն այնոցիկ հրամանս ի տերանց:

«Եւ նա ասէ ցնոսա. Երթայք ի քաղաքն՝ առ այս անուն»: Զասեն աւետարանիչք զանուն

առն. և ինքն իսկ Յիսուս առանց անուանելոյ զնա՝ տայ աշակերտացն նշանակս հաւաստիս ճանաչելոյ. «Երթայք, ասէ, ի քաղաքն. և երբեմն մտանիցէք, պատահեսցէ ձեզ այր մի՝ բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նորա ի տունն յոր մտանիցէ. և ասասջիք ցտանուտէր տանն. Ո՞ւր են վանքն իմ՝ յորում զպասէքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ: Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, և անդ պատրաստեսջիք» [1]: Աւետարանիչն Մարկոս ծանուցանէ մեզ՝ զի երկուց յաշակերտացն պատուիրեաց զայս. Ղուկաս յանուանէ իսկ՝ զՊետրոս և զՅովհաննէս:

Մեծի ինչ երեք աւադիկ հանդերձանք էն. մեծագունի քան զպասէքն օրինական, քանզի զերկոսին գլխաւորս աշակերտացն առաքէ. զՊետրոս՝ զոր ի գլուխ ամենեցուն կարգեաց, և զՅովհաննէս՝ զոր առանձինն իմն մտերմութեամբ պատուասիրէր: Զասէն աւետարանիչք եթէ զայս օրինակ առնէր և յայլ նուագս պասեքին, և ոչ եթէ ընտրէր այսպիսի տեղի վերնատան զարդարելոյ: Վասն այսորիկ ցուցին մեզ Հարք սուրբք, եթէ այդ հանդերձանք վասն խորհրդոյ Գոհութեանն էին: Կամեցաւ Յիսուս ազդ առնել մեզ, եթէ քանի՞ խնամով անկ եցէ զարդարել զվայրս նուիրեալս ի մատուցումն Խորհրդեանս: Յայս դէպս ևեթ թուի Յիսուսի չկամել երևել աղքատ: Յօրինակէ ասի ուսան քրիստոնեայք ի սկզբանէ հետէ զզարդարանս, զորս տեսանեմք ի սակս շքով կատարելոյ զխորհուրդն Գոհութեան, ըստ բաւականի իւրաքանչիւր եկեղեցեաց: Այլ որ կարևոր ևս է նոցա ի գիտել՝ այս է, պատրաստել զանձինս առ բարւոք ընդունելութիւն նմին. այսինքն է, պատրաստել որպէս զվերնատունն մեծ՝ զսիրտ ընդարձակեալ սիրով աստուածայնով, բաւական յընդունելութիւն մեծամեծաց, ամենայն զարդու չնորհաց և ուղղութեանց, զորս օրինակէին զարդարանք վերնատանն այնորիկ: Զամենայն պատրաստեսցուք Յիսուսի՝ որ գայն առ մեզ. ամենայն ինչ արժանի ընդունելոյ եղիցի: Նշանակ ջրկիր առն՝ զոր տայ Յիսուս՝ ունէր ծանուցանել աշակերտացն եթէ և հասարակագոյնք ինչ գործք՝ յաստուածային տեսչութենէն ուղղին:

Զինչ սովորական և յաճախաւոր՝ քան զհան դիպել առն որ երթիցէ զջրոյ՝ յաղբիւր ուրեք, արտաքոյ քաղաքին. կամ զինչ կամայական, զի չասացից թէ և ըստ հաճոյս խելաց, առն՝ տանել զսափորն 'ի տունն, ի նմին իսկ ի պահու յորում աշակերտքն մտանելոցն էին ի քաղաքն: Եւ սակայն գաղտնիք իմաստութեանն Աստուծոյ այդպէս տնտեսէին զայդ. և այլքն ևս ի գործոց նմանեաց նոյնպէս են, և առ այլ ինչ վախճան վարեալք յԱստուծոյ, որպէս զի՝ եթէ և յաճախ հանդիպեսցին դէպք նշանաւորք պատահմամբք՝ զորս մեք ըստ բաղդի կոչեմք, հարկ է հաւատալ եթէ Աստուծոյ կարգեալ է զամենայն, նաև զդոյզն ինչ շարժուածս մեր, բայց առանց ինչ սադրելոյ աղատութեան մերոյ,

այլ զամենայն շարժմունս ուղղելով առ գաղտնի խորհուրդս իւր։ — Յայտ առնէ մեզ օրինակս այս, եթէ էին Յիսուսի ծածուկ աշակերտք՝ զորս ոչ գիտէին առաքեալքն, բայց յորժամ ի պահանջել առթից ինչ ծանուցանէրն նոցա։ Այսպէս և ի կամէն մտանել յԵրուսաղէմ, առաքեաց դարձեալ զերկուս յաշակերտացն ի գեօղ մի՝ զոր նշանակեաց, և պատուիրեաց ածել էշ մի՝ զոր դտանելոց էին յաւանական հանդերձ, աներկեայս առնելով զնոսին, զի յասելն եթէ տեառն իւրում պիտոյ է՝ Թողցեն զնոսին[1]։ Ունել ունէր ուրեմն աշակերտս այսպիսս և ի քաղաքի և ի գեօղս, զորոց գիտէր զհաւատարմութիւն և զհլութիւն. և սակայն ոչ յայտնէր զնոսա առաքելոցն՝ բայց ի լինել հարկին. ուստի ցանելով նոցա այսու զգուշութիւն՝ որով արժան էր նոցա ինամել դյանձնեալսն ինքեանց, նաև առ չածել նոցա տաղտուկ վայրապար, կամ ատելիս առնել զնոսա յանօգուտս։ Այս զգուշութիւն էր՝ որով լուծին աշակերտքն յաւետարանս իւրեանց և ընդերկար ևս ժամանակս յետ մահուան Փրկչին, զանուն առնն զորոյ ընտրեաց արդ զտուն, որպէս և զայնորիկ՝ յորմէ ետ ինդրել զէշն և զյաւանակն։ Ոչ նոյնպէս և այլուր թաքուցանէին զանուանսն. զի ոչ միայն ծանուցին թէ որ օգնեացն նմա ի բառնալ զխաչն՝ կոչէր Սիմոն Կիւրենացի. այլ մանր ևս հանդամանօք՝ եթէ էր հայր Աղեքսանդրի և

1 Մատթ. ԻԱ. 2։ — 2 Մարկ. ԺԱ. 2։

Ռուփայ[1], ծանօթ հաւատացելոց։ Զամենայն ինչ ի գէպ է վասն պատճառի իրիք գործել. արժան է զոմանս յանուանէ կոչել՝ առ ի քաջ յայտնել զիրացն հանգամանս, և են՝ զորոց խոհական զգուշութեամբ թաքուցանել։

Պետրոս և Յովհաննէս գոին զիրսն որպէս ասացն Յիսուս։ Այրն ջրկիր գտաւ ի տեղւոջ՝ ուստի մտանէին ի քաղաքն, երթալ ի տունն՝ զոր ընտրեալն էր Յիսուս. որպէս գտաւ յաւանակն ի նշանակելումն տեղւոջ ի մուտս գեղջրն, կացեալառ դրան ի կիցս երկուց ճանապարհաց։ Եւ ոմն յանծանօթից անտի մարդկան որ անդն կային՝ ասէ ցնոսա. Զի՞ գործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ[2]։ Թուէր թէ ըստ պատահման խօսեցի. այլ ոչ այդպէս. քանզի նոյն ինքն էր որ տալոց էր թոյլ տանել զանասունն՝ ի լսելն զառաջին բանս առաքելոցն, ըստ բանի վարդապետին իւրեանց։ Դարձեալ, դէպ եղև զի չէր ուրուք երբեք նստեալ ի վերայ յաւանակին. զի այդպէս պահանջէր լրումն խորհրդեանն, և ցուցանել՝ զի յաւուր միում նստելոց էր Փրկիչն և վարելոց զժողովուրդ տրմուզ, այսինքն է զՀեթանոսս, որք մինչև յիւր ժամանակս՝ ոչ գիտէին օրէնս, և չէր ուրուք բաւական լեալ ի նուաճել զնոսին։ Ամենայն ինչ ուղղեալ վարի, մանունքն որպէս և մեծամեծք, և ամենայն ինչ պատշաճի մեծամեծ խորհրդոց Աստուծոյ, (որպէս շրջանակ՝

1 Մարկ. ԺԵ. 21։ — 2 Մարկ. ԺԱ. 4։

պատկերի)։ — Աւագիկ հանդերձեալ է ամենայն։ Վերնատունն մեծ զարդարեալ է. և ակն ունին գալստեան Փրկչին։ Ակն կալցուք և մեք մեծամեծ տեսարանացն՝ զոր դայ ցուցանել հաւատացելոց իւրոց։ Նկատեսցուք, հաւատասցուք, օգտեսցուք. բացցուք զսիրտս՝ առաւել քան եթէ զաչս։

Բ. Պասքն։ — Կեանք քրիստոնեի անցք ևեթ են։

Ընթերցցուք զբանս աւետարանչին Յովհաննու (ԺԳ.)։ «Յառաջագոյն քան զտօնն զատկի՝ գիտաց Յիսուս եթէ հասեալ է ժամ նորա զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր. սիրեաց զիւրան որ յաշխարհի աստ են. խսպառ սիրեաց զնոսա»։ Գիտեմք զի պասեք (կամ զատկի) անցք նշանակեն։ Մի 'ի պատճառաց անուանս, զոր գիտէ և աւետարանիչս ասասանօր, այս է, զի տօն պասեքին հաստատեցաւ՝ յորժամ հանդերձեալն էր Ժողովրդն հին եկանել յԵգիպտոսէ և անցանել յերկիրն խոստացեալ հարց իւրոց. և էր այն օրինակ անցից նորոյ Ժողովրդեան՝ յերկրէ յերկնաւորն հայրենիս։ Բովանդակ կեանք քրիստոնէի հաստատեալ կայ ի բարւոք կատարումն անցիցս. առ այս՝ Փրկիչն մեր առաւել քան այլ երբեք՝ ուղղէ զգնացս իւր, որպէս Թուի և աւետարանչին Յովհաննու ակնարկել մեզ։

Առաջին գործ նկատելի մեզ՝ այս է, զի կայ մեզ առնել զպասեքս զայս, զանցս զայս ընդ Քրիստոսի։ Վասն այսորիկ սկիզբն առնէ աւետարանիչն՝ պատմութեան պասեքի Տեառն մերոյ՝ բանիւքս այսոքիւք. «Յառաջագոյն քան զտօնն զատկի՝ գիտաց Յիսուս եթէ փոխելոց է առ Հայր»։ Ո՛վ Յիսուս, մատչիմ առ քեզ, առնել զզատիկ իմ ընդ քեզ. փափագեմ անցանել ընդ քեզ՝ յաշխարհէ աստի առ Հայր, զոր կամեցարդ լինել եւ իմ հայր։ Աշխարհս անցանէ[1], ասէ առաքեալն քո. անցանէ պատկեր աշխարհիս այսորիկ. այլ ես ոչ կամիմ անցանել ընդ աշխարհիս. իմ կամք են անցանել առ Հայր քո։ Զայս ճանապարհ կայ ինձ առնել. եւ կամիմ առնել ընդ քեզ։

Ի զատկին հնուամ՝ անկ էր Հրէից հանդերձելոց եկանել յԵգիպտոսէ եւ մտանել յերկիրն աւետեաց, զգենուլ հանդերձ ուղևորի, ցուպ ի ձեռին, գօտի ընդ մէջս՝ առ ի հանգրիճել զհանդերձսն, կօշիկք յոտս՝ պատրաստ ի գնալ եւ ի ճանալ։ Եւ պարտ էր նոցա փութով ուտել զզատիկն, զի մի ինչ լեցի նոցա խափան, եւ կաղվք եցեն ի խաղալ մեկնիլ յամենայն ժամու։ Այս օրինակ է պայմանի՝ յորում անկ է կալ քրիստոնէի առ առնելոյ զզատիկ իւր ընդ Քրիստոսի, եւ անցանել ընդ նմին առ Հայր։ — Ո՛վ Փրկիչ իմ, ընկալ զանցորդ քո. պատրաստ կամ. չունիմ ինչ խափան. կամիմ

1 Ա. Յովհ. Բ. 17։ — Նկ. ԺԲ. 11։

ջուրը անցանել յաշխարհէ աստի ընդ քեզ՝ առ Հայր քո։

Ուստի է ինձ արտմուրթիւնս այս՝ ընդ անցան։ Եւ զի՞նչ. միթէ տակաւին յարեաւ լցեմ ընդ կեանս։ Որպիսի՛ մոլորութիւն արգելու զիս ի տեղւոջս պանդխտութեան։ Ահա դու յանցանել կաս, Փրկիչ իմ։ յօժար գոլով և իմ անցանել ընդ քեզ, մինչ աղդ ինձ առնեն՝ եթէ աւադիկ հասեալ է ժամ անցանելոյ, խռովի անձն իմ։ ոչ հանգուրժեմ լսել եւ տանել այդմ բանի։ Ուղեւոր վատասիրտ. զի՞ զանգիտես։ Անցք՝ զոր ունիս անցանել, նոյն անցք են զոր Փրկիչն առնէ ըստ աւետարանիս այսմիկ, եւ խեթայցես անցանել ընդ նմա։ Աղէ լուր. «Գիտաց Յիսուս՝ եթէ հասեալ է ժամ նորա, զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր»։ Զի՞նչ երբ լցեն յաշխարհի աստ այնքան սիրելիք, զոր թէ ոչ կամիցես թողուլ ընդ Փրկչին Յիսուսի. միթէ թողո՞ւր նա՝ եթէ բարւոք ինչ էր կալ ճանն աստէն։ Այլ՝ աղէ, լուր միւգամ եւս, ո՛վ քրիստոնեայ։ Անցանէ Յիսուս յաշխարհէ աստի՝ երթալ առ Հայր իւր։ Եթէ ելանել միայն կայր յաշխարհէ աստի՝ առանց առ լաւագոյն ինչ երթալոյ, թէպէտ եւ ինչին ինն է աշխարհս այս, եւ ոչ մեծ ինչ կորուստ կորուսանելն զնա, մարթ էր արդեաւք տակաւին տրտմել, զի չկայր լաւագունի խիւք հանդիպելոյ ակնկալութիւն։ Այլ ոչ այդպէս լցեն անցք քո, ո՛վ քրիստոնեայ։ Անցանէ Յիսուս յաշխարհէ աստի, այլ առ երթալ առ Հայր իւր։

Քրիստոնեայդ, որ անցանելոցդ ես ընդ նմին, առ Հայր անցանես. տեղի՝ ջուստի ելանեսդ՝ աքսորանաց է վայր. ի հայրենին դառնաս տուն։

Օ՜ն, արդ ուրախութեամբ անցցուք յաշխարհէ աստի. այլ մի մնասցուք յետնումս պահու՝ առ սկիզբն առնելոյ անցից։ Յելանելն Իսրայելացւոց յԵգիպտոսէ՝ ոչ առժամայն մտանելոց էին յերկիրն աւետեաց. քառասուն ամ կայր նոցա ճանապարհ առնել ընդ անապատն. եւ սակայն կատարէին զզատիկ իւրեանց, քանզի ելանէին յԵգիպտոսէ, եւ սկիզբն առնէին ճանապարհի իւրեանց։ — Ուստի՞ զզատիկ մեր՝ յառաջնմէ անտի քայլափոխէ։ Հանապազորդ լցին անցքս մեր. մի առցուք զկայ երբէք։ Մի բնակեսցուք ուրեք, այլ բանակեսցուք ամենայն ուրեք հանդոյն Իսրայելի. մեզ՝ ամենայն վայր՝ անապատ լցէ, որպէս եւ նոցայն. նման նոցին կացցուք հանապազ ի վրանս. յայլում վայրի է տունս մեր։ Խաղաստցուք գնասցուք. անցցուք ընդ Յիսուսի և մեռցուք աշխարհի. մեռցուք նմին զոր ամենայն. ասասցուք գոգցուք ընդ Առաքելոյն[1]. Մեռանիմ զօրհնապաղ. չեմ յաշխարհէ. անցանեմ. չարկանեմ բուռն եւ ոչ զմիոյ խմբէ։

1 Ա. Կորնթ. ԺԵ. 31։

Գ. Լուսացուցչի ոտիցն։ — Զօրութիւն Յիսուսի. Խոնարհութիւն նորա. — Յովհ. ԺԳ. 1–5։

«Սիրեաց զիւրան որ յաշխարհի ասա էին, սիրեաց իսպառ»։ Ի պահու ասա անցիցն՝ յորում Թողլոց էր զնոսա, սիրեաց զնոսա առաւել քան յամենայն ժամանակի, և ետ նոցա յայտնագոյն նշանակս սիրոյ իւրոյ։ Զմխիթարութիւն կամէր Թողուլ նոցա՝ ի հրաժարելն ի նոցանէ։ Արդարև գորովական էն ամենայն բանքն զոր խօսի ընդ նոսա. լի է սիրով ամենայն՝ զոր գործէ. և վկայ այսմ՝ հաղորդութիւնն՝ զոր հանդերձի տալ նոցա։ Այլ տես ինձ, ուստի սկսանի. «Եւ ի լինել ընթրեացն, սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ՝ զի մատնեսցէ զնա Յուդա Սիմոնի Իսկարիովտացւոյ։ Գիտաց Յիսուս զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա. և թէ յԱստուծոյ էլ և առ Հայր երթայ։ Յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհանդերձսն. և առեալ զենջակ մի սփածաւ. և ապա առեալ ջուր՝ արկ ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն. և սրբէր զենջակաւն զոր սփածեալ էր»։ — Այս աւուրս մեր եցէ ընթերցուած. քանի՞ գէղեցիկ, քանի՞ զմայլական։ Փրկիչ իմ, ընուս զիս մխիթարութեամբք ընթերցուածով աւետարանիդ. զոր և բացեց մասն, ամենայն ուրեք սփոփանս գտանեմ, ամենայն ուրեք բանս կենաց յաւիտենականաց. ոչ գիտեմ թէ եցէ՞ իմ երբեք ընթերցեալ բանս

փարելիս որպէս յայսմ տեղւոջ։ Յաւէլ ինձ, Փրկիչ իմ, զուրախութիւն, ի սուրբ ընթերցուածիս յայսմիկ, որպէս զի հրճուանք ողջախոհք որովք ընուս զիս, բարձցեն յինէն զհեշտութիւն ամենայն աշխարհական զբօսանաց։ Այլ առ այս՝ ի դէպ է կշռել զմի մի ի բանիցն։

«Յետ ընթրեացն»։ Ընդ հուպ պատմեսցէ Յովհաննէս զայլ ընթրիս, յորում անկաւ զլանջքն Յիսուսի. յորում՝ Թացեալ Յիսուսի զպատառն ետ Յուդայի։ Ահաւադիկ այլ ընթրիք։ Երկուքն ընթրիքքն, որոց վերջին յետ լուացման ոտիցն. և յերկրորդումն ասա հաստատեաց զխորհուրդն Գոհութեան. ընթրիք՝ ըստ հրահանգաց օրինի, որ Թերեւս կանխէր քան զընթրիս գառնին։ Զէ՞ ինձ փոյթ մանրախոյզ լինել երացս. ես զանձն իմ չինել կամիմ. շատ է ինձ գիտել՝ զի ընթրիքքն՝ յորում հաղորդութիւնն հաստատեցաւ՝ առանձինն իմն ընթրիք էին, լի խորհրդեամբ, որպէս տեսցուք ի մօտոյ։ Արդ առաջին ընթրիքն լեցին ի ընուլ զհարկ պիտոյից։

Աւադիկ Յիսուս յառնէ, և ելանէ ի բազմականէն. և առ ի պատրաստել զնոսա առ խորհրդականն սեղան՝ զոր հանդերձէր նոցա, լուանայ զոտս նոցին։ «Գիտաց Յիսուս՝ զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա, և թէ յԱստուծոյ էլ և առ Աստուած երթայ»։ Դադարեսցուք առ վայր մի. աւետարանիչն Յովհաննէս ամենեւիմբ վարակեալ է խորհուրդս մեծութեանց և զօրութեանն Քրիստոսի. կամի և զմեզ նովին խմաստիւք ըմբռնել, որպէս զի

քաջանշմար ևս լիցի պատկեր խոնարհութեան և սիրոյ նորին, զոր կայ նմա յանդիման առնել մեզ։ Դադարեսցուք ուրեմն առ վայր մի և վայելեսցուք զճաշակն առաջին այնր բանի. «Հայր՝ եմ ի ձեռս նորա զամենայն». որպէս և ինքնին ասաց. «Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմէ»[1]. և այլուր. «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն ի յերկինս և ի յերկրի»[2]։ Եւ թէպէտ ի ընէ իսկ անկ էր նմա իշխանութիւն, քանզի Աստուած էր ի սկզբանէ, միւսն Աստուած բնակեալ և անբաժանելի Աստուծոյ, ինքն Բանն Աստուած, որով արար Աստուած զամենայն յոչընչէ. այսու յեղանակաւ՝ չէր մարթ ունել Հօր արարած՝ որ չիցէ արարեալ յՈրդւոյն և որ ոչ պարտիցի նմա զնոյն պատիւ. ըստ այնմ բանի, եթէ «Ամենայն որ ինչ իմ է՝ քո է, և որ ինչ քո է՝ այն իմ է». այլ սակայն իշխանութիւնս այս դայր առ նա ի Հօրէ իւրմէ, որ ետն նմա զայն՝ յաւիտենական ծնընդեամբն. և ի ժամանակի ջարչարանացն՝ տայր զնոյն առանձինն իմն օրինակաւ. քանզի ջարչարանօքն ունէր ստանալ զամենայն, և զոր ի ընէն և իրաւամբք ծննդեան ունէր՝ զնոյն և իբրև գնած և ստացուած ունել։ Եւ այն՝ որում այսպիսի գերահրաշ օրինակաւ տուեալ է ամենայն, նոյն ինքն դայ ի լուանալ զոտս մեր։ Ցայս աւասիկ կամէր Յովհաննէս յանդել զբանն։ — Խոնարհեսցուք արդ և մեք մերովանն։

1 Մատթ. ԺԱ. 27։ — 2 Նոյն. ԻԸ. 18։

Ո՛վ Յիսուս, հնազանդիմ քումդ տէրութեան. առ այն՝ զոր ունիս յիմ վերայ որպէս արարիչ, առ այն՝ զոր ունիս որպէս Փրկիչ։ Դու ես տէր իմ գերագոյն, իմ միակ և քաղցրալուր տէր. «Դու ես որդի Աստուծոյ, դու ես թագաւորն Իսրայէլի»։ Եւ զո՞ր հնազանդութիւն ոչ պարտիցիմ քեզ, որ քո իսկ եմ այնքան յեղանակաւ, և այսպիսեաւ վաւերական, անփոփոխելի, փարելի և աստուածազան յեղանակաւ։

Դ. Ամենայն տուեալ ի ձեռս Քրիստոսի, և մանաւանդ ընտրեալքն։

Զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա։ Ամենայնս այս որ տուաւ ի ձեռս նորա՝ ի Հօրէ իւրմէ, յաւէտ այն Ամենայնն է զորմէ ասացն. «Զամենայն զոր տայ ինձ Հայր՝ առ իս եկեսցէ[1]»։ Ամենայնս այս՝ Եկեղեցի նորա է. և առանձինն՝ յեկեղեցւոջ իւրում՝ Սուրբքն. և ի սուրբս՝ այնոքիկ՝ որ մինչև խսպառ այնպէս իցեն. համանդամայն ասել՝ Ընտրեալքն։ Ահա երջանիկն Ամենայն՝ զոր Հայր ետ յատկապէս՝ ի ձեռս Յիսուսի, զորմէ և ասացն ինքնին. «Քո էին և ինձ ետուր զնոսա»։ Եւ սուղ ինչ յառաջ. «Ետուր իշխանութիւն ի վերայ ամենայն մարմնոյ, (ամենայն մարդկան). զի ամենայնի զոր

1 Մատթ. ԺԱ. 27։

եռուր նմա՝ տայցէ զկեանս յաւիտենականս[1]»։
Ի վերայ ածցուք. Եւ այն՝ որում էր Հայր
ի ձեռս զամենայն զոր առաւելն սիրէր, այս-
ինքն զընտրեալսն, զհաճելիսն, նա ինքն է որ
ահա գայ լուանալ զոտս մեր։— Փրկիչ իմ, ցա՞յդ
վայր խոնարհիցիս։ Պարտ և արժան է ինձ խո-
նարհել առաջի քո։ Իցէ՞ թէ եղէց և ես, ո՛վ
Փրկիչ իմ, յԱմենայնէ անտի՝ զոր էր Հայր ի
ձեռս քո, որպէս զի տացես նմա կեանս յաւի-
տենականս։ Եւ եղէց՝ եթէ կացից հաւատա-
րիմ շնորհաց քոց, և զպատուիրանս քո պահե-
ցից։ Տո՛ւր ինձ զոր պատուիրեսդ, որպէս զի
եղէց ի հօտին անտի օրհնելոյ, զորմէ ասացերդ.
«Ոչխարք իմ՝ ձայնի իմում լսեն, և ես ճանա-
չեմ զնոսա, և զկնի իմ գան, և ես տամ նոցա
զկեանսն յաւիտենականս։ Հայրն իմ որ էր
ինձ զնոսա՝ մեծ է քան զամենայն, և ոչ ոք կա-
րէ յափշտակել ի ձեռաց իմոց, որպէս և ոչ ի
ձեռաց Հօր իմոյ. զի ես և Հայր իմ մի եմք*[2]»։
Եւ ուստի՞ բնաւ երկիւղ յայսմհետէ։ Եւ ոչ
ուստեք, բաց ի վրիպելոյ յուիտե կոչմանն։
Կայ մնայ միայն ապաստանել ի ձեռսն ամե-
նակարողս, և ասել ցՅիսուս. Ո՛վ տէր, յու-
սամ ի քեզ. ի ձեռս քո աւանդեմ զանձն իմ.
մի ամաչեցից յաւիտեան[3]։

1 Յովհ. ԺԷ. 6։— 2 Յովհ. Ժ. 27։— 3 Սղմ. Լ։

Ե. Քրիստոս Աստուած ձրնարիտ և մարդ
ձրնարիտ։— Յովհ. ԺԳ. 3։

Դարձեալ վերծանելով՝ զկայ առցուք ի վե-
րայ բանիցս. «Գիտաց Յիսուս զի զամենայն
ինչ էտ Հայր ի ձեռս նորա. և թէ յԱստուծոյ
եկ և առ Հայր երթայ»։ Եկեալ յԱստուծոյ՝
առանց այլայլութեան, առանց յաջորդու-
թեան, առանց հոլովման ժամանակի, անձա-
ռելի մաքրութեամբ, որպէս ճառագայթ՝ արձա-
կի յարեգականէ անբաժանօրէն, և հանապազ
կրելով յինքեան զզօրութիւն սկզբնականին.
վասն այնորիկ կոչէ զնա առաքեալն Պօղոս «Լոյս
փառաց և նկարագիր էութեան Հօր*[1]»։ Բայց
սակայն եկեալ, այլ ոչ տարածութեամբ, որ-
պէս ճառագայթն՝ որ ընդարձակութիւն է
լուսոյն և բացագոյն արտաքս ծաւալումն.
այլ եկեալ յԱստուծոյ որպէս խորհուրդ՝ զի
եկանէ ի մտաց, և կայ ցանկ ի նմին։ Եկեալ ի
նմանէ. ապա ուրեմն՝ որպէս ինչ մի կենդանի,
մանաւանդ թէ կեանք գլխովին. վասն որոյ
ասաց Յովհաննէս, «Նովաւ կեանք էր». այս-
ինքն՝ զի էր (կեանքն) ի նմա՝ որպէս ի Հայրն,
և էր ի նմա՝ որպէս յաղբեր. որպէս և ինքնին
բերանով իւրով ասաց. «Որպէս ունի Հայր
կեանս յանձին իւրում, նոյնպէս էտ և Որդւոյ
ունել կեանս յանձին իւրում*[2]»։ Եկ նա ուրեմն

1 Եբր. Ա. 3։— 2 Յովհ. Ե. 26։

ի Հօրէ՝ այսու օրինակաւ. կենդանի ի կենդանուց, կեանք ի կենաց։ — Եկեալ կատարեալ գիտութեամբ անձինն՝ զոր ի սկզբանէն ունի, որպէս խորհուրդ մտաց նորա, իմացումն նորա, իմաստութիւն նորա, որպէս ներքին բան նորա, որով ասէ ինքն ցինքն՝ զամենայն որ է. որպէս բացատրութիւն կենդանի և բնական՝ կատարելութեանց իւրոց և ամենայնի որ էն. որպէս յինքեան բերող զամենայն գեղեցկութիւն նորա. որպէս կենդանի և կատարեալ պատկեր նորա և նկարագիր էութեան նորին։ Ապա, եկեալ՝ որպէս միւս ևս ինքն, որպէս որդի իւր, ի նմին յիւրոյին բնութենէն. Աստուած՝ որպէս նայն, այլ Աստուած՝ մի ընդ նմին, նոյն մի Աստուած։ Քանզի ոչ եթէ եկանէ հեղմամբ ինչ մասին էութեանն, այլ յամենայն էութենէն անտի եկանէ, քանզի անհատ և անբաժանելի է էութիւն նորա. որպէս զի և էութիւնն, և կեանքն և աստուածութիւն նորա՝ ամենայնիւ բոլորովին հաղորդեալ է նմա, և հասարակ է նմա ընդ Հօրն, որում՝ չինայ ինչ առանձինն և յատուկ՝ բայց միայն լինելն Հայր. որպէս աղբեր չինայ՝ բայց լինելն աղբիւր, այլն ամենայն, որպէս կարդ է բանիս ասել, անցանէ ի վասն։ — Ահագին որքան հնար է մարդկան թոթովել, ահագին զինչ եղէ եկանելն յԱստուծոյ. այսքիւք վարին բանիւք գիրք սուրբք, յօժանդակութիւն աղբատիմաց մտաց մերոց, առ ի գեր ի վերոյ զայն բարձրացուցանել։ Զայս ամենայն ասեն մեզ համառօտիւ հաւատքն նիկիականք,

յասելն. Որդին Աստուծոյ ծնեալ ի Հօրէ և եղեալ յէութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ. հակիր Հօր իւրոյ, և Աստուած մի ընդ նմին. քանզի տէր Աստուած մեր Աստուած մի է. և ամենայն որ Աստուած է և Աստուած ճշմարիտ՝ հարկ է թէ մի միայն իցէ. զի միութիւնն ինքնին գոյութիւն և էութիւն աստուածութեանն է։ — Այլ ընդէր իցէ մեզ այսոր յայսպիսիս վերանալ թափառել խորհուրդս. բայց զի ընդ Յովհաննու Ջերմն եւ հաստատուն հաւատով նկատեսցուք զքեզ, Փրկիչ իմ, որ Աստուած գոլով եւ հաւասար Աստուծոյ, և մի Աստուած ընդ Հօր՝ յորմէ եղեալ և յաւերժաբար կաս ի ծոցի նորին, հաճեցար զիջանել մինչեւ 'ի լուանալ զոտս մեր, զայս օրինակ խոնարհելով առաջի արարածոյ քո, որպէս զի ուսուցես մեզ խոնարհել ոչ միայն առաջի քո, այլ և եղբարց քոց, հաւասարիցն մերոց մարդկան՝ նմանեաց մեզ, ստորնագունիցն քան զմեզ, եթէ արժան իցէ ընդաբոյս նուաստութեանս մերոյ՝ համարել զոք ստորագաս։

Զ. Յիսուս Քրիստոս Աստուած յԱստուծոյ եղեալ յԱստուծոյ։

Մթա դիր նմին ընթերցողաց նմին։

«ՅԱստուծոյ եղ». ՅԱստուծոյ եղեր. Փրկիչ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՍՀՄ — СССР
им. А. Масиянова

իմ. Եղեալ նախ ի յաւիտենից, ըստ Միքիայ (Ե. 1). «Եւ քո նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի». կատարեալպէս համագոյակից Աստուծոյ՝ յորմէ ելերդ. ապա թէ ոչ՝ էր քեզ մարթ լինել Ճառագայթ արեգականդ այդորիկ, ոչ լոյս փառաց նորա, եւ ոչ կնիք էութեան նորին. քանզի էութիւն նորա է մշանջենաւորութիւնն. ոչ միաք նորա լինէիր, ոչ որդի նորա. Որդի կատարեալ՝ Հօր կատարելոյ, յաւերժ կատարելոյն առ յառաջ ածելոյ, ի ծնանելոյ, որպէս եւ է դոլ։ Ելեր ապա ի յաւիտենից, յառաջ քան զամենայն ժամանակս. այլ ելեր յԱստուծոյ եւ ի ժամանակի, յորժամ Հայրն որ ծնաւն զքեզ եւ որ կրէն զքեզ հանապազ ի ծոցի, միաւորեցոյց ընդ անձին քում հաւասարակցի եւ մշանջենաւորակցի իւրոյ, ի ծոց ամենօրհնեալ երջանիկ Կուսին, զբնութիւնս մարդկային բովանդակ. այսինքն զհոգի՝ միացեալ ընդ մարդկային մարմնոյ. որպէս զի որ Աստուածն էր կատարեալ՝ եղիցի եւ մարդ կատարեալ. Որդի Աստուծոյ եւ Որդի Մարիամու. մի որդի, մի Աստուած։ Այսու օրինակաւ, ո՛վ Յիսուս, ելեր դու ի Հօրէ քումէ յաւիտենականէ, քանզի չէք քո այլ Հայր բայց ի նմանէ. եւ մայրն յորմէ ծնար՝ կոյս մնաց, քանզի գալստեամբ Հոգւոյն Սրբոյ ի նա՝ յղացաւ, եւ հովանաւորութեամբ զօրութեան Բարձրելոյն ի վերայ նորա։ Այսպէս սեաւ յղացեալ քո մաքրական և աստուածայնով օրինակաւ, նոյնօրինակ իմն է և այն՝ յորմէ ծնար. քանզի յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ՝ ծնար ի միշտ

կուսէն Մարիամայ. և այդպէս ելեր երևեալ մարդկան, որպէս ինքդ իսկ ասացեր. «Ելի ի Հօրէ և եկի յաշխարհ[1]». ոչ որպէս թէ ուր չէիրն՝ անդր եկիր. այլ երևեցար՝ ուր ոչն երևէիր. եւ աւադիկ ելումն քո 'ի ժամանակի. մարդ լինելով մահացու՝ երևեցար ի միջի մահկանացուաց։

Այսպէս եկիր դու յաշխարհ՝ մարդկային բնութեամբ, այլ միալով միանգամայն որպէս Աստուած՝ ի ծոց Հօր քո. որպէս ասէր կարապետն քո Յովհաննէս. «Զ Աստուած ոչ ոք է. տես. այլ Միածինն որ է ի ծոց Հօր՝ նա պատմեաց մեզ[2]», զբանչէլիսն նա ծանոյց մեզ. և որպէս դու ինքն ասացեր, «Ոչ ոք էլ յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից Որդին մարդոյ՝ որ էն յերկինս[3]». յորմէ իջերն, և եկ ի նմին։ Որպէս Աստուած՝ կաս միաս ի յերկինս, ի տեղւոջ փառաց Հօր քո, և ոչ կարես երբէք թողուլ զայն. այլ որպէս մարդ մահկանացու՝ թողեր զփառսն՝ որ իսկակիցն էր քեզ, և երևեցար մեզ նուաստացեալ. և եղեր մարդ, և բնակեցար ի միջի մերում, «Եւ տեսաք զփառս քո իբրև զփառս Միածնի Հօր, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ[4]»։—Իսկ զիա՞րդ ասաց Յովհաննէս, եթէ եսես զփառս քո. մի՞ վասն այնորիկ զի եսես զքեզ յարուցեալ և համբարձեալ յերկինս, կամ զի եսեսն այլակերպեալ զքեզ ի

1 Յովհ. ԺԳ. 28։—2 Յովհ. Ա. 18։—3 Յովհ. Գ. 13։—4 Յովհ. Ա. 14։

Թաբոր լերին։ Զայդ ամենայն ունէր նա ի մտի. այլ ասէ յայտնապէս տեսեալ զքեզ ի փառս քում, յորժամ ետեսն զքեզ «ի շնորհօք եւ ճշմարտութեամբ». ի շնորհօք սքանչելեաց, բժշկելով զամենայն ախտս մարմնոց. ի շնորհօք՝ որ սրբէն զմեզ. քանզի ասէին ցքեզ առաքեալքն քո. Ո՛վ տէր, յաւէլ մեզ հաւատս. եւ վշտացեալն այն աղաղակէր յամենայն սրտէ. «Հաւատամ, տէր, օգնեա անհաւատութեանս իմում»։ Այսպէս ետես զքեզ Յովհաննէս՝ ի շնորհօք. վասն այնորիկ և ետես զքեզ՝ ի ճշմարտութեամբ. քանզի քարոզութեամբ քով ծանուցանէիր մարդկան զճշմարտութիւն, և ընդմամբ շնորհացդ՝ հաստատէիր զայն ի սիրտս նոցին, լուսաւորելով զնոսին համանդամայն ի ներքուստ և արտաքուստ։ Տեսաք ուրեմն ի մեք զփառս քո, նաև յանարգութիւնս քո, քանզի տեսաք 'ի նոսին զճշմարտութիւնս քո և զշնորհս՝ որով ի էիր. և զի ոչ վասն քո միայնոյ՝ այլ և վասն մեր. քանզի մեք ամենեքին ընկալաք ի լիութենէ քումէ, և շնորհս փոխանակ շնորհաց, որպէս ասէր կարապետն քո Յովհաննէս։

Եւ արդ, տեսանեմք զփառս քո՝ ի ցաւս քո. և եթէ ոչ բոլորովին տեսանեմք, եթէ ի տեսանելն մեր հաւատոյ աչօք զքեզ Միածին Որդի Աստուծոյ, ընդ նմին և մարմնաւոր աչօք տեսանեմք զքեզ որպէս զյետին ի մարդկանէ, որպէս այր ցաւոց, վարակեալ վիրօք, որպէս որդն և ոչ մարդ, պատճառք այդոցիկ են ծածկելն քո կամաւորութեամբ զփառս քո. արդե-

լուն զաղգեցութիւն զօրութեան նորին. զի ոչ եթէ հարկաւորապէս ի՛ի նուաստութիւն, այլ վասն սիրոյ և դթութեան։ Եւ սակայն այսպիսի ունելով փառս՝ որով լցեալ էիր, և որով ելեալ եկիր յԱստուծոյ, դա՞ս դու ի լուանալ զոտս մեր։ Եթէ լցեն և իմ փառք, կամիմ կապտել և ի բաց թօթափել։ Այլ ես չունիմ ինչ. ոչինչ մի եմ. և չմնայ ինձ այլ՝ բայց ցածնուլ խոնարհել, մանաւանդ ցածուցանել զոչինչն ի բնէ։

Է. Քրիստոս ելեալ ի փառաց Աստուծոյ, դառնալոց էր ի նոյն։ — Յովհ. ԺԳ. 4.

«Գիտաց զի յԱստուծոյ էլ և առ Աստուած երթայ»։ Որ զայդ օրինակ էլ յԱստուծոյ, չմարթի նմա չդառնալ ի նոյն։ Էր ի նմա մեծութիւն, որում հարկ էր վերացուցանել զնա։ Ոչ կարէր խոնարհել, բայց առ կարեկցութեան՝ առ ի մերձենալոյ մեզ, առ ի բերել մեզ զշնորհսն, առ ի տալոյ մեզ կատարեալ օրինակ խոնարհութեան, քաղցրութեան, երկայնմտութեան, ամենայն առաքինութեանց, առ ի լինել զոհ քաւութեան մեղաց մերոց։ Այսր աղագաւ ի դէպ էր նմա խոնարհել մինչեւ ի հող մահու։ Այլ որպէս Պետրոս ասէ, «Ոչ էր հնար ըմբռնել նմա ի նմանէ[1]». և հարկ էր թէ

1 Գործք Առաքելոց, Բ. 24։

կեանքն որ էր ի նմա՝ յաղթող գայցի։ Հարկ ու-
բեմն էր, զի եթէ եթող զփառսն՝ վերադարձցէ
զնոյն. և եթէ խոնարհէր մինչեւ ի մահ, և ի
մահ խաչի, ի դէպ էր Աստուծոյ բարձրացու-
ցանել զնա, և տալ նմա անուն՝ որ ի վեր է
քան զամենայն անուն[1]. որպէս զի և կատա-
րեսցի զոր խնդրեաց ի Հօրէն. «Հայր փառա-
աւորեա զՈրդի քո, փառաւքն՝ զոր ունէի յառաջ
քան զլինելն աշխարհի առ ի քէն[2]։» Զայս կամի
ասել Յովհաննէս՝ բանիւս. «Գիտաց զի յԱս-
տուծոյ էլ, և առ Աստուած երթայ». զի ոչ էր
նմա մարթ կալ մնալ խպառ մեկնեալ ի փա-
ռաց՝ որ այնպէս խակակից էր նմին. և ոչ միայն
վերադառնալոց էր ի նոյն, այլ և զմեզ վերա-
ծելոց անդր ընդ իւր. վասն այսորիկ և ասաց.
«Հայր, զորս ետուրն ինձ կամիմ, զի ուր ես
եցեմ, և նոքա եցեն ընդ ես, զի տեսանիցեն
զփառսն իմ՝ զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս
յառաջ քան զլինելն աշխարհի[3]»։ Տեսանել զայն՝
վայելել է ի նոյն. մասնակից նմին լինել, ըստ
բանին Յովհաննու. «Նման նմա լինելոց եմք,
զի տեսանելոց եմք զնա որպէս և էն[4]»։ Եւ
է այս կատարումն բանին զոր ասացն. «Ես
զփառս զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի եցեն
մի՝ որպէս և մեք մի եմք. և գիտասցէ աշխարհ՝
եթէ սիրեցի զնոսա՝ որպէս դու սիրեցեր զիս»։
Սիրոյնք Քրիստոսի, ճաշակեցէք զբանդ զայ-

1 Փիլիպ. 8–9։—2 Յովհ. ԺԷ. 5։—3 Յովհ.
ԺՆ. 24–5։—4 Ա. Յովհ. Գ. 2։

դոսիկ. ճաշակեցէք և զայսոսիկ. «Երթամ և
պատրաստեմ ձեզ տեղի. և դարձեալ գամ և
առնումք զձեզ առ իս. զի ուր եմն եցեմ՝ և
դուք անդ եցէք[1]»։ Զայս օրինակ ահաւա-
դիկ կայր Քրիստոսի դառնալ առ Աստուած.
զայս նշանակեն բանքն Յովհաննու. «Եկ յԱս-
տուծոյ և առ Աստուած երթայ»։ Եւ ի
պահու անդ՝ յորում կատարելոց էր զդարձն
փառաւոր, գոլով այնպիսի և գիտելով գոլ
այնպիսի, որպէս նշանակէ Յովհաննէս, հաճե-
ցաւ լուանալ զոտս մեր։—Լուռ լիցուք. դար-
ձեալ լուռ լիցուք։ Դադարեցարո՛ւք խորհուրդք
իմ. Թոյլ տուք ինձ նկատել զՅիսուս՝ առ ոտս
աշակերտացն, առ ոտս մեր ամենեցուն, առ
ոտս ամենայն հաւատացելոց՝ զորս նշմարէ յա-
ռաքեալս իւր։

Ը. Գայ Յիսուս ի դուռանալ զոտս աշակերտացն։

(Յովհ. ԺԳ. 4)։

«Յառնէ յընթրեացն, և դնէ զհանդերձս
իւր». զպատուոյ հանդերձն՝ զոր ագանին ա-
զատ մարդիկ, և պահէ միայն զոր սովոր են կրել
սպասաւորք. «Եւ առեալ զենջակ մի սփածաւ».
այսինքն՝ Էած զվիջօք։ Զվիջօք՝ հասարակօրէն նշա-
նակէր զտարազ այնորիկ՝ որոյ հանդերձեալ էին

1 Յովհ. ԺԴ. 2։

սպաս ինչ հարկանել. ըստ այնմ. «Գոտիք ընդ մէջս ածեալ. նմանողք մարդկան՝ որք ակն ունի-ցին տեառն իւրեանց». և յետ սակաւուց, «Գոտ-ի ընդ մէջ ածեալ՝ բազմեցուսցէ զծառայսն հաւատարիմս, և անցեալ պաշտիցէ զնոսա[1]»։ Այս է ընդ մէջ ածելն. այլ սփածանիլն՝ անար-գադոյն ևս ծառայութեան է հանդերձ՝ լուա-նալոյ զոտս։

Մի՞թ դիր և այնմ, զի զամենայն ինքնին գործէ Յիսուս. ինքնին զնէ զհանդերձսն. ինքնին սփա-ծանի. ինքն ընու զջուրն ի կոնք, ձեռօքն՝ որք ամենայն շնորհաց են բաշխողք. ձեռօք՝ որ Աս-տուծոյ են ձեռք՝ ամենայնի հաստատողք կարողա-բար. ձեռք՝ որոց դրութիւնն միայն, հպումն ևեթ՝ զհիւանդս բժշկէր, զվեռեալս յարու-ցանէր. այնու ձեռօք եհեղ ջուր ի կոնք, լուաց և ջնջեաց զոտս աշակերտաց իւրոց։ Ոչ հրա-հանգաց ինչ օրէնք են աստանօր. սպասաւո-րութիւն է ստոյգ՝ զոր հարկանէ ամենեցուն նոցա, և սպասաւորութիւն անարգադոյն. քան-զի հարկ է անկանել առ ոտս նոցա՝ առ ի պաշ-տել. հարկ է լուանալ զկռուեալ զաղտն և զփո-շին՝ ի գնալն նոցա բոկոտն, որպէս էր սովորու-թիւն երկրին։ Զայդ առնէ Յիսուս, գիտելով չափ որ ինչ ինքն էր, և ի սկզբանէ և ի ժամա-նակի, և որ լինելոցն էր յարութեամբն և. յաղթողական համբարձմամբ։—Ծանո՛, Յիսուս, և ազգեա յոգիս իմ, զվեծութիւն քո բնական,

1 Ղուկ. ԺԲ. 35–7։

և զիսնարհութիւնդ կամայական. որպէս զի գէթ յիսկականս խմբմ փոքրկութեան՝ մի ծանր համարեցայց խոնարհել և ծառայել եղ-բարց իմոց։

Թ. Հրաժարել Պետրոսի ի տալոյ ղուանալ զոտսն, և յետոյ հաւանել։

Քանի՞ խորագոյնս հրաշացեալ հիացեալ կայր Պետրոս ընդ մեծութիւնս և ընդ ցածութիւնս վարդապետին իւրոյ, ի գոչելն յայլ յայլմէ լի-նելով, «Տէր, դո՞ւ զիմ զոտս լուանաս»։ Դո՞ւ. զորո՞ց. զի՞մ։ Դու, Որդիդ Աստուծոյ, զի՞մ, զմե-զաւորիս։ Առ որ ասէր երբեմն, «Ի բաց գնա յինէն, տէր, զի այր մեղաւոր եմ ես[1]». մարդ, մահկանացու, ոչինչ մի, և որ չար եւս է՝ մեղա-ւոր ոք։ Ա՛յ, ի բաց գնա յինէն, Տէր. ոչ հան-դուրժեմ թէ մերձենաս յիս։ Առաւել եւս ի-բրաւմբք յայժմուս, զի դաս զոտս լուանալ, այսպիսի հարկանել ինձ սպաս անարժան քեզ. վարդապետդ՝ աշակերտիս, տէր և այնպիսի տէր՝ ստրկի՞ միոյ։ Ա՛յ, տէր իմ, որ զինչ և ասի-ցես դու, ոչ ժուժեմ այդմ։ «Ոչ լուայցես զոտս իմ յաւիտեան[2]»։

Եռանդն՝ բոյս բարուց էր Պետրոսի՝ որ չէր տակաւին ուղղեալ, այլ կարի բուռն էր. և

1 Ղուկ. Ե. 8։—2 Յովհ. ԺԳ. 6։

Թէպէտ ասէր Յիսուս, «Դու այժմ ոչ գիտես, այլ ապա գիտասջիր», ի դէպ ժամու. որպէս Թէ ասիցէ, Թոյլ տուր ինձ առնել, զի գիտեմ զոր գործեմ։ Անսասան յամառի Պետրոս, եթէ օրէն էր ասել, և ստիպէ զՅիսուս ասել ցնա. «Եթէ ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս մասն ընդ իս»։ Յայնժամ իսկ և իսկ նովին եռանդեամբ՝ որով ասէրն, Յաւիտեան ոչ լուացես զոտս իմ, գոչեաց. «Ո՛, Տէր, մի միայն զոտս իմ, այլ և զձեռս և զգլուխս»։ Ոչ գիտէր տակաւին զի՞նչ էր լուանալն ի Քրիստոսէ, և յ՛որ մկրտութիւն արժան էր ըստ նմին օրինակի ընկըղմել. էր նորա տակաւին քաջ ի վերայ հաստատ բանի վարդապետին, եթէ «Մկրտութիւն մի ունիմ մկրտել[1]». հարկ է ինձ մկրտել խոտս արեամբ. և զայս մկրտութիւն ցաւոց պահեալ ունիմ իմոց սպասաւորաց. լուացից ես զոտս նոցին, լուացից զձեռս նոցին, լուացից զգլուխս նոցին՝ այսու մկրտութեամբ։ Տակաւին անտեղեակ էր Պետրոս բովանդակ այսմ խորհրդեանս. ոչ գիտէր տակաւին եթէ խորհուրդք մեր և գործք քանի անմաքուրք էին, և թէ որքան պէտս ունիցիմք լուացման ձեռաց մերոց և գլխոց։ Այլ սակայն ըղձակաթ գոլով լինել ընդ վարդապետի իւրում, և ունել մասն ընդ նմա, առանց ինչ ընդ բանս ածելոյ՝ գոչէ. Զամենայն Թոյլ տամ քեզ, զոտս և զձեռս, նաև զգլուխս անգամ. լուացիր զիս որպէս և հաճոյ

1 Ղուկ. ԺԲ. 50։

էցէ քեզ. քեզ փափագեմ մասնակից լինել. որ զինչ և հասցէ առնել՝ զքեզ կամիմ ունել որ զինչ և տալ պահանջիցեմ։ արա զինչ և կամիս, ոչ միայն ընդ ոտս իմ, այլ և ընդ ձեռս և ընդ գլուխս։ — Լսելի եղիցես, Պետրէ. լուացցին ոտք քո և ձեռք։ Խաչեսցես ըստ օրինակի վարդապետին քո. ունիցի և գլուխս քո մասն ի խաչելութեանդ, և խաչեսցիս գլխիվայր։ Զայդ օրինակ լուացցէ զքեզ Տէրն քո. զայդ լուանալիս պատրաստէ քեզ։ Ոչ գիտես զայն այժմիկ, այլ ծանուսցի քեզ ի ժամուն։ Ո՛վ տեր, ոչ միայն զոտս, այլ և զձեռս և զգլուխս։ — Նմանողք լիցուք Պետրոսի. Թողցուք զանձինս մեր ի կամս Փրկչին։ Ոչ գիտեմք տակաւին զինչ կամիցի առնել ընդ մեզ. տակաւուրութիւնս մեր ոչ հանդուրժիցէ այդմ. այլ որ զինչ և էցէ՝ Պատրաստ է սիրտ իմ, պատրաստ է սիրտ իմ առ քեզ[1], Աստուած. այո. Թողուցեմ, տամ քեզ զամենայն, զոտս և զձեռս. զամենայն որ ինչ եմս, նա՛ և զգլուխս իսկ, և զոր ի նմայն կայ՝ զՀոգիս։

Ժ. Լուռանալ և զաղոտս փոքրուն։ «Դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքեան»։ — Յովհ. ԺԳ. 8–10։

Յարուցեալ՝ ի ջերմային գաւառս, յաճախեալ էր սովորութիւն բաղանեաց. և յետ լուանա-

1 Սղմ. ԾԶ. 8։

ղոյ յառաջօտուն և ի միջօրէի, մայր երե-
կոյին լուացումն ոտից, առ ի ինքնէղոյ զաղան
կռուեալ յերթալն և ի գալ։ Այս միտք են բա-
նի Հարսին. «Լուացի զոտս իմ, զի՞արդ աղտե-
ղացուցից զնոսա [1]»։ Զայս օրինակ առնու Յի-
սուս, յուսումն հաւատացելոցն, եթէ յետ
լուանալոյ ի մեծամեծ մեղաց, մայ խնամով
մաքրիլ և յայնցանէ՝ որք պատահէին ի կենցա-
ղավարութեան մարդկան, որք թէպէտ և փո-
քրագոյնք առ առաջնովքն, այլ ըստ ինքեանց՝
մեծք. քանզի հոգի որ սիրէ զԱստուած, զամե-
նայն որ ընդդէմ նորա եցէ՝ ոչ համարի փոքր
զամենայն. և եթէ անփոյթ լինէր սրբելոյ ի մա-
նունցն, վասնզ ածէր անձին, առ փոքր փոքր
նուազելով զզօրութիւնս հոգւոյն. դոյզն ինչ
զօրութիւն մայր նմա ի դիմակալութիւն մե-
ծամեծ փորձութեանց, որով և դիւրագայթ
լինէր. քանզի ոչ է հնար յաղթել բուռն փոր-
ձութեանց՝ բայց ջերմաջերմն սիրով։

Զայս ուսուցանէ մեզ Քրիստոս՝ բանիւքս.
«Լուացելոյն չէ ինչ պիտոյ, բայց զի զոտն լուա-
նայցէ. քանզի ամենեքին սուրբ է. և դուք սուրբ
էք, այլ ոչ ամենեքեան»։ — Արդ խրատէ
զմեզ Քրիստոս բանիւքս, մի և փոքունց անգամ
մեզաց ներել. և զայս ուսուցանել կամեցաւ
լուացմամբ ոտից։ Եւ զի քաջ խորամուխ լի-
ցուք ի խորհուրդն, խնամք նորա ի լուանալ
զոտս աշակերտացն՝ մինչ հանդերձեալն էր հաս-

1 Երգ Երգոց, Ե. 3։

տատել զԳոհութիւնն և հաղորդս նմին զնոսա
առնել, ազդ առնէն մեզ՝ եթէ դէպ ժամանակ
սրբելոյ զմեզ ի ներելի մեղաց՝ է ժամ պատրաս-
տութեանն ի հաղորդութիւն, յորում կայ կա-
տարելապէս միանալ ընդ Քրիստոսի։ Առ այս՝
այնքան մեծ արգելք են մեղքն, որպէս զի եթէ
ոք յառաջ քան զսրբելն զայնոսիկ՝ մեռանէր,
խափան լինէր երանական տեսութեանն՝ թեր-
եւս և ընդ երկայն դարս։ Եւ արդ անկ է այն-
քան առաւել հաւանել սրբելոյ զանձն ի մե-
ղաց անտի՝ յառաջ քան զհաղորդութիւնն, որ-
քան զի այնու իսկ ի դէպ է սրբելն ի նոցուն,
(ծանրագոյն մեղաց)։ և այն յառաջագոյն այլով
խորհրդեամբ սրբեալ գոլով։ և զի մարթ է ան-
փութութեան սրբելոյ զոսոսին՝ ձգել տանել ցայն
սահման, յորում յարուցն մեղացդ ոչ միայն
վտանգաւոր եցէ, որպէս և է իսկ միշտ, այլ
և մահացու։ Քանզի որ ոչ խորշի ի մեղաց՝ բայց
վասն ահի դատապարտութեան, յայտ առնէ
եթէ ի պատուհասէն զանգիտէ, և ոչ եթէ ըս-
տուգիւ սիրէ զարդարութիւն. այսինքն, ոչ սիրէ
զԱստուած՝ որպէս արժան էր նմա։ Եւ ի դէպ
է նմա երկնչել, զի մի անհնարին թուլութեամբն
այնու՝ և զմնացուած ինչ աստուածային հրոյ
եռանդեանն՝ կորուսցէ ընդ հուպ։

Արդ լուսացուք խնամով ոչ միայն զձեռս և
զգլուխ, այլ և զոտս, մինչեւ եցէ մերձեցեալ ի
խորհուրդն սուրբ. ասա թէ ոչ՝ գարշելով գայ-
ցէ առ մեզ Փեսայն. և թէպէտ մեղքն օրըստ
օրեայք ջարգելուցուն զնա յասելոյ ցմեզ՝ որ-

պէս առ առաքեալսն, «Դուք սուրբ էք», այլ սակայն ազդ առնէ մեզ սրբիլ և ի նոցունց, եթէ կամք իցեն մեզ մերձենալ ամենայն մաքրութեամբ պատշաճականաւ՝ առ մարմին նորա և արիւն։ Եւ թէ քանի կարևորք են այս պարտք, ցուցանէ յասելն՝ ի լուանալ անդ զոտս առաքելոցն, առ ի տպաւորել ի նոսա զվոյթ մաքրելոյ ի մեղաց անտի, «Եթէ ոչ լուացից զձեզ», այսինքն, եթէ ոչ լուացից զաղտ ոտից դ, ոչ ունիցիք մասն ընդ իս. ոչ միայն զի խափան լինին դոքա, որպէս ցուցաքս, երանելոյն տեսութեան և միաւորութեան ընդ Աստուծոյ, այլ զի և զանցառութիւն մաքրութեանն կարէ առթել բազմավտանգ ցրտութիւնս՝ ընդ հոգի և ընդ Յիսուս, և լինել իսկ արդեօք և մահացու։ — Լուացեր արդ, ով քրիստոնեայ, լուացեր յամենայն մեղաց քոց, նաեւ ի մանուանց անգամ, յորժամ առ սեղանն սրբութեան մատչիս։ Լուացե՛ր խնամով զոտսդ. նորոգեսջիր բոլորովիմբ, զի մի արդեօք անարժանութեամբ կերիցես ի մարմնոյ Փրկչին։ Քանզի, որպէս տեսանէսդ, և մեղքն՝ որ ըստ ինքեան ներելի իցէ՝ մահացու լինի յարելովդ ի նոյն։ Եւ թէպէտ և չիցես բոլորովին անարժան անարժանութեամբ՝ որ պարտաւոր առնէ մարմնոյ և արեանն Տեառն, մարթ է անարժան գտանիլ առ մեծամեծ շնորհսն՝ որովք միայն հնար է յաղթել մեծամեծ փորձութեանց, որովք լի են կեանքս։ Կարեմք անարժան լինել կատարեալ հաղորդութեան ընդ Փեսային, և առթել ի միջի մե-

ղուայ, եթէ ոչ կատարեալ անջատումն՝ այլ հովութիւնս, որք վերածին առ անջատումն։

Լուա՛, Տէր, զոտս իմ, որպէս զի կարող եղէց ասել ընդ Հարսին. «Լուացի զոտս իմ, զի՞արդ աղտեղացուցից զնոսա»։ Մաքրութիւն՝ հրապոյր իմն է պահելոյ զմաքրութիւն. որքան սպիտակագոյն է հանդերձ՝ այնքան յայտնագոյն որ ի նմա բիծքն իցեն՝ երևին. որքան մաքրագոյն ոք իցէ՝ այնքան և յաղտեղանալոյ զգուշանալի է նմա, փափագելով դասել ընդ այնոսիկ՝ զորոց գրեալն է, «Սոքա անբիծ են առաջի աթոռոյն Աստուծոյ[1]»։ Ա՛ռ այս անկ է և տենչալ, ձկտել, յիշելով զգեղեցիկ ասացուածն Ս. Օգոստինոսի. «Թէպէտ և չիցէ մարթ առանց մեղաց կեալ յաշխարհի աստ, այլ մարթ է առանց մեղաց ելանել աստի. զի որպէս յաշխարհ լինին մեղքն, ըստ նմին և մեղացն դարմանք ոչ պակասեն»։

ԺԱ. Լուացեալ ղինի և Ցուդա հանգոյն այլոց։ — Յովհ. ԺԳ. 10–11։

«Դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքեան. զի գիտէր զայն որ մատնելոցն էր զնա. վասն այնորիկ ասաց թէ ոչ ամենեքեան սուրբ էք». և թէպէտ գիտէր զնա, և սատանայի իսկ արկեալ էր

1 Յայտն. ԺԴ. 5։

ի սէրս նորա՝ մատնել զՏէր իւր, սակայն և զնորա ոտն լուանայ որպէս զայլոցն. և ազդառնէ նմա՝ եթէ գիտէ զերեսն նորա, առ ի յորդորել զնա ի զգաստութիւն: — Զկայ առցուք աստանօր նկատել ընդ Պօղոսի՝ զքաղցրութիւնն Աստուծոյ[1] որ երկայնամտէ մեզ. գոգցուք մանաւանդ, թէ և կոչէ զմեզ յապաշխարութիւն, մինչդեռ մեք ըստ խստութեան մերոյ և ըստ անզեղջ սրտի՝ գանձեմք անձանց բարկութիւն՝ յաւուրն բարկութեան: Այսպիսի էր և Յուդայնի բերումն: Քանի՞ Յուդայք և ի քրիստոնեայս. քանի՞ չուառականք, զորս և բիւր նշանակք քաղցրութեանն Աստուծոյ՝ ոչ բաւեն յետս դարձուցանել ի չար գործելոյ: Մի լիցուք ի Թուոյ նոցին. և եթէ եղեաք իսկ՝ մի ևս լիցուք: Յիշեսցուք գոնեա՝ զի տեսանէ նա զմեզ. տեսանէ զմատնիչ իւր. և սակայն լուանայ զոտս նորին. ջուր սրբարար՝ պատրաստ կայ նմա յապաշխարութեան. պատրաստ է Յիսուս ընդունել զնա ի սէր իւր և ի շնորհս. շատ է թէ լուասցի նա և ապաշաւիցէ:

ԺԲ. Պատուիրան ոչացնան ոտիցն. — Մարդասիրութիւն և խոնարհութիւն: — Յովհ. ԺԳ. 12–16:

Աղաչան էր և զխրատ բանից՝ յաւելուլ ընդ խրատու օրինակին: «Յիսուս առ զհանդերձս

1 Հռովմ. Բ. 4–5:

իւր, և դարձեալ բազմեցաւ», մինչչեւ մինչեալ անդրէն յընթրիսն՝ զոր Թողեալ էր, և յառաջ քան զմատչէն յերկնաւոր ընթրիսն. և ասաց այսպէս. «Գիտէք զինչ արարիդ ձեզ. դուք կոչէք զիս Վարդապետ և Տէր, և բարւոք առնէք, քանզի եմ իսկ». և որ այն էս: Այսու բանիւք ուսուցանէ մեզ Փրկիչն մեր զամենայն սպաս հարկանել եղբարց մերոց, նաև զմարմնաւորն, թէպէտ և չեցեմք իսկ պարտականք: Լուացումն ոտից՝ յաճախեալ սպաս ծառայութեան էր յայնմ ժամանակի, որպէս յայտ առնեն և բանք Պօղոսի, որ ի պայմանս ընտրութեան այրեաց՝ ի սպաս աղքատաց՝ պահանջէ զի և «զորբոց զոտս լուացեալ եցէ[1]»: Ընտրեսցուք ըստ այսմ օրինակի ծառայութիւն ինչ նման այդմ՝ որ ի դէպ եցէ մերոցս սովորութեանց: Օրինակ եմն, երթիցուք յանկիւնոցս՝ պաշտել զհիւանդս, կամ մանաւանդ զհիւանդ անօգնական և կարօտ սպասաւորութեան. և յամենայն նուագի ծառայութեանն մերոյ՝ աբասցուք ըստ օրինակին Քրիստոսի, մեծաւ լրջմտութեամբ և լրութեամբ, որով՝ և ամենակատար խոնարհութեամբ: Եւ որք զայսպիսի երբեմն սպաս հարկանեն աղքատաց, ըստ օրինի հրահանգաց, որպէս իշխանազունք, աւագք եկեղեցւոյ, առաջնորդք միաբանից, քաջ խորամուխ լիցին յոգի հրահանգացն. խորամուխ լիցին ի խոնարհութիւն՝ ի սէրս սրտի.

1 Ա. Տիմ. Ե. 9–10:

զմտաւ ածցեն զի բնութիւնս մեր ծառայական է ի բնէ, զի մեղօք ծառայք եմք ծնեալք, և զանազանութիւնք վիճակի կենաց՝ ոչ կարեն ջնջել զկնիք ծառայութեան մերոյ: Եւ ոչ միայն խոնարհութեամբ ծառայեսցուք եղբարց մերոց, Քրիստոսի նմանելով, այլ և սիրով ծառայեսցուք նոցա, յիշելով զբանն, «Սիրեաց Յիսուս զիւրսն որ յաշխարհի ասա են, խսպառ սիրեաց զնոսա»: Ապա ուրեմն ոչ առ գործ խոնարհութեան և առ ի տալ մեզ զայն յօրինակ՝ լուաց Յիսուս զոտս աշակերտացն, այլ առ գորովական սիրոյ, առ յօժարութեան, առ ի ցուցանել նոցա՝ թէ որքան յարգէր զնոսա, և առ ի վերածել զմարդկայինս բնութիւն՝ զանկեալն ի ծառայութիւն: Այսու ոգւով ծառայեսցուք եղբարց մերոց, յարգելով զընդալով, և զՅիսուս յանձինս նոցա պատուելով:

Նա և բարոյական տեսութեամբ, այլ ստուգիւ և հաստատութեամբ, զվիմեանց ոտս լուանամք, յորժամ եթէ խնամով ազգ առնիցեմք միմեանց զթերութիւնս. յօժարք յանմեղադիր լինել, ոչ հանդուրժելով զի և առ փոքր մի անպատիւ լիցի եղբայրս մեր. և այսու օրինակաւ նա և ի մանունց անգամ թերութեանցն քաւելով զնա: Եւ այս ոչ առ խոնարհութեան և եթ, (կամ) առ ահի՝ եթէ գուցէ զայլն դատելով՝ մեք իսկ անաչառ դատողութեան լինիցիմք նշաւակք վասն մերոցս թերութեանց, այլ սերտ և ստոյգ գթով առ ամենայն քրիստոնեայս՝ որք եղբարք են մեր, և առ ամենայն մարդիկ՝ որք մարմնք մեր են:

Յետ ասելոյ Յիսուսի՝ թէ «Որպէս ես ձեզ արարի՝ և դուք առնիջիք», և ցուցանելոյ մարդկան զծառայութիւն զոր անկ է նոցա մատուցանել նմանեաց իւրեանց, առ ի ծանուցանել եթէ քանիցն ևս առաւել արժան է զնոյն մատուցանել պաշտօնէից իւրոց, յաւելու. «Որ ընդունի զոր ոք ես առաքեցից՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զայն որ առաքեացն զիս[2]»: Գեղեցիկ յօդակապութիւն. ի պաշտօնէից Քրիստոսի՝ առ նոյն ինքն վերանալ, և ի նմանէ՝ առ Աստուած Հայր: Սովորեսցուք և մեք զՔրիստոս նշմարել ի հովիւս մեր, և ի Քրիստոս՝ զամենայն փառս մեծվայելչութեան Հօր իւրոյ:

Զայսոսիկ վարդապետելով Քրիստոսի առ առաքեալն՝ յարէ ինչ ի նոյն և զՅուդայէ, առ հաստատել զնոսա՝ ոչ միայն ի հաւատս, ցուցանելով զի գիտէ զամենայն, այլ և ի գութ կարեկցութեան և խոնարհութեանն. քանզի ճանաչելով, որպէս ասացն՝ զորս ընտրեացն, և գիտելով իսկ զնենգախոհ միտս մատնչին, ոչ արար զանց և զնորա ոտն լուանալ. և ոչ այսչափ միայն, այլ և բազմեցուցանել զնա յընթրիսն, սպաս հարկանել նմա ի սեղանի՝ հաւասար այլոց. այլ որ քան զբնաւս գերազանց է, տալ նմա որպէս և այլոցն՝ զմարմին իւր և զարիւն:

1 Յովհ. ԺԳ. 20:

ԺԳ. Խոովիլն Յիսուսի. «Մի ոմն ի ձեզ մատնելոց է զիս»։ — Ն. 21։

«Զայս ասաց Յիսուս՝ խռովեցաւ յոգի իւր. վկայեաց եւ ասէ. Մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս»։ Մեծի եւ յոյժ կարեւոր քննութեան պէտք են՝ ի տեսութեան խռովման սուրբ հոգւոյ եւ մտաց Յիսուսի։ Միաք մեր յառաջ քան զամենայն՝ ձգին ի պատճառս խռովմանն։ «Մի ոմն ի ձէնջ՝ մատնելոց է զիս»։ Եղեռն, մատնութիւն, նենգութիւն աշակերտին Յիսուսի՝ առթէ նմա զնեռքին խռովն։ Ապա ուրեմն հասարակօրէն առթ խռովմանն՝ մեղքն են. եւ առաւել ևս մեղք այնոցիկ՝ որք հանգոյն Յուդայի մերձագոյնս յարեալ էին ի նա, զոր եւ ի դաս առաքելոցն կարգեալ էր։ Յորժամ զմտաւ ածէր զի չարչարանք իւր՝ որով մեղքն լուծանէր, մուծանելոց էին յաշխարհ նորանոր եղերունս, ոճիրս մեծամեծս, անհեղեղս, անլուրս, զՅուդայի մատնութիւնն, զՀրէից ատելութիւն, զապերախտութիւն նոցա, եւ զաստուածասպանութիւնն գլխովին, այս առաւել քան զայլն ամենայն՝ առթէր ի նա զնեռքին խռովումն. եւ ոչ խաբիմք՝ եթէ համարեսցուք զայդ դառնագոյն մասն բաժակի նորին։

Երիս գլխաւոր դէպս տեսանեմք՝ յորս ասի խռովել սրբազան հոգւոյն Յիսուսի. մի (ի գլուխս ԺԲ. համար 27 այսր աւետարանի), յասէն.

«Ա.յժմ անձն իմ խռովեալ է». եւ (ի գլուխս ԺԱ. 33) ի տեսանել անդ զարտասուս Հրէից եւ զՄարեմայ քեռն Ղազարու՝ վասն մահուան նորին, «Խռովեցաւ յոգի իւր եւ արտասուեաց Յիսուս»։ Զիք երկբայել զի եւ յայսմ նուագի՝ պատճառ խռովմանն՝ եղեռն Յուդայի էր եւ այնոցիկ՝ որք գործակից սպանմանն լինելոց էին. զոր եւ նշանակէ աւետարանիչն յասելն՝ եթէ խռովեցաւ, առ նմին յաւելով, «Վկայեաց եւ ասէ, ամէն ամէն ասեմ ձեզ, մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս»։ Արժան է հաւատալ թէ եւ յառաջնումն երեկոյի չարչարանացն՝ յասելն, եթէ «Ա.յժմ անձն իմ խռովեալ է», նոյն պատճառք էին գլխաւորք խռովմանն. մեղքն ասեմ. քանչէ չկայր ինչ քան զայն մորմոքեցուցիչ նմին։ Եւ դարձեալ, եթէ այնքան խռովեցաւ ընդ մահ Ղազարու եւ ընդ արտասուսն որ յայն սակս, անդէպ է համարել եթէ միայն մարմնոյ մահն՝ ազդեաց ի նա զարտասուդ եւ զխռովումն. այլ զի ի մարմնոյն մահն՝ զմահ հոգւոյ նկատէր, զ'ի նմայն օրինակեալ։ Նկատէր՝ զի մահ եմոյծ զմեղս յաշխարհ. Ղազար օրինակ էր մեղաւորի, եւ մեղաւորի ի դժնդակագոյն եւ դարձելագոյն վիճակի, որ է խստանալն եւ ուռնականալն ի նեխիլն եւ ժողխիլ յեղերան։

Արդ, խռովումն՝ զոր ասասնօր զդաց Յիսուս յոգի իւր, զարհուրանքն են ի նկատման մեղաց. սա էած նմա զտագնապն՝ զոր և երևեցոյց սոսկմամբն։ Եւ եթէ եցէ մեղ ներելի 'ի խորս ներքին զդացմանց նորին թափ անցանել, հզօրագոյն

առեթ խոովման յայսմ պահու՝ էր նկատելն
զապիրատ ազգումն մահուան եւ արդեանց ա-
բեանն՝ ի մեղաւորս, առեթ նոցա լինելով անկ-
զիտանալոյ ի մեղս, յուսալուն այնու գամա-
գիւտ լինել թողութեան։ Զեք քան զայս սոս-
կալի է մեղս. ասնուելն ասեմ պատճառս նմին՝
զբարութիւնն Աստուծոյ եւ զնորհս փրկա-
գործութեանն։ Եւ եթէ չեք ինչ զարհուրելի
քան զայս ի մեղս, ապա եւ սա ուրեմն առեթէր
Յիսուսի զանհնարին սոսկումն, զտագնապն եւ
զխռովումն։

Իսկ խռովութիւնն՝ զոր զգաց ի մերձենալ
մահուանն, ոչ վասն մեղաց եւեթ էր, եւ
անգթութեանց, անօրէնութեանց եւ նենգու-
թեանցն, որք զյետին պատուհասն ածին նմա,
այլ եւ յայն սակս՝ զի զինքն իսկ տեսանէր
անմեղ ինն պատճառս գոլ նոցին։ Զի թէպէտ
եւ չէտ ինչ բնաւ առեթ նախանձու անիրաւու-
թեան Հրէիցն, եւ չարար զիւրք զանց՝ առ ուղ-
ղութիւն նոցին, եւ չարիք նոցա միայն էին ա-
ռեթք մոլեգնութեան իւրեանց, սակայն ճշմար-
տիւ՝ սրբութիւնն Քրիստոսի, վարդապետու-
թիւնն, պանչելիքն, ազգողական եւ հարկե-
ցուցիչ կշռամբանքն՝ որք փրկելոցն էին զնոսա,
սոքին վառեցին զնախանձ նոցա եւ զանհաշտ
ատելութիւնն ընդդէմ Յիսուսի. որով եւ Յու-
դաս հրաժարեաց ի նմանէ, ի լսելն զբանն
զոր ասաց Մարեմայ գթով՝ 'ի հեղուլն զիւղ ա-
նուշահոտ իւղոյն ի վերայ նորա։

Յաւելցուք ի սոսին եւ զայն, զի կրելոց էր

զմահ՝ իբրև զարդարադատ պատուհաս ամենայն
մեղաց՝ յանձն իւր առելոց, եւ զի իբրև պար-
տաւոր նոցին երթայր ի մահ։ Այսպէս՝ սոսկումն
մեղաց ըմբռնէր զնա. այնու պաշարեալ տեսանէր
զանձն, զայն՝ թափանցիկ լինելն եղեալ։ Տեսա-
նէր.— ո՛վ քստմնելի տեսարան Փրկչի ազգիս
մարդկան,— տեսանէր՝ զմեղս աճեցեալ վասն
չարաչար վարելոյ մահուամբն իւրով. որ տայր
ասել բազմաց՝ եթէ չէ նա որդի Աստուծոյ,
եւ թէ ամենայն պանչելիք՝ որով հաւատարմա-
ցոյցն զայն՝ ցնորք ինչ առաջք էին։ Գայթակ-
ղութիւն էր այն Հրէից եւ յիմարութիւն հե-
թանոսաց, նաեւ հաւատացելոց անգամ։ Որպիսի՛
առեթ վրէժխնդրութեան. քանզի միանգամայն
ամենեքին որք ոչն օգտէին այնու՝ առաւել ևս
յանցաւորք լինէին, առաւել պատուհասելիք,
առաւել դատապարտելիք։ Ո՛վ, որպէս մորմոքէր
'ի վերայ նոցա Փրկիչն դիւրագորով, որ այնպէս
արգահատէր ի մարդիկ, մանաւանդ ի հաւա-
տացեալսն, որ եւ վասն փրկութեան նոցին մի-
այն եղև մարդ։— Ո՛վ Յիսուս, այս էր գլխաւոր
պատճառ խռովման հոգւոյդ սրբազանի. այս
եղև նմա առեթ վրդովման ի պահուս, և այլոց՝
զոր յապայդ տեսցուք։ Զարհուրեսցուք ուրեմն
ի մեղաց. և զՅիսուս տեսանելով խռովեալ՝ ըզ-
մտաւ ածցուք եթէ քանիսն անկ էր գիտակցու-
թեանս մերոյ խռովել ընդ այն։

ԺԴ. Զի՞նչ իցե խռովելն Յիսուսի։

Թուի ինձ, Փրկիչ իմ Յիսուս, եթէ ազգ իմն առնես ինձ իմանալ զխռովումն՝ զորմէ յաճախ ճառէ աւետարան քո։ Սուգապէս խռովումն էր նեռքին, ապա թէ ոչ՝ չասէր աւետարանիչն, եթէ «Խռովեցաւ յոգի իւր». և ոչ ինքն, եթէ «Անձն իմ խռովեալ է»։ Այլ զի՞նչ էր ի նեռքս յինքն խռովութիւնդ այդ, եթէ ոչ սոսկումն ի վանդէ մեծէ, յանհնարին չարեաց, ի մեծագունէ քան զամենայն չարիս, որ են մեզ՝ քքն, հանդերձ ամենայն ահագին պարագայիւքքն՝ զորս նկատէր Յիսուս. սոսկումն՝ որ անկեալ զոգւոքն՝ անդրադառնայր ի մարմինն, և ազդէր ի նոյն՝ կիրս նմանագոյնս այնմ՝ զոր մեքս զգամք ի տեսանելն իրս յոյժ դժպհիս. յորս անկ էյաւելուլ ի ժամանակի չարչարանացն և զայն՝ որում գուն գործեցիր հասու լինել օժանդակութեամբ Գրոց Սրբոց։

Գլխաւոր պատճառք խռովութեան հոգւոյ՝ են այլ և այլ տեսակք խորհրդոց՝ ծագելոց յոգիս մեր՝ ի դէպս տարօրինակ իրաց։ «Զի՞ խռովեալ էք, և ընդէ՞ր խորհուրդք ելանեն ի սիրտս ձեր [1]». ասաց ինքն իսկ Փրիստոս առաքելոցն, ի տեսանելն զնոսա զարհուրեալս յերևմանն՝ յետ մահուն։ Այն խորհուրդք որովք զբաղի և յուզի հոգին՝ ոչ գիտելով

1 Ղուկ. ԻԴ. 38։

զինչ գործել կամ յինչ հաւանել, նոքա են որ խռովեն զնա. ոչ եւս իշխէ անձին. ոչ եւս է տէր ինքեան։ Համարձակիցիմք ասել եթէ այսպիսի ինչ էցէ և ի սրբազանում հոգւոյ Յիսուսի։ «Այժմ, ասէ, անձն իմ խռովեալ է. և զի՞նչ ասացից, եթէ Հայր, ապրեցո զիս յաւուրդեն ժամէ ասոի յայսմանէ», յորում այսքան մեայ ինձ չարչարել. այլ վասն այնորիկ եկի ի ժամս սոյս։ «Հայր, փառաւորեա զանունքդ [1]»։ Անհաւադիկ այլայլութիւն խորհրդոց. տատամսութիւն իմն երեւի ի բանին. «Զի՞նչ ասացից». մտատանջութիւն իմն յասելն՝ Հայր, ապրեցո զիս յայսքան վտանգաց. և ամենայնն յանդի անձնատուր լինելով յԱստուած, և միայն փառաց նորա ուշ ունելով։ Եղբ. ինչ արդեօք ստուգապէս անհաստատութիւն ի սրբազանումն հոգւոյ Յիսուսի։ Փա՛ւ լիցի. քանզի անհաստատութիւն՝ տկարութեան մտաց է ծընունդ, յորժամ ոչ ունիցի լոյս բաւական՝ ի սահմանել անձին զարժանն առնելոյ։ Մա՞թ ինչ էր այսպիսւոյ տրամադրութեան լինել ի հոգւոյ Փրկչին, յոր միացեալ էր յաւիտենական իմաստութիւն, և ոչ դադարէր երբեք յուղղելոյ զնա՝ յամենայն շարժմունս իւր։ Բայց թէպէտ և չէդոյր ստուգիւ անհաստատութիւն խորհրդոց՝ յայնպիսում պնդագոյն և լուսաւոր հոգւոյ, այլ էր ինչ նմանագոյն. քանզի կրեաց յինքեան զայլայլ խորհուրդսն, զոր առթեն

1 Յովհ. ԺԲ. 27–8։

Եւ բնական արհաւիրք մահու այնքանեօք զարհուրատեսակ հանդամանօք մերձեցելոյ, եւ կատարեալ հաւանութիւնն ի մտանել զանձն ի նոյն, վասն այնպէս կամելոյ Աստուծոյ:

ԺԵ. Սոսկումն մեղաց՝ պատճառք խռովման Փրկչին մերոյ:

Առ ի միտ առնուլ եթէ քանի՛ տագնապիչ և վշտաբեր է այսպիսի վիճակ ոգւոյ, անկ է յիշել զի զարհուրեցուցիչ Յիսուսի չէր ցաւագին մահն միայն՝ զոր հանդերձեալն էր կրել. զի Թէպէտ և սոսկումն այն մահու և ցաւոց՝ ընդաբոյս է մարդկանս ազգի, և Քրիստոս էառ և զայն յանձն՝ ամենայն սաստկութեամբ նորին՝ յ՚առնուլն կատարելապէս զբնութիւնս մեր, այլ նա զմեզս համարէր առեթ ամենեին հակառակ իւր և ամենեին զզուելի: Զմահ՝ որպէս տեսաք՝ համարէր արգասիս և պտիւղ իմն մեղաց, և զմահ իւր՝ առթեալ ի բազմապատիկ մեծամեծ մեղաց, զորոց և յաւելոյր զթիւ և զծանրութիւն՝ ըստ այնմ օրինակի զոր նշանակեցաքս: Ո՛վ, որպիսի բաժակ. քանի՛ մեծ, քանի՛ անհնարին դառնութեամբ:

Պատմէ ոմն ի Հարանց զկամակարութիւն երից միանձանց՝ ի նախատինսն զոր ածէին նոցա. մին՝ ուշ անձին եդեալ դողալով քնէր եթէ գուցէ արդեօք սրտմտեցա՞ւ ինչ, կամ թէ

վրիպեա՞ց ի համբերելոյ. միւսն՝ համարէր զնախատիչն անձամբ յանձն իւր ձգել մեծամեծ պատուհասս յարդար դատաստանացն Աստուծոյ, և փղձկեալ լայր. իսկ երրորդին արտասուք յորդագոյնք և դառնագոյնք ևս էին. քանզի զայս հաւանեալ խորհէր, եթէ անարգանք իւր՝ յԱստուած անդր ձգէին, որոց ինքն լինէր պատճառք թէ և անյանց գոլով: Ի բաց թողցուք մեք զառաջնոյն օրինակ՝ որ անարժան է Փրկչին մերում. իսկ երկոքեան այլք այնքան հզօրք էին ի նմա՝ որքան զի առաւել ևս մարդասիրագոյն էր, և առաւել ևս կրէր զներգործութիւն դատաստանացն Աստուծոյ, և սոսկումն ի մեղաց՝ ի վեր քան զամենայն միտս և զբան: Իսկ արդ յորժամ կամք լինէին նմա, յորժամ ի դէպ էր, որպէս և էր իսկ գիպողագոյն ի ժամանակի չարչարանացն, տալ անձին իւրում կրել զամենայն գութ խանդաղատանաց առ մեղաւորս, և զսոսկումն ընդ մեզս, անհնարին յոյժ և ի վեր քան զամենայն բան՝ էին տագնապքն. վասն այնորիկ մի զարմացուք՝ եթէ ասիցէ, «Անձն իմ խռովեալ է», կամ թէ ասիցեմք յետ սակաւուց, «Տրտում է ոգի իմ մինչև ի մահ[1]»:

Ո՛վ Փրկիչ իմ, կարևոր էր խռովումն սրբազան հոգւոյդ, նախ առ ի դրդել և ի բժշկել զմոյս անզգայութիւն. որ ոչ թէ ոչ խռովի ընդ մեզս իւր, այլ և ոչ ծանրութեանն և ոչ վիրացն

1 Մտթ. ԻԶ. 38:

զգայ. և ասա՝ առ ի քաւել զխռովութիւն ըզ-
գայութեանցս յայլ և այլ կրից՝ մերձ ընդ մերձ
բռնացելոց ի վերայ իմ։ Բժշկեա՛ զիս, Տէր,
յայսքան չարեաց. մի՛ տար ինձ անզգայ լինել
մեղաց, և մի՛ այսպէս դիւրազգած առ հեշտու-
թիւնս կամ առ ցաւս՝ որ ի մարմնոյս. յորս ըն-
կղմիմ ի գիւտի կամ ի կորստեան բարեաց ան-
ցաւորաց։

ԺԶ. Կանաւոր էր ի Քրիստոս խռովումն, և կարեւոր ի մեր սակս։

Զինչ միաբանութիւն եղէ խռովմանս, յուզ-
ման, և միանգամայն ասել՝ անհնարին որոմու-
թեան հոգւոյ Փրկչին, ընդ կատարեալ միա-
ւորութեան Բանին, և որ յայնմանէ երևան-
կան բերկրութեանն վայելից։ — Խորհուրդ է
այդ, անթափանցելի ի կենցաղումս։ Շատ լեցի
մեզ զմտաւ ածել, զի զոր օրինակ միաւորու-
թեան հոգւոյ ընդ մարմնոյ՝ են օրէնք, որովք
հոգին ըստ այլ և այլ առընչութեանց և ըստ
այլ և այլ առթից՝ ընդունի զգայմունս և տպա-
ւորութիւնս, և հակառակս լինի միմեանց ծնա-
նի խորհուրդս, յորոց սակս ոչ միայն փիլիսո-
փայքն՝ այլ և Աւաքեալ իսկ զանազանեն զհո-
գի յոգւոյ, իբրու թէ երկուս լինի մասունս նը-
կատելով ի հոգւոջ, զման ընչաւոր և զման հո-
գևոր և բանական, (զոր մարթ է և այլ ևս ստո-

բաբաժանել). որովք թուի լինի երբեմն՝ եթէ
բաղումք ոմանք եղեն ի միում մարդում, քան-
զի այնքան բուռն և ստոյգք են կիրքն ներհա-
կանք. այսպէս և միաւորութիւն Բանին ընդ
հոգւոյն, և հոգւոջն՝ ընդ մարմնոյն, և դար-
ձեալ Բանին մարդացելոյ՝ ընդ հաւատացելոց՝
որք անդամք իւր են, և ընդ համօրէն ազգի մարդ-
կան՝ զոր յինքեան կրէ, ունել ունին զբրէնս
իւրեանց սահմանեալս ի նմին իսկ ի Բանէն. որ
անփոփոխելի մնալով միշտ՝ յարուցանէ ի հո-
գւոջն միացելում և սեփականելում ինքեան
(այնպիսեաւ սքանչելի օրինակաւ՝ որ առնէ զնա
արդարեւ հոգի Աստուծոյ), այլ և այլ զգայ-
մունս, ըստ այլ և այլ առընչութեանցն՝ որ ընդ
միմեանս, ընդ բնական մարմնոյն, ընդ խորհրդ-
ական մարմնոյն, ընդ ամենայն անդամոցն, և
համառօտ ասել, ընդ ամենայն մարդկան. որ-
պէս զի, ըստ բանի սրբոյ Հարց, կրեաց նա
ըստ առ մեզն առընչութեան, տնտեսաբար, մա-
տակարարելով, կարեկցաբար, զոր չէրն ար-
ժան նմա՝ եթէ սոսկական ոք էր և մարդ հասա-
րակ. յայս սակս և առանց ինչ նուազման զո-
րութեանն՝ որ զոգեալ էր զնա անյաղթելի և
անլուծանելի օրինօք՝ ընդ կամացն Աստուծոյ և
ընդ Բանին, որ զամենայն շարժմունս նորա ուղ-
ղէր, կրեաց՝ պաշտամամբ գլխոյ, զոհի քաւու-
թեան և օրինակի մարդկութեանս, զնուազ-
մունս և զտկարութիւնս, զոր պահանջէին՝ քա-
ւութիւն մեղաց մերոց, օրինակն՝ զոր ի դէպ էր
տալ մեզ, և ընդհանրն՝ որոց նովիմբ վայել էր

նմա արժանաւորել վասն մեր։ Վասն մեր, առանց ստանալոյ Հնմարտութեան բանին, եթէ Զեմ միայն, այլ Հայր ընդ իս է, զարգել զանձն ի գոչելոյ, «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս [1]»։ Յաղագս մեր, որ երանաւէտն էր ի վերնական մասին հոգւոյն, վայելմամբ Բանին՝ — զոր ոչն կարէր ոչ ունել, քանզի նովաւ մի և նոյն անձն էր, — հարկ եղև նմա ասել ընդ ստորակայ մասին, Տրտում եմ մինչև ի մահ. և դարձեալ, «Հոգիս յօժար է, այլ մարմինս տկար [2]»։ Քանզի կիրքդ այդ ներքինք՝ մասն էին կրելեացն վասն մեղաց. տկարութիւնքն՝ մասն դարմանոյ զոր տալոց էր ի դեղ մերայոցս, և օրինակին՝ զոր տալոց էր մեզ՝ առ ի տանել նոցին և յաղթել։ Ի դէպ էր լինել ի նմա հիւանդութեանց, անձկութեանց, տխրութեանց, տրտմութեան, լքմանց, զի միասցուք և մեք ընդ նոսին՝ առ ի զմերս կրելոյ։ Սովիմբ եղև նա քահանայապետ չարչարակից տկարութեանս մերոյ, զի փորձ է ամենայնի, ինքն իսկ տկարութեամբ զգածեալ. փորձեալ ամենայնիւ, նման մեզ, բաց ի մեղաց, որպէս Առաքեալ ասէ [3]։

Արդ՝ յաղագս այսոցիկ ամենայնի, և վասն յոլովից ևս որք չեն մեզ յայտնեալ, թայլ եւ Բանն հոգւոյն՝ կրել զարհաւիրսն, զխռովսն, զտկարութիւնսն, զլքմունս, զոր տեսաք. զորս կամաւորապէս ի յանձն էառ, յառելով յիրս՝ որ

1 Յովհ. ԺԶ. 32. Մտթ. ԻԷ. 43։ — 2 Մտթ. ԻԶ. 38։ — 3 Եբր. Դ. 15. Ե. 2–8։

կարողք էին առթել զայնս, և յարգարելով զանձն ի պայման յանկագոյն՝ կրելոյ զայնոսիկ. վասն այնորիկ ասաց իսկ Յովհաննէս, եթէ խռովեալ էր ստուգապէս [1], այլ և զի խռովեր զանձն իւր. իբրու զի չկայր ինչ բռնագատ ի կիրսն զոր կրէր, այլ ընդ հակառակն ամենայնինչ կարգեալ և ուղղեալ էր ի Բանէն վերակացելոյ յերկրպագելի անձինն, և ի հոգւոյն՝ որ յանձն առնոյր վարել ի նմանէ ամենայն կամաք և յամենայն զօրութենէ մտաց։

Ներքնով իմն հաղորդութեամբ այսոցիկ հանգամանաց Փրկչին, հոգիք սուրբք՝ ի խռովութեան անդ զգայարանաց և յանձկութիւնս անբացատրելիս, վայելեն՝ չափով իմն՝ զանխռով անդորրութիւն, և կան ի վայել՝ որքան ներ տանել կենցաղս այս։ Ոչ այլ ինչ առնել է նոցա՝ բայց միանալ ընդ խռովումն, ընդ տկարութիւնս, ընդ լքմունս Յիսուսի, առ ի գտանել այսու օրինակաւ՝ զապաւէն իւրեանց ի սերտ միութեանն, որ ունէր զնա անբաժանօրէն յարեալ յաստուածութիւնն և ի հրամանս անտեղծ իմաստութեանն։ Ըստ այսմ օրինակի և արդարն Յովբ, յերկուց իմն ներհական ոգւոց վարեալ, ի վիճեն իսկ ընդ Աստուծոյ ի պաշտպանութիւն անմեղութեանն, և ի շանթել իմն ընդդէմ նորա, և ի դատ վարել ընդդէմ դատապարտողին զինքն իբրու անիրաւ դատաստանաւ, և առ բռնութեան զրպարտչաց, հաւա-

1 Յովհ. ԺԲ. 27. ԺԶ. 33։

նեալ միանգամայն և գերագունի արդարու-
թեան նորին, ինդրէ Թողութիւն սքանչելի խո-
նարհութեամբ, և խոստովանի դողութեամբ,
եթէ չիք սրբութիւն անսգիւտ առաջի նորա [1].
և մինչդեռ երեւոյթքն ահաւոր՝ զոր արկանէ
Աստուած յոգի նորա, նա և ի ննջելն՝ ոչ տալով
հանգիստ մարմնոյն, թուին իմն խսպառ սրտա-
թափ առնել զնա, մինչև ասել իսկ, եթէ յոյժ
թաղծեալ եցէ և զմահ անձին կամիցի, տակա-
ւին ի խորուոջ գիտակցութեանն վայելէ ի խա-
զաղութեան արդարոց, մինչև վստահագոյնս ա-
սել, եթէ սպանցէ ևս զիս՝ յուսացայց ի նա [2].
և դարձեալ, զի յերկինս է վկայն իմ, և իրա-
ւագէան իմ ի բարձունս. զրախօսք են բարե-
կամք իմ. յանդիման քո կաթեցուսցէ ակն իմ
արտասուս [3]:

ԺԷ. «Յանկանալով ցանկացայ զայս պասէք ուտել
ընդ ձեզ»: — Քրիստոս զատիկ մեր:

Մինչ խօսէր Յիսուս զմտանրչէն՝ առ առա-
քեալսն, դեռ յընթրիս կային. և կամեցեալ
Որդւոյն Աստուծոյ կարգել նոր զատիկ՝ հաս-
տատութեամբ խորհրդոյ Հաղորդութեան, ըս-
կիզբն առնէ բանիւքս. «Յանկանալով ցանկա-
ցայ զայս պասէք ուտել ընդ ձեզ, մինչև չար-

1 Յովբ. Ժ. 3. ԺԳ. 3. ԺԶ. 18: — 2 Յովբ. Է. 14, 15: — 3 Յովբ. ԺԶ. 20:

չարեալ եցեմ [1]». և որպէս տեսցի, յետ այնո-
րիկ հաստատեցաւ Հաղորդութիւն: Ա. յս հաս-
տատութիւն և մեծ ցանկութիւնն՝ զոր ցուցա-
նէ մեզ աստանօր՝ առնելոյ ընդ մեզ զպասէքս,
մինչև եցէ չարչարեալ, մասն է անբաւ սիրոյն,
որով զիւրսն՝ զորս սիրէր մինչ՝ որպէս ասէ Յով-
հաննէս, սիրեաց ի սպառ:

Արդ, առ ի քաջ հաստատել խորհրդոց նո-
րա, և պատշաճական պատրաստութեան իւ-
րայոցն, յիշեսցուք զի պասէքն, զոհն սուրբ՝
յորմէ ելանելոց էր արիւնն փրկարար, ոչ միայն
հանդոյն յոլովից այլոց պատարագաց առաջնոց՝
զոհելոց էր, այլ և ուտելի լինելոց. և զի հա-
ճեցաւ Յիսուս առնուլ և զկնիք զոհի՝ տալով
մեզ ուտել մշանջենաւորապէս զմարմինն՝ որ մի
անգամ նուիրեալոց էր վասն մեր ի մահ, վասն
այսորիկ ասաց. «Յանկանալով ցանկացայ զայս
պասէք ուտել ընդ ձեզ, մինչև չարչարեալ
եցեմ»: Ոչ զպասէքն օրինական՝ որոյ հասեալ
էր վախճան, ցանկութեամբ մեծաւ տենչայր
Յիսուս ուտել ընդ աշակերտսն, (զի) բազում
անգամ կատարեալ էր զոսն զատկին և կերեալ
ընդ նոսա, այլ նորոյ պասէքի տենչայր նա աս-
տանօր. վասն այսորիկ և ասէն՝ եթէ Յանկա-
նալով ցանկացայ ուտել ընդ ձեզ զայս պասէք,
զպասէք նորոյ ուխտի, հաւասար էր ասելոյ,
Յանկացայ ես ինքնին լինել ձեզ պասէք, լինել
դառնն զենեալ վասն ձեր, զոհ փրկութեան ձե-

1 Ղուկ. ԻԲ. 15:

ոյ. և սակս կամելոյս իսկ լինել ճշմարտապէս զոհ զենեալ, ցանկացայ լինել և ստուգապէս զոհ ուտելի. զոր և կատարեաց բանիւքս՝ Առէք, կերայք, այս է մարմին իմ՝ որ վասն ձեր բաշխի[1]. այս զատիկ է՝ յորմէ եկեալ արիւն փրկութեան ձերոյ: Եկջիք յԵգիպտոսէ, և ազատք լինիջիք իսկ և իսկ ի հեղուլ արեանս այսորիկ՝ վասն ձեր. բայց միայն զի կերիջիք ըստ նմանութեան հնոյ ժողովրդեանն զոհն՝ անդ՝ ուստի եկն: Զայս ա- ռաջիք ի հաղորդութեան՝ զոր Թողումս ձեզ ի մահուան-խոսում, կատարել յաւերժաբար յետ մահուան իմոյ:

Ուտելն ի մոյ դառին զատկականի՝ հաւատարիմ դրաւական էր Հրէից՝ եթէ վասն ինքեանց զոհեալ էր այն. ծագքու�զոհին՝ հաղորդութիւն նմին էր ընդ նմին. այսու օրինակաւ հաղորդէին խաղաղական պատարագացն կամ գոհութեանց, որպէս գրեալն է յօրէնսն: Ասէ և Առաքեալն Պօղոս. «Տեսէք զԻսրայէլն ըստ մարմնոյ. ո՞չ ապաքէն որ ուտեն ի զոհիցն՝ հաղորդք են սեղանոյն, և նովիմբ՝ Աստուծոյ, որպէս և հեթանոսք՝ դիւաց, որոց զոհենն[2]»: Արդ եթէ Յիսուս զոհ մեր է, եթէ զատիկ մեր, հարկ է թէ ունիցի զերկոսին զայս կնիքս, զզոհելն վասն մեր ի խաչի, և զլինելն ուտելի մեզ ի սեղանի գոհութեան, որպէս պատարագ փրկութեան մերոյ: Զայս փափագէր նա մեծաւն ցանկութեամբ առնել ընդ աշակերտսն: Հարկ

1 Մատթ. ԻԶ. 26: — 2 Ա. Կորնթ. Ժ. 18:

էր ապա երկոցուն կնքոցն՝ ճշմարտել յանձին իւրում. որպէս ի դէպ էր նմա զոհել մարմնով իւրով և էութեամբն, արժան էր նոյնպէս և ուտելի լինել: «Առէք, կերայք. այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի». այնպէս ճշմարտիւ ուտելի, որպէս ճշմարտիւ զենլի. այնպէս ներկայ ի սեղանին՝ յորում կերեալ լինի, որպէս ի խաչին՝ յորում ի սպանդ վարի, և պատարագի արիւնաքամ եղեալ առ սեր քո:

Զայն խորհեսցուք արդ և մեք[1], որպէս ասէրն Պօղոս, զոր և Քրիստոսն. եթէ այնքան ցանկանալով ցանկացաւ նա առնել ընդ մեզ զպատեքս զայս, ցանկասցուք և մեք նովին ցանկութեամբ առնել ընդ նմին զպատեքն: Պատեքդ այդ՝ հաղորդութիւնն է: Վասն մեր՝ քաղցնու Յիսուս երկնաւոր կերակրոյս. փափագէ ուտելի լինել, և այսու օրինակաւ ամենեքիմբ կատարեալ լինել զոհ: Ի նոյն և մեք վառեսցուք տենչ հաղորդութեան պատարագին, ուտելով ի մարմնոյն՝ վասն մեր զենլոյ: Եթէ նա զոհ է մեր, լիցուք և մեք նորայն: Պատրաստեսցուք և մեք զանձինս մեր, ըստ բանից Առաքելոյն Պօղոսի, լինել պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ: Սպանցուք զցանկութիւնս երկրաւորս, շիջուցեալ ի մեզ զամենայն պղծութիւն, զագահութիւն, զչպարտութիւն. խոնարհեսցուք ընդ նմա որ ի կերպարանս Աստուծոյ գոլով՝ զանձն ունայնացոյց, լեալ հնազանդ

1 Փիլիպպ. Բ. 5:

մահու չափ և մահու խաչի [1] »։ Վառեսցուք խմաստիւք մահուան՝ եթէ լցեմք Յիսուսի, եթէ զմարմին նորա ճաշակեմք, խաչեսցուք զմարմինս մեր՝ կարեօք նորին և ցանկութեամբք [2]։ Այս պասեք է մեր. պասեք մեր այս է, միանալ ընդ նմին՝ առ անցանել ի կենաց աստի ի կեանս լաւագոյնս, ի զգայութենէն՝ ի յոգի, յաշխարհէ՝ առ Աստուած։ Այսուիկ միայն կարեմք արժանաւոր լինել ուտելոյ ընդ Յիսուսի զպասեքն՝ որում այնքան ցանկայր, և կերակրիլ ի մարմնոյ պատարագի նորուն։

ԺԸ. Յիսուս ուտէ ընդ մեզ զպասեքն, պարտ է և մեզ ուտել ընդ նմա։

Ընթերցիր դարձեալ զաւետարանիչն Ղուկաս, և գնդեա ի բանսդ «Ընդ ձեզ, մինչչև չարչարեալ լցեմ»։ Յիսուս՝ որ կարգեաց մեզ մըկըրտութիւն, յանձն էառ և ինքն մկրտիլ. Յիսուս՝ որ կարգեաց զհաղորդութիւնս ի զատիկ մեզ, կամեցաւ առաւել քան զամենայն՝ ընդունել զայն ընդ մեզ։ Գլուխ է մեր նա, քաջ ի մի առցուք զայս. զի այս իսկ է խորհուրդն մեծ փրկութեան մերոյ։ Գլուխ մեր է նա. և զոր վասն մեր արարեալ էր՝ ինքն իսկ ընդունի։

1 Հռովմ. ԺԲ. 1: Կողոս. Գ. 5: Փիլիպ. Բ. 6, 8: — 2 Գաղատ. Ե. 24:

Յանձն իւր սկսանի զօրէնս մկրտութեան. յանձնէ և զօրէնս հաղորդութեան։ Նորա մկրտելովն՝ մկրտիմք և մեք ի նմա. ի նմին ընդունիմք և զհաղորդութիւնն՝ զոր նա ընդունի։ Արդ մի ոք երկբայեսցի եթէ ի հաստատելն զայն՝ ընկալաւ և ինքն. մի ոք ասեմ թերահաւատիցի՝ եթէ եկեր ինքնին՝ զոր և մատոյցն աշակերտաց իւրոց։ Եւ զինչ. միթէ զի՞նք ինքեան զմարմինն եկեր. քստմնելի է բանդ։ — Ո՛վ մարդ մարմնաւոր, զի՞ զանդիտես, և մինչև ցե՞րբ ոչ դադարեցես յանսալոյ զգայարանացդ։ Միթէ ո՞չ գիտես զզօրութիւն այնորիկ՝ որ խօսիդ ընդ քեզ։ Եթէ տայ զանձն իւր յուտել իւրոցն՝ այնպիսի օրինակաւ, որ ոչ եթէ միայն ոչ քստմնեցուցանէ՝ այլ և վստահացուցանէ՝ պատկառանօք և սիրով. ո՞ տարակուսեսցի եթէ և ոչ ինքն իսկ կերակրիչն ճաշակեաց զնոյն գունակ։ Այսպէս թէ ոչ՝ չէր նորա ասացեալ, եթէ Յանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ։ Արդ տեսաք զի պասեքս այս, գառնն զատկական՝ իւր իսկ մարմինն էր. ուտէ ուրեմն զայն իրապէս և գերազանցօրէն քան զզգայութիւնս, որպէս և տայ մեզ զնոյն. և այս է պասեք նորա, անցք նորա և մեր։ «Երթամ, ասէ, երանեմ առ Հայրն իմ և առ Հայր ձեր, Աստուած իմ և Աստուած ձեր». երանեմ առ նա, զի Հայր իմ է և Աստուած իմ [1]. երջիք և դուք ընդ իս. զի, թէպէտ և այլով երանակաւ, է նա և ձեր Հայր և

1 Յովհ. Ի. 17:

Աստուած. արդ կայ ձեզ և ինձ՝ առնել զպա-
սեքս զայս. անցանել յաշխարհէ առ Աստուած:
Ա. Յլ յորժամ դառնայ Յիսուս առ Աստուած՝
դառնայ ի ծոց Հօր իւրոյ, ի նախասկիզբն յիւր
վայր, ի ծնեալսն տեղի, եթէ օրէն եցէ ասել.
ուր էն մեշտ, և զոր թողուլ բնաւ ոչ կարէ.
ի ստացուած իւր սեփական դառնայ, և յիսկա-
կան իւր փառս. յինքն ինն իսկ դառնայ. ինքն
ինքեամբ կեայ: Ի նմա էր կեանքն, որպէս և ի
Հայրն. ինքն իսկ կեանք է. կեանք մեր է, և
կեանք ինքեան. կեանք մեր է, և կարօտիմք ճա-
շակել զնա. կեանք իւր է, և ոչ այլում կարօտի,
որպէս բանիս կարդ է ասել, բայց ճաշակելոյ
ինքնին զինքն: Ա. յս խորհուրդ է՝ զոր կատարէ
պասեքաւս, որում այնքան ցանկայր ուտել ընդ
աշակերտսն: Ճաշակեմք մեք և կեամք նովաւ.
ճաշակէ ինքն, կեայ ինքեամբ, և դառնայ առ
Հայր՝ վայելել ի կեանսն ի ծոց Նորին. վասն
այնորիկ յաւելու ասել. « Բայց ասեմ ձեզ, թէ
ոչ ևս կերայց ի սմանէ, մինչև լցցի (խորհուրդս
այս) յարքայութեանն Աստուծոյ [1] »: Յերանա-
ւէտն յայնմ արքայութեան լցցի պասեքս իմ,
զի անցից յաշխարհէ առ Հայր իմ: Ա. յլ իմ պա-
սեքս՝ է և ձեր պասեք. և զի ես եմ գլուխ ձեր
և դուք անդամք էք իմ, արժան է և ձեզ զանցս
այս առնել: Կերայք արդ ի զոհէ անցիցս. ճա-
շակեցէք զմարմին իմ, և անցէք առ Աստուած
ընդ իս. սկիզբն արարէք անցանելոյ՝ մտօք. անց-

1 Ղուկ. ԻԲ. 16:

ջէք յաւուր միում և մարմնով իսկ ողջոյն,
յորժամ յարիջէք զօրութեամբ մարմնոյ իմոյ՝
որ սրբեսցէ զձեզդ: Յայնժամ լցցի զառիկն ի
ձեզ, որպէս արդ աւասիկ ընդ յիս. անցջէք
դուք ի փառս իմ, անցցեն անդր մարմինք ձեր՝
հանգոյն հոգւոցդ՝ զդեցեալք զանմահութիւն.
և ամենեքին ի միասին, գլուխս և անդամք՝ վա-
յելեսցուք զփառս և զերանութիւն անցից մե-
րոց. և ոչ ևս մնայցէ ինչ պակաս ի կատարեալ
լրումն պասեքիս մերոյ:

Արդ, օ՜ն առեալ կատարեսցուք զօրինակ նո-
րին ի Հաղորդութեանս, և ճաշակեսցուք ընդ
Յիսուսի զպասեքն ցանկանալով ցանկացեալ:
— Ո՜վ, որքանեօ՞ք սքանչելեաք հաւատեա, Փըր-
կիչ իմ, զսէր քո առ մեզ, յայսմ խորհրդեան:
Դու ինքն կազմես մեզ զսեղանս սրբութեան:
Դու ես կերակուրն ուտելի. դու ինքն և ուտես.
քանզի որք ուտեն անտի՝ անդամք քո են, այս-
ինքն՝ այլ ոք դու: Լցցուք արդ Յիսուսիս Քրիս-
տոսիս. ի սեղանի սատ գոյ միանալ ընդ նմին,
մարմին ընդ մարմնոյ, հոգի ընդ հոգւոյ, միաք
ընդ մտաց: Ո՞վ եցէ արժանի միութեանս.
բայց որ կարէն ասել ընդ Առաքելոյն. « Կեամ
ես, ոչ եթէ ես՝ այլ Յիսուս Քրիստոս կեայ
յիս [1] ». որ է այնուհետև այլ ոմն Յիսուս, և
լինի և ես՝ միանալովն ընդ նմա: Արդ, մի՞ ինչ
մնասցէ ի մեզ մարդկային. զդեցցուք, ըստ Պա-
ղոսի, զՅիսուս Քրիստոս [2], զբարութիւն նորա,

1 Գաղ. Բ. 20: — 2 Հռովմ. ԺԳ. 14:

զքաղցրութիւնն, զխոնարհութիւնն, զհամբերութիւնն, զնախանձն, զսէրն անբաւ, զերկինս ևեթ շնչելով՝ ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Հօր. մարմինս մեր միայն կացցէ յերկրի. այլ մեք քաղաքավարեսցուք յերկինս, որպէս քաղաքակից եղեալք նմին [1]: Քաղցեսցուք Յիսուսի զքաղց արքայութեան նորին, արդարութեան նորին. քանզի և նա քաղցեալ է մեզ: Յանկանալով ցանկանայ ուտել զպասէքս զայս ընդ մեզ. միաւորել զմեզ ընդ իւր, և ոգւով իւրով ներգործել հանապազ ի վերայ մեր և ի մեզ, առ եւս քան զնս կերպարանակիցս իւր առնել զմեզ մինչեւ ամենեքիմբ յարեալք ի նոյն՝ եղիցուք ըստ ամենայնի նմանք նմին, տեսանելով զնա դէմ յանդիման, և որպէս էն: Այս է զատիկն՝ զոր լցցէ յարքայութեանն Աստուծոյ [2], ըստ բանին զոր ընթերցաքս յաւետարանիս. Ամէն. եղիցի:

ԺԹ. Հաղորդութիւն յիշատակ մահուան Փրկչին:

«Մինչչեւ չարչարեալ եցեմ»: Քննեսցուք խոնարհութեամբ, ընդէ՞ր արժան համարեցաւ հաստատել և ուտել զպասէքս զայս՝ ընդ աշակերտաց իւրոց, մինչչեւ էր չարչարեալ, և ոչ յետոյ մինչ յարուցեալն էր: Կամք էին նորա յանդիման կացուցանել մեզ ի խորհրդեանս՝

1 Փիլ. Գ. 10:—2 Ա. Յովհ. Գ. 2:

զմահ իւր. վերացուցանել զմեզ մտաք ի Գողգոթայն, ուր հեղաւ արիւն նորա, և ոլորն ողողոն զեղաւ յամենայն երակացն: Այս է, ասէ, մարմին իմ, բաշխեալ վասն ձեր, բեկեալ վասն ձեր, և այնքանեւաք խոցեալ վերաք. Այս է արիւն իմ՝ հեղեալ վասն ձեր: Անհաւասիկ մարմինն, անհաւասիկ արիւնն, որ յանդիման աչաց մերոց դնին՝ որպէս որիշ որիշ յիրերաց: Եւ որպէս զի ամենայն ինչ ըստ պատկերի մտաց իւրոց կերպարանիցի, հարկ էր հաստատել խորհրդեանս յառաջնումս աւուր արիւնըռուշտ մահուանն. «Ի գիշերին յորում մատնէր [1]», որպէս ասդ առնէ Առաքեալն Պօղոս. մինչդեռ զիսաւարային նենգութիւնն երկնէր Յուդաս, և հանդերձեալ էր երթալ և կատարել: Եւ զի՞նչ ասեմ՝ հանդերձեալ յերթալ. — «Եւ արտաքս վարվաղակի [2]» ի սեղանոյն, յորում ինքն և այլք յաշակերտացն ուտէին զվերջին զայն ընթրիս՝ ընդ Վարդապետին իւրեանց. յորում էաւ նոցա զմարմին իւր և զարիւն, տալով և Յուդայի որպէս և այլոցն. և նա՝ ի նմին պահու երթայ մատնել. յետ երկուց ժամուց արկցէ զնա ի բուռն թշնամեաց նորին: Յիսուս ինքնին խռովեալ է արդ վասն մօտալուտ մահուանն, խորհրդական խռովմամբն՝ զոր տեսաք. և յայսմ պայմանի, յայսմ խռովման, որպէս ի դէպ է ասել՝ յայսմ մահուան՝ որ ահա հասեալ կայ, հաստատէ նա զնորն զատիկ:

1 Ա. Կոր. ԺԱ. 23:—2 Յովհ. ԺԳ. 30:

Արդ քանիցս և առաջի կայցեմք և հաղորդեցիմք խորհրդեանս նորա, քանիցս և լսիցեմք զբանն՝ Այս է մարմին իմ, Այս է արիւն իմ, պարտ և արժան է մեզ յիշել, եթէ յորպիսի՞ դէպս երաց, յորո՞մ գիշերի, որպիսի՞ խօսելով բանս՝ ասացան դոքա։ Յառաջ քան զսուսերն, և յետ ասելոյն, եթէ «Մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս. ձեռն մատնողէի իմոյ է ընդ իս ի սեղանս [1]»։

Ահա յայսպիսի դէպս երակութեանց հաստատի խորհուրդ ընթրեացն. մինչդեռ աշակերտքն երաղեկ լեալ մատնութեան միոյ յինքեանց՝ հայէին ընդ երեսս, և հարցանէին ահիւ և դողութեամբ. «Միթէ ես եցեմ, Տէր». զնոյն և Յուդաս հարցանէր, և Տէրն առնէր պատասխանի, Դու ասացեր [2]. և յաւելոյր, առ ի յայտ առնելոյ նմա՝ եթէ յայտնի են ինքեան որ ի սրտին խորհուրդքն խաւարային նենգութեանն. Ե՛րթ, չուառականդ, արա, «Արդ որ զինչ առնելոցն ես՝ արա վաղվաղակի [3]»։ Յայսպիսեաց միջի երաց և բանից, և մինչ դեռ աչքն և ձեռամբ նշանակէր զայն՝ որ զնենգն դործելոց էր, յայսպիսի դէպս երաց՝ հաստատէ զՀաղորդութիւնն։

Մի լեցի մեզ այսուհետեւ ճաշակել զայն, կամ յանդիման կալ մատուցման խորհրդոյն, եթէ ոչ վերասցուք մտօք ի տխրականն գիշերն՝

1 Մտթ. ԻԶ. 21։ — 2 Մտթ. ԻԶ. 22–25։ — 3 Յովհ. ԺԳ. 27։

յորում և հաստատեցաւն, և մինչև ոչ կանխեսցուք զդաժնուլ ահեղ պատրաստութեամբք արիւնրուրջ պատարագի Փրկչին մերոյ։ Վասն այնորիկ իսկ առաքեալն Պօղոս ի պատմելն զխորհրդոյս հաստատութիւն, առաջի առնէ մեզ զգիշերն այն ահաւոր. «Ես ընկալայ ի Տեառնէ, զոր և ձեզ աւանդեցի, եթէ Տէր Յիսուս՝ ի գիշերին յորում մատնէր, առ հաց [1]», այլովքն հանդերձ։ Յայնմ իսկ գիշերի. քաջ միտ դիր և խոկասիր ի դէպս յայս։ Մարթ էր համարել՝ եթէ՝ քանզի Հաղորդութիւնն յիշատակ էր մահուանն՝ պատշաճ էր յառաջել քան զայն. այլ ոչ այդպէս. մարդիկ՝ որոց գիտութիւնն անստոյգ և նախատեսութիւն ոչ անկասկած, թոյլ տան կատարել երաց՝ մինչեւ պատուիրեալ զյիշատակ նոցին. այլ Յիսուսի քաջ դիտելով զլինելոցն և զբնակ մահուն՝ որով մեռանելոց էր, յառաջագոյն զատուցանէ զմարմինն և զարիւն. Այս է մարմին իմ. Այս է արիւն իմ, ասէ. մարմին իմ բաշխեալ, արիւն իմ հեղեալ. յիշեցէք զայդ. յիշեցէք զսէր իմ, զմահ իմ, զպատարագս իմ, և զերանակն հրաշալի՝ որով փրկութիւն ձեր ի գլուխս ելանէ։

Այսպէս և ի հաստատել Աստուծոյ զզատիկն, ի ցայդուս աւուրն փրկութեան Ժողովրդեան իւրոյ, մինչ դեռ ամենայն ոք պատրաստեալ ճիայր կատարել ի յառաջընթաց գիշերին զգործն զայն, ասաց նոցա. Զէնէք ոչխար

1 Ա. կորնթ. ԺԱ. 23։

մի, առէք յարենէ նորին, լուացէք նովաւ զդրուսս ձեր[1]. և ես եկից և տեսից զարիւնն, և անցից. և հրեշտակն սատակիչ ոչ հարցէ ըզ ձեզ. և տեսեալ զնշանդ՝ զանց արարից զտամբէք Իսրայէլացւոց, յորժամ լցից զտունս Եգիպտացւոց կոտորմամբ սրոյ և սպոյ, սատակելով զամենայն անդրանիկս նոցա. և այս եղիցի յենին հարուած ի փրկութիւնն ձեր: Զայս ասէր Աստուած՝ յԵլն: Այլ զինչ ես յաւէլուցու. «Պահեսջիք զպաշտօնդ զայդ՝ ամ ըստ ամէ. զեն ջիք դառն մի, կերիջիք նովին օրինաք. և եղիցի եթէ ասիցեն ցձեզ որդիք ձեր. Զինչ է պաշտօնս այս ձեզ. ասասջիք նոցա՝ եթէ Զոհ զատկի Տեառն է այս. յորժամ պահեաց զտունս որդւոցն Իսրայէլի յԵգիպտոս, մինչ հարկանէր զԵգիպտացիսն, և զտունս մեր ապրեցոյց[2]»: Արդ այսպէս Աստուած՝ որ գիտէր զոր առնելոցն էր, հաստատեաց զյիշատակն՝ յառաջ քան զվնիլ գործոյն. որպէս զի ի կատարելն զպասեքն՝ ոչ միայն զազատութիւն իւրեանց յիշեսցեն, այլ և զայն՝ զի յիշատակն այն սուրբ՝ հաստատեցաւ յառաջնումն երեկոյի մեծի գործոյն, մինչդեռ ժողովուրդն ամենայն դէտ ակն կալեալ մնայր մեծայեղանակ իրացն: Այսու մտաք հաստատի և նորն զատիկ. և յամենայն նուագի կատարմանն առ մեզ, — և կատարի ոչ միանգամ եւ եթէ ի տարւոջ՝ որպէս պասեքն այն հին, այլ զօրհանապազ. — յամենայն նուագի

1 Ելք. ԺԲ. 3: — 2 Նոյն, 25–7:

կատարմանն, յորժամ տեսեալ որդւոց մերոց՝ զի այնքան կրօնիւք և երկիւղածութեամբ կատարեմք՝ հարցցեն ցմեզ. Զինչ է պաշտօնդ այդ. ասասցուք ցնոսա. Այս խորհուրդ է՝ զոր կարգեաց Յիսուս յառաջ քան զմահ իւր, այլ մինչ առաջի կայր մահն, մինչ դեռ դարան գործէին նմա ի մահ խաչի մատնել առ վաղիւն, առ ի թողուլ մեզ յիշատակ մահուանն, և հանապազորդել զայն ի միջի մերում: Եկայք, եկայք, որդեակք իմ. պատրաստեցէք զանձինս ձեր ընդ մեզ ի Հաղորդութիւն, և յիշեցէք զ'առ սէր ձեր զենեալ Փրկիչդ:

Ի դէպ էր ուրեմն առ ի կատարել զհին օրինակ զատկին, նորոյն՝ որ յաւիտենական յիշատակ էր լինելոց մահուանն Յիսուսի, հաստատել յառաջ քան զմահն. «Յանկացայ, ասէ Յիսուս, ուտել ընդ ձեզ զպասեքս զայս, մինչչև չարչարեալ եցեմ»: Եւ զինչ էր պասեքն հին, եթէ ոչ օրինակ Ճշմարիտ ազատութեան որդւոցն Աստուծոյ: Զենէք դառն, առէք յարենէ նորա և լուացարուք նովաւ զդրուսս ձեր, և ես այդու նշանաւ ապրեցուցից զձեզ: Մինթէ զենմամբ ինչ դառն մեղ կարօտանայր Աստուած՝ ի կատարումն գործոց իւրոց, կամ նշանի առեան՝ առ ի Ճանաչելոյ զտունս՝ զորովք կամէր զանց առնել: Այդ ամենայն յայտնապէս յօրինակ մեր կատարէր. առ ուսուցանել մեզ, եթէ ոչ այլով իւրք լեցի փրկութիւն մեր՝ եթէ ոչ պատարագաւն Քրիստոսի, դառնին անարատի՝ զենելոյ վասն մեղաց աշխարհի, և ի նշանակ

արեան զոհի նորա։ Եւ Յիսուս զայսքանոյ մեծի բարերարութեան յիշատակ՝ հաստատէր, որպէս Աստուած զաղատութեան հնոյ ժողովրդեանն, յառաջ քան զլինել գործոյն. որպէս զի ի միտ առցուք եթէ Աստուած մեր ոչ է իբրև զմարդ, այլ զամենայն գիտէ յառաջագոյն, և առնէ որպէս Աստուծոյ վայելէ։

Եւ արդ, յորժամ առաջի սրբոյ պատարագին կայցեմք, և ևս առաւել ի հաղորդելս մերում, կրթեսցուք ընուլ յիշատակաւ մահուան Փրկչին մերոյ, և գիշերոյն՝ յորում մատնեցաւ։ Նկատեսցուք զհաստատութիւն հաղորդութեան՝ որպէս նոր դաշն ուխտի՝ զոր դնէր ընդ Հայր իւր և ընդ մեզ, առ ի նուիրել զանձն ի մահ։ Եւ զի՞նչ զարմանք՝ եթէ նախատեսս այնմ եղև յառաջնում երեկոյին. զի ոչ միայն վաղու իսկ կանխագէտ էր այնմ, որպէս է տեսանել ի բազում տեղիս յաւետարանի, այլ որպէս և տեսանի յօրինն և ի մարգարէս, ի սկզբանէ աշխարհի, բազմապատիկ նախասացութեամբք, և պէսպէս սքանչելի օրինակօք։

Ի. Բանք Յիսուսի յանդիմանել զՅուդաս ի զեղջ։
— Յովհ. ԺԳ. 10–27։

Ի յուշ ածցուք զամենայն բանս Յիսուսի որ զՅուդայէ՝ ի սմին գիշերի, սկսեալ ի լուացմանէ ոտիցն. «Դուք սուրբք էք, ասէ, այլ ոչ

ամենեքեան. զի գիտէր զայն որ մատնելոցն էր զնա»։ Եւ յետ սակաւու միոյ. «Ոչ վասն ամենեցուն ձեր ասեմ. զի ես գիտեմ զորս ընտրեցիդ. այլ զի լցցի գիրն, թէ որ ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ խաբէութիւն։ Յայսմհետէ իսկ ասեմ ձեզ մինչև եղեալ. զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք թէ ես եմ [1]»։ Ոչ ի խրատ իւրոց հաւատարիմ աշակերտացն ևեթ այսպէս խօսէր Յիսուս, այլ վասն դարձի նենգաւորին։ Զի զի՞նչ ազդողագոյն առ ի զեղջ ածել զմեղաւոր՝ քան զասելն. Յայտնի եղեր. որպէս ասէր Նաթան ցԴաւիթ. Դու ես այրն այն. դու ես շնացողն և սպանող. դու ի գաղտ գործեցեր, և ես յայտնեցից ընդ ամենայն երկիր [2]։ Այսու օրինակաւ զգացեալ Դաւիթ՝ խոստովան եղև զմեղանն և սկսաւ ապաշաւել։ Այսպէս և Փրկիչն ինքնին ասաց ցՅուդաս. Դու ես, դու ինքն ո՛վ եղկելի. ի զուր թագուցանես զչարաշուք խոհերդ. ի զուր հնարիս զանխուսափելի և ի մեծան գիշերոյ կոչել զՀրեայսն. յայտնի եղեր. ծածուկք սրտի քո նշաւակ լինին. զՓրկիչ կոչ քո մատնել խնդրես, ո՛վ նենգաւոր։ — Ընդէր չանայցեմք թագուցանել զանձինս, եթէ յաչաց Փրկչատոսի ոչ կարեմք թաքչել. չէ՞ զի այն շատ զի Աստուած տեսանի զմեզ. առ ո՞չ ինչ համարիցեմք զայդ, և ո՞չ պատկառիցեմք յաչաց նորա։

Յառաջէ Յիսուս ի բանն. և զի մի՛ անիմանա-

1 Յովհ. ԺԳ. 18։ — 2 Բ. Թագ. ԺԳ. 7, 13։

ևի լեցի, « Մի ոմն ի ձէնջ, ասէ, մատնելոց է զիս։ Հայէին ընդ միմեանս աշակերտքն տարակուսեալք եթէ զուտի՞ ասիցէ. և զի հարցանէին զնա իւրաքանչիւր մի՞թէ ես լցեմ, Տէր. պատասխանի եւ Յիսուս և ասէ. Այն է որ մըխեաց ընդ իս զձեռն իւր ի սկաւառակս [1] »։ Եւ զի մարթ էր բաղմաց զայդ առնել միանգամայն, և ոչ էր քաջայայտ նշանն, « ակնարկէ Սիմոն Պետրոս առ Յովհաննէս, որ էր բազմեալ առ Յիսուսիւ, հարցանել, ո՞ լցէ վասն որոյ ասէն. և Յիսուս ասէ. Այն է՝ որում ես թացեալ ըզպատառն և տայց։ Եւ թացեալ զպատառն՝ տայ Յուդայի Իսկարիովտացւոյ »։ Աւադիկ քաջ բացածանուցեալ և նշանակեալ, անուամբն և ազգատոհմաւ և բարուքն։ Յուդաս էր անուն նորա և Սիմոնի որդի. ազգատոհմն կոչէր Իսկարիովտ, որ թարգմանի Այր սպանիչ. քանզի սպանանելոց էր զՓրկիչն, ապա և անձամբ զանձն։ — Եւ արդ յո՞ փախիցես չուառականդ. ահա յայտնի եղեր. ահա ծանօթ է բաղդ քո։ Եւ մեք իսկ, միթէ նուազ ինչ ակներև կայցեմք յորժամ մատնիցեմք զՏէրն մեր. յորժամ յաճախ յարուցեալ յեկեղեցւոյ, և ի սեղանոյ իսկ Փրկչին՝ երթայցեմք. ո՞ւր. զի՞նչ նիւթել ի ժողովս. յի՞նչ ձեռն արկանել։ Գիտե զայն Աստուած. յորժամ թանգուզիմք ի վաճառել ըզտէր մեր. և որպիսի՞ գնով. ո՞ ոչ զամօթի հարկանիցի. և իշխիցեմք զայն ածել զմտաւ։

1 Յովհ. ԺԳ. 22։ — Մտթ. ԻԶ. 22։

« Եւ տրամեցան յոյժ [1] » ընդ բանս Յիսուսի, եթէ ոմն յընկերաց իւրեանց մատնելոց էր ըզվարդապետն։ Որպիսի՞ դայթակղութիւն Հրէիցն. — ապիրատ ոմն ուրեմն է նա. իւր իսկ աշակերտքն ձեռնթափ լինին ի նմանէ. ոչ հանդուրժեն տանել նմա։ Որպիսի՞ աղէտ ցաւոց՝ որոց սիրէին զվարդապետն իւրեանց, զայդպիսի տեսանելով նախատինս ածեալ նմա։ Յորժամ մեղիցէ ոք Փրկչին, չիցէ՞ արժան զի տրամեսցին ընդ այն ամենայն աշակերտք նորին, այսինքն է ամենայն քրիստոնեայք։ Ամենեքեան տրամեցան, և հարցանէին. Միթէ ես լցեմ մատնիչն այն և ապաշնորհ։ Իսկ Յուդաս որում անկ էր ամօթապարտ լինել և ի զեղջ գալ ի տեսանելն զտաղնապ և զտրամութիւն ամենայն եղբարցն՝ վասն բանին այնորիկ, ոչ միայն ոչ զկծի այնու, այլ և վատահութեան իմն բերելով յինքեան կերպարանս՝ որպէս այլքն, և ընդ նոսին ասէ. Միթէ ես լցեմ, Տէր։ Եւ Յիսուս պատասխանի տայ. Դու ասես. Դու ինքն ես։ Եւ տակաւին ոչ գորովի. սեթեւեթեալ երեսացն պնդութեամբ. կայ ինայ ի խորհուրդ դաւաճանութեանն։ — Ակի՞նք ընդ այս։ Եւ առ իմ՞ք. միթէ յորժամ նիւթեցք ինչ չարիս ի սրտի, և ի վերին երեսս անխռով կերպարանիք, ո՞չ տեսանիցէ զձեզ՝ Յիսուս։ Ո՞չ յիշիցէք զոր և ձեզդ ասէ Յիսուս. Դու ինքն ես։ Միթէ ո՞չ վասն քո ասաց. « Որդի մարդոյ երթայ, որպէս

1 Մտթ. ԻԶ. 22։

գրեալ է վասն նորա »։ Զիք ինչ զարմանաց
վասն նորա, և ոչ ինչ նոր յերեւիս յայդմիկ.
« Այլ վայ մարդոյն այնորիկ՝ յորոյ ձեռն Որդի
մարդոյ մատնիցի. լաւ էր նմա թէ չէր իսկ ծնեալ մարդն այն[1] »։ Զասէ, թէ լաւ էր ամենեւիմբ. քանզի ըստ Աստուծոյ խորհրդոյն և վասն օգտի աշխարհիս՝ որ մատնութեամբն Յուդայի, լաւ էր լինելն նորա. այլ կարողութիւնն Աստուծոյ ոչ արգելու և ոչ արդարացուցանէ զչարութիւն մարդոյ. և բարին զոր ի չարեաց մերոց հանէ՝ ոչ ի չքմեղս կացուցանէ զմեզ։ Վայ և աւաղ մարդոյն այնորիկ՝ յորմէ Յիսուս ինասիցի. լաւ էր մարդոյն այնորիկ եթէ եղեալ իսկ չէր. զի ի պատուհաս իւր ծնեալ է, և ոչինչ օգտէ նմա էութիւն իւր, բայց յանվախճան գործել զաղէտսն։

Եւ արդ ասասցուք՝ ոչ ի վերայ Յուդայի միայնոյ, այլ և ի վերայ ամենայն մեղաւորաց խստասրտից, և ի վերայ անձանց մերոց. վայ, վայ մարդոյն այնորիկ։ Անիծեալ լիցի օրն յորում ծնայ, ասէր Յովբ[2]. ասէր Երեմիա, ի դէմս ամպարշտաց և մերժեցելոց. « Վայ ինձ, վայ ինձ, մայր իմ. իբրև զի՞ ոք ծնար զիս. անիծեալ լիցի որ ասաց հօր իմոյ, թէ ահա ծնաւ քեզ արու. ընդէ՞ր յորովայնի ոչ վախճանեցայ, կամ ոչ եղէն ինձ գերեզման գերկիք մեր իմոյ. անիծեալ լիցի օրն այն և գիշերն. և տարցի զնա խաւար. մի եկեսցէ ի վերայ նորա լոյս.

1 Մտթ. ԻԶ. 2։—2 Յովբ. Գ. 6։

ընկալցի զնա խաւար և ստուերք մահու. եկեսցէ ի վերայ նորա մեգ. խաւարեսցին աստեղք գիշերոյն այնորիկ, և մի տեսցէ զարուսեակն ծագեալ. զի ոչ փակեաց զդրունս արգանդի մեր իմոյ... Ընդէ՞ր տուեալ լիցէ անձինս դառնացելոյ՝ լոյս, և կեանս ցաւագնելոյս ոգւով[1] »։ Ոչնայնութիւն եւեթ էր դարման չարեաց իմոց, և ոչ կարեմ ձեռնհաս լինել նմին. այլ կացից մնացից ցաւագնեալ, ի փառս զօրութեանն Աստուծոյ, առ յիմում պատուհասիս, ի լինել նպատակ նեռից նորա, և յառակ նշաւակի վրիժուց նորին[2]։ Յաւիտեանս յաւիտենից. աւաղ եղկելոյս. դարձեալ աւաղ։ Ասասցուք անդադար. Վայ և եղուկ. ասասցուք մինչդեռ կայ ժամանակ. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ի զուր լիցէ այնուհետեւ ասելն, և ոչ ինչ օգուտ՝ ճանաչելն զաղէտս անձին։

Վայ մարդոյն այնորիկ՝ յորոյ ձեռս Որդին մարդոյ մատնիցի. վայ նմա։ Յիսուս ողբայ զնա. և եթէ ողբայ, եթէ գթայ ի նա, յայտ է թէ վասն դարձի նորա է. զի ոչ վայրապար ինչ ասէ, Լաւ էր նմա թէ չէր ծնեալ մարդն այն։ Ցամ է դեռ ապաշաւանաց. այլ յետ եղերական ի գլուխ ելանելոյ, և գթութեանն սպառելոյ, և այնքան փրկաւէտ խրատուց յանօգուտս լինելոյ, չինայցէ նմա տեղի ողորմութեան։ Յետին անգամ խօսի ընդ նմա Յիսուս՝ յառաջ քան զկատարումն նենգութեանն. « Արա վաղվա-

1 Երեմ. ԺԵ. 10։—2 Ելք. Թ. 16։

զակի զոր առնելոցդ ես [1]». ըստ այնմ զոր ա-
սէցէ ընդ հուպ. «Ննջեցէք այսուհետեւ և հան-
գերուք, զի ահա մատնի որդի մարդոյ [2]». որ
էր ասել. Ամենի է ննջել յայսպիսում պահու.
հսկեցէք և արթուն կացէք: Ապա ուրեմն ա-
սելն՝ Արա վաղվաղակի, կամի ասել. Մի առներ
զայդ. յայտնի եղեր, նշաւակեցար. ծանիր և
դու զանձն քո, և մի վարիր անդրագոյնս. և
կամ, թէ Արա վաղվաղակի վասն իմ. քանզի
ձեպիմ չարչարել և փրկել զմարդիկ. իսկ վասն
քո, զի՞նչ է զոր դուդ կամիս առնել, բարե-
կամդ Յուդաս. զի՞նչ խորհուրդ, զի՞նչ կամք
քո: Առ ի՞նչ գաս. համբուրելո՞վ մատնես զՈր-
դի մարդոյ: Ա՜հ, դու բարեկամ ես իմ, եթէ
կամիցիս. և համբոյրդ՝ որ առ ի քէն համբոյր
է մատնչի, մարթի առ յինէն լինել համբոյր բա-
րեկամի և փրկչի, եթէ ի դուք ողորմութեան
իմոյ լիցիս ապաստան: «Դարձ առ իս, դարձ
առ իս, Իսրայէլ, և ընդէ՞ր կամիցիս կորնչել,
տունդ Յակոբայ. Ոչ կամիմ ես զմահ ամպա-
րըշտին, այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէն
և զկեալ [3]»:

1 Յովհ. ԺԳ. 27: — 2 Մտթ. ԻԶ. 45: — 3 Երեմ.
Գ. 12: — Եզեկ. ԼԳ. 11:

ԻԱ. Դաշն և մատնութիւն Յուդայի:
Յովհ. ԺԳ. 27. 30:

«Եւ յետ պատառոյն՝ ապա եմուտ ի նա սա-
տանայ. իսկ նորա առեալ զպատառն՝ ել արա-
գաւք վաղվաղակի»: Յետին ազգ խրատու էր
նմա ի Յիսուսէ՝ մինչ էլ էր երթեալ կատարել
զոճիրն: Նշանն զոր ետ Յիսուս Յովհաննու, այն
է ծառայել իւր Յուդայի յընթրիսն, տալ նմա
զպատառն թացեալ՝ վասն նորա, էր արդարեւ
նմա՝ ըստ սովորութեան՝ նշանակ պատուոյ և
մտերմութեան: Եւ որպէս թուի ի նմին պահու
ասաց նմա, «Դու ես. գիտեմ զքեզ. և զչարը
նմա քան զայս հարկեցուցիչ ազգ խրատու: Այլ
Յուդաս մնաց անզգայ. և առժամայն «եմուտ
ի նա սատանայ [1]»: Վաղու իսկ արկեալ էր ի
սիրտ նորա մատնել զվարդապետ իւր. այլ արդ
յետ պատառոյն մատնի ի նա, տիրանայ չուա-
ռական անձինն, որ և ամենևին մատն լինի նը-
մին: Եւ ահա յետ սակաւու միոյ՝ թողեալ ի
բաց ելանէ յընկերութենէն Յիսուսի, բայց
միայն առ ի մատնելոյ զնա դառնալ անդրէն:

Ընկալաւ նա և այլ միւս պատառ, եթէ օրէն
լցէ այսպէս կոչել, թէպէտ և ոչ նշանակի առ-
անձինն, քանզի հաւասարաբաշխ էղեւ ամենե-
ցուն. այն ինքն է մարմին Փրկչին: Քանզի խնա-
մով ծանուցանէ Ղուկաս, եթէ ասաց յետ ընթ-

1 Յովհ. ԺԳ. 27:

ռեացն. «Ահաւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ
իս, ի սեղանս». կարկառ նա զձեռն իւր մինչև
յերկնաւորս յայս կերակուր, մինչև ի բաժակս
լցեալ խմով արեամբ: Ո՞վ պատառ օրհասա-
բեր. ո՞վ ահաւոր ըմպելի՝ վասն Յուդայի: Ո՛է
երկբայիմ եթէ անարժան և սրբապղծ հա-
ղորդութիւն իւր՝ վաղվաղեաց զկորուստ նորա,
և եղև նմա առիթ գայթակղութեան ի վարդա-
պետ իւր. զի թէպէտ և չասէ ասա Գիրն եթէ
երկմտեաց Յուդաս ընդ խորհուրդն հաղորդու-
թեան, այլ շատ իսկ այլուր նշանակեաց: Մի
յայնցանէ գտաւ Յուդաս՝ որք ի Կափառնա-
յում ի լսէն զսկիզբն բանից՝ որ զխորհրդե-
նէս, սկսան քրթմնջել. նա եղև առիթ հարցա-
նելոյ Փրկչին զաշակերտս իւր. «Միթէ կամիք
և դուք ի բաց երթալ», ընդ այնոսիկ՝ որք մեկ-
նին յինէն. քանզի յասէն Պետրոսի՝ ի գիմաց
ամենեցուն, ըստ սովորութեան իւրում, «Տէր,
առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենական-
նաց ունիս. մեք հաւատացաք և ծանեաք՝ է-
թէ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ». ծա-
նոյց նմա Յիսուս, եթէ ոչ հաւանի վասն ամե-
նեցուն զայդ խոստովանութիւն, քանզի կըրկ-
նեաց անդրէն. «Ո՞չ ես զձեզ զերկոտասանսդ
ընտրեցի. և միդ ի ձէնջ սատանայ է»: Եւ
յաւելու Յովհաննէս, եթէ «Ասէր զՍիմով-
նեան Յուդայէ Սկարիովտացւոյ. զի նա իսկ
մատնելոց էր զնա, (թէպէտ) և մի էր յեր-
կոտասանից[1]»: Այս բան յայտ առնէ եթէ մի

1 Յովհ. Զ. 60, 68:

էր Յուդաս յամպարիշտ քրթմնջողացն, որոց
առիթ գայթակղութեան եղև խոստումն Քրիս-
տոսի՝ տալոյ զմարմին իւր ի կերակուր և զա-
րիւնն յըմպելի: Եթէ ընդ խոստումն գայ-
թակղեցաւ, ի դէպ է կարծել թէ և ընդ ներ-
գործութիւնն: Յեղեռն յեղերանէ խարդաւա-
նեցաւ Յուդաս. նախ յագահութենէ կուրա-
ցեալ, «զի գող էր, և զարկղն ինքն ունէր, և որ
ինչ անկանէրն՝ նա կրէր[1]», անժուժաբար
քրթմնջէր զնմանէ. ի խոստմանէ հաղորդու-
թեանն՝ սկսաւ զքրթմնջանսն. յառաջեաց՝ ի հե-
ղուն Մարեմայ զեւղն պատուական ի գլուխս և
յոտսն Յիսուսի. այնպէս թմն համարելով՝ եթէ
զրկէ նա զինքն յարծաթոյ գնոյ օծանելեացն:
Եւ վաղվաղակի մեկնեցաւ, սակ արկանել ընդ
Հրէիցն: Մինչ ապականեալք՝ զամենայն ի թոյն
փոխարկեն: Սրբազան սեղան Խորհրդոյն՝ երա-
գեաց զկորուստ աշակերտին մատնչի. և արագ
արագ յելանել անդ իւրում ի սրբոյ սեղանոյն՝
փութացաւ նախ ի մատնութիւն, և ապա ի
յուսահատութիւն և ի խեղդ անձին:

Որ զամենայն ի փրկութիւն անձանց մերոյ
գործէր՝ Յիսուս, թոյլ ետ Յուդայի՝ ընդունել
ընդ այլոց զպարգևն սրբազան, որպէս զի ծա-
նիցուք զչարաչար արդասիս անարժան հաղոր-
դութեան: Տէս զաշակերտն սիրելի ի սեղան
Փրկչին, և անկեալ զլանջսն նորին. ահաւադիկ
օրինակ արժանապէս հաղորդողաց. ի լանջս Յի-

1 Յովհ. ԺԲ. 1:

սուսի հանգչին նոքա. հանգոյն Յովհաննու՝ յաղբերէ անտի առնուն զգիտութիւն գաղտնեաց երկնաւորաց. նման նմին պատուասիրին մտերմութեամբ և գգուանօք վարդապետին իւրեանց. և հաւատարիմ նմանողք ողջախոհութեան նորին, բարութեանն և քաղցրութեան, որ ճշգրիտ տիպք են բարուց Յովհաննու, նըման նմին և արժանաւորք լինին գոլ աշակերտք սիրելիք: Տէս և ի հակառակէն զոմն Յուդա՝ ի հաղորդութեանս. զկամս մտացն՝ յոր գտանի և յոր մտանէ: Ո՛վ Տէր, քանի՞ հակադրութիւն. որպիսի՞ ահեղ ընդդիմակք: Ո՞ՉՔ զարհուրեսցի ի տեսլենէ այսի:

ԻԲ. Հաստատութիւն Խորհրդոյ Հաղորդութեան:

Ընթերցեալ զհաստատութիւն խորհրդոյ Գոհութեան, ի Մատթէոս և յայլս ի սրբազան գրէսցս, որք համաձայնք են միմեանց. «Մինչդեռ ուտէին նոքա՝ առ Յիսուս հաց, գոհացաւ, օրհնեաց, և ասէ. Առէք կերայք, այս է մարմին իմ, որ վասն ձեր տուեալ. զայս արարէք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն՝ առ, գոհացաւ, և ետ աշակերտացն ասելով. Արբէք ամենեքին. այդ է արիւն իմ, արիւն նորոյ ուխտի, որ վասն բազմաց հեղանի՝ ի թողութիւն մեղաց: Զայս արարէք քանիցս անգամ թէ ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի[1]»: Ահաւադիկ յոր ինչ բովանդակի հաստատութիւն խորհրդեանս: Բայց միայն փոխանակ բանին Քրիստոսի, ըստ Ղուկայ, Այս է մարմին իմ որ վասն բազմաց (կամ ձեր) տուեալ, ըստ Պօղոսի Ա՛ռ, երեկ և ասէ. Այս է իմ մարմին՝ որ վասն ձեր՝ բաշխի» (կամ թեկանի). այլ նոյն են միտքն բանիցն. ի մահ մատնեալ, խոշտանգեալ հարուածովք, խոցեալ վիրօք, ջարաջար կախեալ զխաչէ. և ըստ այսմ՝ բեկեալ և ջախջախեալ: Ահա Մարմին՝ զոր տայ մեզ Յիսուս. մարմին՝ որ հանդերձեալ էր կրել ընդ հուպ զչարչարանքդ, և որ կրեալ է արդ: Փոխանակ լատին թարգմանութեանն՝ Արիւն՝ որ հեղանիցի վասն ձեր, բնագիրն ասէ, Հեղեալ կամ Հեղանի, ներկայ ժամանակաւ, ըստ Մատթէի և ըստ Մարկոսի. և ի վերայ մարմնոյն, ըստ յոյն բնագրի որ ի Թուղթն Պօղոսի, Մարմին բեկեալ կամ որ բեկանի, նոյնպէս ներկայ ժամանակաւ: Իսկ ի Ղուկաս՝ ըստ բնագրին և ըստ թարգմանութեան՝ Տուեալ գրի, և ոչ ապառնի եղանակաւ տացի, ըստ այնմ զոր ասէր Յիսուս, «Յետ երկուց աւուրց զատիկ լինի, և Որդի մարդոյ մատնի», ըստ յոյնին և ըստ հայումն: Գործն ի կատարման է. արդէն իսկ խորհուրդ լինի գտանելոյ հնարս՝ ըմբռնել զնա և սպանանել: «Եւ Որդի մարդոյ երթայ, որպէս գրեալ է վասն նորա. բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն Որդին մարդոյ մատնեսցի»,

1 Ա. կորնթ. ԺԱ. 24: — Ղուկ. ԻԲ. 19:

կամ մատնի՝ ըստ յունին։ Միշտ ներկայօրէն
խօսի. քանզի սահմանեալ էր կորուստ իւր, և
հաստատեալ նենգութեանն վասն վաղուն. և
յետ երկուց ժամուց սկիզբն լինելոյ էր գործ-
առնութեանն. և որպէս զի յորում ժամու և
ընդունիցիք զմարմին Նորա և զարիւն, հանա-
պազ առաջի աչաց կալցուք զմահ Նորա։

Քրիստոնեայ, ահա ուսար, տեսեր զբնաւ
զամենայն բանս՝ որ զխորհրդոյս հաստատու-
թենէ։ Քանի՞ պարզ, քանի՞ մեկին բանք. չթո-
ղու ինչ տեղի գուշակելոյ կամ լուծման. և
եթէ գուցէ ինչպիսոյ պարզաբանութեան՝ անկ
է ըստ մտաց բնագրին թարգմանել կամ խմա-
նալ։ «Այս է մարմին իմ». իմ իսկ մարմին.
նոյն մարմին որ վասն ձեր տուեալ։ «Այս է ա-
րիւն իմ». իմ իսկ արիւն. արիւն նորոյ ուխտի,
արիւն հեղեալ վասն ձեր, ի թողութիւն մե-
ղաց ձերոց։ Ըստ այսմ և ասորի թարգմանու-
թիւնն հին՝ զուգաժամանակ յունականին և
առ Աղաքելովքն, ասէ. Այս է իմ յատուկ
մարմին. և ի պատարագամատուցին Յունաց
ասի, Որ մեզն բաշխի. որ ինչ հացս այս և գի-
նիս այս լինի, իսկական մարմին է Քրիստոսի,
իսկական արիւն նորին։ Ահա պարզաբանու-
թիւն՝ եթէ պէտք իցեն։ Քանի՞ պարզ և մեկին,
կրկնեցեալ դարձեալ. և որպիսի՞ զօրութիւն ի
բանքս։ Եթէ նշանակ ինչ կամեցեալ էր տալ,
կամ սոսկ նմանութիւն, գիտեր քաջ ասել այն-
պէս. գիտեր զոր ասացն Աստուած ի հաստա-
տել զթլփատութիւնն. «Թլփատեսջիք զմար-

մինս ձեր. այս իցէ ուխտ ընդ իս և ընդ ձեզ[1]»։
Յորժամ նմանութեամբ ինչ առաջի առնէր,
այնպէս եմն յարդարէր զբանն՝ զի խմացին զայն,
և մի՞ զբ երկմտիցէ. «Ես եմ դուռն. ընդ իս թէ
ոք մտանիցէ՝ կեցցէ»։ «Ես եմ որթն, և դուք
ուռ... որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել
յանձնէ իւրմէ՝ եթէ չիցէ հաստատեալ յորթն,
նոյնպէս և դուք՝ եթէ ոչ յիս հաստատեալ ի-
ցէք[2]»։ Յորժամ բաղդատութիւն ինչ առնիցէ
կամ նմանութիւնս, աւետարանիչքն գիտացին
ասել. Ասաց Յիսուս զառակս զայս. Նման է
կամ նմանեցուցից՝ ասաց։ Իսկ ասասնօր ա-
ռանց ինչ յառաջագոյն պատրաստելոյ, առանց
մեղմելոյ զբանն, առանց մեկնաբանելոյ, ոչ
յառաջ և ոչ յետոյ, ասի ցմեզ համառօտիւ.
Այս է մարմին իմ. այս է արիւն իմ։ Մար-
մին իմ տուեալ։ Արիւն իմ հեղեալ. այս է
զոր տամ ձեզ։ Իսկ դուք զի՞ առնիցէք ընդու-
նելով զայդ։ — Յիշատակ յաւիտենական լիցի
ձեզ պարգևդ՝ զոր տամ յայսմ գիշերի. յուշ
լիցի ձեզ, զի ես եմ որ թողի ձեզ զյիշատակդ,
որ արարի զկտակդ. որ թողի ձեզ զայս պա-
սէք, և կերայ զայն ընդ ձեզ մինչչև էր իմ չար-
չարեալ։ Եւ եթէ տամ ձեզ զ՝մարմին իմ՝ որ-
պէս մատնելի, որպէս մատնեալ՝ վասն ձեր, և
զարիւն իմ որպէս հեղեալ ի թողութիւն մե-
ղաց ձերոց. և միանգամայն ասել, եթէ տամ
ձեզ զայն որպէս զոհեալ, Ճաշակեցէք զայդ որ-

1 Ծննդ. ԺԷ. 11։ — 2 Յովհ. Ժ. 9։

պէս զոհեալ. և յիշեցէք՝ զի գրաւական է դա
եթէ վասն ձեր զոհեցաւ։

Ո՛վ Փրկիչ իմ, երեքկնեցեալ դարձեալ, քանի՞
յստակութիւն, քանի՞ ճշգրտութիւն, քանի՞ ուժ-
գնութիւն. այլ և միանգամայն, քանի՞ հեղի-
նակութիւն, քանի՞ զօրութիւն ի բանս քո։ —
«Կին դու, եղիջիր ողջ ի տանջանաց քոց. և բը-
ժշկեցաւ առժամայն [1]։ «Այս է մարմին իմ».
և է մարմին նորա։ «Այս է արիւն իմ». և է
արիւն նորա։ Ո՞ կարիցէ զայս օրինակ բարբա-
ռել. բայց որ ի բուն ունի զամենայն. ո՞ կարիցէ
հաւատարիմ լինել, բայց այն՝ որոյ գործել և
խօսել մի և նոյն է։ — Զկայ մա՛ռ աստանօր,
հոգի իմ, և մի քններ. այնպէս պարզապէս և
հզօրեալապէս հաւատա՝ որպէս Փրկիչն քո խօսե-
ցաւ. այնքան հլութեամբ՝ որքան նա հեղինա-
կութիւն և իշխանութիւն ցուցանէ։ Դարձեալ
ասեմ. այնպիսի պարզութիւն պահանջէ նա ի
հաւատս քո, որպիսեաւ ասաց զբանն. «Այս
է մարմին իմ». է ուրեմն մարմին նորա. «Այս
է արիւն իմ». ուրեմն արիւն է նորա։ Յառա-
ջին ժամանակն՝ ի հաղորդելն՝ ասէր քահա-
նայն, Մարմին Յիսուսի Քրիստոսի, և հաւա-
տացեալն պատասխանէր, Ամէն. նոյնպէս և
Արիւն Յիսուսի Քրիստոսի, և հաւատացեալն
կրկնէր. Ամէն։ Այսպէս էր. ամենայն ինչ կա-
տարեալ էր. ամենայն ասացեալ, ամենայն մեկ-
նաբանեալ՝ երեքումք բառիւքն։ — Լուռ եւեթ

1 Ղուկ. ԺԳ. 12։

կամ էս. հաւատամ և երկրպագեմ։ Ամենայն
կատարեալ է. ամենայն ասացեալ։

ԻԳ. Օգուտ Հաղորդուրեան։ Կեալ կենօք Քրիստոսի։

Հոգի իմ, արկէր զՀին. պարզապէս հաւա-
տացեր, պարզ ներգործութեամբ. արդ հեղ
զանձն քո՝ խորհրդածելով ի վերայ մեծասքանչ
բարեացս. բարգաւաճեցո քեզն քեզ զբո-
վանդակեալսն ի նմին, զամենայն տուեալսն ի
Յիսուսէ՝ սակաւիկ բառիւքդ։ — Զո՞հ իմ ուրեմն
լցես, Փրկիչ իմ։ Եթէ միայն տեսանէի զքեզ
ի վերայ սեղանոյ քո և ի խաչիդ, ոչ կարէի ըստ
բաւականին հասու լինել, եթէ լնէ և վասն
իմ նուիրիս. այլ այսօր զի ճաշակեմ զքեզ,
գիտեմ, և գոգջիր զդամ՝ զի վասն իմ նուիրե-
ցեր զանձն քո։ Հաղորդ եմ սեղանոյդ, խա-
չիդ, արեանդ՝ որ ի նմին մաքրէ զերկինս և զեր-
կիր, յաղթութեանդ՝ զոր նուաւ տարար ի վե-
րայ թշնամեաց մերոց, ի վերայ սատանայի և
աշխարհի. յաղթութիւն՝ վասն որոյ ասացերդ.
«Ցաշխարհի ասա նեղութիւն ունիցիք, այլ քա-
ջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի [1]»։
Եթէ վասն իմ նուիրեցեր զանձն քո, ապա ու-
րեմն սիրէիր զիս. զի վասն ոյր տայ ոք զանձն՝

1 Յովհ. ԺԶ. 33։

եթէ ոչ վասն բարեկամաց իւրոց։ Ճաշակեմ զքեզ կցորդութեամբ զոհիդ, ապա ուրեմն և սիրով քով. վայելեմ զբովանդակ զսէր քո, ամենայն ընդարձակութեամբ նորին. զդամ զայն որպէս էն. Թափանցանց լինի նա յիս։ Դու ինքնին գաս արկանել յաղիս իմ զհուրն զայն, որպէս զի սիրեցից զքեզ քոյինակերպ սիրով։ Ո՛հ, արդ այժմ տեսանեմ և իմանամ զի վասն իմ առեր զմարմնդ մարդկային. վասն իմ ախտակրեցեր զհիւանդութիւնս նորին. վասն իմ նուիրեցեր զայն. իմ է այն։ Մնայ ինձ ընդուն նել զայն, ճաշակել, ստանալ, միանալ ընդ նը մին։ Ի մարմնանալ քում ի ծոց Սրբոյ Կուսին, առեր լոկ մարմին մի սեփական. իսկ այժմ ըզ հասարակաց մեր առնուս մարմին, և զիմն առանձինն, սեփականես քեզ զայն. քո իսկ է այն. և արասցես որպէս զքոյդ՝ հպմամբ և յիրմամբ քոյումդ. նախ՝ մաքուր, սուրբ, անարատ, և ապա անմահ և փառաւորեալ. ընկալայց ես զկնիք յարութեան քո. շատ է թէ խրախուսեցից ընդունել և զմահուանդ կնիք։ Ե՛կ, եկ, մարմին Փրկչիդ իմոյ. խարշիկ բորբոքեալ. սրբեա զչրթունս իմ, վառեա զիս սիրովն՝ որ վարէ զքեզ ի մահ։ Ե՛կ, արիւն, զոր սերն ետ հեղանիլ. հոսեա ի ծոց իմ՝ հեղեալ հրեղէն։ Ո՛վ Փրկիչ իմ, այս ուրեմն մարմին է քո, մարմինն վիրաւոր պատառեալ. կցորդիմ ընդ նոսին, ընդ որս բովանդակ արիւն քո հոսեցաւ վասն իմ։ Նուաղիս դու, մեռանիս, անցանես. այս է պասէք քո. անցանեմ, աւանդեմ զոգի իմ ընդ քեզ։

Զի՞նչ ելցէ ինձ աշխարհս այս. — և ոչ ինչ։ Ես ի խաչ ելեալ եմ աշխարհի, և աշխարհս ինձ։ Զէ ինձ նա հաճոյ. — և ոչ ես կամիմ հաճոյանալ նոցա։ Ոչ քաղցրանամ ի քիմս նորին. — բարուոք է ինձ այս. շատ է թէ և նա ինձ ոչ քաղցրասցի։ Երկուստեք ի մէնջ ելեալ գժտութեան անջատման. ոչ որպէս թէ մեն սիրեցէ և միւսն ատեցէ. ոչ հանդուրժեմ ես աշխարհի, և աշխարհ ոչ հանդուրժէ ինձ. որպէս մեռեալ առ մեռեալ՝ այնպէս է ինձ աշխարհս և ես աշխարհի։ Երջանիկ պառակտումն։ Այլ ասասցէ աշխարհ զայս ինչ կամ զայն. ասասցէ, եթէ և յետ անջատման՝ կամիցիմ հաճոյանալ նմա. և զի՞ փոյթ է ինձ ընդ բանս նորա. «Ես ընդ Քրիստոսի ի խաչ ելի. կենդանի եմ այսուհետեւ, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս. և որ կեամս այժմ մարմնով՝ հաւատովք Որդւոյն Աստուծոյ կեամ, որ սիրեացն զիս, և մատնեաց զանձն իւր վասն իմ»[1]։ — Եթէ դորովիմ տակաւին մարդկային սիրով, կեամ տակաւին. եթէ ատեամ զայնոսիկ որ ատեն զիս, կեամ տակաւին. եթէ զչարիմ ընդ նախատինս՝ կեամ տակաւին. եթէ հեշտանամ ի փափկութիւնս, կեամ տակաւին. եթէ ցաւք ի խոր խոցեն զիս, կեամ տակաւին։ Ողջամբ մնայք, ողջամբ մնայք. ես երթամ ի բաց. ես չեմ ինչ այսուհետեւ. ես չեմ յայսմհետէ ես. վասն Յիսուսի կեամ ես. Յիսուս է որ կեայ յիս։ — Այսպէս արժան է

1 Գաղատ. Բ. 19–20։

լինել. այս պտուղ է հաղորդութեան: Ո՜հ, թէ քանի՞ հեռի եմ այսի. — սակայն դովաս անկ է ինձ ժաման լինել:

ԻԴ. Հաղորդութեանի՝ կատարի հաշատացեալն ընդ Քրիստոսի:

«Այս է մարմին իմ»: Սովին ուրեմն այսու կատարի միութիւն մեր ընդ Փրկչին. մարմին նորա ոչ վասն իւր ինչ է, այլ վասն մեր. մարմինս մեր չէ վասն մեր, այլ վասն Յիսուսի: Խորհուրդ է սա փափկութեան. խորհուրդ փեսայի և հարսին: Գրեալ է, եթէ «Այրն՝ իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ կինն [1]»: Սուրբ եկեղեցի, ողջախոհ՝ հարսն Փրկչին. հոգի՛ քրիստոնեայ որ ընտրեցեր զնա քեզ ի հարսն՝ ի մկրտութեանդ, հաւատովք, և փոխադարձ հաւանութեամբ, տեսանես զսրբազան մարմին փեսայիդ, տեսանես ի սրբում սեղանին՝ ուր նուիրագործեն զայն. ոչ ևս է յիւրում իշխանութեան այլ ի քումդ. Առէք, ասէ, զայդ. այս է մարմին իմ տուեալ ձեզ. ստուգապէս իշխանութիւն ունիք ի վերայ դորա: Սակայն և ձեր մարմինդ՝ ոչ է ձեր. Յիսուս՝ ստանալ կամի զայն: Այսպէս միասնիք մարմին ընդ մարմնոյ. և եղիջիք երկոքին ի մարմին մի. որ է իրաւունք հարսն, և անթերի կատարումն ողջախոհ և աստուածային ամուսնութեանդ:

Անցանէ վարումն, այլ իրաւունքն մնան: Ոչ ի սպառ տեսէ ողջախոհ գրկախառնութիւնն, այլ իղձք նկրտին ի նոյն, և կան իրաւունք առ նոյն. «Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ասէ Յիսուս, յիս բնակեսցէ, և ես ի նմա [1]»: Ո՛չ առ վայրկեան մի միայն բնակէ ի նմա. միշտաստեւ ենն արգասիք են փոխադարձ վայելչին. Որ ուտէն զիս, վայելէ զիս, բնակեսցէ յիս: Այլ միութիւնն՝ փոխանակաւ է. բնակեսցէ յիս, և ես ի նմա: Ո՞վ, որպէս իրական է միութիւնս այս. որպէս տեւողական արգասիք նորին: Մարմինն Յիսուսի՝ յիշխանութեան իմում է. ի մկրտութենէ ստացայ ես զիրաւունս զայս և վարեմ զայն ի հաղորդութեան. ապա մարմին իմ՝ է Փրկչին իմոյ, որպէս մարմին Փրկչին իմոյ՝ իմ է: Հարկ է յաւելուլ այսն՝ սէր ողջախոհ և կատարեալ. «Որպէս կենդանի է Հայր յիս և ես ի Հայր, և որ ուտէն զիս՝ և նա կեցցէ վասն իմ [2]». ոչ այլ ինչ՝ այլ զսէր իմ ընչեսցէ. ոչ այլ կեանս ունիցի՝ այլ զոր յինէն ընդունիցի:

Առ այս տարեալ հանէ զմեզ և յիշատակ մահուան Փրկչին մերոյ: Ի խանդակաթ, յերջանիկ և ի ցանկալի յիշատակիդ յայդմիկ՝ «Սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ քննել զայս. զի եթէ մին փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն

1 Ա. Կորնթ. Է. 4:

1 Յովհ. Զ. 57: — 2 Նոյն, 58:

ամենեքին մեռեալ էին, և ի վերայ ամենեցուն մեռաւ (և յարեաւ), զի որ կենդանիքն լցեն՝ մի անձանց լցեն կենդանիք, այլ այնմ՝ որ ի վերայ նոցայն մեռաւ և յարեաւ[1]»: Ընկալցուք ուրեմն զարբազանն զայն մարմին՝ խնդութեամբ մեծաւ, այնու երջանիկ մտութեամբ՝ զորմէ ասէր Պօղոս՝ ի նմին վայրի. «Եթէ առանցաք ինչ և զդաստանամք՝ այն Աստուծոյ է[2]»: — Այո, յորժամ առաջի կայ ինձ մարմինն այն, յայլ յայ մէ լինիմ. մոռանամ զանձն. զփեսայն կամիմ վայելել, և զնա միայն: Այլ, բաբէ, առիթ ես զայն՝ որ մի է ընդ Յիսուսի, մինչև լինել մի մարմին ընդ նմին. միացուցանէլ զնա ընդ (մարմնոյ) անպարկեշտի, և լինել ընդ նմին մի մարմին: Բա՞ւ լիցի: — Այլ որ ինչ հաղորդակից լինի սրտիս, որ ինչ և զդոյզն մասն ինչ նորին խորհի ի Յիսուսէ, համարեալ է ինձ լիսին այն՝ որ կամիցի յափշտակել զիս ի Քրիստոսէ: Ի բաց կացցեն ամենայն ցանկութիւնք չարք. մարմինս իմ միացեալ ընդ մարմնոյն Յիսուսի՝ ոչ է ընդակից անմաքրութեան, այլ Յիսուսի, և Յիսուս է վասն մարմնոյ իմոյ: Ահաւադիկ կատարեալ ըրուսն բանին:

Հաղորդութիւն մեկնաբանէ մեզ զամենայն բանս սիրոյ, զընտելութեան և զմիութեան՝ որ են ընդ Քրիստոսի և ընդ եկեղեցւոյ խւրում, ընդ Փեսային և ընդ Հարսին, ընդ նմա և ընդ մեզ[3]»: — Ի զառանցանս մարդկային սիրոյ,

1 Բ. կորնթ. Ե. 14–15: — 2 Նոյն, 17: — 3 Ա. կորնթ. Զ. 15–16:

ո՞ ոչ դիտեցէք՝ զի ուտէ ծախէ մին զմիւս, եղէ՛ լինին ամենայն օրինակաւ ընդ երար խառնիլ. և որպէս քերդողն այն ասէր, խածանել զերեւելին՝ առ ի ստանալ, ճաշակել զնա, առ ի միանալ և ի կեալ ընդ նմին: Այլ որ մոլութիւն և անհնարին է ի մարմնականն սէր, ճշմարտութիւն է, խմաստութիւն է ի սէրն Քրիստոսի. «Առէք, կերայք, այդ է մարմին իմ». ծախեցէք, կլէք, ոչ զմասն մի միայն կամ զկոտոր՝ այլ զբովանդակն: — Բայց հարկ է և մոռք միանալ. զի զի՞նչ եցէ միանալ մարմնով՝ եթէ միտքն ոչ միասցին: «Որ մերձենայ ի Տէր՝ մի հոգի է[1]». մի կամք են նորա, մի փափագ, նոյն երանութիւն, նոյն խնդիր, նոյն կենանք:

Միասցուք ուրեմն ընդ Յիսուսի, մարմին առ մարմին, ոգի առ ոգի: Մի՞ ոք ասասցէ. բաւական է ոգին: Մարմին՝ միջնորդ է միութեան ընդ ոգւոյ. Որդին Աստուծոյ մարմին լինելով՝ էջ մինչև առ մեզ. մարմնով նորին՝ անկ է մեզ ունել զնա, առ ի միանալոյ ընդ ոգւոյ նորին և ընդ աստուածութեան: «Աստուածեղէն բնութեանն հաղորդակիցք եմք[2]», ասէ առաքեալն Պետրոս, քանզի և Քրիստոս հաղորդակից եղև բնութեանս մերում. արժան է ուրեմն միանալ մեզ ընդ մարմնոյն առեցելոյ ի Բանէն, որպէս զի կարողք լիցուք այնու մարմնով վայելել յաստուածութիւն Բանին, և լիցուք աստուածացեալք՝ զաստուածայինս ստանալով

1 Ա. կորն. Զ. 17: — 2 Բ. պետր. Ա. 4:

խմացուածս։ Մաքրեսցուք արդ զմարմինս և զոգիս, զի կայ մնայ մեզ միանալ երկոքումբ ևս ընդ Քրիստոսի. արժանիս յարդարեսցուք զանձինս յընդունելութիւն կուսականին մարմնոյ, յղայելոյն ի կուսէ, ծնիցելոյն ի կուսէ։ Մաքրեցէք զանձինս, պաշտօնեայք սրբութեան, որք մատակարարէք մեզ զայն. ձեռք՝ որ տան մեզ զայն՝ մաքրագոյնք եղիցին քան զլոյս. բերանք՝ որ նուիրագործէ զայն՝ ողջախոհագոյն լիցի քան զանմեղուկ կուսից։ Ո՛վ, որպիսի՞ խորհուրդ. և որպիսեա՛ւ մաքրութեամբ պաշտելի։ «Պատուական է ամուսնութիւն, և սուրբ անկողինք». այլ չէն բաւական սուրբք՝ որոց արժան է սրբագործել զմարմին դաւին։ Սուրբ սահմանաւ ժուժկալութեան, յորում փափագեալ է միշտ Եկեղեցի, որպէս յայտ է գիտնոց, անդստին ի ժամանակէ առաքելոց, և հաստատեաց իսկ զայն՝ յորժամ կարացն՝ յառաջնոց դարուց անտի, ամենայն ուրեք ուր կարացն, և առանձինն իմն օրինակաւ յարևմտեան եկեղեցւոջ, և յատկապէս իսկ ի հռովմէականին, ի նուիրեալն և ի հաստատեալ յերկոցուն դլխաւոր առաքելոցն, ի Պետրոսէ և ի Պօղոսէ։ Կամք են Եկեղեցւոյ պատրաստել առ կոյս մարմնին, առ կերպացեալն ի Կուսէ, պաշտօնեայս արժանաւորս նմին, և տալ մեզ խմացուած իմն խորզմաքրութենէ խորհրդոյս։— «Առէք, կերայք. այս է մարմին իմ». մաքրեցէք զմարմին ձեր՝ որ զնայն ընդունելոց է. զբերանք՝ ուր մտանելոցն է։ Մաքրութիւն բերանոյ լիցէ՝ չհանել ընդ այն՝

բայց բանս օրհնութեան. մաքրութիւն բերանոյ լիցէ՝ չափ դնել լեզուի, և ոչքան հնար է ի լռութեան պահել. մաքրութիւն բերանոյ լիցէ՝ տենչ ողջախոհ համբուրելոյ փեսային, և հրաժարումն յամենայն փափագանաց՝ բաց ի ստանալոյ զնա։ Եղիցի. եղիցի։

ԻԵ. Հաղորդութիւն գրաւական թողութեան մեղաց։ — Մատթ. Իզ. 27–28։

«Արբէք ի դմանէ ամենեքին. զի այդ է արիւն իմ՝ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղուլ՝ ի թողութիւն մեղաց»։ Հրաշափառագոյն է այս մասն խորհրդեանս, յորում, որպէս տեսանի, հզօրագոյնս բարբառի Քրիստոս։ Տալ մեզ յուտեստ ի մարմնոյ զոհին, զվիս պասքին, այդ սովորական իմն է, գիտուն իսկ է այդր զոհի. այլ ոչ երբեք արբեալ է ուրուք զարիւնն, և ոչ զվիոյ զոհի, թէպէտ և կերեալ եղէ ի մարմնոցն։ «Մովսէսի, ասէ Պօղոս, առեալ զարիւն ցուցին և նոխազացն՝ ջրով և բրդով... զկատակարանօքն իսկ և զամենայն ժողովրդեամբն սրսկեաց, և ասէ. Այս է արիւն կտակին՝ զոր պատուիրեաց ձեզ Աստուած[1]»։ Ահա որչափ ինչ ի դէպ թուի առնել արեամբ զոհից. ցօղել այնու զժողովուրդն, այլ ոչ եթէ տալնմա յարբուն։

1 Եել, ԻԴ. 8։— Եբր. Թ. 19։

Քրիստոս միայն անդրադարձնս վարի։ Մովսէս ի սրսկէն զարիւն զոհիցն զԺողովրդեամն՝ ասէ. «Այս է արիւն կտակին». այս արդարեւ ակնարկէ Տէրն՝ յասելն իւր. «Այս է արիւն իմ նորոյ ուխտի»։ Արիւն է յերկոսին ևս ի դէպս. համ՝ օրէն Ժողովուրդն Թաթաւի նովին, բայց այլ ազգ օրինակաւ. զի առ Մովսիսիւ՝ սրսկմամբ Թաթաւի. իսկ սրսկումն հրամայեալ ի Քրիստոսէ՝ արբումն է. աստանօր բերանն և լեզուն ողողին սրսկմամբս. «Արբէք ամենեքին, ասէ. այս է արիւն իմ նորոյ ուխտի. արիւն հեղեալ ի Թողութիւն մեղաց»։

Լի է խորհրդեամբ զանազանութիւն երկոցուն կտակարանացս։ Մի ի պատճառաց՝ որք արգելուին առաջնոյն չուտել յարենէ՝ այս էր, զի տուեալ էր այն ի սեղանն, քաւել վասն անձանց ըստ իւրաքանչիւր մեղանաց. «Վասն այսորիկ ասացի ցորդիան Իսրայէլի, ամենայն անձն ի ձէնջ արիւն մի կերիցէ. և եկն որ յեցեալ եցէ ի ձեզ՝ արիւն մի կերիցէ [1]»։ Խափանեալ է նոցա ուտել յարենէ, քանզի հեղեալ է ի քաւութիւն անձանց. իսկ Որդին Աստուծոյ ներհակաբար պատուիրէ, ըմպել, զի հեղեալ է ի Թողութիւն մեղաց։ Այսու աղագաւ գրեալ ևս էր. «Ամենայն վասն մեղացն՝ յորոց մատնիցէ յարենէ նոցա ի խորանն վկայութեան՝ քաւել ի սրբութիւնսն, մի կերիցէ, այլ հրով այրեսցի [2]»։ Եւ նշանակէին պատուէրքս, զի

1 Դեւտ. ԻԷ. 11։—2 Նոյն, Ջ. 30։

անբաւական գոլով օրինական զոհիցն քաւել զմեղս, մատուցողքն զրկեալք կային և բանադրեալք ետն, անման մնալով ի զոհէն վասն մեղաց մատուցելոյ։ Իսկ Յիսուս՝ հակառակ պատճառաւ, քաւեալ զանձինս մեր, և անթերի կատարեալ զթողութիւն մեղաց՝ զենմամբ մարմնոյ իւրոյ և հեղմամբ արեանն, հրամայէ մեզ ուտել ի մարմնոյն տուելոյ վասն մեր, և ըմպել յարենէ նորոյ ուխտին՝ հեղլոյ ի թողութիւն մեղաց. առ ի ցուցանել՝ զի կատարեալ էր քաւութիւնն, և միայն մնայր մեզ յանձինս մեր վերածել զնոյն։

Վայելեսցուք արդ ի Հաղորդութեան՝ զնորհս Թողութեան մեղաց, ասելով ընդ Դաւթի. «Երանի՝ որոց Թողութիւն եղև մեղաց և ծածկեցան ամենայն յանցանք նոցա։ Երանի՝ առն որում ոչ համարեսցի Տէր զմեղս նորա, և ոչ գոյ նենգութիւն ի բերան նորա [1]», ի կարծելն Եթէ Թողեալ եցեն ինքեան մեղք իւր։ Եւ դարձեալ. «Օրհնեա, անձն իմ, զՏէր, և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա. Օրհնեա անձն իմ զՏէր, և մի մոռանար զամենայն տուրս նորա. Ո քաւէ զմեղս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո... Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր, և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։ Որչափ հեռի են արեւելք յարեւմտից՝ այնչափ հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր [2]»։

1 Սղմ. ԼԱ. 1, 2։—2 Սղմ. ճԲ. 1, 2, 3, և այլն։

Ո՛վ, որպիսի՛ անդորր է խղճի, մտաց խռովելոց ընդ ոճիրս իւր և պակուցելոց ի ստիպմանէ արդարութեանն Աստուծոյ, վայելելն մարմնով և արեամբ Քրիստոսի՝ զնորին Թողութեան մեղաց, և այնու խակ ջնջել զամենայն հետս նոցին: Գիտասցուք, զի Հաղորդութիւն՝ բժշկութիւն է մեղաց. եթէ մաքրեսցուք զանձինս ի մեծամեծացն՝ ջնջեսցէ նա զփոքունն, և տացէ մեզ զօրութիւն զգուշանալոյ ի փոքունց և ի մեծաց: Մեղք են որ անջրպետեն ընդ Աստուած և ընդ մեզ. մաքրել զանձն ի մեղաց՝ բարձումն է անջրպետութեան, և կատարումն գրկախառնութեանց երկնաւոր փեսային ընդ հարսին եկեղեցւոյ՝ առաւել ևս ջերմագոյն և մաքրագոյն:

ԻԶ. Յիսուս զեղջի մեր և կերակուր:

«Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միածին եւտ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս [1]»: Զինչ է տալն զՈրդին Միածին: — Է տալն զնա ի մահ, ըստ օրուամ ասաց յառաջագոյն. «Որպէս բարձրացոյց Մովսէս զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ [2]». այսինքն է բարձրանալ և գնել ի խաչի: Այսպէս ահա

1 Յովհ. գ. 16: — 2 Նոյն, 14:

եւտ Աստուած զՈրդին իւր Միածին. եւտ զնա ի մահ, և ի մահ խաչի: Այլ զիա՞րդ եւտ Աստուած զՈրդին իւր Միածին ի մահ: Որդի Աստուծոյ, յորում կեանքն էր, և ինքն խակ էր կեանքն, զիա՞րդ մեռանէր: — Որպէս զի հնար լեցի մեռանելոյ, Աստուած արար զնա մարդ և որդի մարդոյ՝ հրաշալի օրինակաւ, անխմանալի անհասանելի մտաց, ամենեւին ճշմարիտ, ամենեւին էական, այլ անմման և հիացուցիչ ամենայն բընութեանց. և այսու օրինակաւ ի գլուխս եղին կամքն Աստուծոյ, զի Որդին մարդոյ որ էրն միանգամայն և Որդի Աստուծոյ՝ բարձրացի ի խաչ, և մատնեսցի ի մահ վասն փրկութեան աշխարհի: Արդ այնքան սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչև զՈրդին իւր Միածին եւտ: Նախ՝ եւտ զնա աշխարհի՝ ի մարմնաւորութեան իւրում, և ապա եւտ զնա աշխարհի՝ տալոցն ի պատարագ նմին: Զմարմին զոր էառ՝ առ ի նմանող մեզ լինել և ի միանալ ընդ մեզ, տայ վերստին՝ ի տալն զնա ի զոհ մեզ:

Երկոքին այսոքիկ կատարելոց էին ի մարմնի Փրկչին մերոյ. մի, զի մարմնով գալոց էր Որդին Աստուծոյ առ ի միանալ ընդ մեզ և նմանող մեզ լինել. և միւս, զի նոյն Որդի Աստուծոյ պատարագելոց էր նովին մարմնովն առեցելով, և նուիրել վասն մեր զայն՝ զոհելով: Մնայ և երրորդ իմն կատարելի ի մարմնի անդ զոհեցելումն: Հարկ է զի և կերիցի՝ առ ի սպառ լրումն պատարագին, յաներկեայ գրաւական առնլոյ Որդւոյ Աստուծոյ զմարմնին և զոհելոյ վասն

մեր, և բոլորովին մեզ տուեցելոյ։ Երրորդս
և այս սքանչելիք կատարելոյ են ի մարմնի Յի-
սուսի։ Եւ զի՞նչ արասցէ զայդ։ Հարկ էր
մեզ ուսել զմարմին նորա կենդանի կամ մե-
ռեալ՝ յատուկ տեսակաւն և բնութեամբ։ Եւ
զի հաւասար մարմնոյն՝ տուեալ է մեզ և արիւն
իւր յարբուն, որպէս զի լիցի մեզ ի գրաւա-
կան, եթէ վասն թողութեան մեղաց մերոց հե-
զաւ, հա՞րկ ինչ էր զմարդ զայն ըստ յատուկ
տեսակին։ — Քաւ լիցի։ Եգիտ Աստուած հը-
նարս, զի առանց ինչ կորուսանելոյ յէութենէ
մարմնոյ և արեան իւրոյ, ընկալցուք զնոսին
այլով ինն օրինակաւ քան զլնծայեալն բնակա-
նապէս՝ զդայարանաց մերոց։ Այսու օրինակաւ
ընդունիմք զէութիւն երկոցուն եւս. և ի տալն
մեզ զայն օտար տեսլեամբ՝ բառնայ ի մէնջ Աս-
տուած զխէթ զարհուրանաց ուսելոյ զմարմին
մարդկեղէն և ըմպելոյ զարիւն մարդկեղէն՝ ըստ
յատուկ նոցին կերպարանաց։

Եւ զի՞նչ արար զայդ։ — «Էառ հաց, և ա-
սաց. Այս է մարմին իմ». Ճշմարիտ մարմին իմ,
այլ ընդ հացի կերպարանաւ. էառ բաժակ ը-
ցեալ գինեաւ, և ասաց. «Այս է արիւն իմ».
Ճշմարիտ արիւն իմ, ընդ տեսլեամբ գինւոյն՝ զոր
արկի ի բաժակս, և զոր մատուցանեմս ձեզ։
Արդ, զոր օրինակ՝ որպէս զի Որդին յաւիտեան-
կան և անմահ՝ կարող լիցի մեռանել, որդի մար-
դոյ արար զնա, նոյնպէս և զի մարթասցի ու-
սել ի մարմնոյ անտի և ըմպել յարենէն, հաց
արար զմարմին զայն՝ օրինակաւ ինն. քանզի

զդեցոյց զմարմին իւր տեսակաւ և տեսլեամբ
հացին. կամեցաւ զի և արիւն իւր հեղցի ի բե-
րանս մեր և հոսեսցի ի մեզ՝ տեսլեամբ և կեր-
պիւ գինւոյն։ Ունիմք արդ զէութիւն երկա-
քանչիւրոցն. ի կատարումն գան հին օրինակքն.
հաւասաք մեր գոհանան. ընու վարագ սիրոյ մե-
րոյ, ունի զՅիսուս բովանդակ, յատուկ և ճըշ-
մարիտ գոյութեամբն։ Եկեղեցի ճաշակէ զնա.
Եկեղեցի ընդունի զնա. որպէս հարսն՝ վայելէ
մարմնով նորա. միանայ ընդ նմին՝ մարմին առ
մարմին, և միանալ ընդ նմա և սիրտ առ սիրտ,
ոգի առ ոգի։

Եւ զի՞նչ այս ամենայն կատարեցաւ։ —
Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ։ Սիրոյ՝
ամենայն ինչ հնարաւոր է. սեր և անհնարիցն
ինն կարող է, առ ի լրումն ըղձից իւրոց և ըղ-
ձից տենչալոյն։ Այսպէս և զանհնարինն արար
Աստուած վասն մեր. վասն մեր՝ ասեմ. զի նմա
չէիք ինչ անհնար, ամենայն կարելի է նմա։ Այլ
որ անհնարինն էր բնութեան առնել, և մարդ-
կային մտաց ըմբռնել, արար զայն։ Որդին իւր
եղև որդի մարդոյ, և մերձեցաւ ի մեզ. բնու-
թիւն մարդոյս, զոր արկ ինն նա ընդ ինքն և
ընդ մեզ, ոչ արդեալ զնա՝ ինքնին անձամբ գալոյ
առ մեզ, և իբրև Աստուած խակ. այլ նա մանա-
ւանդ, եկն մարդով խակ. և մարմինն զոր էառ՝
կապանք եղեն մեզ ընդ նմին։ Այսպէս և յոր-
ժամ Որդին մարդոյ տուեալ եղև ի մահ, ստու-
գապէս Որդին Աստուծոյ մեռանէր ինքնին՝ բը-
նութեամբն զոր էառ։ Արդ, եթէ հարկ էր ճա-

շակել ի մարմնոյ անտի տուէլոյ մեզ ի զենլի, սէր նորա գայցէ աղագս հնարից։ «Առէք, կերայք, այդ է մարմին իմ». մի քննէք զորպէսն. ձեզ գոյութիւնն պիտոյ է. զի ի գոյութիւնն միացաւ աստուածութիւնն և կեանքն։ Ընդ տեսլեամբ հացիդ՝ իմ մարմինս է. ընդ տեսլեամբ գինւոյդ՝ այն արիւն է՝ որ վասն ձեր հեղաւ։ Կերայք, արբէք. ձեր է ամենայնն. մի այնմ ուշ կալջիք՝ զոր զգայութիւնքդ առաջի դնեն. առ հաւատս ձեր բարբառիմ, դմա ասեմ, «Այդ է մարմին իմ». յուշ լիցի ձեզ, զի ես եմ որ ասեմ զայդ։ Ոչ ոք՝ բաց յինէն, ոչ ոք՝ բաց յԱստուծոյ, ոչ ոք՝ բաց յՈրդւոյ Աստուծոյ՝ որով ամենայն ինչ եղեւ, կարող էր զայդ օրինակ խօսել։ — Յուշ լիցի ձեզ՝ զի ընդ կերպարանօք հացիդ և գինւոյդ՝ մարմին իմ և արիւն իմ են, զոր տամ ձեզ. մարմինն տուէալ ի մահ, արիւնն հեղեալ ի թողութիւն մեղայ ձերոյ։

Իսկ զիարդ այս ամենայն եղեւ։ — «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ»։ — Միայն հաւատալ մնայ մեզ, և ասել ընդ աշակերտին սիրեցելոյ. «Մեք հաւատացաք և ծանեաք զսէրն Աստուծոյ՝ զոր ունի առ մեզ[1]»։ Ո՛վ գեղեցիկ խոստովանութեանս հաւատոյ. գեղեցիկ դաւանութիւն։ — Զի՞նչ հաւատաս դու, քրիստոնեայդ։ — Հաւատամ ի սէրն Աստուծոյ՝ զոր ունի առ իս. հաւատամ զի ես ինձ զՈրդին իւր.

1 Ա. Յովհ. Դ. 16։

հաւատամ՝ զի եղև նա մարդ. հաւատամ զի եղև ինձ ի կերակուր. և զի ես ինձ զմարմին իւր յուտել և զարիւն իւր յըմպել, այնպէս գոյացցաբար՝ որպէս էառն և պատարագեաց զերկոսին ես։ — Այլ զիարդ այդմ հաւատաս։ — Քանզի հաւատամ ի սէր նորին, որ և անհնարիցն է կարող՝ վասն իմ. որ կամի և առնէ զայն։ Հարցանել միւս ես զիարդ, թերահաւատութիւն է ի սէր նորա և ի կարողութիւն։

Եթէ հաւատամք յայդ սէր, նմանողք եղիցուք դմին։ Յորժամ զկառաց և զծառայութենէ Աստուծոյ բանք լցեն, չէ օրէն երանդեան մերոյ գտանել ինչ անհնարին «Եթէ հաւատաս, ասէ, ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն[1]»։ Մի՞ թէր, «Եթէ հաւատաս». ամենայն դժուարութիւն ի հաւատալն է. այլ եթէ միանգամ հաւատաս՝ ամենայն ինչ հնարաւոր է քեզ. գործակից լինի Աստուած երանդեանդ, և կարողութիւն նորա հասանէ քեզ ի թիկունս։ Դժուարութիւնն յաղթահարելի՝ ոչ է ի գործսն՝ զոր կայ քեզ առնել վասն Աստուծոյ, այլ ի քեզ իսկ է, ի հաւատս քո. «Եթէ հաւատաս»։ Այլ Աստուած օգնական լինի մեզ առ ի հաւատալ։ — «Հաւատամ, Տէր, օգնեա անհաւատութեանս իմոյ»։

1 Մարկ. Թ. 22–23։

ԻԷ. Խոստովանի Յիսուսի տալոյ զնարմին իւր և զարիւն ի հաղորդութեան: — Յովհ. Զ. 32–59:

Առ ի վերայ հասանել ամենայն խորհրդոյ կամաց Որդւոյն ի Հաղորդութեան, անկ է ունկն դնել ասացելոցն ի նմանէ, ըստ աւետարանչին Յովհաննու. ուր և տեսանեմք երիս ինչ առնել նորա: Նախ, բացայայտէ մեզ զոր տայն. երկրորդ, զոգուտն զոր անտի շահիցիմք. երրորդ, զինարս շահելոյ զոգուտն: — Տուեալն առ մեզ՝ մարմին իւր է և արիւն. և ի սկսանելն ճառել զայսմանէ, ձայն վերացուցանէն մարդիկ. «Զիա՞րդ կարէ դա տալ մեզ ուտել զմարմին իւր [1]»: Մարդա՝ միշտ ընդ հակառակս անձին իւրոյ և հակառակս բարեացն Աստուծոյ դատի: Յորժամ Յիսուս առ ի պատրաստել զմեզ առ խորհուրդն՝ զոր աւանդելոց էր եկեղեցւոյ իւրում՝ յաւուր ընթրեացն, ասաց տալ մեզ զմարմին իւր յուտել և զարիւնն յըմպել, յերիս մոլորութիւնս կործանեցան Հրեայքն: Համարեցան եթէ զմարմնոյ լոկոյ մարդոյ ասիցէ, զորդւոյ Յովսեփայ. այս նոցա առաջին մոլորութիւն. մարմին նման մնոյ որով կերակրին մարդիկ. այս երկրորդ մոլորութիւն. և մարմին՝ զոր ծախեալ սպառիցեն յուտելն, և այս երրորդ:

Ընդդէմ առաջնոյն ասէ. «Ես եմ հացն կեն-

1 Յովհ. Զ. 53:

դանի իջեալ ի յերկնից [1]»: Ապա մարմինն զոր ճաշակեմք՝ ոչ է մարմին որդւոյն Յովսեփայ. մարմին է Որդւոյն Աստուծոյ, մարմին յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ և կերպացեալ ի կուսական արգանդէ: «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն ի վերայ քո հովանասցէ. քանզի որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, և Որդի Աստուծոյ կոչեսցի [2]»: Որ ծնանելոցն է ի քեզ՝ սուրբ, գոյական իմանի ասա, որպէս յայտ է գիտողացն զքերականութիւն և հասկացողաց զզօրութիւն բառիցն. այսինքն է՝ Սուրբ ինչ գոյացապէս. որով եղանակաւ բանի յայտ առնի՝ զի սրբութիւն իսկական է Յիսուս Քրիստոս: Վասն էր: — Քանզի անձն նորա ինքնին իսկ սուրբ է, էական և գոյացական սրբութեամբ Որդւոյ Աստուծոյ: Վասն այնորիկ, ասէ հրեշտակն. Որդի Աստուծոյ կոչեսցի: Զի՞նչ է կոչեսցիս. միթէ ոչ եցէ իսկապէս, և օրինակաւ իւիք այնպէս անուանիցի: — Օ՛ն անդր, ի բաց տար. նա մանաւանդ այնպէս կոչեսցի գերազանցօրէն: Հայրն որ ի յաւիտենից ծնանի զնա, ծնցի զնա ի ծոց Մարիամու: Զօրութիւն բարձրելոյն ի վերայ նորա հովանասցի, ներամուտեսցէ ի ծոց նորին. և մարմին զոր ի կուսական արգանդէ անտի առնուցու Որդին Աստուծոյ՝ կերպասցի ի Հոգւոյ Սրբոյ: Ապա Սուրբ եցէ մարմինն այն սրբութեամբ Որդւոյն Աստուծոյ՝ որ յինքն միացուցանէ զայն.

1 Յովհ. Զ. 32–4, 41–3: — 2 Ղուկ. Ա. 35:

լի էյէ կենօք, աղբիւր կենաց, կենդանի և կեն-
դանացուցիչ ինքնին իսկ։ Այսպէս եղծանի ա-
ռաջինն մոլորութիւն։

Առ ի հերքել զերկրորդն, որ էր կարծելն՝
եթէ խոստացեալն ի Քրիստոսէ կեանք, էր հա-
սարակաց այս և մահացու, կրկնէ և յաւելու
ի Ճառ բանիցն, եթէ մշտնջենաւոր կեանք են՝
և հոգւոյ և մարմնոյ, զոր տալն մեզ կամի։
«Այս են կամք Հօր իմոյ, զի զամենայն զոր ետ
ցիս Հայր՝ ոչ կորուսցից ի նմանէ, այլ յարուցից
զնա յաւուրն յետնում... Եթէ ոք ուտիցէ ի
հացէ յայսմանէ՝ կեցցէ ի յաւիտեան։ Հացն զոր
ես տայ՝ մարմին իմ է. զոր ես տայ վասն կե-
նաց աշխարհի [1]»։

Ի հերքումն երրորդի մոլորութեանն Հրէից,
որք համարէին մարմին ծախելի՝ յուտելն, ասէ
ցնոսա. «Այդ գայթակղեցուցանէ՞ զձեզ». ա-
պա առաւել ևս գայթակղէսջիք՝ «եթէ տեսա-
նիցէք զՈրդի մարդոյ՝ զի ելանիցէ ուր էր զա-
ռաջինն [2]»։ Որպէս թէ ասիցէ. Կերիցի մար-
մին իմ, որպէս և ասացի, այլ սակայն կացից
միացեալ ես կենդանի և անթերի։ Որով և ի վե-
րայ բերէ, թէ մի կարծէք եթէ զհասարակաց
մարդկեղէն մարմնոյ ասիցեմ, կամ զմարմնոյ
որդւոյն Յովսեփայ. և մի համարիցիք եթէ ա-
սիցեմ ձեզ տալ մարմին առ պահուստ մահկա-
նացու կենացդ, ապա և ոչ մարմին մանրելի և
սպառելի յուտելն։ Ըստ այսմ տեսութեան՝

1 Յովհ. Զ. 62։—2 Նոյն, 66։

«Մարմին ինչ ոչ օգնէ. Հոգին է կենդանարար.
Բանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է և
կեանք [1]»։ Թէպէտ և՝ ըստ կարգի բանիցն՝ ըն-
մարմնոյ և զարեանէ իւրմէ խօսի, ուտելոյ և ըմ-
պելոյ զնոսին, այլ ամենայն զոր ասացն՝ հոգի
է. ամենայնն կեանք է. ամենայնն միացեալ է
ի հոգի և ի կեանս. քանզի մարմին իւր և արիւն՝
մարմին և արիւն են Որդւոյ Աստուծոյ։

Այդ, որքան բաղձալի են մեզ կեանք՝ այնքան
ի դէպ է բաղձալ մարմնոյ՝ որ պարգևէն մեզ
զայն, որ բովանդակէն զայն, և որ ինքն իսկ
կեանքն է։ «Գիտացի, եթէ զօրութիւն ելայ-
նէն [2]». էր այն զօրութիւն բժշկութեան ախտա-
ցեալ մարմնոյ. որքան առաւել ևս ելցէ՝ առ ի
կենդանութիւն հոգւոյ։ Մատչցուք ուրեմն
առ մարմինն այն, մերձեսցուք, կերիցուք։ Ելցէ
անտի զօրութիւն կենսատու հոգւոյ մերոյ, որ
և զմարմին կենդանացուսցէ ի պահու իւրում։

Նոյն բան է և վասն արեան Յիսուսի. լի է
արիւնն այն կենդանարարաւ մեզ զօրութեամբ,
զի արիւն է Որդւոյ Աստուծոյ. արիւն նորոյ
ուխտի, որպէս ասէ ինքնին. այսինքն է, ըստ
մեկնութեան Պօղոսի, «Արիւն յաւիտենական
ուխտին, որ ելան ի մեռելոց զհովիւն հօտից՝
զմեծն [3]»։ Այսպա ուրեմն ինքն իսկ յարեաւ ի
մեռելոց զօրութեամբ արեան իւրոյ, քանզի
յարչարանօք իւրովք մտանելոց էր ի փառս իւր։
Այնու արեամբ, արեամբ կտակարանաց և ուխ-

1 Յովհ. Զ. 64։—2 Ղուկ. Ը. 46։—3 Եբր. ԺԳ. 20։

տին յաւիտենականի՝ կայ և մեզ ժառանգորդս լինել արքայութեան նորին, և ուռնել կեանս յաւիտենականս։ — Կերիցուք, արբցուք, կեցցուք, սնցուք, միասցուք ընդ կենաց՝ ի ձեռն այդր մարմնոյ և այդր արեան կենդանարարի։ Իսառ նա զայդոսիկ առ ի մերձենալոյ առ մեզ. « քանզի ոչ եթէ զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ ». զմարդկայինս ընութիւն կամեցաւ առնուլ։ « Արդ, որովհետև մարդիկ հաղորդեցին մարմնոյ և արեան, և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղև նոցունց [1] », (այսինքն ի մարմնոյ և յարենէ զուգել), այնու կցորդի ընդ մեզ, և այնու փրկէ զմեզ։ Բազում անգամ ասացաք, և արժան է ոչ դադարել ի կրկնելոյ. մարմինն այն և արիւն՝ կապանք եղեն կցորդութեան մերոյ ընդ նմա, գործիք փրկութեան մերոյ, աղբիւր կենաց մերոց. քանզի վասն մեր էառ զայնոսիկ. քանզի ի փրկութիւն մեր նուիրեաց զայնոսիկ. քանզի դարձեալ առ ի կենդանացուցանել զմեզ տայ զայնոսիկ։ Մատիցուք սրբազան ի՛ն քաղցու առ կերակուրն երկնաւոր. անդ՝ ամենայնն հոգի է և կեանք։

1 Եբր. Բ. 14–16։

ԻԸ. Հաւատք տան խելամուտ լինել խորհրդեանս այսմիկ։ — Յովհ. Զ. 43–70։

Ոչ է բաւական գիտել եթէ որպիսի՞ պարգեւս ընկալաք ի Քրիստոսէ. արժան է և ուսանել ի նմանէ երկուս եւս ինչ իրս կարևորս. մի՝ օգուտն շահելի անտի, և միւս՝ հնարք ընդունելոյ զայն։ Այս ամենայն մեկնաբանի ի վերջերորդում անդ գլխի աւետարանին Յովհաննու, զոր սկսաքս (քննել)։ Այլ յառաջ քան զամենայն՝ գիտելի է այս, եթէ Աստուծոյ միայն է կարողութիւն տալ մեզ զխելամտութիւն իրեղ, ըստ այնմ բանի, եթէ « Մի՛ քրթմնջէք ընդ միմեանս. ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց՝ ձգեսցէ առ իս [1] »։ Արդ, առ ի գալ առ Յիսուս և խելամուտ լինել բանից նորա, հարկ է ձգիլ ի Հօրէ նորին։ Եւ զի՞նչ իցէ ձգիլն ի Հօրէ, եթէ ո՞ւ ուսանիլ յԱստուծոյ, որպէս և յաւել Յիսուս. « Գրեալ է ի մարգարէս. Եւ եղիցին ուսեալք յԱստուծոյ։ Ամենայն որ լսէ ի Հօրէ և ուսանի՝ գայ առ իս։ Ուրեմն ձգիլ ի նմանէ՝ է լսել ձայնի նորա, և ուսանիլ ի քաղցր և յամենաշնորհ թելադրութենէ և ներշնչութենէ ճշմարտութեանն։ Որ այսպէսն ուսանի՝ ոչ ևս քրթմնջէ զբանից նորա. այլ լսէ և հաճեալ հաւանի. վասն որոյ և աւարտէ զբանն ասելով. « Են ոմանք ի ձէնջ՝ որ ոչ հաւա-

1 Յովհ. Զ. 43–44։

տան, վասն այնորիկ ասացի ձեզ, թէ ոչ ոք կարէ գալ առ իս՝ եթէ ոչ իցէ տուեալ նմա ի Հօրէ իմմէ [1]»: Նա ուրեմն ձգի առ Յիսուս, որում տուեալ լինի հաւատալ նմա: Հայրն ձգէ զմեզ առ Քրիստոս, յորժամ ազդէ ի մեզ զհաւատս: — Հաւատամ, Տէր, հաւատամ. չեմ ես յայնցանէ՝ որք կամին ի բաց գնալ առ ի քէն, վասն բարձրութեան բանից քոց. այլ մանաւանդ ի նոցանէ եմ՝ որք ընդ Պետրոսի ասեն. «Տէր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս. և մեք հաւատացաք և գիտացաք եթէ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ [2]»: — Հաւատա՛ ուրեմն և գիտացես: Հաւատա՛, նախ, որպէս Ճշմարիտ որդի եկեղեցւոյ, հլու և լսող, և արդարև ուսեալ յԱստուծոյ: Յետ ուսանելոյ յԱստուծոյ և քաղցրութեամբ ձգեալ լինելոյ ի հաւատս, ձգիցես և ի խելամտութիւն, որքան կարէորն իցէ ի հաստատութիւն հաւատոցդ. և ասիցես յամենայն դէպս, և ի վերջ քան զամենայն՝ ի հաղորդութեան. «Հաւատացաք և գիտացաք զի Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ»: Զէ՛ և այդ բաւական. յառաջ ես մատիցուք, ի յետագայ բանսդ, կամքն Աստուծոյ: Աղաչեսցուք զՀայր Յիսուսի Քրիստոսի, որ հաճեցաւն լինել և մեզ հայր, զի ձգեսցէ զմեզ, ուսուցցէ զմեզ ի ներքուստ, լսելի առցէ մեզ զձայն իւր, և ազդոյ՝ զբարբառ իւր:

1 Յովհ. Զ. 65–66: — 2 Նոյն, 69, 70:

ԻԹ. Պտուղ հաղորդութեան՝ յաւիտենական կեանքն են. — Յովհ. Զ. 26–35–46:

Երկու լինչ գտանեմք ի նշանակեալ բանդ. զպտուղն հոգեւոր՝ շահելի ի Հաղորդութենէ, և զհնարս շահելոյ զպտուղն: Դիւրին է իմանալ զպտուղն. զի է քեցել զմեզ ի կենացս և յարել յԱստուած: Զայս՝ մեկին բանիւք բացայայտէ Քրիստոս, այսպէս ասելով. «Ամէն ամէն ասեմ ձեզ. ինդրեք զիս, իբր ոչ եթէ զի նշանս լինչ տեսէք, այլ զի կերայք ի հացէ անտի (զոր բազմացուցի յանապատին) և յագեցարուք. երթայք գործեցէք, մի զկորստական կերակուրն, այլ զկերակուրն՝ որ մնայ ի կեանսն յաւիտենականս, զոր Որդին մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Աստուած [1]», տպաւորեալ ի նմա զկնիք իւր և զկերպարանս, և բազմապատիկ սքանչելիօք հաստատելով զվարդապետութիւն նորա և զառաքումն: — Ահա պարզապէս խօսիս, ո՛վ Փրկիչ իմ. այս են կամքդ, թափել զմեզ ի կորստական կերակրոյ և ի կենաց, որ բովանդակ խնամք են մեր, յորսակս վաստակիմք զամն ողջոյն, և զամենայն փոյթ և ջան մեր արկանել ի գիւտ անկորուստ կերակրոյ և կենաց: Ուստ՛ ինձ, Փրկիչ իմ, և ձգեա զիս զարմանալի եղանակաւդ, որ յօժարեցուցանէ զանձն մատչել առ քեզ: Գարշելո՛

1 Յովհ. Զ. 26–27:

ինձ զամենայն խնամ՝ որ յանգիցի ի կեալ առ ի մեռանել. քաղցրացո՛ ինձ զճաշակ կենաց անմահականաց։

«Զի՞նչ նշան առնիցես, զի տեսցուք և հաւատասցուք[1]»։ Զի՞նչ ինչ զարմանալիս գործես։ Արդարև յագեցուցեր զմեզ հացիւ յանապատին. այլ զի՞նչ նմանութիւն եցէ հացիդ՝ ընդ մանանային՝ զոր ետ Մովսէս հարցն մերոց, վասն որոյ գրեալն է. «Հաց յերկնից ետ նոցա ուտել»։ Քո տուեալ հացդ՝ երկրային էր. և այնքան խտիր ընդ քեզ և ընդ Մովսէս՝ որքան ընդ երկիր և ընդ երկինս։ — Յայտնապէս երևի ի բանից դ, զի միայն զառօրեայ կենաց պարենի փոյթ էր նոցա (որք զայս ասեն), և զի ոչ վայրապար կշտամբեաց Քրիստոս զմարմնասէր փափագ նոցա. զի ոչ վերացուցանէն զմիտս իւրեանց անդր քան զմանանայն, որով կերակրեցան մարմինք նոցա յանապատին. չէն նոցա ծանօթ այլ երկինք՝ բայց ամպքն յորոց առաքեցաւ նոցա մանանայն. ոչ յիշէլով զի յօրինակ Քրիստոսի՝ որ բերելոց էր նոցա կեանս յաւիտենական՝ կոչեցաւ այն՝ հաց երկնից և հաց հրեշտակաց։ Վարի ուրեմն նա բանիւ Սուրբ Գրոց՝ որք մեծացուցանել կամին զքանչելիս մանանային, առ ի բարձրացուցանել զմիտս առ Աստուածամարիան հաց հրեշտակաց, առ Աստուածութիւնն՝ որ երանելիս առնէ զնոսա, և որ մարմնաւորութեամբն՝ ընտանի և զգալի եղեւ մարդ-

1 Յովհ. Զ. 30–31։

կան առ ի կենդանացուցանել զնոսին։ — Արդ՝ ասէ ցնոսա. «Իջի ես ի յերկնից. Որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, և որ հաւատայ յիս՝ ոչ ծարաւեսցի յաւիտեան»։ Ապա ինքն է «հացն Աստուածամարիա՝ կերակուր հոգւոց՝ որք գանն առնա հաւատովք։ Այլ սակայն մի յուսասցին մարդիկ հպել առնա՝ յաստուածութեանն կուսէ, և ոչ միանալ իսկ և իսկ ի նա. զի կարի ի վեր է բանդ այդ առ մեզաւոր բնութիւն՝ մտանել ի զգայութիւնս մարմնեղէնս։ Մարդ եղեւ ինքն առ ի մերձենալ ի նոսա. մարմինն զոր էառ՝ միակ միջնորդ է տուեալ նոցա առ ի նմանէ՝ առ ի միանալ ընդ նմին. և վասն այսորիկ իսկ եկից զայն աստուածութեամբ. ուրեմն և հոգւով և շնորհօք, կամ որպէս Յովհաննէս ասէ «Շնորհօք և Աստուածութեամբ», և այլուր «Ոչ չափով տուաւ նմա հոգին», և «Ի լրութենէ անտի նորա մեք ընկալաք»։ Յորմէ հետևանայ, եթէ ունիմք մեք ի նմա կեանս Աստուածային, կեանս յաւիտենական, կեանս հոգւոյ և մարմնոյ. և ոչ Աստուածդ, այլ ի նմա՝ որպէս Որդի Աստուածոյ, այլ ի նմա՝ որպէս Որդի մարդոյ. քանզի անտի սկիզբն առնէ։ Գուն գործեցէք պատրաստել ձեզ զկերակուրն՝ որ ասցի ձեզ Որդւոյ մարդոյ. բայց միայն զի և հաւատասջիք՝ եթէ հաց է նա լիջեալ յերկնից, այսինքն է Որդին Աստուածոյ. և զի հաւատասջիք՝ եթէ մարմին իւր՝ զոր տայ ձեզ ի կենդանութիւն՝ լի է հոգւով և կենօք։ — Այսպէս վախճանն յոր ածել կամի՝ կենդանարարութիւն մեր է,

այլ յաւիտենական կենաց. և ընդ Հոգւոյ և ընդ մարմնոյ: «Այս են կամք Հօր իմոյ, ասէ, զի զամենայն զոր ետ ցիս՝ ոչ կորուսցէ ի նմանէ. և առ ի տալ կեանս հոգւոյ և մարմնոյ՝ «Յարուցցից զնա յաւուրն յետնումն». և դարձեալ. «Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին և մեռան... Որ ուտիցէ զաց ի սմանէ՝ մի մեռանիցի [1]»:

Այս ուրեմն է պտուղ Հաղորդութեան, հաստատեալ ի լրումն ըղձից մերոց առ ի կեալ. և վասն այսորիկ տալ մեզ կեանս յաւիտենական, ի հոգին՝ ծանուցանելով զՀմարտութիւն, և ի մարմնին՝ փառաւոր յարութեամբն:

Ո՛վ Տէր, իմ իսկ փափագիցեմ. — կենաց: Կեալ ի քեզ, կեալ վասն քո, կեալ քեզ, և քոյին յաւիտենական Հմարտութեամբ. կեալ բոլորովիմբ. կեալ ի հոգւոջ, կեալ իսկ և ի մարմնի. մի երբեք կորուսանել զկեանս. կեալ միշտ և հանապազ: Զայս ամենայն ունիմ ես ի Հաղորդութեան. ունիմ ուրեմն զամենայն, և չինայ ինչ այլ՝ բայց վայելելն:

Լ. Անյաղ տեսչ Հաղորդուրեան: — Յովհ. Դ. 34–40–47:

«Տէր, տուր մեզ զհացն զայն». զհացն՝ զորմէ ասացեր տալ կեանս յաւիտենականս: Զայս

1 Յովհ. Զ. 39, 47:

ասեն Հրեայքն. և այդու յայտ առնեն զբոլոր մարդկային բնութեանս խղճ, կամ լաւ ևս ասել՝ զբոլոր բանական բնութեան: Կամի սա կեալ յաւէժաբար. կամի լիապատար լինել և համօրէն՝ փափագէ երանելի լինել: Զայս յայտ առնէր և Սամարուհին, յասելն ցնա Քրիստոսի. «Կին դու... որ ըմպել ի ջրոյն զոր ես տացս նմա՝ մի ծարաւեսցի յաւիտեան», անդէն և անդ պատասխանելով. «Տէր, տուր ինձ զջուրն զայն, զի մի ծարաւեցից, և եկից այսր հանել ջուր [1]», ի խորոյ ջրհորոյ աստի, այսքան աշխատանաք: Ասեմ դարձեալ. Երջանկութեան փափաքն բնութիւն մարդոյս. չկամի քաղցնուլ և ծարաւել. չկամի կարօտանալ իմիք, ոչ բաղձալ իմիք, ոչ աշխատել, ոչ վաստակել. և այդ զինչ իցէ, եթէ ոչ՝ երջանիկ լինել: Այս են իղձք բնութեանս մարդկայնոյ. այս իսկն նորա: Այլ խաբի ի հնարսն. ծարաւի զգայական հեշտութեանց. կամի գերազանցիկ լինել. փափագէ փառաց աշխարհայնոց. և առ գամագիւտ լինել սոցին՝ ըղձայ փարթամութեան. անյագ է ծարաւ նորա. հանապազ խնդրէ, և երբեք ոչ ասէ շատ. միշտ առաւել ևս, միշտ առաւել ևս: Հետաքնին է. Հմարտութեան ծարաւէ, այլ ոչ գիտէ ուր զայն գտանել կամ որով Հմարտութեամբ յագենալ. և զոր առձեռն ինչ գայցէ՝ հաւաքէ աստի և անտի, բարւոք կամ չարաչար հնարիւք. և զի թեթեւ է ամենայն վայրաքնին

1 Յովհ. Դ. 10, 14:

հոգի, գիւրախաբ լինի յամենեցուն՝ որք խոս-
տանայցեն նմա զինդրեալն Ճշմարտութիւն։—
Կամիցի՞ս չքաղցնուլ չծարաւել ընաւ. մատիր
առ հայն անկորուստ, և առ Որդին մարդոյ՝ որ
մատակարարէ քեզ զայն. առ մարմին նորա,
ասեմ, և առ արիւն, յորում են միանդամայն
և Ճշմարտութիւն և կեանք. քանզի մարմին և
արիւն է՝ ոչ որդւոյ Յովսեփայ, որպէս Հրեայքն
ասէին, այլ Որդւոյ Աստուծոյ։— Ո՞վ Տէր,
տուր ինձ հանապազ զհացն զայն։ Ո՞ ոչ քաղ-
ցեցէ դմին. ո՞ ոչ փափագիցէ բազմել ի սեղան
քո։ Ո՞ կամիցի թողուլ ելանել անտի։

Այլ առ առաւել ևս մտել զմեզ ի փափագ
մատչելոյ յայն, ազգ առնէ Յիսուս, եթէ ոչ
գիւրին ինչ է այդ, ոչ հասարակ ինչ. այլ հարկ
է սիրելի գոլ Աստուծոյ, մատչիլ ձգիլ, ազգիլ,
ընտրիլ ի նմանէ։ Տեսէք, քանիք ի լսողացն ի
բաց գնան ի նմանէ. ոմանք քրթմնջեն, այլք
գայթակղին. իւր իսկ աշակերտքն թօթափին ի
նմանէ. և են իսկ յառաքելոց անտի որ ոչ հաւա-
տան ի նա։ Որքան անհաւատքն ի բաց հեռանան,
այնքան մօտագոյնս վայելէ մատչել աշակերտացն
Ճշմարտից։ Եկայք, լուարուք, երթայք զհետ
Հօրն՝ որ ձգէն զձեզ, որ ուսուցանէն զձեզ ի
ներքուստ. որ տայ ձեզ իմանալ զկարիս ձեր,
և զտոյգ հնարս յագելոյ՝ ի Քրիստոս Յիսուս։
Կերայք, արբէք, մնարուք, լցարուք, յագե-
ցարուք։ Անյագութիւն ձեր՝ իցէ առ նա, առ
Ճշմարտութիւն նորին, առ սէր նորին. քանզի
ասէ իմաստութիւնն յաւիտենական՝ զանձնէ

խօսելով. «Ոյք ուտեն զիս՝ տակաւին քաղցի-
ցեն, և ոյք ըմպեն զիս՝ տակաւին ծարաւեսս-
ցեն [1]»։ Բաբէ. իսկ մեք ի նորին իսկ բերանոյ
լուաք, եթէ, «Որ ըմպէ ի ջրոյն՝ զոր ես տաց
նմա՝ մի ծարաւեսցէ յաւիտեան [2]». և դար-
ձեալ. «Որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ. և որ հա-
ւատայ ինձ՝ ոչ երբէք ծարաւեսցի»։ Ոչ իմիք
քաղցիցի կամ ծարաւիցի՝ բայց ինձ. այլ ան-
յագ իցէ քաղց նորա և ծարաւ առ իս, և փա-
փագն անդադար։ Եւ թէպէտ անյագ, այլ գրա-
ցէ յագուրդ. զի բերան նորա յաղբիւր անդր
իցէ. «Գեսք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոյ
կենդանութեան [3]»։— Զուրն՝ զոր ես տաց
նմա՝ եղիցի նմա աղբիւր ջրոյ՝ բղխելոյ ի կեանն
յաւիտենականս։ Փափագեսցէ ուրեմն հանա-
պազ Ճշմարտութեան իմոյ. այլ և կարասցէ ըմ-
պել հանապազ. և տարայս զնա առ կեանն՝ ուր
և փափագելոյ անդամ չիցեն պէտք. քանզի
բերկրեցուցիչ զնա գեղով երեսաց իմոց, և լը-
ցուցիչ զամենայն իղձս նորա։— Եկ արդ, Տէր
Յիսուս, եկ։ Հոգին ասէ հանապազ, եկ։ Հար-
սն ասէ հանապազ, եկ։ «Դուք ամենեքին որ
լսեքդ, ասացէք, եկ։ Եւ որ ծարաւի իցէ՝ եկեսս-
ցէ. և որ ոք կամի առնուլ զջուրն կենաց ձրի [4]»։
Եկայք. ոչ ոք ի բաց տրոհի։ Եկայք. չկան ինչ
աշխատանք առ այդ, բայց առ կամեցն լեթ։
Գայցէ ժամանակ՝ յորում ոչ եւս ասիցի, Ե-

1 Սիր. ԻԴ. 29։— 2 Յովհ. Զ. 35։— 3 Նոյն, Է. 38.— Դ. 14։— 4 Յայտն. ԻԲ. 17, 20։

կայ.ք։ Յորժամ եկեալ հասեալ կայցէ փեսայն
ի վաղուց ցանկացեալ, ոչ եւս ելցէ պէտք ասել
ոյ, Եկայ.ք։ Յաւերժաբար ասասցի, Ամէն։ Ա՛յո,
այդպէս. ամենայն ինչ կատարեալ է. Ալէլուիա.
Օրհնեսցուք զՏէր [1]. զամենայն ինչ բարւոք ա-
րար. կատարեաց զամենայն զոր խոստացաւն.
և չինայ ինչ այլ առնել, բայց տալ նմա փառս։

ԼԱ. Նոր քրիստնէորդք Կափառնայիմացիք։ — Յովհ. Է. 64։

Լուիցուք սակաւիկ մի և քրիստնէորդացս. էա-
սեմ զժողովրդեանն Հրէից, զԿափառնայիմացն
և զայլոց, զորոց Ճառէ աւետարանագիրն Յով-
հաննէս. լուիցուք քրիստնէորդացն քրիստոնէից,
որք երևեցուցանեն զանձինս հեռի լինել ի կար-
ծեաց Կափառնայիմեանցն, և ասեն. Մեք չեմք
նման նոցա։ Եթէ գիտացեալ էր նոցա թէ ու-
տելն և ըմպելն զոր ասացն Յիսուս՝ հաւատքն
էին, ապաքէն չէր նոցա քրիստնէորդալ, և ոչ թո-
ղեալ ի բաց գնացեալ ի նմանէ. յայս ուրեմն
յանդի ամենայն, եթէ հաւատալ արժան է.
այլն ամենայն ինչ ոչ օգտէ, ասէն, ըստ յետին
մեկնաբանութեան Քրիստոսի, եթէ «Հոգին է
է կենդանարար, մարմին ինչ ոչ օգտէ. զբանն՝
զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ Հոգի է և կեանք [2]»։

1 Յայտն. ԺԹ. 4։ — Յովհ. Զ. 64։

Այլ ես, Քրիստէ իմ, ոչ գումարեցայ ասատ-
նոր առաջի քո՝ առ ի վիճել կամ ընդդիմաբա-
նել. բայց սակայն զի ոչ վայրապար թոյլ տաս
հերետիկութեանց, և ի հակառակորդաց խակ ան-
տուստ կամիս լուսաւորագոյն առնել զճշմար-
տութիւնս քո, ապա ունկն մատուցից քրիստն-
ջանաց հերետիկոսացն, առ ի լաւ ելս իմանալ,
լաւ ելս վայելել զճշմարտութիւնս քո։ Թուին
ինձ նոքա արդարեւ, որ զինչ և ասիցեն, թուին
նոր Կափառնայիմք, որք դան խլացուցանել զե-
կեղեցի քո՝ զքաղցր և հանդարտ, և զորդիս քո
ոչ վիճողս, ոչ հակառակողս, այլ հաւատարիմս,
շառաչմամբ հարցմանս. «Զիարդ կարէ դա տալ
մեզ զմարմին իւր յուտել [1]»։ Եւ առնեն պա-
տասխանի յանդգնօրէն. Ոչ կարէ զայդ, ըստ
նշանակի բառիցդ. այլ ի դէպ է իմանալ հո-
գեպէս. այսինքն է, ըստ նոցա մտացն, առակ-
օրէն համարել ասացեալ զայդ ամենայն վարդա-
պետութիւն։ Քանի՞ թանձր մտաց է, ասեն,
կարծել՝ եթէ աւելի քան զհաւատս և զոգի՝
պիտեցի և այլ ինչ պատրաստել՝ ի ճաշակել ըզ-
մարմին քո և զարիւն։ Լուիցուք ապէ գամ մի
նրբամտացդ այդոցիկ և բարձրախոհից, որք
պատելով հային ի հօտ քո խոնարհ, վասն
պարզապէս հաւատալոյ նորա բանից քոց, և
ոչ բռնազբօսելոյ զիմաստն կամ զզօրութիւն՝
ըստ հաճոյս խելացի իւրոց։ Տուր ինձ, Տէր, ըզ-
նորհս, նշաւակել զընդունայն նրբութիւնս նո-

1 Յովհ. Զ. 53։

ցին, և զորոգայթ՝ զոր լարէն տգիտաց՝ որք միանգամայն և հպարտք են. քանզի ցայն վայր ժպրհին՝ մինչեւ կարծել զմեզ ստոյգ կափարնայիմացիս վասն այն՝ զի ոչ կամիմք հաւատալ ընդ նոսա. և թէ՝ ասելով Հոգին է կենդանարար, ասիցեմք՝ եթէ ոչ այլով իւիք է ճաշակել զմարմին քո և ըմպել զարիւնդ՝ բայց միայն հաւատովք: Իսկ նոցա մեկնաբանութիւն այս է. Մարմին ինչ ոչ օգնէ. այսինքն, եթէ ոչ ինչ օգնէ ուտելն իրապէս զմարմին քո. և «Բանն իմ հոգի է և կեանք», իմացեալ լինի, եթէ ամենայն մարմին իմ և արիւն՝ օրինակ նմին է: Այսոքիկ են, Տէր, բանք նոցա: Այլ ես ոչ գտանեմ այդպիսի ինչ յաւետարանի քում. կամիմ միւսանգամ ընթեռնուլ զայն և կշռել վերստին զմի մի ի բանից. և ակն ունիմ ոչ միայն հաւատովք, որպէս հաւատամ, այլ և բացայայտակի իմանալ, եթէ հաճոյ եցէ քեզ, զի մոլորեալ են քրթմնջողքդ, և տան քեզ ասել՝ զոր քո չէ ասացեալ: Այլ թողից, Տէր, այլում նուագի զընթերցուածդ. շատ եցէ ինձ այսօր յօգուտ՝ խոնարհութիւն իմ, և հնազանդութիւն մտացս՝ առ հաւատս ուղղափառ եկեղեցւոյ քո:

Լբ. Քրիստոս տայ մեզ ճաշակել զնոյն մարմին՝ զոր հառն վասն մեր:—Յովհ. զ. 29. 33. 50. 55. 59:

«Այս է գործն Աստուծոյ զի հաւատասջիք յայն՝ որ առաքեացն զիս: — Ես եմ հացն կե-

նաց. որ գայ առ իս՝ ոչ քաղցեցէ, և որ հաւատայ յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի: — Որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս[1]»: Հաւատարիմ է ուրեմն՝ եթէ հաւատովք անկ է մեզ օգտիլ յերկնաւոր կերակրոյս, առ ընդունել այնու զկեանսն յաւիտենականս. և չինայարդ այլ ինչ՝ բայց գիտել զոր ինչ ուսուցանեն այսօր՝ առ ի հաւատալ նմին: Արդ ուսուցանեմ զոր յայտնապէս, եթէ հարկ է հաւատալ երկուց այսոցիկ. նախ, զի Որդին Աստուծոյ էջ յերկնից, և էառ մարմին մարդկեղէն, որով եկն առ մեզ. երկրորդ, զի առ հաղորդ լինել կենաց՝ զոր ունի մարմնդ այդ՝ պարտ է ուտել զայն: Զառաջինն ի ճշմարտութեանցդ ուսանիմք բանիւքս՝ բազում անգամ կրկնեցելովք. «Իջի ես յերկնից. Ոչ Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից, այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ. զի հաց յԱստուծոյ է՝ որ իջանէ յերկնից և տայ կեանս աշխարհի: Իջի ես յերկնից, զի զկամս Հօր իմոյ արարից. և զամենայն զոր ետ ցիս Հայր՝ յարուցից զնա: — Այս է հացն որ յերկնից իջեալ է: Ես եմ հացն կենդանի՝ որ յերկնից իջեալ է[2]»: Ահաւադիկ հիմն բովանդակ վարդապետութեանն Քրիստոսի, ամենևին պարզապէս բացայայտեալ. այսինքն է, զի էջ նա յերկնից, որ է ասել, մարմնացաւ, մարմին էառ:

Ոչ ինչ ընդհատ և երկրորդն ճշմարտութիւն,

1 Յովհ. զ. 29, 35, 47: — 2 Յովհ. 28, 32-3, 38-9, 50-1, 59:

այսինքն, եթէ հարկ է ուտել ի մարմնոյ անտի՝ առ ի հաղորդ լինել կենաց նորին, մեկնաբանեալ է, և ստէպ յեղյեղեալ ի վարդապետութեան անդ Որդւոյն Աստուծոյ, սկիզբն առնելով ի բանից. «Եւ հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի». որ՝ զի պատճառս ետ Հրէից ասելոյ ընդ միմեանս, «Զիա՞րդ կարէ դա տալ մեզ զմարմին իւր յուտել», Որդին Աստուծոյ առաւել ևս բացայայտագոյն մեկնեալ՝ ասդէ եւս քան զեւս ասել. «Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս». (քանզի կեանք վասն ձեր են ի մարմնիս առեցեալս)։ և առանց ընդվիջելոյ ըզբանն. «Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ՝ ունի զկեանսն յաւիտենականս»։ Եւ ոչ դադարէ ի կրկնելոյ զնոյն, քանզի անդրէն ի վերայ բերէ. «Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է։ Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակեսցէ, և ես ի նմա. Որ ուտէն զիս՝ և նա կեցցէ վասն իմ։ Որ ուտէն զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան[1]»։

Տեսանեմ, զիա՞րդ խորագոյնս ետն վարէ Քրիստոս. և ևս քան զեւս յառաջէ յայդմ բանի. զերկնաւոր կերակրոյն ճառ ի ներքս արկանէ ի դէպս երկրաւորն հացի՝ զոր ետ նոցա. և յառաջ խաղայ մինչեւ ասել՝ եթէ պետոյ է նորա

1 Յովհ. Զ. 52-59։

ուտել զմարմին իւր և ըմպել զարիւն իւր. զոր և այնպէս ստէպ պնդէ՝ որպէս որ զմարմնառութենէն. ուսուցանելով այսու՝ եթէ անկ է մեզ այնպէս խակաբար ուտել զմարմին նորա և ըմպել զարիւնն, որպէս ետն ինքն զնոսին։ Եւ այն է փրկութիւն մեր, այն է կեանք մեր. զի այսու եղանակաւ՝ ոչ առնու միայն հասարակ օրէն մարմին մի մարդկային, այլ զմարմին միոյ միոյ ի մէնջ, յորժամ իւրաքանչիւր ոք ի մէնջ զնորայն ընդունիցի։ Յայնժամ մարդանայ վասն մեր, յարէ ի մեզ զմարդեղութիւն իւր. և որպէս Սուրբն Իլարիոն ասէր. Ոչ կրէ, ոչ առնու մարմին, բայց զայնորիկ՝ որ զիւրն ընդունիցի. չէ նա Փրկիչ մեր, և ոչ վասն մեր մարմնացեալ, եթէ ոչ ընդունիցիմք և մեք զմարմինն՝ զոր էառ։ Այսպէս փրկագործութիւն մեր ի զլուխս ելանէ ի հաղորդութեան, ճաշակմամբ մարմնոյ Փրկչին։ Պարտ է առ այս՝ ընծայութիւն հաւատոյ. քանզի այնու լինի սկիզբն. պարտ է հաւատալ ի Յիսուս Քրիստոս՝ որ տայ զմարմին իւր յուտել, որպէս պարտ է հաւատալ ի Յիսուս Քրիստոս՝ որ էջ յերկնից և էառ զայդ մարմին։ Այլ ոչ եթէ հաւատքն ելուցին զՔրիստոս յերկնից և մարմին զգեցուցին. նոյնպէս ոչ հաւատքն ինչ տան զմարմինն ճաշակել։ Եթէ հաւատամք և եթէ ոչ՝ այն այնպէս է. Եթէ հաւատամք և եթէ ոչ՝ սակայն էջ Քրիստոս յերկնից ի մարմին մարդկային. Եթէ հաւատամք և եթէ ոչ՝ Քրիստոս տայ ուտել զնոյն մարմին՝ զոր էառն. քանզի անդիմադարձ ա-

սացաւ. «Այս է մարմին իմ[1]». և ոչ եթէ Այս լիցի՝ եթէ դուք հաւատասջիք. որպէս անժխտելի ասացեալ է. «Եւ Բանն մարմին եղև». էջ Բանն յերկնից ի յերկիր, և ոչ թէ Բանն մարմին եղև ձեր հաւատովքդ, և իջանէ յերկնից՝ եթէ դուք հաւատասջիք։— Ո՛վ ճշմարտութիւն մարմնոյ ճաշակելոյ. այնպէս հաւատամ ի քեզ՝ որպէս հաւատամ ճշմարտութեան մարմնառութեան Որդւոյն Աստուծոյ, ճշմարտութեան իսման Որդւոյ Աստուծոյ ի յերկնից։ Ո՛րքան հզօրագոյնս հաստատես յիս, Փրկիչ իմ, զհաւատս մարմնառութեանդ։ Ահ, որ ոչն հաւատայ եթէ իսկապէս ընդունիմք զմարմին քո յատուկ՝ ի սեպհական և ճշմարիտ յիւրուն գոյացութեան, ոչ հաւատայ ստուգիւ եթէ առեր դու զայն. և ոչ ունի մասն ի հացէն կենաց։

ԼԳ. Իրական ներկայութիւն մարմնոյ և արեան Քրիստոսի ի Հաղորդութեան։— Յովհ. Զ. 54–7. Մատթ. ԻԶ. 26–8։

«Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ։ Առէք կերայք, այդ է մարմին իմ։ Եթէ ոչ արբջիք զարիւն իւր։ Արբէք ի դմանէ ամենեքին. այդ է արիւն իմ»։ Ասել, եթէ չգուցէ ինչ յա-

1 Մատթ. ԻԶ. 26։

բադրութիւն ի բանդ, և թէ մին չիցէ պատրաստութիւն խոստման միւսոյն, և թէ վերջինն չիցէ կատարումն առաջնոյն, ասել իմն է՝ եթէ Քրիստոս որ իմաստութիւն է յաւիտենական, յանդէպս խօսիցի և գործիցէ։ Յայտնապէս խօսեցաւ նա ըստ աւետարանին Յովհաննու՝ ի գլուխն վեցերորդ, առ ի պատրաստել զհաստատութիւն խորհրդոյ գոհութեան. ասաց անդ. «Երթայք գործեցէք զկերակուրն՝ զոր Որդին մարդոյ տացէ ձեզ». և դարձեալ. «Եւ հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի[1]»։ Տաց, ասէ. ահա յայտնապէս խոստումն և պատրաստութիւն. ապա չէն ինչ զարմանք եթէ ընդ խոստումն և ընդ հաստատութիւնն՝ գուցէ յարադրութիւն բացերեւակ. ապա թէ ոչ՝ մարթ էր նոյնպէս ասել, եթէ և յիջանելն ի Յորդանան, և յիջանելն Հոգւոյն Սրբոյ ի վերայ նորա երևելապէս, ոչ զվերուրն ինչ սրբել կամէր և ոչ ցուցանել զՀոգին՝ որով պարտ է մեզ, ասէր, վերածնանել։ Այլ եթէ յայտնութիւն Երրորդութեանն ի մկրտութեան նորա՝ պատրաստեաց զյայտարկութիւնն զոր կամէր առնել մերում (մկրտութեան), յորժամ ասացն. «Գնացէք, մկրտեցէք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. և թէ գուցէ յարադրութիւն բացերեւակի ընդ մկրտութիւն նորա և ընդ մերս, նոյնպէս և ընդ բանին զոր ասացն յաւետարա-

1 Յովհ. Զ. 27, 52։

Գ.Գ.ԱՐՈՒԵՆ

նին Յովհաննու, «Եթէ ոչ ծնչիք վերստին ի ջրոյ և ի Հոգւոյ [1]», ապա հարկ է հաւատալ՝ եթէ նախապատրաստեաց և զհաստատութիւն Հաղորդութեան, և թէ վասն այսորիկ են ասացեալքն ի վերերորդում գլխի աւետարանին Յովհաննու. և առանց խակ այսպիսեաց բանադրութեանց՝ յայտնի են իրքն:

Բացերեալ է յարադրութիւն բանիցն զոր ընթեռնումք յաւետարանի անդ Յովհաննու՝ ընդ հաստատութեանն. անդ՝ Ուտել, և ասա՝ Ուտել. անդ՝ Ըմպել, և ասա՝ Ըմպել. անդ՝ Մարմին, և ասա՝ Մարմին, անդ՝ Արիւն, և ասա՝ Արիւն. ուտել և ըմպել զմարմին և զարիւնն ուրոյն ուրոյն, և ասա նոյնպէս: Եթէ ոչ ցուցանէ այս ճշգրտապէս՝ թէ այդ ամենայն մի և նոյն խորհուրդ է, մի և նոյն ճշմարտութիւն, ապա չիք բնաւ վերաբանութիւն և պատշաճողութիւն. չկայ ուրեմն առընչութիւն և հետեւութիւն ի հաւատս մեր, և ոչ ի խօսս և ի գործս Փրկչին մերոյ: Ապա եթէ Ուտելն և Ըմպելն՝ որ ըստ Յովհաննու, է Ուտել և Ըմպել հաստատութեանն անդ, ուրեմն (ասացեալն առ Յովհաննու) ուտելն և ըմպել՝ է բերանով. քանզի և ի հաստատութեանն այսպէս է երեւեալապէս: Եւ եթէ մարմինն և արիւն՝ որ ճառի առ Յովհաննու, ոչ է մարմին և արիւն՝ ըստ մտաց և ըստ օրինակի, այլ ստոյգ մարմին և ստոյգ արիւն, ըստ յատուկ և բնական գոյացութեան նոցին, նոյն-

1 Յովհ. գ. 5:

պէս է և ի հաստատութեանն. և չէ մարթ զասացեալն՝ Այս է մարմին իմ, Այս է արիւն իմ, մեկնաբանել ի մարմին օրինակական և յարիւն օրինակական, որպէս և ոչ զասացեալն՝ առ Յովհաննու, «Եթէ ոչ կերիջիք զմարմին իմ և արբջիք զարիւն իմ», ձգել առ օրինակս նոցին: Եւ ո՞ խակ եւխիցէ բնաւ և կարծել անգամ՝ եթէ կամեցեալ իցէ Յիսուսի ասել. «Եթէ ոչ կերիջիք զմարմին իմ օրինակական և զարիւն իմ նոյնօրինակ, ոչ ունիցիք կենաս յանձինս. և թէ մարմին իմ օրինակական՝ է ճշմարիտ կերակուր, արիւն իմ օրինակական՝ է ճշմարիտ արիւն. այսպէս իմա և զայլն. ո՞չ ապաքէն անմտութեան իցեն բանքն: Ոչ ինչ պակաս է և ասելն, թէ Այս է մարմին իմ, և Այս է արիւն իմ, ոչ ճշմարտութիւն իցէ՝ այլ օրինակ նոցին:

Այլ ասիցես. Բաղում անգամ ի Գիրս ուտելն՝ հաւատալ նշանակէ, և ըմպել՝ նոյնպէս. և ահա այդ ուտել և ըմպել՝ է ճառեալն առ Յովհաննու: — Այլ եթէ ուտելն և ըմպել միանգամայն՝ նոյն մի բան իցէ, ընդէր Փրկիչս չորիցս եկաց կրկնեաց որոշել զուտելն յըմպելոյ, և զկերակուրն յըմպելւոյն, եթէ ոչ յայլ ինչ ակնարկէր: Ապա ուրեմն բացերեալկի ակնարկէր ի բանս հաստատութեան խորհրդեանն, յորում Ուտել՝ առնուլն է բերանով, և Ըմպել՝ է արբուն բաժակաւ և կլանել զհեղուկն: Արդ, թէպէտ և այլ ուրեք ի Գիրս ուտելն և ըմպել՝ նշանակիցեն հաւատալ, յայսմ տեղւոջ՝ զոր խորհրդածեմք՝ ոչ ևս է օրէն ա-

սել, եթէ ուտելն և ըմպել անյատուկ և այլաբանական, այլ՝ ոչ այլ ինչ է՝ բայց ուտել և ըմպել Աչմարտապէս և յատկապէս, ուտել և ըմպել մարմնաւոր բերանով։

Այսպէս հաւատամ էս, Փրկիչ իմ. «Եթէ ոչ կերիջիք զմարմին իմ. եթէ ոչ արբջիք զարիւն իմ». այսինքն է, եթէ ոչ անսասջիք բանիս, «Առէք, կերայք, այդ է մարմին իմ. Արբէք, այդ է արիւն իմ». և չիք զանազանութիւն ի բանսդ. բայց միայն զի միոմն խոստանաս, միւսոմն տաս. միոմն պատրաստես, միւսոմն հաստատես. ի միումն յերկարադոյնս ցուցանես զպտուղն, ի միւսումն առաւել միտ դնես բացատրել զերան։ Բայց՝ ամենայն ուրեք նոյն մարմին է և նոյն արիւն, միօրինակ ընկալեալ, և առ նոյն վախճան. որ է միանալն՝ գոյութիւն ընդ գոյութեան, ընդ մարմնոյ և ընդ արեան՝ զոր առեր։ Այո, այո, Տէր. այս են հաւատք իմ։ Հաւատք կենդանի առնեն զիս. արդար է. այլ հաւատք կենդանարար՝ այս են, հաւատալ եթէ առեր դու մարմին մարդկային և արիւն մարդկային, և թէ՝ տաս ինձ զնոսին յուտել և յըմպել՝ նա և բերանով մարմնոյս, այնպէս ստուգիւ, որպէս առերն զյնոսիկ յարգանդի Մօր քո երանելւոյ։

ԼԴ. Ուտել և ըմպել զմարմին Տեառն մերոյ իսկապէս եւ հաւատովք։

Քանի՞ անմտութիւն է մարդոյ՝ վարիլ հաւատովք՝ յեղծումն առարկայինորին։ Պարտ է ուտել զմարմին քո և ըմպել զարիւն քո. պարտ է հաւատալ (այնմ որ ընդունին) եթէ ուտէ և ըմպէ զայն. ապա ուտելն և ըմպել՝ հաւատալ է. ոչ է մարթ այլազգ ուտել կամ ըմպել. և զի արժան է հաւատովք առնել զայդ, ապա և չէ մարթ այլով իւիք առնել՝ բայց հաւատովք։ Նոյն բան էր ասելն. Էջ Քրիստոս յերկնից, և էառ մարմին յարգանդի կուսի միոյ. հաւատաց կոյսն այն, և զոր հաւատացն՝ կատարեցաւ յինքեան, ըստ այնմ բանի. «Երանի որ հաւատայցէ եթէ եղիցի կատարումն բանիցս ասացելոց՝ ի նմանէ[1]»։ Հաւատացեր դու՝ եթէ յղացիս զՈրդին Աստուծոյ և եղիցիս նորա մայր. յղացար զնա. ծնցիս զնա. և ամենայն զոր հաւատացերդ՝ եղիցի քեզ. յղացար իմն զնա յոգւոջդ՝ հաւատովք, մինչչեւ յղացեալ զնա ստուգապէս յորովայնի. արդ այս յղութիւն՝ յղութիւն եւեթ է հաւատոց, և ոչ ստուգապէս յղացար զՈրդին Աստուծոյ յարգանդի քում. ոչ էջ նա անդր Աչմարտապէս մարմնով և ոսկերօք. այդ ամենայն օրինակ եկէ և այլաբանութիւն։ — Զայս օրինակ տրամաբանեն՝ որք ասեն, եթէ

1 Ղուկ. Ա. 45։

պարտ է ուտել զմարմին Փրկչին, ըմպել զարիւնն, զերկոսին ևս հաւատովք կատարել. ուրեմն հաւատքն են ուտելդ այդ և ըմպելդ այդ, և ոչինչ աւելի քան զայն: Այսպէս ընդդիմանեն մարդիկ՝ հակառակ Աստուծոյ և հակառակ անձանց իւրեանց. հակառակ Աստուծոյ, չհաւատալովն եթէ կարիցէ Աստուած առ սէր մեր առնել իրս անհասանելիս. հակառակ անձանց, ժխտելով զհաւատս իւրեանց առ բարին՝ իբրու զի յոյժ մեծամեծք են:

Ըստ այսմ օրինակի և յասել Յիսուսի, «Ոմն մերձեցաւ ցիս, քանզի գիտացի եթէ զօրութիւն ելն ի նմանէ[1]», և յայտ յանդիման որոշելն զկինն որ մերձեցաւ ի նա հաւատովք, ի միջոց ամենայն բազմութեանն՝ որ հպէին ի նա՝ պնդելով ի մարմին նորա, կամէր ուրեմն ասել, եթէ կինն այն ոչ մերձեցաւ ի նա ստուգապէս ըստ մարմնոյ, այլ մերձեցաւ ոգւով և հաւատով: Այսպէս խորհին որք ասեն. Ուտել զմարմինն և ըմպել զարիւնն՝ բերանով, այդ ոչինչ է, և զօրութիւն ոչ ելանէ՝ բայց յուտէն և յըմպելն՝ հաւատովք. ուրեմն զհաւատս եւ եթէ խմնալ արժան է ասանօր. և առ ի ձգել յանձն զզօրութիւն մարմնոյ և արեան Յիսուսի՝ չէ ինչ հարկ զուգել զերկոսին զայսոսիկ ի մի, այսինքն զուտելն զըմպելն ըստ մարմնոյ. և զմիանալն ի նոյն հաւատոք:—Շուարիմ, Տէր Յիսուս, շուարիմ, դարձեալ ասեմ՝ շուարիմ. ոչ ի բարձրու-

1 Ղուկ. Ը. 43:

թիւնս խորհրդոց քոց, քանզի հաւատամ նոցին՝ անհաս իսկ կալով մտացս, և ոչ հարցանեմ զօրէն անհաւատիցն՝ զիաբդ կարիցես առնել զայդոսիկ. այլ շուարիմ ընդ մեղրութիւնս մարդկան և ընդ խեղութիւր շաւիղս նոցա. զի տեսանեմ զնոսա առաւել միտեալս ի նրբախնդիր լինել բանիցդ, առ ի խոյս տալոյ ի զօրութենէ նոցին, քան հաւատալ ի նոսին պարզապէս և կեալ:

ԼԵ. Ուտել և ըմպել զմարմին և զարիւն Քրիստոսի, ձրնարիտ և իսկական հաղորդակցութիւն նոցին է:

Այդ ամենայն՝ ասէք, առակաւոր և այլաբանական լին է. ուտել և ըմպել հաւատալ է. ուտել զմարմինն և ըմպել զարիւնն՝ է նկատել զնոսին բաժանեալս ի խաչին, և խնդրել զկենս ի վերս Փրկչին:—Եթէ այդպէս լցէ, ով Փրկիչ իմ, ընդէր ոչ խօսիս յայտնապէս. և ընդէր թոյլ տաս լսողացդ քրթմնջել՝ մինչեւ ի գայթակղութիւն և ի հեռանալ ի քէն, և ոչ ասես պարզապէս զոր խորհիդ:—Յորժամ Տէրն մեր ասէր առակս, նաեւ ոչ այսքան մանուածոյս՝ որքան յերկար այլաբանութիւնս այս, ըստ ասելց դոցա, այնպէս յստակ բացատրէր զմիտսն, զի չմնայր այնուհետեւ տեղի տարակուսանաց կամ հարցանելոյ. և եթէ երբեմն ոչ կամեցաւ

մեկնապէս խօսել ընդ Հրեայսն, առ որս սակս հպարտութեան նոցին՝ արժան էր առակօք խօսել, ոչ հրաժարեաց յառաքելոցն տալ պարզ և բնական մեկնութիւն բանիցն, յետ որոյ ոչ ոք յերկուցաւ։ Իսկ աստանօր որքան քրթմնջէն ընդ նա, և գայթակղին ընդ տարօրինակ բանսն, նա առաւել եւս պնդէ և կրկնէ, և եւս քան զեւս թուի իմն խաղալ ի խորս կնճռանն և առակին։ Շատ էր մի բան ասել նոցա. շատ էր ասելն. Զի՞նչ է որ խռովէ զձեզ. ուստեղ զմարմին իմ՝ հաւատալն է ի նոյն, ըմպել զարիւն իմ՝ խորհելն է ի նոյն. և այդ ամենայն ոչ այլ ինչ է՝ բայց զմահ իմ խոկալ։ Այդու վճարէր ամենայն. չմայր ինչ դժուարութիւն, և ոչ ստուերք անգամ։ Եւ սակայն չառնէ զայդ Քրիստոս. յանձն առնու թոյլ տալ աշակերտացն դրդուել ի փորձութենէ և ի գայթակղութենէ՝ քան ասել բան մի։ — Այդ ոչ ի քէն է, Տէր, ոչ. արդարեւ չէ դա առ ի քէն. ոչ շփոթեաս դու զմարդիկ մեծամեծ բանիւք՝ որ յոչինչ յանդին. զի այդ կամել իմն էր նորասքանչս ինչ ասել՝ առ ափշեցուցանելոյ եւ եւթ զնոսին։ — Յորժամ ասաց Յիսուս զառածն, «Ոչ որ ինչ մտանէ ի բերանն՝ այն պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյն[1]», մատեան աշակերտքն ասել ցնա. «Գիտէս, զի Փարիսեցիքն գայթակղեցին վասն բանին. — Թոյլ տուք դոցա, ասաց, կոյրք են կուրաց առաջնորդք». իսկ իւրոց առաքելոցն

1 Մատթ. ԺՆ. 11։

այնպէս մեկնաբանեաց զառակն, զի չմնաց բնաւ և ոչ փոքր ինչ երկբայութիւն, ոչ ի միտս նոցին և ոչ ի միտս հեւեւողաց նոցին։ — «Զգոյշ լերուք, ասէր, ի խմորոյ Սադուկեցւոցն և Փարիսեցւոց. և նոքա խորհէին ընդ միմեանս և ասէին, թէ հաց ոչ բարձաք. գիտաց Յիսուս և ասէ, Թերահաւատք[1]», կարծէք թէ զհացէ խորհիցիմ ես. ո՞չ յիշէք քանի հազարս մարդկան կերակրեցի, նախ հինգ նկանակօք և ապա եօթամբք. «Արդ զիա՞րդ ոչ իմանայք՝ եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ զդուշանալ ի խմորոյ, այլ յաղանդոյ Փարիսեցւոցն և Սադուկեցւոց»։

Եւ ես զնոսա դարձեալ տարակուսեալս վասն բանին. «Փոքր մի՝ և ոչ ես տեսանիցէք զիս, և ապա սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս[2]». իբրեւ ետես զնոսա ալէկոծեալս մտօք և ասելով այր ցընկեր, «Զի՞նչ կամիցի ասել. չգիտեմք զի՞նչ խօսի», պատասխանի ետ նոցա. Բարւոք է, արդ խօսեցայց ուրեմն ընդ ձեզ առանց այլաբանութեան, առանց առակի, առանց նմանութեան. և այնքան յստակ խօսեցաւ ընդ նոսա, մինչեւ նոցին իսկ ասել. Վարդապետ, «ահա արդ յայտնութեամբ խօսիս. և առակ և ոչ մի ինչ ասես»։ — Արդ, մինթէ յայր դէպս միայն պակասեաց քեզ բան (ո՛վ Տէր). մինթէ չգոյր քեզ հնար մեկնաբանելոյ, և արդելոյ զաշակերտսդ՝ ի շփոթելոյ ի բանիցդ, և մոլորելոյ և ի բաց թօթափելոյ առ ի քէն։ — Ա յա-

1 Մատթ. ԺԶ. 6։ — 2 Յովհ. ԺԶ. 16։

պէս շփոթի և Սամարուհին, և կարծէ՝ եթէ ջուրն զորմէ խօսիդ, է ի բնութենէ ջրոյն՝ զոր դայր հանել ի ջրհորոյ անտի Յակովբայ, ի յա-դուրդ ծարաւոյն. այլ դու պարզ և մեկին ծա-նուցեր նմա, եթէ ջուրն զորմէ ճառէիր՝ ջուր է անսպառելի և անցամաքելի՝ յորս ըմպէնն ան-տի, և տայ նոցա կեանս յաւիտենականս: Եւ ՝ յետ այնորիկ կարծեաց ինաւ՝ եթէ ջուրն զոր տայիր ըմպել աշակերտաց քոց՝ ջուր էր նիւ-թական: Յերկմիտս արդարեւ երեւի տակաւին առ վայր մի կենն այն, և ասէ ցՓրկիչն. « Տէր, տուր ինձ զջուրն զայն, զի մի եւս աշխատ եղէց գալ ի ջրհորս յայս. այլ Յիսուս՝ քանզի գիտէր եթէ ըստ բաւականին բացածանոյց, և զի մնա-ցորդ տարակուսանացն ինքնին լուծցի, յայլ դէմս շրջեաց զբանն. և կենն մեկաւ յայլ նիւթս խմաստից, և հրաշացեալ ընդ վարդապետու-թիւն Փրկչին, ոչ եւս փոյթ զջրոյն ուսնելով, եթող զսափորն առ ջրհորոյն, և երթայր ասել առ քաղաքացիսն, « Եկայք, տեսէք զայր մի՝ որ ասաց ինձ զամենայն որ ինչ իմ գործեալ էր. միթէ նա՞ լցէ Քրիստոսն [1] »: Եւ զայդ ասէ ոչ յերկուանօք, այլ առ ի յորդոր նոցին հաւա-տալոյ՝ յոր ինքն արդէն իսկ հաւատայր: Միթէ եթող նա զՓրկիչն, որպէս առնեն ասա աշա-կերտք նորին, ի պատճառս ջրոյն՝ զոր տակա-ւին թուէր ոչ քաջ խմացեալ: — Ամենեքին ոչ. զդաց՝ զի էր ինչ այն մեծ. և ոչ այլ ոք ելոյծ

1 Յովհ. Դ. 10–1, 13–6:

զտարակոյս նորուն. և եթէ միայր ինչ տակա-ւին երկբայանաց՝ բառնայ և զայն աւետարանա-գերն՝ յայլսմ վայրի, յորում պատմելով զգ-ճառ բանից Փրկչին մերոյ՝ նման ասացելոցն առ Սամարուհին, « Որ հաւատայ յիս՝ գետք յորո-վայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան », խոկոյն ի վերայ ածէ [1]. « Զայս ասէր զՀոգւոյն՝ զոր ընդունելոց էին »:

Փրկիչ իմ, չթողուս ինչ անբացայայտ. ամե-նայն՝ որոյ մարթ էր սխալակ իմաստս ընծայել, մեկնաբանեալ է յաւետարանի քում. ոչ ոք խա-բի, ոչ ոք փորձի թողուլ լքանել զքեզ: Ոչ թող-ցից ես զքեզ, քա՛ւ լիցի, վասն այն զի ասացեր եթէ պարտ է մեզ ուտել ի մարմնոյ քումմէ և ըմպել յարենէ քումմէ. քա՛ւ լիցի ինձ թիւրել զզբրութիւն բանիդ. իմացայց ըստ բառին՝ որ-պէս և արտասանեցեր. զի եթէ այլազգ ինչ հարկ էր իմանալ, բացայայտեալ էր քո զայն՝ որպէս զայլ առակսն, նմանութիւնսն և այլա-բանութիւնս:

Լ.Զ. Հոգեւոր վերաժնուրիւն ըստ բացատրութեան Քրիստոսի առ Նիկոդիմոս: — Յովհ. Գ. 1:

Եկեսցուք յետ ամենայնի և առ Նիկոդիմոս, և ի ճառ բանից Քրիստոսի առ նա՝ զկրտու-

1 Յովհ. Է. 38–9:

թենէ։ Արդարեւ յոյժ մարմնապէս խմացաւ նա զբանսն, «Պարտ է ձեզ ծնանել վերստին»։ Եւ յայն սահման վարեաց զոգիտութիւնն՝ մինչեւ հարցանել. «Զիա՞րդ կարէ մարդ ծնանել՝ որ ծերն իցէ. մի թէ մա՞րթ ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանել», և ի ծերութեան անդ իւրում լինել միւս անգամ մանուկ նորածին։ Կարէր Քրիստոս կրկնել և ասել նմա, Այո, պարտ է վերստին ծնանել, ասեմ իսկ վերստին ծնանել. եթէ ոք ոչ վերածնանիցի՝ չունի մասն յարքայութեան իմում. կարէր, ասեմ, կրկնել զառաջին ճառս իւր, և առանց պարզաբանելոյ Թողուլ զՆիկոդիմոս ի Թանձրութիւն կարծեացն։ Բայց ոչ այսպէս արար. այլ անդէն ի ծանուցանել փարիսեցւոյն զդժուարահաւատութիւն իւր, ելոյծ՝ այսու բանիւ. «Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ». որ է ասել պարզապէս, Ոչ եթէ յորովայն մօր իւրոյ՝ այլ ի ջուր պարտ է մտանել. ոչ առ ի ծնունդ մարմնեղէն, այլ ի նորոգումն՝ Հոգւով Սրբով։ Աւելի քան զդէր չէր պիտոյ. և ամենայն դժուարութիւն լուծեալ եղեւ։ Բայց ոչ շատ համարեցաւ զայն Փրկիչն. այլ և առ ի բառնալ զամենայն կարծիս մարմնեղէն ծնընդեան, յաւել ի բանս իւր. «Ծնեալն ի մարմնոյ՝ մարմին է, և ծնեալն ի Հոգւոյն՝ հոգի է»։ Դու մի զարմանար թէ ասացի քեզ եթէ ծնելոյն ըստ մարմնոյ՝ պարտ է ծնանել և ըստ հոգւոյ։ Ի՞մ այլ ևս խիք մարթ էր կարօտել վասն դժուարութեանն առաջարկելոյ։ Մկրտել, այսինքն ընկղմել ի ջուր՝ առ ի մաքրութիւն, ծանօթ իրք էին Հրէից. և միայր միայն յայտնել նոցա՝ եթէ կայցէ և այլ մկրտութիւն, յորում միացեալ Հոգւոյն Սրբոյ ընդ ջրոյն՝ վերանորոգեսցէ զոգի մարդոյս։ Եւ բացայայտապէս ասի այդ. և ոչ եւս վերադառնայ Նիկոդիմոս առ ծնունդն մարմնեղէն, և ոչ այլ ոք երբեք ի նոյն ի նորա կարծիսն անկաւ։ Թէպէտ եւ կայր միայր նմա տակաւին ի միտ առնուլ զներդործութիւն Հոգւոյն Սրբոյ, զոր հրաշալի ինն օրինակաւ ճառեաց նմա Քրիստոս, զորմէ չէ տեղւոյս խնդիր. այլ զի տարակոյս նորա զմարմնեղէն ծնունդենէն ի սպառ բարձաւ, և զի չէր ինչ հարկաւոր աւելի ևս հմտացուցանել զնա զանակէ ներդործութեան Հոգւոյն Սրբոյ ի մեզ, և տպաւորելոյ խմացուածս՝ որոց վախճանն և սկիզբն ի վեր են քան զմիտս մեր, ոչ յաւելու Քրիստոս այլ ինչ, բայց զի հաւատալ արժան է բանից իւրոց. «Զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, և զոր տեսաք՝ վկայեմք, և զվկայութիւն մեր ոչ ընդունիք», և որ այն ևս. զոր գիւրին էր մեկնել, եթէ խնդիր ինչ (երկբայութեան) էր զայնցանէ։ Այլ որ զինչ և է, ստոյգ է ամենայնիւ՝ զի չմնաց ինչ երկմտութիւն ի Նիկոդեմոս. և ոչ ընդ միտս էած Թողուլ զՈրդին Աստուծոյ. և վերածնութիւն մարմնոյն չէաւ ինչ պատճառս վիճաբանութեան առ աշակերտսն։

— Իսկ արդ ընդէ՞ր ոչ խօսել այսպէս պարզաբանութեամբ առ ժողովուրդ մի մեծ՝ որ հա-

հատայր է նա, մինչեւ ասել՝ եթէ, «Սա է Ճշմարիտ մարգարէն՝ որ գալոց էր յաշխարհ[1]». որ է ասել՝ Քրիստոսն է։ Ընդէր ոչ բառնայ է նոցանէ զխէթն՝ որ տագնապեցուցանէ զնոսա, ուտելն զմարմին նորա և ըմպելն զարիւն նորա՝ բերանացի. և ընդէր ոչ ասէ միով լոկով բանիւ, եթէ չէ ինչ այդ, և թէ կամք մոացն էին Ճառել զյանդիմանակացութենէն և զվերաբերութենէն. զոր հարկ էր մարդոյ հաւատովք առնել յոգւոջ, զմահուանէ և զխոցուածոց Փրկչին հոգւոց։

Լէ. Հաղորդութիւն ստոյգ մասնակցութիւն է մարմնոյ և արեան Փրկչին, յիշատակաւ մահուանն զոր վասն մեր յանձն էառ։

Ասիցէ ոք. Զիցէ՞ արդարեւ ստոյգ՝ եթէ արժան է յիշել զմահն, խոկալ ի նոյն հաւատովք, հաւատալ է մարմին խոցեալ և յարիւն հեղեալ, և այսու ստանալ զկեանս։ Արդարեւ այդ այդպէս է. այլ չէր այդ առեթ դժուարութեանն, ոչ վասն այդր ասէին. «Զիմբդ կարէ դա տալ մեզ զմարմին իւր յուտել». և կամ, «Խիստ է բանդ այդ. ո՞ կարէ լսել դմա»։ Վասն մարդկան շատ խոկ էր, ստիպել զնոսա ի հաւատալ՝ եթէ Որդին Աստուծոյ մարմին էառ, և

1 Յովհ. Զ. 14։

մասնելոց էր զայն առ ի մահ, առանց յաւելլոյ ի տագնապ տեսանելոյ զմարմինն զայն՝ խոցեալ և զարիւնն հեղեալ անգթութեամբ, և զիրաստութիւն ուտելոյ և ըմպելոյ զնոսին։ Զի այդ խոկ հաւաստեաւ ստիպէ զնոսա ասել, ոչ եթէ՝ բարձր է այդ, անհաւատալի իմն է, և գոգցուք խոկ թէ և անհնարին, այլ թէ խիստ է և անտանելի՝ առնուլ ի բերան զմարմին և զարիւն մարդոյ։ Եւ եթէ արդարեւ ոչ գտանէր դժուարութիւնդ այդ ի խորհրդեան Փրկչին, հնի՞մ էր մարթ քաջ պարզապէս և վաղ վաղ լուծանել զայդպիսի բան։

Այլ քա՜ւ այս յինէն, Փրկիչ իմ. առանց ինչ ընդ բանս ածելոյ՝ անսամ զի արժան է մեզ յիշատակել զմահ քո. նկատել մոայ աչօք զմարմին քո վերաւորեալ և զարիւնդ հեղեալ. և զի դողաւ փրկեցեր զիս։ Զայդ խոկ առնեմ ես արդարեւ ի հաղորդութեան. որոյ պտուղ է՝ տպաւորել ի միտս իմ զմահ քո. անդ յառել զյոյս իմ, և կերպարանակից այնմ լինել՝ զդայարանացս մեռելութեամբ։ Զիք յայդմ դժուարութիւն ինչ իսկական. և եթէ այսպէս պարզաբանեալ էր քո, ոչ էր գտեալ ի բանդ զիրաստութիւն զորմէ գանգատին։ Իմանամ քաջ, զի զայլ ինչ կամիս ասել. ասել կամիս, եթէ պարտ է յիշատակել ստուգապէս զմահ քո. այլ յիշել եւս՝ որպէս զզոհ պատարագեալ վասն մեր, որոյ մարմին ուտելի է, նաեւ բերանով, որպէս ուտելի էր պասէքն հին, և այլ զոհքն՝ որք ըստ քեզ օրինակէին, առ ի լինել մեզ գրաւական

հաւասակ, եթէ վասն մեր եղեւ զենումին, և աղդողադոյնս և հզօրագոյնս տպաւորել ի սիրտս մեր զյիշատակն։ Այսպէս հաւատամ, Փիլիպէ իմ. իսկ այն յիշատակ յորում անհաւանք կամին զամենայն փոխաբերել՝ յոյժ մարդկէղէն է։

Կարէ մարդ ոք զոհել զանձն վասն հայրենեաց. ասեմ իսկ զոհել՝ ըստ բառին, և գիրք սուրբք և արտաքինք՝ լի են բազում այդպիսի օրինակօք. և որոց զայդ օրինակ զոհէն զանձինս՝ չէ ինչ դժուարին յանձնել զյիշատակ մահուանն, կամ հաստատել նոցա տօնս, կամ նշանակս ինչ առ մշանջենաւոր յիշատակէ։ Այլ թողուլ ի մշանջենաւորս զմարմին իւր յուտել և զարիւնն յըմպել, որպէս զի սեփականելով զայն ինքեանց՝ գորովանօք ետն յիշեսցէն եթէ վասն մեր զոհեցան, զայդ՝ Աստուծոյ միայն էր հնարաւոր գործել. և է ի դմին հաւասար և զօրութիւն և սէր։ Արդարեւ խիստ է բանդ այդ առ զգայարանս, անտանելի է և անտեղի. այլ բան քո Ճշմարիտ է. հաւատամ ես անտեղութեան. ծախեալ սպառէի ես զիստութիւնդ զայդ՝ եթէ ոչ բառնայիր մեկնաբանելով։ Քանզի գիտեմ եթէ որ ըստ մարդկան յիմարութիւն է՝ իմաստութիւն է ըստ Աստուծոյ[1]. ըստ նմին օրինակի և որ խիստ և անտեղի է առ մարդիկ՝ ըստ Աստուծոյ միութարութիւն է և Ճշմարտութիւն։

1 Ա. Կորնթ. Ա. 25։

Հաւատամ, Տէր, հաւատամ, և պատրաստ եմ հաւանել ըստ բառին՝ ամենայն խստագոյն բանի՝ զոր և ասիցես. եթէ ոչ դու ինքնին ուսուցանիցես ինձ այլազգ ընդունել զայն։ Մարթ էր զգայարանաց իմոց սփոփել մարդահաճոյացդոյն մեկնաբանութեամբ. այլ եթէ այդու օրինակաւ ողբքել զնոսա կամիցիմ, ուր երթամ, Տէր, յո՞ ձգեալ վարիմ. յորպիսի՞ անհաւատութիւն. յորպիսի՞ հեռաւորութիւն գաղանեաց ի խորհրդոց քոց։ Կամիմ հաւատալ, յաւելից ասել, և ոչ տրամախոհել ըստ մարդոյ. և եթէ գուցէ ինչ ի բաց հանելի յանվրէպ Ճշմարտութենէ բանիցդ, ի դէպ է քեզ ինքնին ուսուցանել ինձ զայդ։

Ա. Ը. Գայթակղութիւն աշակերտացն։—Յովհ. Զ. 60–62, և որ գկնի։

«Զայս ասաց Յիսուս ի ժողովրդեանն՝ յուսուցանելն ի Կափառնաում։ Եւ բազումք յաշակերտացն իբրև լուան՝ ասեն. Խիստ է բանդ այդ. ո՞ կարէ լսել դմա։ Իբրև գիտաց Յիսուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն, ասէ ցնոսա. Այդ գայթակղեցուցանէ զձեզ։ Իսկ արդ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ՝ զի ելանիցէ ուր էր զառաջինն։ Հոգին է կենդանարար. մարմին ինչ ոչ օգնէ։ Զբանն՝ զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է և կեանք։

Այլ են ոմանք ի ձէնջ որ ոչ հաւատան։ Քանզի գիտէր Յիսուս ի սկզբանէ՝ ով են այնոքիկ որ ոչն հաւատան, և ով է այն որ մատնելոցն է զնա, և ասէր. Վասն այնորիկ ասացի ձեզ՝ թէ ոչ ոք կարէ գալ առ իս՝ եթէ ոչ իցէ տուեալ նմա ի Հօրէ իմմէ »։ Աւագիկ բանքն՝ որովք համարին ոմանք եթէ ամբիցէ Քրիստոս զիօսսն։ Կարծէք եթէ ասացի ձեզ ուտել զիս բերանացի. այլ ոչ այդպէս է, ապա թէ ոչ՝ ծախէիք զիս, և ոչ էր ինձ մարթ դառնալ անթերի յերկինս՝ ուստի եկի։ Դուք ի մարմին և յարիւն իմ կապիք. և առ ունել կեանս՝ համարեցէք եթէ պարտ իցէ ըստ բառին ուտել և ըմպել զայն. այլ հոգին է կենդանարար և ոչ մարմին, որ և օգնէ ինչ ոչ։ Բանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է և կեանք. էէ ուրեմն մարմին և արիւն՝ որպէս կարծէիք. ամենայն վարդապետութիւնս իմ առակաւ և այլաբանութեամբ է, և էէ պարտ իմանալ և ոչ ինչ ըստ բառին։ Եւ ահա այսպէս ամենայն ինչ խաղաղի. գայթակղութիւնն ցրուի, տրտունջք դադարեն։

Այլ մեք յառաջ վարեսցուք զընթերցուածն և տեսցուք։ « Յայսմանէ բազումք յաշակերտացն նորա չոգան յետս, և ոչ եւս շրջէին ընդ նմա »։ — « Յայսմանէ ». անընդհատ ընթերցաք մեք զաւետարանդ մինչեւ ցայս համար՝ որ ունի զբանդ, Յայտնեսի. յետ բանից անտի ոչք համարէին լուծանել զդժուարութիւնն և բառնալ զգայթակղութիւն, բազումք յաշակերտաց նորա յետս գնան և ոչ եւս շրջին ընդ նմա։ —

Եւ ահա կորնչին դոքա. ո՞ստիպեաց զդոսա ի բաց գնալ. միթէ վասն այնր բանի զոր ասացն, « Ոչ ոք կարէ գալ առ իս՝ եթէ ոչ իցէ տուեալ նմա ի Հօրէ իմմէ »։ այլ կանխաւ եւս ասացեալ էր զայն, և էէր ուրուք յետս գնացեալ. ինքնին իսկ յայտ առնէ զի կրկնէր զնոյն բան։ Կամ վասն բանին՝ զոր ասացն, « Են ոմանք ի ձէնջ որ ոչ հաւատան յիս »։ — էէ ինչ այդ առիթ ի բաց գնալոյ. և էիք ինչ յայդմ անհաւատալի և անհամբոյր. զի զսակաւս ոմանս կշտամբէր, և ոչ զայլս քասքնեցուցանէր։ Այլ քասքնեցուցիչ նոցա էր նախասացեալն. « Իսկ արդ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ՝ զի ելանիցէ ուր էր զառաջինն. և թէ Հոգին է կենդանարար »։ Այս է որ քասքնեցուցանէ զնոսա. այս իսկ՝ զոր համարինն ոմանք ասացեալ առ չհարթուցանել զնոսա, զնոյն պատճառէ. այնքան քաջ պարզաբանեաց Յիսուս. այնքան ի բաց տարաւ զդայթակղութիւնն։ — Ոչ այդպէս է, Փրկիչ իմ. ոչ եթէ դու թերուզիլ մեկնաբանես, քաւ լիցի. այլ քրթմնջողք մեր և անհաւանք՝ չարաչար միտս ընծայեն բանիցդ։

Լթ. Զի՞նչ իցէ առիթ գայթակղութեանն։ — Յովհ. Զ. 61–3։

« Այդ գայթակղեցուցանէ զձեզ. իսկ արդ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ՝ զի ելանիցէ

ուր էր զառաջինն »։ Գայթակղիք դուք զի ա-
սացի, թէ պարտ է ձեզ ուտել Աշմարտապէս
զմարմին իմ և ըմպել Աշմարտապէս զարիւն իմ.
եկ զինչ լինիցի եթէ յաւելից ասել, եթէ վե-
րադարձայց անդրէն անթերի և կենդանի յեր-
կինս՝ ուր եմ։ Զէն ինչ զարմանք, եթէ այն՝
որոյ մարմին ուտիցի և արիւն ըմպիցի՝ միայն
հաւատալով ի նա և խոկալով ի մահ նորին, վե-
րադարձցի յերկինս անթերի և կենդանի։ Զէ
սովորութիւն մտաց յօշել զատուցանել զկե-
ցակուրն, այսինքն զառարկայն. և ոչ հաւատք
ծախեն՝ զոր յինքեանս ընդունին. այլ ուտեն
առնէ այդպէս. եւ ափշութիւն Կափառնայի-
մայն յայսմ է, զի լսեն եթէ ոչ այնպէս եղիցի
յայսմ նուագի։ Ապա ոչ միայն խորհին նոքա՝
զի ուտեն եւ ըմպեն ըստ բառին՝ յապաւէսցի
ի վարդապետութենէ այտի Որդւոյն Աստու-
ծոյ, և այդ ամենայն բովանդակէսցի ի խոկալն
եւ ի հաւատալ. — քանզի համբարձումն Տեա-
ռն չէ այդմ հակառակ. եւ ոչ ոք լիցի անհա-
ւան՝ թէ ուտեն եւ ըմպեն այլաբանօրէն կա-
րիցէ արգելուլ զոք յերթալոյ յամ և կամք
եցեն, նաեւ յերկինս, եթէ կարիցէ երթալ
անդր. — այլ հաւատան, եթէ ուտելով իսկ
ըստ բառին զմարմին մարդոյդ, յետ այնր
անթերի վերասցի յերկինս. այդ յաւելուած
է նորոյ դժուարութեան ի Ճառն, ծան-
րագոյն քան զառաջինն։ Մարթ է հաւանել
մտաց՝ եթէ հնար եցէ ուտել ծախել զմարդ ոք
և ապրել մարմնով նորա. այլ ուտել զնա եւ

կեալ, եւ թէ կացցէ նա տակաւին անթերի՝
մինչեւ վերանալ իսկ նովին մարմնով յերկինս,
այդ նշանակէ ուրեմն եթէ մարմնին այն անբա-
ժանելի եւ անծախելի է։ Տացի դա ուրեմն հոգե-
ւորապէս, գերազանցօրէն, անտեսաբար, անհա-
սաբար, եւ միանգամայն իսկական եւ գոյացա-
կան. ապա թէ ոչ՝ ոչինչ լիցի, եւ չէ պարտ չէ
օրէն ափշեցուցանել զաշխարհ պերճաբանու-
թեամբ. եւ ոչ ի վերայ բերել զիրապէս համ-
բարձումն ի հաւատս փոխաբանութեան։ —
Ահա վասն այսց բանից՝ յետս գնան։ Նորս այս
դժուարութիւն խապառ անհանդուրժականս
առնէ զնոսին, եւ ոչ եւս կարեն տանել բար-
ձրութեան խորհրդոյն։

Ո՛հ, քանի մեղադրանք են Փրկչին՝ կշռելն
զբանս նորա մարդկեղէն մտօք։ « Ամենայն որ
ինչ իմ է՝ քո է. եւ որ ինչ քո է՝ այն իմ է[1]։
Ոչ ոք գիտէ թէ ով է Հայր՝ եթէ ոչ Որդի. և ոչ
ոք գիտէ թէ ով է Որդի՝ եթէ ոչ Հայր։ Զամե-
նայն զոր Հայր առնէ՝ զնոյն եւ Որդին նովին նը-
ման գործէ։ Որպէս Հայր ունի կեանս յանձին
իւրում, նոյնպէս եւ Որդւոյ ունել կեանս
յանձին իւրում։ Որ եսեան զիս՝ եսես զՀայր։
Ես եւ Հայր իմ մի եմք։ Որդին Աստուած է,
Աստուած է նա Աշմարիտ. եւ է ի վերայ ամե-
նեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս. Որով
ամենայն ինչ եղեւ[2] »։ Այս ամենայն ոչինչ է,

1 Յովհ. ԺԷ. 10։ — 2 Ղուկ. Ժ. 22. — Յովհ. Ե.
19։ ԺԴ. 10. Ժ. 30։ — Հռովմ. Թ. 5։ — Եբր. Ա. 2։

ասեն. Աստուած է կերպարանաւորութեամբ. Աստուած և նա նոյն է սիրելութեամբն եւ հաւանութեամբ: — Ա՛ռ խմէ՛ ապա ուրեմն այդքան մեծամեծ բանք, եթէ հարկ էր այդքան յապաւել և վերածել յայսպիսիս դիւրահաս ինչ իրս: Ոչ դու, ո՛վ Փրկիչ իմ, եւ ոչ առաքեալք քո կամեցայք ափշեցուցանել զաշխարհ հիւանդանչ խօսիւք. և զի չեկիր դու ափշեցուցանել, որք այսպէս ջլատել կամին զբանս քո՝ նոքա խաբեն զաշխարհ: Այսպէս, ասեն այնքան պնդութեամբ, «Եթէ ոչ կերիջիք զըմարմին իմ, եթէ ոչ արբջիք զարիւն իմ». երբեքինել եւ չորեքինել զայն, եւ այնքան առաւել կրկնել՝ որքան զի օտարոտի ինն թուի. եւ յետ այնքան կրկնելոյն և քաքնեցուցանելոյ զաշխարհ՝ որ ոչն կամէր հաւատալ, վերադառնալ ի նոյն խնդիր, և ասել նովին անհարթութեամբ եւ նովին պնդութեամբ. «Առէք, կերայք, այդ է մարմին իմ. Արբէք, այդ է արիւն իմ». Նոյն մարմին առուեալ վասն ձեր, նոյն արիւն հեղեալ ի խաչին. հաւատալ արժան է այսմիկ, այլ եւ ընդ նմին հաւատալ՝ եթէ ոչ ծախեցին ուտելովն, եւ թէ յերկինս եմ անթերի, ամենայնիւ զոր առի զմարդկութեան, ամենայնիւ մարդկային բնութեամբ. կամ այս ամենայն ճշմարիտ է ըստ բառին, կամ ամենայնն հնարեալ է՝ առ ի խռովել եւ ի պառակտել զաշխարհ: Աստուծոյ առնել իրս վսեմականս, անհասանելիս, չէք ինչ յայդմիկ ի վեր քան զինքն. աշխարհի՝ խրանուլ ընդ այն և չհանդարտել

այդքանոյ բարձրագունի յայտնութեան, այդ բնական է մարդոյ ընչականի: Այլ հնչել զմիտս դժուարութեամբք՝ որք ի լեզուին եւեթ են, եթէ ամենայնն չափաղանցութիւն իցէ, եւ հարկ իցէ զկնոցանել զնոսին ի չափ ընդունակութեան զգացման մարդոյ. այդմ չէ արժան լինել: Թող հաւատացեն դոցին որք կամին կողոպտել ի մէնջ զպարզախօս ճշմարտութիւն բանից Քրիստոսի, եւ ընդունայնացուցանել զաւետարան նորա:

Խ. Զինչ անհաշտութիւն էր Կատիառնայիմնայցն:

— Յովհ. զ. 41–43–50, և որ զկնի:

«Հոգին է կենդանարար». ուրեմն մարմին ոչ է կենդանարար. եւ եթէ այսպէս է, չէր պարտ ասել, «Հայն զոր ես տայ՝ մարմին իմ է, զոր ես տայ վասն կենաց աշխարհի». եւ ոչ, թէ «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ՝ կեցցէ յաւիտեան»: Մարմին ինչ ոչ օգնէ: Եթէ նշանակիցէ այդ եթէ մարմին Քրիստոսի չօգնէ ինչ, ապա չէր հարկ ճառել զայնմանէ այնքան խնամով: «Բանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի են եւ կեանք». եթէ նշանակիցէ այդ թէ չիցէ պարտ յարել ի մարմին եւ յարիւն, ապա չէր հարկ այնքան յերկար ճառել զայնմանէ, կամ այնքան սոխել յուտել եւ յըմպել զայն. եւ եթէ այդ ամենայն ասել կամէր՝ թէ մտաւորա-

պէս ուտելի է եւ ըմպելի, զի՞նչ պարտ էր այն-
քան յաճախ յեղյեղել բանս՝ որ յայտնապէս
հակառակ իմաստս ընծայէին։ Են ուրեմն ի
սոսին այլ ինն միտք՝ որ ընդոստուցանէր զկա-
փառնայիմն։ Եթէ մարմին Քրիստոսի կեանս
տայ, եւ հոգին եւս նոյնպէս կենդանարար է,
ապա մարմինն այն լցեալ է հոգւով կենդանա-
բարաւ. եւ եթէ այսպէս է, ապա Քրիստոս յա-
սել իւրում Մարմին ինչ ոչ օգնէ, կամ ոչ
զմարմին իւր իմանայ անդ, կամ եթէ զմարմնոյն
ճառիցէ՝ կամի ասել՝ եթէ ոչ ինչ օգնէ մարմինն
լոկ ընկալեալ, այլ պարտ է ընդունել և հոգւով՝
որով լցեալ է։ Եւ յորժամ յայս բովանդակեն՝
եթէ բանք իւր հոգի են եւ կեանք, յետ այն-
քան զմարմնոյ եւ զարեանէ ճառելոյ, ասել ինն
կամի եթէ մարմինն այն եւ արիւն՝ նոքին իսկ են
հոգի եւ կեանք, լցեալք աստուածութեամբ,
հոգւոյն Աստուծոյ, եւ կենօք ընդհաց. եւ ի
վերայ այսորիկ, զի պարտ է ճաշակել գերա-
զանցօրէն քան զզգալիս, աստուածօրէն ինն
եղանակաւ, որ ոչ ծախիցէ եւ ոչ այլայլիցէ
զնոսին, այլ անթերիս թողուցու երկնից,
որպէս տեսաքս։ Հանդերձն ասել. քանզի ի
բովանդակ ճառիդ ուտելոյ՝ օրինակաւ եւ ըմ-
պելոյ՝ այլաբանօրէն, չերեւի ինչ մի զոր խըն-
դրեն գտանել, որով եւ ոչինչ որ ստիպիցէ
խորշել յուտելոյ կամ յըմպելոյ՝ ըստ բաւին,
այլ միայն զի հարկ է ուտել զմարմինն եւ ըմ-
պել զարիւնն՝ որպէս լիս հոգւով եւ կենօք,
գերագոյն ինն եւ աստուածային օրինակաւ,

ապա զհետ դայ, թէ Որդին Աստուծոյ ոչ թուլ-
լացոյց՝ այլ եւ եւս ամրացոյց զոր ասացեալն
էր. յորմէ հետեւի եթէ բախեալք անտի՝ յետս
չոգան Կափառնայիմքդ եւ ոչ եւս և կամեցան
շրջել ընդ նմա։

Ո՞ զարմասցի ընդ ահուն անհաւատութեան
նոցա, եւ ոչ զարհուրանօք հայեցի ընդ նոսա։
Յորժամ ասէ ցնոսա Քրիստոս՝ «Իշի ես յերկ-
նից[1]», սկսանին քրթմնջել եւ ասել, «Ո՞չ սա
է որդին Յովսեփայ. եւ զիա՞րդ ասիցէ թէ յեր-
կնից իջի»։ Եւ յորժամ անդրադառնս վարեալ՝
ասէ, թէ կերակուրն զոր տալոց է նոցա յու-
տել՝ մարմին իւր է՝ զոր տայ վասն կենաց աշ-
խարհի, վիճին ընդ միմեանս, և ասեն. «Զի՞արդ
կարէ դա տալ մեզ զմարմին իւր յուտել[2]». որ
նշանակէ արս երկմիտս, դրդուելս՝ քան ե-
դեալս ի մտի լքանել զնա։ Յառաջ եւս վարէ
զբանս. եւ այնքան հաստատութեամբ և յա-
ճախակի ասէ նոցա՝ եթէ պարտ է ուտել ի
մարմնոյ իւրմէ եւ ըմպել յարիւնէ, զի ոչ եւս
գտանեն ելի աղագս, վասն որոյ և ասեն. «Խիստ
է բանդ այդ. ո՞ կարէ լսել դմա[3]»։ Եւ այսու
հոսեն զանձինս ի դայթակղութիւն կատարեալ
և յանհաւատութիւն բացայայտ։ Այլ տակա-
վին ոչ մեկնին ի բաց. ակն կալեալ ինան՝ եթէ
արտաբերցի մեղմագոյն ինչ։ Այլ յասելն Քրիս-
տոսի՝ փոխանակ ամենայն պարզաբանութեան

1 Յովհ. Զ. 42։ — 2 Յովհ. Զ. 53 և այլն. — 3 Յովհ. Զ. 61։

եթէ սխալին յայնմ եւեթ զի կարծեն ուտել զմարմին և զմսել զարիւնն ծախելի օրինակաւ, եւ զի դարձեալ ոչ առնուն ի միտ թէ որով հոգւով լցեալ էր այն, եւ ոչ զանհասանելի եղանակն՝ որով տալոց էր նոցա, անդր քան զչափ անցեալ տեսանեն զամենայն. եւ խստութիւնն որ շփոթէր զիմացուած նոցա եւ գայթակղեցուցանէր զոգիսն, յայն սահման հասանէ, մինչեւ ոչ եւս հանդուրժեալ՝ անդէն եւ անդ թողուն զառչին յընկերութենէ Յիսուսի, եւ ոչ եւս կամին դասել ընդ աշակերտս նորին: Եւ ինքն իսկ՝ որ իւրովսանն զամենայն ասացեալ էր նոցա, և բացայայտեալ որչափ ինչ կամէր գիտելի առնել զիւրոյ խորհրդոյն, դառնայ առ աշակերտսն եւ հարցանէ. «Միթէ և դուք կամիք երթալ[1]». որպէս թէ ասէր. Ոչ յաւելուլ ինչ կամիմ եւ ոչ նուազեցուցանել ի բանից ասացելոց. ոչ աճել եւ ոչ ի բաց յապաւել. արդ տեսէք զինչ կամիք առնել: Ոչ կամիմ ես աշակերտ՝ որ ոչ մինչեւ անդր ժամանեսցէ. եւ յայս փորձ արկանեմ զհաւատս նոցա:

Օտարացուցիչ եմն Թուէր Կափառնայումայցն ասէն Քրիստոսի՝ եթէ յերկնից էջի. և փոխանակ մեղմելոյ ինչ՝ կրկնել եթէ էջ յերկնից, քանզի ՀՀմարիտ է այն ըստ բառին. եւ սկսանին քրթմնջել, ասելով. Զիարդ կարիցէ նա տալ զմարմին իւր յուտել. և պատասխանի զայս միայն ընդունին՝ եթէ տացէ նոցա զմարմին

1 Յովհ. Զ. 68:

իւր յուտել. յաւելու՝ եւ զարիւն իւր, զի մի ինչ պակասիցէ յորոց կամէրն ասել նոցա: Կրկնէ և երեքկնէ զնոյն, եւ դարձեալ յաւելու, զի այդպէս էր սուրբիւ ըստ դրոյն: Խիստ է, ասեն նոքա, և անտանելի. եւ էր արդարեւ այնպէս՝ ըստ եղանակին որով խմանային, քան զի համարէին յօշել զմարմին և սպառել զարիւնն: Բառնայ զկարծիսդ ի նոցանէ, ասելովն՝ եթէ ի վերայ այնր ամենայնի վերասցի նա յերկինս անթերի. բայց և զոր ասացն զմարմնոյն և զարիւնէն, եւ խկութիւնն և օրինակ ընդունելութեան զնոսին՝ գեր ի վերոյ էր զգայութեանց, եւ լի հոգւով եւ կենդանութեամբ. ոչինչ բառնայ ի գրականէն, այլ յաւելու միայն զհոգեկանն եւ զաստուածային: Ցայս հարուած բանի՝ ի բաց թողթափին. եւանեն ըստ սահման հլութեան, ոչ եւս կամին վարդապետ՝ որ յայդ փորձ արկցէ զդատաստան մտաց իւրեանց:

Ի բաց գնացէք, եղկելիք. երթայք զհետ Յուդայի, իսկ մեք՝ երթիցուք զհետ Պետրոսի, եւ ասասցուք. «Վարդապետ, առ ո՞ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս[1]» դու: Ո՞ւր երթիցուք մեք, Տէր, ո՞ւր երթիցուք: Բա՜ւական մեզ՝ առ մարմին կամ առ արիւն. առ բան մտաց, առ խնամասիրութիւն, առ խմաստնութիւն աշխարհի. առ քրթմնջողն, առ անհաւատն. առ այնոսիկ որք զոր ամենայն հարցանեն ցմեզ. Զիարդ կարէ նա տալ մեզ զմարմին

1 Յովհ. Զ. 69:

եւ յուսել. զիարդ եղեալ նա յերկինս, եթէ ի նմին ժամանակի ճաշակիցք ի վերայ երկրի։ Քաւ լիցի, Տէր, ոչ կամիմք մեք երթալ առ նոսա, եւ ոչ հեռանել որոց թողիցն զքեզ. Դու միայն ունիս բանս կենաց յաւիտենականաց։

ԽԱ. Զի՞նչ իսանիցի ասել, Մարմինն ինչ ոչ օգնէ։
— Յովհ. Զ. 64։

Միւս եւս ճշմարտութիւն կայ խելամտելի ի բանիս յայսմիկ Փրկչէն. «Մարմինն ինչ ոչ օգնէ». Եւ թուի ինձ թէ Յիսուս՝ որ յղացաւն յօրհնեալ արգանդի Սրբոյ Կուսին, ծանուցեալ ինձ՝ զայդ։ Խնդրեսցուք, հայցեսցուք, բաղխեսցուք, և բացցի մեզ. եւ ծանիցուք՝ զի՞նչ է որ զՄարիամ երանելի գործէ։ Եկն հրեշտակն աւետարանել նմա՝ զի ծնանիցոյ է զՅիսուս։ Հաւատաց նա, և խոստացեալն կատարեցաւ յօրհնեալ որովայնի նորին։ Եւ զի՞նչ առ այս ասէր ազգական նորա Եղիսաբեթ. «Երանի որ հաւատայցէ, զի եղիցի կատարումն ասացելոցս նմա ի Տեառնէ [1]»։ Ըստ մասին կատարեալ է այդ. զի յղացարդ. այլ պարտ է զի եւ մանուկն զոր կրեաց յորովայնի՝ ծնցի առ ի քէն. և եղիցի այն ի ժամու իւրում, որպէս և այլքն։ Ահա այս առնէ զքեզ երանելի։ Այլ առ ի վերայ հա-

1 Ղուկ. Ա. 45։

սանել համբուրէն քումդ երանութեան՝ հարկ է և գիտել զի հաւատացեր. զՓրկիչն կրես ի ծոցդ, միացեալ ես ընդ նմին եւ հաւատովք, հաւատացեր՝ եթէ ոչ միայն լիցի որդի քո, այլ եւ որդի Աստուծոյ. հաւատացեր խլման Հոգւոյն Սրբոյ ի վերայ քո, հովանաւորութեան զօրութեան Բարձրելոյն, հիանալի եւ անճառելի եղանակի յղութեան պտղոյդ օրհնելոյ՝ յարգանդի քումմ. «Օրհնեալ ես դու ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո [1]». օրհնեալ ես՝ որով երանելիդ ես. օրհնեալ եւ երանեալ՝ երկոքումք. երանելի՝ վասն մեծի խորհրդեանն որ կատարեցաւն ի քեզ՝ ըստ մարմնոյ. եւ երանելի՝ հաւատովքն՝ որ միացոյց զքեզ ընդ նմին հոգւով։ — Այս ճշմարտութիւն բացայայտեցաւ մեզ և այլուր՝ ի նմին խսկ ի Քրիստոսէ. Կին ոմն սիրացեալ ընդ բանս նորա՝ ձայն եւ բարձ ի միջի ամբոխին. «Երանի է որովայնին որ կրեացն զքեզ, և ստեանց՝ որ գիեցուցին զքեզ։ Եւ Յիսուս ասէ. Նա՝ երանի՝ այնոցիկ է՝ որ լսեն զբանն Աստուծոյ և առնեն [2]»։ Նա՝ (մանաւանդ)։ Միթէ եղէ արդ ասել թէ մայր իւր որ ծնաւն զնա եւ սնոյց՝ չիցէ երանելի. — Քաւ լիցի, ոչ այդպէս. ոչ հակառակի բանից Եղիսաբեթի՝ որ ազգմամբ Հոգւոյն ասաց, Երանելի ես դու. և եղիցի կատարումն ասացելոցն քեզ. այլ կամի զի ծանիցեն ընդ նմին (կնոջ), եթէ ճշմարիտ պատճառք երանութեանն մեր

1 Ղուկ. Ա. 42։ — 2 Ղուկ. ԺԱ. 27։

իւրոյ Սրբոյ՝ հաւատաւն է. ոչ առ եղծանել զՀիմարտութիւն կատարելոցն ի Մարիամ՝ ըստ մարմնոյ, այլ առ յաւելուլ ի նոյն զպատուոն ներքին, զոր նայն ընկալաւ ի հաւատաւն: Պարտուրեան է յաւելուլ եւ ի ներգործելն ի մեզ ըստ մարմնոյ՝ ի հաղորդութեանն, զայն ինչ որ կատարելոցն է անդ հաւատովք եւ ըստ հոգւոյ. և հոգին կենդանացուսցէ զմեզ, եթէ հաւատասցուք՝ եթէ խոստացեալն մեզ երանութիւն՝ հասանէ մեզ Հիմարտապէս՝ յերկաքանչիւրոցն եւս. այլ գայ մանաւանդ, որպէս ի Մարիամ, ի հոգւոյ եւ ի հաւատոյ, քան ի մարմնոյ եւ յարենէ:

Զնոյն օրինակ դարձեալ, յորժամ ասացին ցնա, եթէ «Մայր քո և եղբարք կան արտաքոյ», պատասխանի էա, եթէ «Որ առնէ զկամս Հօր իմոյ՝ նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր», ոչ եթէ մերժէր զկցորդութիւն արեանն՝ յորմուտ մարդեղութեամբն, եւ եւս առաւել՝ ոչ եթէ յուրասա լինէր եթէ ոչ որպէս զայլ մարդիկ յղացեալ էին յարենէ մերն, այլ զի իմասցին՝ եթէ զինչ առիթ էր կապակցութեանն՝ զոր կամէր թէ ունիցին ընդ ինքեան. եւ զի մայր իւր՝ զոր արժանապէսն երանելի համարէին, ըստ բանին Եղիսաբեթի, ոչ այնքան վասն մարմնաւորապէս զնա յղանալոյն էր, որքան վասն հաւատալոյն բանի հրեշտակին՝ յղացեալ էր զնա կանխագոյն ըստ հոգւոյ, որպէս Հարք ասեն:

Արդ եւ մեք նմին նման լիցուք երանելիք:

Որդին Աստուծոյ առնլոց էր ի նմա մարմին եւ արիւն, զոր և տալոց էր ոչ վասն մեր միայն՝ այլ եւ մեզ. այնպէս իսկաբար՝ որպէս էառն ի Մարիամայ, եւ այնպէս Հիմարտութեամբ՝ որպէս էառն վասն մեր ի խաչին, նոյնգունակ Հիմարտապէս տալոց էր եւ մեզ. եւ այնպէս իսկական գոյացութիւն մարմնոյ եւ արեան իւրոյ է ի մեզ՝ ի տալն մեզ յուտել եւ յըմպել, որպէս էր իսկական գոյացութիւնն եղեալ ի Մարիամ՝ ի յղանալն զնա, եւ որպէս էրն ի խաչին՝ յորժամ մեռաւն ի նմին: Հաւատասցուք արդ ընդ Մարիամայ՝ կատարելոցն ի մեզ ըստ մարմնոյ. այլ գուն գործեսցուք կատարել զայն ընդ նմին եւ ըստ հոգւոյ: Կենդանացուսցէ զմեզ հոգին, որպէս կենդանացոյցն զԿոյսն Սուրբ: Զօգնէր ինչ նմա մարմնով յղանալն՝ եթէ չէր յղացեալ եւ հոգւովն. ոչինչ օգնեսցէ մեզ ընդունելն զնա մարմնով՝ որպէս և նայն, եթէ ոչ նման նմին ընկալցուք եւ ըստ հոգւոյ՝ հաւատովք: Աքանչելապէս իմն, սեփական իմն ներգործութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ յղացաւ նա յորովայնի Սրբոյ Կուսին. աքանչելապէս եւ նմանակերպ զարմանալի օրինակաւ նորին Հոգւոյ՝ զոր ամենայն յղանայ իմն եւ ծնանի ի վերայ սեղանոյն: Ոչ խորշի Որդին Աստուծոյ ի մարմնոյ մերոյ, որպէս ոչ խորշեցաւ յարգանդէ Մարիամայ: Հաւատայ Մարիամ եթէ յղացեալն ոչ լոկ Որդի է մարդոյ, այլ եւ Որդի Աստուծոյ. զնոյն հաւատս ունիմք եւ մեք յԱստուած՝ որ տայ մեզ զինքն: Մինթէ թանձրամիտք եւ մարմնաւորք

ելցեմք ի հաւատալ մերում այնոցիկ ամենայնի, որպէս Մարիամ ի հաւատալն։

Արդ ընդէր թողցուք զքեզ, Տէր. հաւատաց Մարիամ, եւ որ ասացաւն նմա՝ կատարեցաւ. հաւատամք եւ մեք, եւ զոր ասացերդ՝ կատարի հանապազօր։ Երանելի կոչեցաւ Մարիամ. երանելիք լիցուք և մեք. անարժանիկ այնոքիկ են՝ որ թողուն լքանեն զքեզ։

ԽԲ. Որոշումն աշակերտաց հաւատացելոց եւ անհաւատից։— Յովհ. Զ. 14–5, 24–5, և այլն։

Փրկիչ իմ, կարկեալ կացից առաջի քո, եւ լուութեամբ և դողութեամբ նկատեցից զպակուցիչն զանազանութիւն, որ յայտնի այսօր ի մէջ աշակերտաց քոց, ոմանց միալով ընդ քեզ, եւ այլոց թողլով զքեզ։ Եւ ո՞յք են որ թողուն զքեզ։ Նոքա՝ որք ասէին, Դա է Հնմարաիւ Մեսիայն[1]. նոքա՝ որք խնդրէին զքեզ եւ կամէին յափշտակել կացուցանել թագաւոր՝ ակամայ կամայ քոց. նոքա՝ որք ի խոյս տալն քո յայնկոյս ծովակին, անցին ընդ այն՝ գալ առ քեզ ի Կափառնայում[2]։ Ո՞չ ապաքէն արք այդպիսիք երեւին յօժարք յանսալ բանից քոց։ Եւ սակայն դոքա իսկ են՝ որք թողուն զքեզ, որք տրտնջին զքէն, որք ոչ հանդարտեն վարդապետութեան քում։

1 Յովհ. Զ. 14, 15։—2 Նոյն, 24, 25։

Քանիք ելցեն որք թողին հաւատալ ի Փրկիչն, այլ ի ներքուստ ոչ հաւատան, զի ոչ որպէս արժանն է հաւատան, եւ առ շահու անձանց խնդրեն զՅիսուս, հանգոյն այնոցիկ՝ որոց ասացն. «Ամէն ամէն ասեմ ձեզ. խնդրէք զիս, քանզի կերայք ի հացէ անտի եւ յագեցարուք[1]»։ Որքանեաց եւս կարէր ասել. Խնդրէք զիս, զի հաճեցեալ զփառասիրութիւն ձեր եւ զագահութիւն. այս իսկ են իլձք ի խորս սրտից ձերոց, որովք այնքան թախանձ լնձ արկանէք ուսուցիւք եւ աղօթիւք զոր տայք առնել. ոչ զկամս իմ խնդրէք՝ այլ զանձանցդ. եւ ոչ գոհանայք զինէն մինչեւ ոչ բարձիցի ի մտաց և ի մարմնոց ձերոց զվիշտս նոցին։ Խորամուխ լերուք ի սիրտս ձեր. տեսէք զգործս ձեր՝ որպիսի՛ լինչ իցեն. քննեցէք ներքսագոյնս, եւ միայն մարմնեզինս գտջիք ի խորհուրդս կամացդ. երթայք գործեցէք այլ կերակուր[2]. լցարուք այլովք խնդրելեօք։

Սակայն, ո՛վ Տէր, եթէ մարմնեղինք էին գոքա, եւս առաւել եւ աշակերտքն քո. բայց կացին մնացին նոքա ընդ քեզ, մինչ քրիստոնէղդ դայթակղեցան և յետս էգան։ Ահաւոր իմն գաղտնիս յայտնես լնձ ասասնօր, քանզի անդէն ի տեսանել քում զծագումն տրանջնաց յանհաւատսն՝ ասես ցնոսա. «Մի քրիստոնէք. ոչ ոք կարէ գալ առ իս՝ եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա[3]»։ Եւ իբրև տե-

1 Յովհ. Զ. 26։—2 Յովհ. Զ. 27։—3 Նոյն, 63–4։

սեր եթէ եդին ի մոլ մեկնիլ ի քէն, միւսան-
գամ յաւելեր. «Են ոմանք ի ձէնջ՝ որ ոչ հա-
ւատան. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ ոչ ոք
կարէ գալ առ իս, եթէ ոչ իցէ տուեալ նմա ի
Հօրէ իմմէ»: Իսկ յասելն քեզ Պետրոսի և այ-
լոց ընդ նմին, «Տէր, առ ո՞վ երթիցուք, դու
ես Քրիստոսն, Որդի Աստուծոյ [1]». Հայրն քո
ձգէր զնոսա ի նեերքուստ. նա ետ նոցա գալ առ
քեզ. և ոչ միայն գալ, այլ եւ մնալ ընդ քեզ.
քանզի էին նոքա ի թուոյ երջանկացն՝ վասն ո-
րոյ գրեալ էր, որպէս և դու ինքնին յառաջ ա-
ծեր, եթէ «Եղիցին ուսեալք Աստուծոյ [2]».
յերջանիկ խմբէն՝ զորմէ արտասանեցեր, «Ա-
մենայն զոր տայ ինձ Հայր իմ՝ գայ առ իս».
այսմենքն զորս այնու գաղանի եղանակաւ ձգէ՝ զի
գայցեն, ամենեքին որոյ տայ գալ. դա է եր-
ջանկայն խումբ՝ զոր ետ քեզ Հայր. գոքա ա-
մենեքին գան առ քեզ [3]. և որպէս ասէիրդ՝ Ոչ
զոք յայնցանէ հանես արտաքս. հաղորդս առ-
նես զնոսա նեերքին գաղանեաց քոց, նեերքին ըս-
փոփանաց: Ասես ցնոսա լռէլեայն, որպէս եր-
քեմն յՊետրոս. «Երանի՛ քեզ, Սիմոն, որդի
Յովհաննու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց
քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է [4]»: — Ուրախ
լեր Ժողովուրդ ընտրեալ. ուրախ լեր, «հօտ
փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զար-
քայութիւն [5]», յայտնել զգաղտնիս իւր, ձգել

1 Յովհ. Զ. 65–6, 67: — 2 Նոյն, 45: — 3 Նոյն,
37: — 4 Մատթ. ԺԶ. 17: — 5 Ղուկ. ԺԲ. 32:

առ Որդին իւր: — Իսկ զի՞ արասցես ընդ այլ-
սըն: — Զարհուրիմ, Տէր, յընթեռնուլս. մատ-
նես զնոսա անձամբ յանձինս իւրեանց, արդար
դատաստանաւդ. զանձինս իւրեանց ինդրեն
նոքա, անձանց իւրեանց մատնես զնոսին. առ
ամբարտաւանութիւն իւրեանց, առ կամս մար-
մնոյ, առ քրթմնջանսն, առ գայթակղութիւնս.
եւ կան մեան ի նոսին կամակար. յարանան ի
չարաչար ընտրութեան իւրեանց, յոր թողեր
լքեր զնոսա, անքնին՝ այլ միշտ արդար դատաս-
տանաւ քով: «Վասն այսորիկ, ասես, ասացի
ձեզ թէ ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ իցէ
տուեալ նմա ի Հօրէ իմմէ [1]»: Ոչ ոք կարէ
յանձնէ իւրմէ ելանել, ի զգայութեանցն, ի
հպարտութենէն, եթէ ոչ ձգեսցէ զնա անտի
Հայրն քո, առ ի տալոյ քեզ: — Զգեա զիս, Տէր.
տամ քեզ զամենայն:

ԽԳ. Սուրբն Պետրոս եւ ուղղափառք յարիւն ի Քրիստոս եւ յԵկեղեցի. Կափառնայիմքն եւ հերետիկոսք զատչին ի նոցանէ: — Յովհ. Զ. 53:

Ի տեսիլս խորագոյնս արկանես զիս, Տէր. թափ
անցանեմ ի դարս որ գալոցն էն: Ընդ մնացողսն
ընդ Յիսուսի, եւ Պետրոս ի գլուխս նոցա, տե-
սանեմ զամենայն ուղղափառս անմեկնելապէս

1 Յովհ. Զ. 66:

յարեալս ի Քրիստոս եւ յեկեղեցի նորա. եւ յանջատեալսն ի Յիսուսէ՝ զամենայն հերետիկոսս՝ որք լքանելոյ են զեկեղեցի նորա: Ի Պետրոս եւ յառաքեալսն՝ տեսանեմ զյնոսիկ՝ յորս հաւատք յաղթողանն ի վերայ մարդկեղէն զգայութեան, այսինքն են ամենայն հաւատացեալքն. եւ ի նոսին՝ որք անջատեալք մեկնին եւ ոչ երթան զհետ Յիսուսի, տեսանեմ զայնոսիկ՝ յորս մարդկեղէն խմացուածք զօրանան ի վերայ հաւատոց. այսինքն են՝ ամենայն անհաւանքն՝ որք թողուն զեկեղեցի, եւ այնոքիկ մանաւանդ որք թողուն զնա ի սակս այսր խորհրդոյ Գոհութեան: Ի կորուստ գնան նոքա ընդ ասացողն, «Զիաւրդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել», եւ զՀնմարտութիւնն յայլաբանութիւն շրջեն:

«Մարմին իմ կերակուր է, եւ արիւն իմ ըմպելի». այնպէս են Հնմարտապէս. եւ պարտ է ուտել եւ ըմպել զայն. երկոս եւ չորեքս կրկնաբանեալ. մեթէ այլաբանութիւն իցէ այս: Եւ ո՞ ուրեք երբեք այսպիսի ինչ պնդեաց. ոչ ուրեք գտանի այդմ օրինակ: Այլ ո՞ եռեսս եւ քան զայդ նուազ մեկնաբանեալ եւ պարզեալ. — նուազագոյն ևս գոցի այդմ օրինակ. մանաւանդ թէ եւ ոչ մի, որպէս քննեցաքս եւ տեսաք. եւ սակայն յամառեալ պնդեն դոքա այլաբանութիւն ասել: Քանի՞ յամառ են միտք մարդկեղինք ի կանխակալ կարծիս իւրեանց. քանզի ծանր թուի նոցա քեցել յառաջնոյ անտի դիժարութենէն, որպիսի էր Կափառնայիմայցն,

որպիսի է եւ դոցա. «Զիաւրդ կարէ դա տալ մեզ զմարմին իւր յուտել»: Ցաղթահարեալ պարտին այդանօր. եւ կորնչին ընդ Թանձրամիտ եւ ամբարտաւան քրթմնջողսն: Եւ սակայն եթէ հարցցես զնոսա՝ զմեզ իսկ ասեն Կափառնայիմն. զչօտ քո փոքրիկ, զփոքրկունս եկեղեցւոյ քո, որք պարզմտութեամբ լսեն բանից քոց, մեղադրեն լինել Թանձրամիտս եւ մարմնաւորս, եւ անլսողս բանից քոց: Բա՞ւէ. եւ զի՞նչ իցէ որում ոչ լսիցեմք մեք: Քրիստոս ասաց. «Իսկ արդ եթէ տեսանիցէք զիս երթալ անդրէն յերկինս [1]». եւ ծանոյց այնու, զի ոչ յօշեսցի, ոչ կոտորեսցի և սպառեսցի մարմին իւր. մեթէ չհաւատամք եթէ այնպէս լինիցի: Մեթէ ո՞չ հաւատամք եթէ վերացաւ Յիսուս յերկինս, եւ կեայ անդ բոլորովիմբ: Հաւատամք այսմիկ, Քրիստիչ իմ. վկայէ ամենայն երկիր: Եւ եթէ ի վերայ այսոցիկ՝ հաւատամք Հնմարտակեալ զքեզ, եւ զի զոր հաճիս տալ մեզ յընդունել ի մարմնս մեր՝ քո մարմնդ եւ արիւնդ է, եթէ հաւատամք այսմ այսպէս լինել, յայն սակս է՝ զի մի ընդ Կափառնայիմայցն ասասցուք, «Զիաւրդ կարէ դա տալ մեզ զմարմին իւր յուտել»: Եւ արդ ո՞ւք իցեն որք զայդ ասեն, զի ահա յայտնապէս մեք էմք. ո՞ւք իցեն ասացողքդ, եթէ ոչ այնոքիկ՝ որք ոչ կարեն համոզեալք լինել ի հաւատալ՝ եթէ մարթ իցէ ուտել զմարմին Քրիստոսի եւ ոչ ծախել զայն.

1 Յովհ. Զ. 63:

ոչ յօշէլ, ոչ ուտէլ զայն խակապէս ի գոյու-
թեան իւրում ի վերայ երկրի, առանց ձգելոյ
զնա յերկնից։

Ասաց Յիսուս, «Հոգին է կենդանարար». մի-
թէ մեք ուրանամք ինչ զայդ. միթէ ոչ հաւա-
տամք եթէ մարմին նորա լի է հոգւով կենդան-
արարաւ։ Եթէ յղացաւ մարմնով, յղացաւ ի
Հոգւոյն Սրբոյ. հաւատամք այդմիկ։ Հոգին
Սուրբ հովանացաւ ի վերայ Մարիամու [1]. հա-
ւատամք։ Եթէ նովին մարմնովն յղացելով՝ պա-
տարագեցաւ, ի ձեռն Հոգւոյն Սրբոյ մատու-
ցաւ ի պատարագ, կամ, որպէս բնագիրն ասէ,
«Ի ձեռն Հոգւոյն յաւիտենականի [2]». — հա-
ւատամք։ Զամենայն զոր Քրիստոս կատարեաց
մարմնով, նոյն եւ հոգւով կատարեցաւ։ Ոչ
այնքան ի մարմնոյն, որքան յաւէտ ի հոգւոյն
միացելոյ ընդ նմա՝ գան կենաքն. — հաւատամք։
Զասեմք մեք ընդ Կափառնայիմայն եթէ Յի-
սուս որդի էր Յովսեփայ, եւ ոչ սոսկ Որդի
մարդոյ. ասեմք, եթէ Որդին մարդոյ յղացեալն
է Մարեմայ՝ է եւ Որդի Աստուծոյ, եւ պարտ
է, որպէս ասաց նմա հրեշտակն, կոչել զնա
ճշմարտապէս եւ յատկապէս այսու անուամբ։
Հաւատամք դարձեալ, զի այն Որդին մարդոյ՝
որ ի խաչին անշնչացաւ, ոչ սոսկ որդի մարդոյ
է. այլ ընդ հարիւրապետին ասեմք, «Արդարեւ
Որդի Աստուծոյ է դա [3]»։ Եւ յուտէն զմար-

1 Ղուկ. Ա. 35։ — 2 Եբր. Թ. 14։ — 3 Մտթ.
ԻԷ. 54։

մին նորա եւ յըմպելն զարիւնն՝ հաւատամք եթէ
միանգամայն մարմնով եւ հոգւով անկ է ընդու-
նել զայն. եւ զի «Հոգին է կենդանարար»։

Ասաց նա. «Մարմին ինչ ոչ օգնէ». — հա-
ւատամք. եւ նկատեմք նախ, (քանզի հաւատովք
կշռեմք զամենայն բանս նորա), նկատեմք՝ զի
ասաց, Մարմին իմ ինչ ոչ օգնէ. զի այդ էր
մեկնաբանել, որպէս գուրգ համարիք, այլ եղ-
ծանել զնախաձառեալն, յորում այնքան սոսկ
ասաց՝ մարմնով ունել մեզ կեանս։ Արդ յա-
սելն՝ Մարմին ինչ ոչ օգնէ, այդ մարմին է ըստ
խմացուածոյ Կափառնայիմայցն, մարմին որ-
դւոյն Յովսեփայ. եւ մարմին այնպէս ուտել
բերանով մարմնոյ, զի յօշեսցի եւ ծախեսցի, մին-
չեւ չմնալոյ ինչ ի վերացուն յերկինս. քանզի
այսպէս խմանային քրիստոնէքն։ Այլ մեք ոչ
այդպէս խմանամք. եւ եթէ հարկ եւս իցէ խմա-
նալ՝ եթէ մարմինն Յիսուսի ընկալեալ եւ կե-
րեալ բերանով մարմնոյ, այնու հրաչալի օրի-
նակաւ՝ զոր չառնուն ի միտ անհաւատքն, «ինչ
ոչ օգնէ»։ հաւատամք եւ ըստ այսմ՝ սարասի.
զի յուտէն զմարմնդ զայդ՝ գիտեմք զի հարկ
է ուտել որպէս զոհ զնեալ, եւ յիշել զնայու-
տէն, գորովել յիշատակաւն, ընդ նմին մի պա-
տարագ սուրբ լինել, հաղորդակից լինել հո-
գւոյն՝ որպէս եւ մարմնոյն. միով բանիւ, կցոր-
դիլ ընդ նմա հոգւով եւ մարմնով, որպէս եղեւ
ամենասուրբ Կոյսն ի յղանալն զնա յորովայնի.
ապա եթէ ոչ՝ ոչ ինչ օգնէ մարմինն այն, թէ-
պէտ եւ ուտիցի եւ ընկալեալ լիցի ի մար-

մեր։ Զասէ իսկ Յիսուս՝ թէ ոչ լինի կէ-
բեալ, կամ ոչ ընկալեալ ըստ գոյացութեանն,
այլ թէ ինչ ոչ օգնէ. որպէս եւ Առաքեալն
Պօղոս՝ չասէ չունել զմարմին Քրիստոսի՝ եթէ
անարժանութեամբ ոք ընկալցի, այլ թէ ոչ
խորհի այն [1]։ Ապա ուրեմն ոչ միայն մարմնով
արժան է ընդունել զնա, այլ եւ խորհել ըստ հո-
գւոյ. զի եթէ ոչ այսպէս՝ ոչ միայն չօգնէ, այլ
եւ դատապարտէ զմեզ, եւ պարտականք լինիմք
մարմնոյ եւ արեանն Տեառն [2]։ Արդ օգնէ ինչ
ոչ մարմին, որպէս զիարդ եւ ոք խմացի.
չօգնէ ինչ առանձինն, եւ ոչ ինքնին լոկ. ոչ է
օրէն ի նա յառէալ կալ միալ։ Եւ եթէ հարկ
եւս լցէ բանիւդ՝ Մարմին ինչ ոչ օգնէ՝ խմա-
նալ թէ մարմնեղէն զգացումն չօգնէ ինչ, հա-
ւատամք եւ այդմ, զի «ոչ մարմին եւ արիւն
յայտնեաց մեզ [3]» զհաւատալիքս, եւ ոչ զան-
հասանելի օրինակն՝ որովք հաւատամք Ճաշա-
կել զմարմին Փրկչին։ Եւ արդ, զոր ինչ եւ ա-
սաց նա զմարմնոյն ուտելոյ եւ զարենէն ըմպե-
լոյ, եթէ եւ ըստ գրոյն խմանալ պարտ լցէ
զմարմնոյն եւ զարենէն՝ ըստ յատուկ իւ-
րուն գոյացութեան, «Հոգի է եւ կեանք».
այնու՝ զի որով եւ է եղանակաւ՝ հարկ է զոդել
ի նոյն եւ զհոգի. հաւատամք այդմ։ Եւ առ ի
քաջ խմանալ զամենայն բանս Փրկչին, ոչ հա-
ւատամք թէ վերջինքն յորս զհոգւոյ խօսեցաւ՝
ի բաց բարձցեն զառաջինսն՝ յորս զմարմնոյն

1 Ա. Կորն. ԺԱ. 29։—2 Նոյն, 27։—3 Մտթ. ԺԶ։

Ճառէաց, այլ ուսուցանեն մեզ յարել ի մի
զերկոսեան, եւ խնդրել զհոգին ի Ճշմարտու-
թեան եւ ի յատկութեան մարմնոյն։

Ո՞ւր լցեն արդ հաւատք ուղղափառաց։ —
Ի բանս Պետրոսի. «Տէր, առ ո՞վ երթիցուք,
բանս կենաց յաւիտենականաց ունիս». որոց
ամենեցուն հաւատամք. եւ այնոցիկ՝ զոր յեղ-
յեղեալս ուժգնագոյնս վասն գոյացապէս Ճաշա-
կելոյ զմարմնոյդ, եւ այնոցիկ՝ յորս նովին յատա-
կութեամբ ուսուցանես՝ եթէ պարտ է օգտիլ
ի հոգւոյդ։ Անհաւատիկ հաւատք մեր. անհաւա-
տիկ դաւանութիւն մեր։ Իսկ ո՞ւր լցեն հա-
ւատք անչատելոցն յեկեղեցւոյ, եթէ ոչ ի բան
Կափառնայիմայնն. «Զիա՞րդ կարէ դա տալ
մեզ զմարմին իւր յուտել»։ Տալ մեզ զայն առ
ի սպառել, երբ անհամբոյր եւ դժպհի, տալ
մեզ՝ անծախելի միալով եւ ի նմին ժամու ան-
թերի յերկինս կալով, անհնարին երբ։

Զեմք մեք ի դասուէ այսի, ո՛վ Տէր. եւ ոչ
միով իւրեք ոչ պատշաճի մեզ գիտիդ այդ
քրթմնջողացն։ Դասակից լինիմք Պետրոսի.
դառնամք անդրէն ի վերնատունն, առնել ընդ
քեզ եւ ընդ աշակերտս քո՝ զընթրիսն։ Որպիսի՞
պարզութիւն, որպիսի՞ լուութիւն. «Առէք, կե-
րայք. Այդ է մարմին իմ։ Արբէք. այդ է արիւն
իմ»։ Զասէ, թէ այդպէս լեցին ի ձեզ՝ հաւա-
տովք, այլ զոր առաջի առնեմ ձեզ՝ այդպէս
է։ Եթէ հաւատայք եւ եթէ ոչ՝ այդպէս է.
այդպէս է, վասն զի ես ասեմ, եւ ոչ զի դուքդ
հաւատայք։ Քանի՞ զարմանայ երբ։ Եւ սակայն

առանց ինչ մեկնաբանութեան ասէ զայն Յիսուս. լսեն աշակերտքն առանց ինչ հարցանելոյ. հարցասէրքն անդադարք, եթէ ներեսցի ինձ առ անգամ մի այսպէս կոչել զնոսա, լուռ եւ եթ կան. կատարեն զասացեալն, ոչ միայն անհակառակ եւ անտրտունջ, այլ եւ առանց կարօտելոյ նորոց հրահանգաց քան զոր ընկալանն։ Քաջ իսկ ի բաց մերժեալ էին արտունջքն. խնդիրքն Ճշգրտապէս լուծեալք. խաղաղական է ամենայն. ամենայնն հլուական. Հայրն ձգեաց զնոսա։ Իսկ այլքն։ — Ո՛հ, փախերուք յընկերութենէ նոցա, ո՛ հաւատացեալք, ի բաց կացէք ի մոլորեցուցչացդ, յամպարշտաց անտի, որք ոչ զՄովսէսէ քրթմնջեն, այլ զՅիսուսէ ինքնին. մեկնեցարուք ի նոցանէ, զի մի ի մեզ նոցա ըմբռնիցիք։ Առ իսկ։ զինչ լինելոց է նոցա. մեթէ երկիր պատառեսցի ընդ ոտիւք նոցա՝ կենդանւոյն կլանել զնոսա։ — Ոչ, չար եւս քան զայդ։ Թողուն նոքա զեկեղեցի, եւ ի կարծիս անձանց իւրեանց մատնին։

ԽԴ. Անարժան հաղորդութիւն. — Ա. Կորնթ. ԺԱ. 27–9։

Իսկ որք ոչ հրաժարեալք յԵկեղեցւոյ, այլ եւ պահելով զՃշմարիտ հաւատս մարմնոյ եւ արեանն Քրիստոսի, անարժանութեամբ ընդունիցին, ի՞նչ եւ նոքա ձգեալք ի Հօրէն երկ-

նաւորէ. ի՞նչ տուեալք ի նմանէ առ Յիսուս. եւ գայցե՞ն առ սա՝ որպէս արժանն է։ — Արդարեւ ոչ. զի ոչ եթէ միայն ոչ ընդունին կեանս, այլ՝ եւ որպէս ասէ Առաքեալն, «Զդատաստան անձանց իւրեանց ուտեն եւ ըմպեն, զի ոչ խորեն զմարմինն Տեառն [1]»։ Ահագինս ինն բարբառի աստանօր Առաքեալն սուրբ. քանզի յետ յիշեցուցանելոյ հաւատացեալսն՝ եթէ ասաց Յիսուս տալ նոցա յուտել զմարմին իւր, որ խոցելոց եւ պատառեալոց էր ի խաչին, եւ թէ բաժակն զոր տալոց էր նոցա յարբուցին՝ արեամբն հեղլով ի նմին մարմնոյ՝ էր միջնորդ ուխտին եւ կտակին՝ զոր առնէր Փրկիչն ի փրկութիւն նոցին, ի վերայ բերէ, եթէ «Որք ուտեն զհացս զայս». միտ դիր, զնացս զայս. որ է ասել՝ հացս որ եղեալ է մարմին, որպէս վերագոյն պատմեալ էր, «եւ ըմպեն զբաժակն Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցին մարմնոյ եւ արեան Տեառն»։ Եւ զի՞նչ եկեալ պարտականն լինել. բայց եթէ ոչ միայն պղծել այլ եւ խոտել. ըստ օրինակին զոր արարին Հրեայքն, ի պատառելն զմարմին նորա եւ ի հեղուլ զարիւնն. վասն այսորիկ զդատաստան անձանց իւրեանց ուտեն եւ ըմպեն, զի հանգոյն նեն-գաւորացն այնոցիկ՝ ոչ խորեցին զմարմին Քրիստոսի ի մարմնոց աւազակացն ընդ նմա խաչեցելոց։ Եւ տես, զի անարգանք Հրէիցն առ Յիսուս՝ Ճշգրտիւ առ մարմին նորա էր. քանզի

1 Ա. Կորնթ. ԺԱ. 27։

մարմնին եւ Թագաւորսն սպանմամբ, ըստ բանին, եթէ «Մի զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել[1]»: Արդ Հրեայքն անարգեցին զմարմինն՝ յինքեան եւ ի յատուկ գոյացութեան իւրում՝ յորժամ ի խաչ հանին զնա. անարգեցին զարիւնն՝ յինքեան եւ ի յատուկ գոյացութեան նորին՝ յորժամ եռուն հեղուլ յերկիր գժնդակ տանջանաւքն, որպէս զարիւն յանցաւորի: Նմին նման սրբապղծք լինիք՝ յուտէն եւ յըմպելն անարժանութեամբ զմարմինն եւ զարիւնն զայն. անարգէք եւ պղծէք զնոսին յինքեանս իսկ. եւ անարգանքն զոր դնէք մարմնոյ Տեառն՝ չխորհիլն է, չճանաչելն զսրբութիւն նորա եւ զգին: Զասէ Առաքեալն թէ ոչ ընդունին չունելով հաւատս, որպէս հերետիկոսքդ ասեն, այլ զի ոչ խորհին, թէպէտ եւ ընդունիցին. օրինակ իմն, եթէ յետ ընդունելոյ արկցէ ոք ի տիղմն զքար պատուական՝ որպէս զմի ի հասարակ քարանց, ոչ եթէ չէառ զայն, այլ զի ոչ խորհաց եւ ոչ յարգեաց՝ որպէս արժանն էր:

Ոչ այս միայն է զոր ասեն եւս հերետիկոսքդ. Պարտական էք մարմնոյ եւ արեանդ այդմիկ, որպէս պարտական է անձին եշխանի՝ զորոյ թէ ոք պատառիցէ անարգանօք զպատկերն: Ատա նոր ոչ զպատկերէ եւ զօրինակէ են բանք. Առաքեալն հաւատար համարի զբանն, Այս է

1 Ղուկ. ԺԲ. 4:

մարմին իմ, եւ Պարտական է մարմնոյ, եւ Ոչ խորհել զմարմինն: Ոչ է արժան նուազեցուցանել զոՀիր այնոցիկ՝ զորս կշտամբէ Առաքեալն, եւ ոչ մեղմել զարհուրսն՝ որ վասն այնորիկ: Արդարեւ յանարգելն զկենդանագիր եշխանի՝ ի նա ձգին ընդդիմութիւնն եւ անարգութիւնն. այլ յոյժ նուազ են նախատինքն՝ քան եթէ ի նուիրական անձն նորա ոք ժպրհէր: Ըստ այմ յետին օրինակի է ժպրհութիւն քրիստոնէից՝ ոք անարժանութեամբ ուտեն զմարմին Փրկչին եւ ըմպեն զարիւնն. ժպրհութիւնն է անմիջաբար յանձն նորա: Համառօտ ասել. երկուքք են նկատելիք ի չարչարանս Քրիստոսի. Զեռն Հրէիցն, եւ հնազանդութիւնն Փրկչին: Ոք արժանապէս ընդունին զմարմին նորա եւ զարիւն, հաղորդակից լինին հնազանդութեան նորին. իսկ ոք անարժանութեամբ՝ մասնակից լինին սրբապղծութեան սպանչացն, եւ հանդոյն նոցա անմիջաբար յերկրպագելի անձն նորին յաւակնին:

Տէր, ձգեա զմեզ առ քեզ, ուստ մեզ արդարապէս խորհել զմարմինն զոր ընդունիմք, զի մի երբեւ պիղծ ինչ ընկալցուք զայն՝ յընդունելս ի սիրտ մեր անմաքուր եւ յապականեալ: Սրբութիւն սրբոց է, որպէս կարգային երբեմն առ հաւատացեալս՝ ի ժամ բաշխելոյ նոցա զմարմինն Տեառն*: Մի մերձեսցուք ի նա պղծեալ ձեռ

* Այսպէս իսկ և այժմ պաշտի յեկեղեցիս Հայոց ի պատարագի:

ռօք. մի ընկալցուք զայն անմաքուր շրթամբք. մի տացուք նմա զհամբոյրն Յուդայի, զհամբոյր մատնչի. այլ զհամբոյր հարսին, համբոյր եռանդաշարժ, նշանակ ողջախոհ եւ մշտնջենաւոր սիրոյ: «Համբուրեսցէ զիս ի համբուրելոյ բերանոյ իւրոյ[1]». համբոյր փեսայի. տաց եւ ես նմա զհամբոյր հարսին. համբոյր զոր տան նմա կուսանք, հոգիք ողջախոհք՝ սիրողք նորին: Զգեա զվեզ, Տէր, առ համբոյրդ այդ քաղցր եւ պարկեշտ. «Զգեա զվեզ, եւ զհետ հոտոյ իւղոց քոց ընթացցուք[2]»: Ոյք ուղիղ են սրտիւք՝ սիրեն զքեզ: Նոքա են որ տան քեզ զհամբոյրս սուրբ, զհամբոյր խաղաղական եւ զյաւիտենական սիրոյ: «Զի ոչ ոք գայ առ ի՛ս՝ եթէ ոչ Հայրն իմ ձգեսցէ զնա[3]». ոչ ոք գայ առ ի՛ս՝ եթէ ոչ ետցէ տուեալ նմա ի Հօրէ իմմէ: Ոչ ոք հաղորդի արժանապէս՝ եթէ ոչ այսու ձգմամբ:

Խ Ե. Ո՞յք իցեն անարժանուրեանն հաղորդողք:

Ընթերցեր զգրեալսն Պօղոսի առ Կորնթացիս (Ա. ԺԱ. 16–22): ՎՃիռ է ահաւոր ի վերայ անարժանութեամբ հաղորդողաց. «Ոչ կարէք զբաժակն Տեառն ըմպել եւ զբաժակն դիւաց: Ոչ կարէք ի սեղանոյ Տեառն վայելել, եւ ի սեղանոյ դիւաց»: Ըմպել զբաժակն դիւաց, չէ

1 Երգ երգոց, Ա. 1: — 2 Նոյն, 3: — 3 Յովհ. Զ. 44, 66:

արբուն ի բաժակէ հեղլոյ վասն նոցա, այլ ըմպել ինամով զփափկութիւնս աշխարհի, որովք եւ ի նոյնս մատնի անձնն: Հաղորդել սեղանոյ դիւաց, ոչ է լոկ ուտել ի կերակրոց զոհելոց նոցա, այլ մատնել զանձն յագահութիւն՝ որ է կռապաշտութիւն, յորկորստութիւն, որով որովայնն աստուածացուցանի. եւ յամենայն ախտս մոլութեանց, որովք դիւաց մատնի՝ որ ինչ Աստուծոյ էր նուիրելի: — Այլ մի ի մեզայ որ յոյժ անհանդուրժելի է առ Հաղորդութիւն, գժտութիւն եւ ատելութիւն է առ ընկերն. քանզի սեփական արդիւնք Հաղորդութեան են կցորդել զվեզ ընդ իրեար եւ առնել մի մարմին, ըստ բանին Պօղոսի. «Զի մի հայ մի մարմին եմք բազումքս. զի ամենեքեան ի միոջէ հացէ անտի վայելեմք[1]»: Արդ որ ընդունի զհացս այս կենաց, որ ընդունի զմարմինս տուեալ մեզ ընդ ձեւով եւ ընդ տեսակաւ հացի՝ ի մնումդ հոգւոյ մերոյ, — որ բազմաց բաշխեալ՝ կայ միայ մէջտ նոյն, և կատարելապէս նոյն, ոչ ինչ կրելով բաժանումն յէութեան իւրում, — պարտի լինել մի ընդ համբէն անդամն, որպէս եւ մի լինել ընդ Քրիստոսի: Եւ զայս կնիք ունի յինքեան սրբազան հայն Հաղորդութեան: Արդ որ ընդունի զայն՝ քէն ի սրտի ունելով ընդ եղբօրն, բուռն առնէ մարմնոյ Փրկչին, քանզի նա գայ առնել զվեզ մի մարմին, եւ մեք անջատեալ միամբ: Եւ զի՞նչ

1 Ա. Կորնթ. Ժ. 17:

լինելի որոց այդպէս որոշեալ կայցեն՝ մինչդեռ դայ մարմին Յիսուսի ի միացուցանել զնոսին։ Զկարէ վայրապար մնալ աստուածայինն այն մարմին. որք ոչն կամին միանալ՝ խորտակէ զնոսին, մանրեալ փշրէ, եւ բաժանէ անձամբ յանձինս իւրեանց. գիտակցութիւն նոցին դատապարտ առնէ զինքեանս. հերքէ զնոսա ի կցորդութենէ իւրմէ, եւ անջատէ ի խորհրդական մարմնոյն. թէպէտ եւ արտաքուստ կացցեն ի նմին՝ այլ որոշեալք են հոգւով. անդամք են ապականեալք. «Ծառք անպտուղք, կրկնամեռք, խլեալք արմատաբի [1]», որպէս ասէր առաքեալն Յուդա. թուին կալ տակաւին կանգուն յարմին իւրեանց, այլ մահ է ի ծոցս նոցին, և արմատք նոցա ոչ եւս ձգեն հիւթ անդարար։

Երթայք, ուրեմն, եւ որպէս Տէր ինքնին պատուիրեաց, երթայք նախ հաշտել ընդ եղբօր ձերում [2]. զի ոչ միայն անարժանք է քաղորդելոյ ի սեղանին, այլ եւ ոչ նուիրաբեր ի նոյն լինելոյ. ոչ միայն անարժանք ի հաղորդութիւն նուիրաց սեղանոյն, այլ եւ ոչ առաջի կալոյ նմին։ Արիւնն Յիսուսի՝ զոր բարձրացուցանեն յերկինս ի վեր, վրէժ կարդայ ի վերայ ձեր, զի արիւն է «որ արար խաղաղութիւն որ ինչ յերկրի և որ ինչ յերկինս [3]». ոչ միայն ընդ մարդիկ և ընդ Աստուծոյ՝ այլ եւ ընդ մարդիկ եւ ընդ միմեանս։ Ոչ լսէք ձայնի արեանն՝ որ

1 Յուդ. 12։—2 Մատթ. Ե. 23-4։—3 Կողոս. Ա. 20։

առաւել խօսի քան զԱբէլին [1]. քանզի սա զհաշտութիւն խօսի, Աբէլին՝ զվրիժոյց. այլ դուք բուռն առնէք նմա ի վրէժխնդրութիւն՝ եթէ մերժիցէք զխաղաղութիւնն ընդ եղբարս՝ վասն որոյ նայն հեղաւ։ Արիւնն այն մահ եւ վրէժ կարդայ. դուք էք սպանողք՝ ընդդէմ որոյ բողոքէ նա, «զի որ առեայ զեղբայր իւր՝ մարդասպան է [2]»։ Ի բաց կացէք, չուառականքդ. փախերուք ի ձայնէ արեան։

ԽԶ. Հաղորդութիւն՝ պատրաստութիւն է ի մահ Քրիստոսի։ — Ա. Կորնթ. ԺԱ. 26։

«Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս, եւ զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմեցէք, մինչեւ եկեսցէ նա»։ Պատմեսջիք զայն որպէս արդէն եղեալ ի փրկութիւն ազգի մարդկան. պատմեսջիք զայն՝ եւ որպէս ինչ մի շարունակ մինչեւ ի կատարած աշխարհի։ Մահն Քրիստոսի հանապազ յանդիմանակաց է ի Հաղորդութեան, խորհրդական որոշմամբ մարմնոյն յարենէն. անկ է կնքոյ մահուան Յիսուսի ազդել ի վերայ ամենայն հաւատացելոց, որոց ի դէպ է ըստ նմանութեան Որդւոյն Աստուծոյ՝ յարդարել զանձինս իւրեանց ի զոհ։ Յայսմ խորհրդեան բովանդակի ամենայն զօրութիւն խա-

1 Եբր. ԺԲ. 24։—2 Ա. Յովհ. Գ. 15։

չէն. եւ ամենեքումք այսոքիւք հուչակի մահն Քրիստոսի։ — Եւ զի՞նչ զօրութիւն խաչին էր։ — «Յորժամ բարձրացայց յերկրէ՝ զամենեսին ձգեցից առ իս»։ Եւ խօսքն արդիւնք եղեն. եկն ամենայն առ Յիսուս, այսպիսի է զօրութիւն խաչին։ Այս զօրութիւն հանապազ կենդանի է ի հաղորդութեան, նոքա հաւատան, նոքա օգտին եւ արժանապէս ընդունին՝ զորս Հայր ձգեսցէ առ Որդին։ Ասէ Յիսուս կեալ նոցա ինքեամբ, կեալ վասն ինքեան, որպէս ինքն իսկ կեայ Հարն եւ վասն Հօրն. չիք նոցա այլ կեանք՝ բայց իւրն։ Մարմին նորա լի է հոգւով՝ որ հաղորդէ մեզ զկեանն. ամենայն՝ հոգի է, ամենայն՝ կեանք են յայսմ խորհրդեան։ Ամենայն այժ զօրութեան խաչին առ ի ձգել զմեզ առ Յիսուս, առ ի կեալ նովաւ և ի նմա, բովանդակեալ է ի նմին։ — Քանի՞ բուն է Փրկչին՝ յորժամ ոչ հատուցանի սէր առ սէր նորին. յորժամ թէ ոք չթողու զանձն ի ստացուած նմին. յորժամ թէ ոք զդէմ ունի զօրութեանն՝ որով ձգէն զմեզ, թէ զլանայցէ ոք նմա զսիրան, մինչ ոչ միայն խնդրէ զայն, այլ եւ՝ եթէ օրէն էցէ ասել, զամենայն գուն գործէ առ ի ձգել զայն ի միութիւն ինքեան. լինի փեսայ անարգեալ՝ որ զայրանայցէ ի վերայ հարսին անզգայացելոյ. որում չկայ չինայ այլ ինչ՝ բայց դատապարտութիւն և մահ։ Աւաղ, աւաղ. ամենայն ինչ կորուսեալ է. և ամենայն ուժգնութեամբ որով ձգէրն զմեզ՝ նովին եւ յետս ընկրկէ եւ կործանէ։

Խէ. Յարատեւութիւն, արդիւնք Հաղորդութեան։
— Յովհ. զ, 57։

«Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակեսցէ, եւ ես ի նմա»։ Պարգեւ մեծագոյն՝ որում փափագանօք անձկան քրիստոնեայք, պարգեւ յարատեւութեանն է, որ անելբայ կացուցանէ զպսակն. որ կցորդէ զմեզ եւ խառնէ ի մարմինն Քրիստոսի, առ ի գործել զմեզ մի ընդ նմին ի յաւիտեանսն, բնաւ խպառ անանջատելի։ Այս է մեծն պարգեւ Աստուծոյ. պարգեւ լծորդ նախասահման ընարութեանն յաւիտենականի. եւ Յիսուս ուսուցանէ մեզ՝ եթէ գոյ ի հաղորդութեան սեփական իմն շնորհ ընդունելի։ Արդ եթէ ըղձանայցեմք տեւել տոկալ յառաքինութիւնս, պէտք են հաղորդել, եւ հաղորդել յաճախ. զի չիք քան զայդ հզօրագոյն հնարք տուեալ մեզ առ ի ստանալ զյարատեւութիւն. այն է հայ քրիստոնէից, հայ սովորական եւ հանապազորեայ։ — Ո՛վ Տէր, քանի՞ խիստ է սիրտ քրիստոնէից, զի այդպէս դուն ուրեք մատչին ի սեղանն սրբութեան։ Եթէ էր նոցա ճաշակեալ զՅիսուս խաչեալ, յաճախագոյնս գային ի կատարել զխորհուրդ մահուանս։ Գորովի սիրտ յաւուր մեծի ուրբաթուն, քանզի կատարի յիշատակ մահուան Փրկչին։ Եկայք, որդեակք իմ, ահեղն այս օր աւագ ուրբաթ է. զոր ամենայն կանգնի Գողգոթա ի վերայ սրբոյ սեղանոյն։

Եկայք, եւ յիշատակ արարէք մահուանն՝ որ կենաց մեր է. եկայք ընդունել խորհուրդ սրբարանն՝ որով ուսանիմք կեալ ի Քրիստոս, որով ընդունիմք զօրութիւն, քաջալերութիւն եւ շնորհս կալոյ ի նմա:

Այլ սակայն եւ պարտ է դողալ՝ եթէ յետ հաղորդութեանն ի նոյն ի մեզս գթիցեմք. քանզի չասէ Յիսուս, եթէ Որ ուտէ զմարմին իմ՝ է յիս, այլ բնակի՝ յարեալ անդ. ոչ՝ թէ Ես ի նմա եմ, այլ ի նմա բնակեցայց եւ ոչ թողից զնա: Հաւատարիմ է Յիսուս. ոչ թողու զմեզ ինքն նախ առաջին. ինքն գայ առ մեզ նախ. բայց ոչ երբեք առաջին է ի թողուլ. մեք եմք որք թողումք զնա՝ յորժամ գթեմք ի մեզս: Վա՜յ մեզ, արժան է զարհուրել, եթէ գուցէ ոչ որպէս արժանն էր՝ ընկալաք զնա. զի պարտ էր մեզ բնակել ի նմա. եւ ահա, աւա՜ղ, լքեալ թողաք: Արժանապէսն ընդունել՝ է ընդունել ստեղով զմեզս, զդուշանալով յառթից մեղաց, խնդրելով ի հաղորդութեան զապաւէն տակրութեան մերոյ և յողորմութեան:

ԽԸ. Փորձել զանձն: — Ա. Կորնթ. ԺԱ. 28:

«Փորձեսցէ մարդ զանձն իւր»: Փորձեսցէ նախ զանձն, մի գուցէ չիցէ արժանի սեղանոյն սրբութեան. մի գուցէ մատչիցի յընթրիս փեսային՝ առանց զգեստու հարսանեաց, ոչ գոլով

ի կարգի շնորհաց. զի մի ասիցի նմա. Ընկեր անհաւատ, ընկեր ժպիրհ, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունիկր հանդերձ հարսանեաց: Եւ ոչ միայն յընթրեացն մերժիցցի, այլ եւ կապեալ ոտիւք եւ կապեալ ձեռօք արկցի ի տեղի խաւարին, ուր լալ աչցն է եւ կրճտելատամանց: «Մտեալ թագաւորն հայել զբազմականաւքն, եռեսս անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց [1]»: Համարեաց՝ եթէ Քրիստոս ինքնին եկեալ քննիցէ զմատուցեալսն ի սեղան իւր: Առ ի վերծանիլ յահագին քննութենէ՝ քննեսցէ ամենայն ոք զանձն իւր. «Փորձեսցէ մարդ զանձն իւր»: — Այլ են եւ այլ ինչ փորձք նրբագոյնք: Հայն հաղորդութեան կոչի ի սրբոց՝ Հայ հզօրաց. եւ ի բաշխելն զայն՝ արժան է այնպէս ընտրել, որպէս բժիշկ մի իմաստուն ի տալն կերակուր հաստատուն՝ առ հիւանդն. այսինքն ոչ միայն չտալ բնաւ ցորչափ տենդն կալեալ ունիցի զնա, այլ եւ զդուշաբար տալ թերառողջին:

Զատ ի փորձոյ՝ զոր արժան է առնել վասն երկնաւոր կերակրոյն, առ ի չուտել այնու զանձին դատապարտութիւն, դոյ եւ այլ փորձ.— պատրաստութիւն կարեւոր՝ առ ուտել զայն օգտիւ: Այդ կերակուր ոչ միայն տուաւ մեզ ի պահեստ կենաց, այլ եւ ի պարարել զմեզ. նորոգել եւ պարարտացուցանել. կամի եւս քան զեւս բառնալ եւ զդոյզն ինչ հետս ախտին: Ոչ

1 Մատթ. ԻԲ. 11–13:

հալի կերակուրս այս. այլ՝ եթէ օրէն է ասել,
զնեզ ինքն հալէ եւ յինքն փոխակերպէ։ Արժան է քննել զյառաջագիմութիւնս մեր՝ որ
յուսեալոյ անսի գործիցի, և առնուլ զգուշութեամբ, մինչեւ լիցուք բաւականք ընդունել
զբովանդակ արդիւնս նորին. ապա թէ ոչ՝ ծանրանայ ի մեզ. և եթէ չիցէ իսկ մահ ի ներքս ի
մեզ, գումարէ հիւթս խիթացուցիչս կրկին կործանման։ Երկնչել ուրեմն արժան է ի սակս
հաղորդելոյ, եթէ ոք ոչ հասցէ ի գիրութիւնն այն հոգեւորական եւ ի պայման զօրաւորութեան։ Ապաքէն սոսոյդ է, եթէ ընդունելով
զայն՝ լինիմք ատակք առ ընդունել. ինքն իսկ իւրով զօրութեամբ ընդունակս ինքեան և արդեանց իւրոց յարդարել զնեզ. սակայն արժան
է չափ գնել կերաւութեանն։ Անհրկեցադոյն
նշան բարեբարոյ հոգւոց՝ առ յաճախ ընդունելութիւն, հոգեկան քաղցն է առ այն. այլ
չափաւորել արժան է զախորժակն։ Գոյ ախորժակ հիւանդաց, գոյ եւ ախորժակ առողջութեան. ապա ուրեմն կրկին դէմք են ախորժակի. հարկ է ճանաչել. հարկ է նուաճել. հարկ է
եւ յորդորել. է երբեք զի եւ առ վայր մի դուշ
առնելով՝ անկ է վառել զեռանդն, առ յաւելուլ եւ զվայելն։ Է հոգի՝ զոր պէաք են առ
ժամանակ մի յորդորել ընթերցմամբ գրոց եւ
խոկմամբ աստուածային բանից։ Ճաշակել զբանս Քրիստոսի՝ նշան է առնլոյ զճաշակ նորին,
եւ լաւագոյն պատրաստութիւն ճաշակելոյ
զնա։ «Ո՞վ է խմաստուն, եւ խմացցէ զայս, եւ

հանճարեալ՝ ծանիցէ զայս[1]»։ «Ո՞վ իցէ հաւատարիմ անտես եւ խմաստուն, զոր կացոյց տէր
իւր ի վերայ գերդաստանի իւրոյ՝ տալ ի ժամու զկերակուրս[2]»։ Տես, զի ընտրութիւն է
ժամանակի եւ չափու, եւ զի անտեսին ոչ միայն
վայել է հաւատարիմ լինել՝ այլ եւ խմաստուն։
Ապա փորձեսցէ մարդ զանձն իւր. զի ոչ ամենեցուն նոյն ժամանակ ի դէպ է, և ոչ ամենեցուն նոյն չափ պատշաճաւոր։ Արժան ուրեմն
է փորձել զանձն. եւ յորժամ փորձել զանձն
ասիցի, ոչ է խմանալ՝ եթէ ըստ դատման մտացն
անկ իցէ մերձենալ կամ հեռանալ, զի այդպիսի
փորձ՝ յաճախ ճարակ է անձնասիրութեան.
մասն մի բարւոք փորձելոյն՝ է ճանաչելն քաջ,
եթէ չկարէ մարդ դատել զանձն, այլ արժան
է գիտել ինդրել զանտեսն խմաստուն՝ որ գիտիցէ զպատշաճաւորն մեզ չափ եւ ժամանակ։
Զի ոչ վայրապար ինչ էա հովուապետն պաշտօնեից իւրոց եշխանութիւն կապելոյ եւ արձակելոյ, ունելոյ եւ թողլոյ։ Ապա փորձեսցէ
մարդ զանձն այսու խրատու եւ ըստ հրամանի
հնազանդութեան. եւ որ այսու հոգւով գործէ՝
ընդունիցէ։ Է որ լուեալ եթէ ցամաքութիւն՝ երբեմն փորձ է եւ կրթութիւն, զմեղկութիւն՝ իւր ընդունիցէ։ Եւ է որ կարծէ
զինքն ի գաղջիցն՝ զոր փսխէ Յիսուս ի բերանոյն, յորժամ ոչ առնուցու զճաշակն, եւ կամ
ճաշակն այն՝ եթէ օրէն իցէ ասել, վաղվաղ ամ-

1 Ովս. ԺԴ. 10։—2 Ղուկ. ԺԲ. 42։

փոփիցի ի ներքս ի խորս իւր։ Ո՞վ է խմաստուն, վերստին կրկնեցից, որ ընտրեսցէ զայսոսիկ։

Դարձեալ, արժան է ճանաչել զկերակուրս զայս, որ որպէս զմանանայն՝ կարէ առնուլ զամենայն համ. երբեմն արժան է տալ մեզ ի նմին զճաշակ խոնարհութեան, երբեմն զմեռելութեան, մերթ զսիրոյ ընկերին եւ զթշնամեաց. մերթ զինդութիւն որ մոռք փոխադրէ զմեզ յերկինս, եւ մերթ զսուրբ տրտմութիւն՝ որ գարշեցուցանէ մեզ զաշխարհ, եւ տպաւորէ ի մեզ զկիրս ապաշխարութեան։ Անկ է տալ մեզ ընդունել զկերակուրն զայն՝ այնու յօժարութեամբ՝ յորում դիցէ զմեզ Հոգին Սուրբ, կամ յորում զդայցեմք եթէ կամի դնել զմեզ. արժան է ասեմ տալ քեզ՝ կամ ըստ այժմու քո ախորժանացդ, կամ ըստ այնմ զոր պարտ իցէ քեզ ունել։ Եթէ պէտք իցեն վառել ի քեզ կամ պահպանել զոգի եռանդան եւ զնախանձու, ոչ այնքան կայծակն առեալ ի սեղանոյն՝[1] զորմէ ինչ ի մաքրել զքեզ եւ ի բորբոքել՝ որքան մարմինս այս։ Եթէ ոգի զղջութեան եւ արտասուաց իցէ քեզ պէտք, ասա՝ տուածայինդ այդ մարմին՝ առաւել յորդեսցէ արտօսր յաչացդ, քան որչափ կենն մեզուցեալ առ ոտս Փրկչին։ — Տ՛ւր, Տէր, եկեսցեցուր քում զանտեսան խմաստունս՝ որք գիտասցին տալ ըստ պէտքոյ՝ զհաղորդութիւն։ Տ՛ւր, Տէր, հաւատացելոց քոց զխոնարհ հը-

1 Եսայի, Զ. 6–7։

լուականութիւն եւ զհնազանդութիւն խրատուց, որովք արժան է նոցա փորձել զանձինս։

ԽԹ. Բովանդակութիւն վարդապետութեան Հաղորդութեան։

Կայ մեզ արդ խելամուտ լինել զինչ իցէ խորհուրդն Գոհութեան, զինչ էութիւնն եւ զինչ պտուղն. զոր արժան իցէ կոչել խորհուրդ եւ նշան, եւ զոր պտուղ եւ իր։ Որք ոչն կամին հաւատալ՝ եթէ որ առաջի դնի մեզ՝ ճշմարտապէս մարմին և արիւն է Քրիստոսի, զհացն եւ զգինին ասեն խորհուրդ եւ նշանակ. և իր՝ զընդունելութիւն մարմնոյ եւ արեանն Տեառն. քանզի առ դմա, ասեն, կան միշտ կեանքն, ըստ այնմ բանի, եթէ «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ՝ ունի կեանս յաւիտենականս. եւ որ ուտէն զիս՝ կեցցէ վասն իմ[1]»։ Ո՛վ կոյրք, որք ոչ կամին ի միտ առնուլ, եթէ են որք առանց խորելոյ ընդունին զմարմինն զայն, են որք սեղանակապութեամբ ընդունին եւ պարտականք գտանին. եւ զի այս է փորձելովն ընդունել, զի մի անարժանութեամբ լիցի ընդունել։ Այլ քանզի կարեն մարդիկ անարժանութեամբ ընդունել զայսքան մեծ պարգեւ, միթէ վասն այնորիկ չիցէ նա որ ինչ էն։ Բանն Աստուծոյ

1 Յովհ. Զ. 55, 58։

ինքնին իսկ լոյս է՝ որ լուսաւոր առնէ զմարդ, եւ մաքրէ եւ սնուցանէ. որ փրկէ եւ կեցուցանէ. այլ միթէ վասն այն չէիցէ՞ որք շլասցին այնու եւ կուրասցին. կամ չէիցէ՞ նա ոմանց հոտ կենաց եւ այլոց հոտ մահու [1], եւ գիր սպանիչ: Եթէ մարդիկ ըստ չարաչար բերմանց իւրեանց՝ այլայլեն զայն, ոչ եթէ այնու փոխիցի որ ինչ էրն. եւ ոչ եթէ այնու կորուսցէ զզբրութիւնն՝ զոր առնու ի բերանոյ Աստուծոյ՝ յորմէ ելանէն: Այսպէս եւ մարմինն եւ արիւնն Յիսուսի, միշտ կեանք են եւ հոգի, թէպէտ և չիցեն նոյնպէս առ այնոսիկ՝ որք անարժանութեամբ ընդունիցին: «Որ հաւատայ եւ մկրտեսցի՝ կեցցէ [2]»: Ո՞երկբայիցի ընդ այս. եթէ հաւատալ հաւատայ՝ որպէս արժանն է, եթէ կայ մնայ ի հաւատն, եթէ ոչ խափան ինչ արկանէ շնորհայ մկրտութեանն, եթէ ունիցի փոյթ պահել զզբրութիւն նորին: Ըստ այսմ, որ ուտէ զմարմինն, որ ըմպէ զարիւնն՝ ունի կեանս. այո՛, որ ուտէ եւ ըմպէ արժանապէս, որպէս վայելն է: Մարմինն Ճաշակեալ ի հաղորդութեան՝ գրական է սիրոյն Քրիստոսի առ քրիստոնեայ, վկայութիւն հաւատի՝ եթէ վասն նորա մարմնացաւ եւ վասն նորա պատարագեցաւ: Ահա՛ դիպիկ գրականն, ահա նշանակն, ահա վկայութիւնն. այլ արժան է հասու լինել գրականիդ. առնուլ ազդեցութիւն ի նշանակէդ. հաւատալ ի վկայութիւնդ. ապա թէ ոչ՝

1 Կորնթ. Բ. 16: Գ. 6: — 2 Մարկ. ԺԶ. 16:

զինչ ունիցիս առեալ: Գրականն, նշան, վկայութիւն անչափական սիրոյ Քրիստոսի, այլ առանց ինչ մասնակցելոյ. եւ պատուական գրականն այն սիրոյ նորա՝ եղիցի վկայութիւն ընդդէմ անձին քո. եւ եղիցես յայնցանէ՝ վասն որոյ գրեցաւն. «Յիւրան եկն եւ իւրքն ոչ ընկալան զնա [1]»: Զինչ է գալն առ իւրան, բայց եթէ գալ առ այնոսիկ՝ որք ինքեան իսկ են: Եկն ուրեմն առ նոսա, եւ եղեւ ընդ նոսա. այլ նոքա ոչ ընկալան զնա, զի ոչ ծանեան զնա. ոչ նշմարեցին զնա, և ոչ վարեցան ընդ նմա՝ որպէս վայել էր պատուոյ եւ սիրոյ նորա:

Արդ ո՞ր այն իցէ Ճշմարիտ արդիւնք, կամ թէ օրէն իցէ ասել՝ իր խորհրդեանս: — Ընդխառնել ընդ մարմնոյ Քրիստոսի. միանալ կատարելապէս ընդ նմին՝ ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ. լինել ընդ նմա մի մարմին եւ մի հոգի [2], լմամբ ողջախոհ զուգաւորութեանն. լինել յոսկերաց նորա՝ եւ ի մարմնոյ նորա, որպէս հարսն հաւատարիմ. այլ լինել եւ ի հոգւոյ նորա. որպէս զի վայելեսցէ բոլորովիմբ եւ ըստ մարմին մեր եւ զոգի եւ զսէր, որպէս մեքս վայելեմք զնորայսն. միով բանիւ, լինել մարմին Քրիստոսի, յօդել ի նա՝ անդամ ընդ անդամոյ, որպէս յօդեալ են անդամք ընդ միմեանս, եւ ամենայն անդամքն միանգամայն ընդ գլխոյն. եւ այս միշտ եւ հանապազ, ոչ երբեք անջատեալ, ոչ բնաւ ցրտացեալ ոչ ինմանէ եւ

1 Յովհ. Ա. 11: — 2 Ա. Կորնթ. Զ. 16–7:

ոչ է միոյ յանդամոյ նորին. չի ոչ միայն զգալն կամի ի մեզ՝ այլ եւ զմնալն: Ցակամայ կամս եւ տհաճութեամբ միանայ ընդ այնոսիկ՝ զորս տեսանէ յետոյ անջատեալս յիրերաց եւ անմիաբանս խսպառ. ոչ եւս իւր համարի զնոսա՝ այնու գաղտնի եւ յարատեւակ օրինակաւ՝ որով կամի զիւրսն լինել. ապա թէ ոչ՝ ասասցէ աշակերտն սիրելի. « Ա՛ռ ի մէնջ ելին, այլ ոչ էին ի մէնջ[1] ». եւ վասն ջր. « զի եթէ ի մէնջ էին՝ ապա առ մեզ մնային »: « Որ ուտէ զիս՝ ընակեսցէ յիս եւ ես ի նմա ». եւ որ ոչն ընակէ յիս՝ ոչ ուտէ որպէս արժանն է:

Արդարեւ, զի՞նչ ունիմք ի Հաղորդութեան. զի՞նչ ունիմք գոյացապէս. եթէ ոչ զայն՝ որ է բանութիւն է ընտրելոցն: Նոյն իր է, նոյն գոյութիւն. եւ չկայ ինչ այլ՝ բայց վերացուցանել զքօղն: — Բարձ, վերացո, Տէր, զքօղդ զայդ. պատառեա զամսն. եւ ապա զի՞նչ կայցէ ի ձեռին իմում եւ առաջի աչաց իմոց. եթէ ոչ այն ինչ՝ որ լեցի իմ երանութիւն: Եւ չուանեցիմ արդեօք զայն ինչ ի մարմնի քում. միթէ ոչ ունիցիմ ի մարմնի Յիսուսի՝ զհոգի նորա [2]. միթէ ոչ ունիցիմ զբովանդակ անձն նորա. եւ յանձին անդ զայն՝ որ ընակէն ի նմին մարմնապէս ամենայն լրմամբն, այսինքն է Բանն աստուածային. եւ ի Բանին՝ ոչ ունիցիմ զՀայր նորին. եւ միթէ ոչ ստուգապէս ասաց յորժամ ասացն. « Որ տեսեն զիս՝ տեսէ զՀայր[3] »:

1 Ա. Յովհան. Բ. 19: — 2 Կողոսաց. Բ. 9: — 3 Յովհան. ԺԴ. 9:

Ունիմ ուրեմն զամենայն: Եւ արդ ի՞մ իսկք մնայցէ ինձ բաղձալ. բայց տեսանել զոր կալեալ ունիմ. թափ անցանել ընդ քօղն. տեսանել պայծառապէս եւ ակներեւ տեսութեամբ՝ զոր գիտեմն թէ ունիմ այլ ոչ տեսանեմ: Բայց պարտ է կալ մնալ ի նմա. զի եւ նա մնայցէ ի մեզ: Եւ նա չկամի այլ ինչ՝ բայց լինել տեսանելի, ամենեւիմբ ստացեալ լինել, բոլորովին վայելել զմեզ, տալով մեզ վայելել զամենայն բարիս իւր եւ զինքն գլխովին. համանգամայն ասել, ճանաչիլ՝ որպէս նայն ճանաչէ. այսինքն է ճանաչիլ պայծառապէս, կենդանագոյնս, յաւերժաբար, առանց ինչ մթութեան, ի վերքան զամենայն տեսութիւն: Անհաւադիկ պըտուղ, ճշմարտութիւն, եւ անթերի կատարումն խորհրդոյ Հաղորդութեան:

Ծ. Հաղորդութիւն զօրութիւն է հոգւոյ եւ մարմնոյ:

Ա՛յլ ասէք. Զի՞նչ պիտոյ էր ունել զՅիսուս մարմնոյն: — Ա՛սա մանաւանդ, Հի՞մ պիտոյ էր ունել զմարմին Յիսուսի ճշմարտութեամբ, գոյացութեամբ. ունել զմարմին զոհիդ, ունել յարեան անդ զհաւատի նշանակ թողութեան մեղաց. միանալ ընդ Փրկչատոսի բոլորովիմբ՝ որպէս հարան ողջախոհ ընդ փեսայի սիրեցելոյ. եւ իբրեւ այսպիսի՝ ունել եւ հիա-

նուիրեալ է վերայ մարմնոյ նորա, առ ի վայելել միանգամայն եւ ի հոգւոյն։ Եւ ուրոյն զմարմնոյն խօսելով, չգուցէ՞ ինչ առնելի ի մերումս մարմնի. միթէ ո՞չ մարմին ցանկայ հակառակ հոգւոյ. եւ ո՞ կարասցէ քաջ քաջ նուաճել զնա՝ եթէ ոչ մարմինն Յիսուսի՝ յարեալ ի նա։ Զգուցէ՞ն յանդգնամ մեր օրէնքն՝ որ մարանչիցին ընդ օրէնս հոգւոյն. ո՞ լաւ եւս կարասցէ ընկճել զայն, եւ զմահկանացու անդամս մեր նուաճել ընդ լծով։ Զիցէ՞ արժան կրել ի մարմնիս մեր զմեռելութիւն Յիսուսի. եւ ո՞ կարասցէ քաջ տպաւորել ի նոսին զկնիքն զայն, եւ սրբել ըստ վիշտս մարմնոյ տառապելոյ։ Միթէ չկա՞յ մարմնոյս այսմիկ յաւուր միում յառնել ի գերեզմանէ եւ յապականութենէ. եւ ո՞ այնպէս քաջ կարասցէ ձգել հանել զմեզ անտի, բայց եթէ մարմինն այն՝ որ ոչ կրեաց ապականութիւն։ Առ ի լինել ընդ Քրիստոսի մի մարմին հոգեւոր[1], որպէս կոչէ Առաքեալն Պօղոս, զինչ աղդողադոյն քան զվիանալ նորա ընդ մարմնոյս, և տըպաւորել ի սմա զաստուածային զիւր կերս։ — Ո՛վ Քրիստէ իմ, եթէ մերձեսցես ի մարմին իմ՝ էլցէ՞ ի սմանէ զօրութիւն. եւ հարկ է թէ էցէ՞ իբրեւ զքոյն։ Զօրութիւնն այն որ էլցէ՞ ոչ որպէս առ կենն այն տացէ՞ ինձ առողջութիւն անզօր եւ գիւրեղծ, այլ զՀնմարիան առողջութիւն, որ է անմահութիւն։

Իսկ մանկունքն որք ոչն հաղորդեցան, ո՞չ յա-

1 Ա. Կորնթ. ԺԵ. 14։

րեցեն եւ նոքա։ Ո՛վ թանձրամիտք եւ մարմնաւորք, որք ոչ խմանայք՝ եթէ մարմնիդ այդ՝ որ ամենայն է համարեն եկեղեցւոյ, եւ զի խմորն այն խորհրդական՝ կարող է զամենայն զանդուածն կենդանացուցանել։ Մանկունքն զոր ասէք, միթէ ի մկրտութեան անդ ոչ ընկալան իրաւունս ի վերայ այդր մարմնոյ. է՞ դա եւ նոցա, թէպէտ եւ ոչ ընդունիցին ի սկզբանն, ըստ այժմու սովորութեան *. այլ որ ընկալեալ լինի յոմանց՝ ամենեցուն առհասարակ գրաւական է անմահութեան։ Միխթարեցարուք ի Տէր մեր, եւ ուրախ լերուք այսու յուսով։

ԾԱ. Հաղորդուրիւն՝ թոշակ է օրհնասակնաց։

Նկատեսցուք աստանօր զմարմին Քրիստոսի որպէս անոյշ թոշակ օրհասականաց։ Ահա մեռանիմ ես. զգայարանք իմ խափանին. կեանք իմ նուազին. եւ իմ իմիք բաղձայցեմ յայսմ պայմանի, բայց որ ինչ կարիցէ մերժել յինէն զերկիւղ մահու, եւ զերծուցանել զիս ի գերութենէ՝ յորում այնու ահիւ կայի զամենայն աւուրս կենաց իմոց։ Քրիստէ՛ իմ, ահա բերեն ինձ զմարմին քո. մարմին անմահ, մարմին հոգեւացեալ. ընդունիմ զդա յիմն. «Ոչ մեռայց, այլ

* Որ պահի ցարդ յարեւելեան եկեղեցիս շրջթնահաղորդ առնելով։

կեցցից [1]»։ «Որ ուտէ զմարմին իմ, ասացեր, ուն-
նիցի կեանս յաւիտենական. եւ ես յարուցից
զնա յաւուրն յետնում [2]»։ Ի մարմնի ասա մեռե-
լումն մայցէ սերմն կենաց՝ անայլայլակ յապակա-
նութենէ. կացցէ մնասցէ ի նմա կնիքն կենաց՝ զոր
եւ ոչ մի ինչ ոչ կարասցէ ջնջել։ Այսու յու-
սով կամիմ հաղորդել զամենայն աւուրս կե-
նաց իմոց. կամիմ նկատել զիս որպէս օրհասա-
կան, եւ եմ իսկ. կամիմ ընդունել զքեզ ի Թո-
շակ։ Ոչ երկեայց ի մահուանէ. դու զերծուս-
ցես զիս ի ծառայութենէ՝ յոր ունէր զիս եր-
կիւղ նորին։ Ընդէր է ինձ զանգիտել ի վան-
դէ, եթէ առ ձեռն պատրաստ ունիցիմ զդեղ
դարմանոյ։ Առանց քո՝ մահ՝ լուծ է անտանելի.
քեզ՝ դեղ է եւ անցք ի կեանս։ Ո՛վ, քանի՞ բա-
ղեբաստիկ եմ ես։ Բերեն ինձ զմարմին քո պա-
տուական. դու դաս առ իս, հիւր երկնաւոր։
Ցայս դէպս գոյ ինձ ասել. «Տէր, չեմ բաւա-
կան եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես [3]». եւ
սակայն դաս դու, մտանես անդր, ահա կաս ի
նմին. եւ ոչ շատ համարիս զայդ՝ սիրոյդ. տուն
յոր մտանեսդ՝ իմ մարմինն է։ Ահա ժամանակ
յիշելոյ զմահ քո. մահ՝ որով յաղթեցաւ մահ.
մահ՝ որ տայ մեզ ասել աներկմիտ վստահու-
թեամբ. «Ո՞ւր է, մահ, յաղթութիւն քո.
ո՞ւր են, դժոխք, խայթոցք քո [4]»։ Մահ՝ որով
կատարեցաւ ասացեալն. «Բարձցի ուխտն ձեր

1 Սաղմ. ՃԺԷ. 17։—2 Յովհ. Զ. 55։—3 Մտթ.
Ը. 8։—4 Ա. Կորնթ. ԺԵ. 55։

որ ընդ մահուն է, եւ յոյսն ձեր որ ի դժոխս է՝
մի հաստատեսցի [1]». եւ դարձեալ. «Ընկրկեսցի
մահ խպաւ յանդունդս [2]»։ Զայդ արասջիք
յիմ յիշատակ, զմահ իմ յիշեցէք. զայն պատ-
մեսջիք [3]։

Ո՛վ Տէր, ահա ծանուցին ինձ զմահ իմ,
պատմեացին ինձ զքոյդ, եւ ոչ ուստեք եր-
կեայց։ Այո, արդ ժամ է ինձ երդել ընդ սաղ-
մոսերգուին. «Թէպէտ եւ գնացից ես ի մէջ
ստուերաց մահուս, ոչ երկեայց ի չարէ, զի դու
Տէր ընդ իս ես [4]»։ Ո՛վ, քանի՞ քաղցր է յիշա-
տակ մահուն քո, որ զմեզս իմ ջնջեաց, և զարբ-
քայութիւն քո պատրաստեաց։ Փրկի՛չ իմ, կը-
ցորդիմ օրհասի քում. ասեմ ընդ քեզ. «Ի ձեռս
քո աւանդեմ զհոգի իմ [5]. Տէր Յիսուս, ընկալ
զոգի իմ [6]»։ Բա՞ղէ, դո՞ւ ինքնին դաս առնուլ
զայն եւ ընծայել Հօր քում։ Հասեալ է ժամն։
Ամենայն ինչ կատարեալ է։ Կամիմ ես մեռա-
նել եբրեւ զքեզ, ասելով զայս բան. Ամենայն
ինչ կատարեալ է։ Զկնք իմ ինչ այլ ի վերայ
երկրի. այսուհետեւ արքայութիւն քո լիցի
ինձ մասն ժառանգութեան. Ամենայն ինչ կա-
տարեալ է։ Տեսանեմ զարքայութիւնդ երկնա-
ւոր. բանի տաճարն յաւիտենական ընդունել
զիս հնորհօք, ողորմութեամբ, յանուն քո, ո՛վ
Յիսուս։ Ցայսմ կատարեսցի բանն, եթէ «Որ

1 Նս. Դր. 10։—2 Նս. Դն. 8. չիք ի մերս թարգ-
մանութեան։—3 Ա. Կորնթ. ԺԱ. 24–6։—4 Սաղմ.
ԻԳ. 4։—5 Ղուկ. ԻԳ. 46։—6 Գործք Առ. Է. 58։

ուտէն զիս նա յիս քնակեսցէ եւ ես ի նմա »։ Ոչ եւս թողից զքեզ։ Անիծեալ լիցի հեգ եւ վատթար անհաստատութիւնս իմ, որ բաղում անգամ ես ինձ թողուլ ի բաց երթալ յայդ պիսւոյ բարերար Տեառնէ։ Արդ յայսմհետէ, Տէր, եղէց հանապազ ընդ քեզ։ դիցես դու յիս զկնիք քո։ Ահ, Տէր իմ, պահեա զիս մինչեւ ի յետին շունչ իմ, եւ աւանդեցից զոյն հուսկ ուրեմն ի ձեռս քո։

Եւ զի՞նչ լինիցի մարմնոյս այսմիկ։ Ահա միացաւ դա ընդ քոյումդ։ Քո յարութեամբդ՝ յարեայց եւ ես նոր բոլորովիմբ։ ոչ ինչ թողից յերկրի՝ բայց զմահկանացութիւն։ Այսու յուսով կեամ։ այլ եւ ի նոյն մեռանիմ։ Մեռանիմ զօրհնապազ։ քանզի հանապազ յառաջ ի վախճան անդր ընթանամ։ Աւուրք իմ որպէս զծուխս պակասեն, սահին որպէս ջուր երագահոս՝ զորոյ ոչ է հնար արգելուլ զընթացս։ Փոքր միւս եւս եւ անցցեն ընդ որ եսն էի, եւ ոչ եւս գտցեն զիս անդ։ Ահաւադիկ, ասասցեն, սենեակ նորա։ ահա մահիճքն։ եւ յայնմ ամենայնէ ոչ ինչ մնայցէ ինձ՝ բայց գերեզմանս իմ, ուր ասասցեն թէ եցեմ՝ եւ ես չեղէց անդ։ մնացուած ինչ իմ լոկ կայցէ անդ։ եւ զիարդուպէս մնացուածն այն՝ նուազեսցի պահու պահու, մինչեւ ի սպառ անհետասցի։

Քանի՞ տխրական է այդ։ Այո՛, եթէ ոչ ունէի զմարմին քո տուիչ վերակենդանութեան։ Այս յոյս կանգնէ զիս։ Կամիմ այսուհետեւ նկատել զիս մերձ ի մահ։ խոստովանել իբրեւ

օրհասական մի։ հաղորդիլ որպէս օրհասական, եւ պատրաստիլ՝ յամենայն նուազս՝ որպէս թէ ահա մեռանիմ։ — Մեռանիմ արդ։ կափուցէք զաչս իմ։ մի եւս տեսից զունայնութիւնս։ ծրարեցէք զիս պատանօքս։ չունիմ այլոյ խիզ պէտս։ տուք ինձ զաղքատութիւն իմ ընդաբոյս։ խլուցէք զիս ի հող։ անտի ելի ըստ մարմնոյ, եւ ի նոյն անդրէն դառնալ ինձ պիտի։ Նա է մայր իմ որ ծնաւ զիս առ ի մահ։ երկնեսցէ զիս միւսանգամ առ ոչ եւս մեռանել։ Արդ շատ է։ մի եւս բանք զմտհոգանէ։ անուն եւեթ է այն։ Մեղքն եւեթ է մահ։

ԾԲ. Հաղորդութիւն ի հասարակական ընթրիսն զուշգեալ ի Քրիստոսէ, նշանակ ուրախութեան յաշխարհիցն սեղանոյ։

Մի ի կարեւորագոյն նկատելեաց ի հաստատութեան խորհրդոյ Գոհութեան՝ այս է, զի արար զայն ի հասարակ ընթրիս, խօսակցելով ըստ սովորութեան ընդ աշակերտսն, եւ առանց ինչ նշանակի զանազանութեան ընդ հասարակաց կերակուրն եւ ընդ աստուածայինն կերակուր, յորում զանձն իւր տալոց էր։ « Մինչեւ դեռ ուտէին նոքա, ասէ Մատթէոս, առ Յիսուս հաց, օրհնեաց եւ եբեկ. եւ ասէ. Առէք,

կերայք. այս է մարմին իմ[1]»։ Դարձեալ սեղանաւորի. աւարտէ զընթրիսն. եւ յետ ընթրեացըն, ասէն Ղուկաս եւ Պօղոս, «Էառ բաժակ, եւ ասէ. Այս բաժակ նոր ուխտ է իմով արեամբ վասն ձեր հեղլոյ[2]». եւ դարձեալ յառաջ վարելով զբանսն, ասէ, ըստ Ղուկայ. «Եւ ահա ձեռն մատնչի իմոյ ընդ իս՝ ի սեղանս[3]». եւ ըստ Մատթէոսի, «Յայսմէնէ ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչեւ արբից զնա նոր՝ յարքայութեան Հօր իմոյ[4]»։ Բանք որ ոչ պատկանին առ հաստատութիւն խորհրդոյն. վասն որոյ եւ ոչ ինչ յայնցանէ յիշէ առաքեալն Պօղոս, կամելով իսկ պատմել զամենայն յեղանակ հաստատութեան խորհրդոյն, որպէս հետեւանք բանից իւրոց ցուցանէն։ Մի ոք համարիցի եթէ չգուցեն նորասքանչ եւ անսովոր երք ի սեղանի հաղորդութեանս. նա մանաւանդ մէն մի ի բանից զայն այնպէս ցուցանեն։ Սակայն որ ի պահու աստ ընթրեացն երեւի նորասքանչ եւ աստուածային՝ յարեալ է եւ շարունակ ընդ բնաւին. եւ այնպէս իմն թուի՝ եթէ հաղորդութեանն ընթրիք՝ մասն իմն ելցէն հասարակ ընթրեացն՝ զոր արար Յիսուս ընդ իւրոցն։

Առ հասու լինել խորհրդոյս, նախ ընդ առաջ լինի յուշոյ մերոյ, եթէ ուտէին եւ ըմպել՝ նշանակ ընկերչակութեան է առ մարդիկ. այսու ամենայնիւ հաղորդակցութեամբ տածեն

1 Մատթ. ԻԶ. 26։—2 Ղուկ. ԻԲ. 20. Ա. կոր. ԺԱ. 25։—3 Ղուկ. ԻԲ. 21։—4 Մատթ. ԻԶ 29։

զբարեկամութիւն. մասնակցեն իրերաց զինչս, զՀաճոյս եւ զկեանս իսկ իւրեանց. Թուին իմն այսպէս յայտ առնել, եթէ ոչ կարիցեն կեալ առանց նոցին, եւ զի առանց ընկերակցութեան՝ կեանք՝ չեն կեանք։ Կերայք, արբէք, արբեցարուք[1] եղբօրորդեակք իմ. այսինքն է ուրախ լերուք, ասէր փեսայն առ բարեկամն։ Եւ չէք Իմաստութեան՝ առ ի ձգել զմեզ յիւր ընկերութիւն՝ յորդորագոյն ինչ քան զկոչումն՝ զոր պատրաստէ մեզ. «Եկայք, կերայք ի հացէ իմմէ, եւ արբէք զգինի իմ՝ զոր խառնեցի ձեզ[2]»։ Յայս սակս իսկ պատուիրեաց Աստուած ժողովրդեան իւրում՝ գնալ ի տեղին՝ զոր ընտրեաց, յուսել եւ յըմպել ի խրախճանս[3], ամենայն սիրելեօքն, ուստերօք եւ դստերօք, ընդոծնօք, ծառայիւ եւ աղախնեաւ, եւ կարեւոր անձամբք, ընդ Ղեւտացւոյն բնակեցելոյ յերկրի իւրեանց, հանդերձ եկաւն եւ պանդխտաւ, որբովք եւ այրեօք. եւ եւս առաւել մերձաւորօքն եւ դրացեօք. որպէս զի լցցին ի բարութեանց Տեառն՝ զոր պարգեւեացն, եւ հաղորդ լցցին ուրախութեանն։ Ի սակս կոչնոցդ և խրախութեանցդ այդոցիկ՝ եւ երկնաւորն երանութիւն յանդիման առնի մեզ խրախճանի օրինակաւ. «Եկեսցեն յարեւելից եւ յարեւմտից, ասէր Փրկիչն, եւ բազմեսցին ընդ Աբրահամու, ընդ Իսահակայ եւ ընդ Յակով-

1 Երգ Երգոց, Ե. 1։—2 Առակ. Թ. 4։—3 Երկրորդ Օր. ԺԲ. 5, 7, 12, 18։

բայ [1] »։ Եւ ինքն իսկ ի վերջին ժամանակաց, « Բազմեցուսցէ զծառայսն ի սեղան իւր, եւ գօտի ածեալ պաշտեսցէ զնոսա [2] »։ Եւ յաւուր իսկ ընթրեսցն՝ առ ի վերածեալ զայս յիշատակ՝ առ ընթրիսն զոր առնէր աշակերտաւքն հանդերձ, ասէ ցնոսա. « Ուխտեմ ձեզ, որպէս եւ հայր իմ ուխտեաց ինձ. զի ուտիցէք եւ ըմպիցէք ի սեղանի իմ յարքայութեան իմում [3] »։

Կամէր ուրեմն զի ընթրիքն եղիցին սատուգապէս խրախուսանք, ի կցորդութիւն ընկերշակցութեան ընդ աշակերտացն, եւ ի պատկեր օրինակի յաւիտենական խրախութեանցն, յորում յագեսցին եւ արբեսցին յուղիսկ փափկութեան նորա [4]. վասն այսորիկ յերեկոյին արար զաստուածայինս խրախճան, ի կատարածի աւուրն, յօրինակ մշանջենաւոր ընթրեսցն՝ զոր արասցէ մեզ ի կատարածի յաւիտենիս այսորիկ, ի լրանալ ամենայն իրաց։ Զայս կամէր նշանակել եւ յանուշն զբաժակն, ըստ սովորութեանն, յորմէ ամենայն բազմականքն ըմպէին ի նշան ընկերակցութեան, եւ ի մատուցանելն զայն առ աշակերտսն, ասելով. « Առէք զայդ եւ բաժանեցէք ի ձեզ. ասեմ ձեզ, յայսմ հետէ ոչ արբից ի բերոյ որթոյ՝ մինչեւ եկեսցէ արքայութիւն Աստուծոյ [5] »։ Աւետարանչին Ղուկաս որոշակի նշանակէ զգործս զայս եւ ըզբանս՝ յառաջ քան զհաստատութիւն Հաղորդութեան։

1 Մատթ. Ը. 11։ — 2 Ղուկ. ԺԲ. 37։ — 3 Նոյն, ԻԲ. 29։ — 4 Սաղմ. ԼՆ. 9։ — 5 Ղուկ. ԻԲ. 17–8։

դութեանն։ Զնոյն բան կրկնեաց Յիսուս եւ յետ նուիրագործութեան սրբոյ բաժակին, ասելով. « Ասեմ ձեզ, ոչ եւս արբից յայսմհետէ ի բերոյ որթոյ (զոր արբի ընդ ձեզ յընթրիսս, եւ յորմէ յարիւն իմ փոխեցի), մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ [1] »։

Արդ ակն կալեալ սպասեսցուք կոչնոյն յաւիտենականաց, յորում հայն հրեշտակաց տացի մեզ բացերեւակի. յորում արբեսցուք եւ զմայլեսցուք ի փափկութեանց Տեառն, եւ ի հրճուողական քաղցրութեանց սիրոյ նորին։ Այնմ օրինակ էր ընթրիքս այս Յիսուսի. եւ առ ի նմանել նմին՝ ի խրախուսս կատարէին նախնի քրիստոնեայք զկորհուրդն Հաղորդութեան. որպէս քաջ երեւեցուցանէ մեզ զայս առաքեալն Պօղոս՝ յառաջնումն առ Կորնթացիս թղթին [2]։ Զայս նախնական կերպ պահեաց Հաղորդութիւն, մինչեւ հարկ եղեւ փոխել վասն չարաչար սովորութեանց սպրդելոց. եւ սակայն ոչ ինչ է նուազեալ յուսելոյ զօրութիւն միարար կոչնոց եւ ընկերակցութեան եղբարց, եւ յուսոյ յաւիտենական սեղանոյն Աստուծոյ։— Արդ արասցուք եւ մեք յաճախ զսրբազան խրախուսս հաղորդութեան, եւ կեցցուք ի միութեան ընդ եղբարս մերոյ. յաճախեսցուք յայն եւ կերակրեսցուք յուսով եւ երկնաւոր խնդութեամբ. կերիցուք ի հացէն՝ որ

1 Մատթ. ԻՁ. 29։ — 2 Ա. կորնթ. ԺԱ. 21։

հաստատէ զմարդ. արբցուք ի գինւոյն՝ որ ուրախ առնէ զնա. եւ ասասցուք բերկրապատար սրտիւ. «Բաժակ քո՝ որպէս անապակ արբեցոյց զիս[1]»:

Հացիւ եւ գինեաւ վարեցաւ Յիսուս ի տալ մեզ զմարմին իւր եւ զարիւն, առ ի տալոյ Հաղորդութեան զոխպ զօրութեան եւ հաստատութեան, եւ զբրինակ ուրախութեան եւ հրճուանաց. եւ զի օրինակօք սովորական պարենի կենացս ուսուցցէ մեզ, թէ զոր ամենայն՝ ոչ միայն հաստատէ՝ այլ եւ ջերուցանել անկ է զսիրտս մեր. ոչ միայն զօրացուցանել զմեզ, այլ եւ արբենալ ընդ նմա, եւ մինչդեռ եմք իսկ ի կենցաղումս՝ ըմպել առատապէս զսէրն՝ որ երանելիս արասցէ զմեզ ի յաւիտեանսն:

ԾԳ. Հաղորդութիւն յարեալ ի հաստատական սեղանն՝ նիւանագոյն է հնոյ պատգամի:

Մարթ է դարձեալ նշմարել եւ այլ ինչ կամս Քրիստոսի՝ ի կցորդելն զկոչումս հաղորդութեան ընդ սովորական սեղանոյն. այսինքն է, նմանողագոյնս յարդարել հնոյ զատկին՝ որ նոյնպէս մասն էր հաստատակ սեղանոյ. այս միայն էր խակ՝ զի զատիկն հին՝ մի անգամ եւեթ կատարէր ի տարւոջ. իսկ նորս՝ զոր ամենայն կա-

1 Սաղմ. ԻԲ. 5.

տարի ի միջի մերում. զոր ամենայն խրախուճք են քրիստոնէից. կեանք նոցա ոչն է մշտնջենաւոր. հարկ է նոցա հանապազ ուրախ լինել, որպէս ստէպ պատուիրէ նոցա Առաքեալն Պողոս. և այնու կրթին յուրախութիւնն եւ ի փառս յաւիտենականս: Տարի՝ առ Հրեայս նշանակ եւ էր համօրէն յաւիտենականութեան բովանդակութեան դարուց. իսկ այժմ՝ ամենայն օր զնոյն ցուցանէ մեզ. մերձագոյնք եմք քան զնոսա առ յաւիտենականութիւն. եւ անկ է մեզ առաւել եւս յանդիմանակայ նկատել զայս առաջի մեր: Մի անգամ եւեթ կատարէր զատիկն. մի անգամ եւեթ քահանայապետն մտանէր ի Սրբութիւն Սրբոց. եւ այս ամենայն առ ի նշանակել եթէ մի միայն է զատիկ, զատիկն Յիսուսի: Զի եթէ եկեալ եւ մեզ պասէք եւ անցք, ի Յիսուս ինքն է. եւ անկ է նմա ամենայն փառքն իւրովք անցանել, այսինքն մարմնոքն եւ անդամոքք: Մի անգամ եւեթ են եւ մուտք Քրիստոսի՝ Քահանայապետին մեծի՝ յերկինս, յորժամ մտանէ անդր վասն մեր եւ վասն իւր, եւ առ ի պատրաստել մեզ տեղի: Մի անգամ ուրեմն անցանէ նա. միանգամ եւեթ մտանէ ի սրբութիւնն, ըստ ինքեանն, այլ ըստ անդամոց իւրոց՝ զոր ամենայն անցանէ յերկինս, զոր ամենայն մտանէ ի Սրբութիւնն. եւ հանապազորեայ կատարումն խորհրդոյ հաղորդութեան՝ զոր հանապազ առաջի առնէ մեզ զայս խորհուրդ: — Անցցուք արդ ուրեմն զոր հանապազ առ Աստուած. անցցուք ի Յիսուս հա-

նապազօր՝ եւ քան զեւս. կեանք նորա առաւել քան զառաւել յայտնեսցին ի կեանս մեր, նմանողութեամբ լաւութեանցն առ ի նմանէ գործեցելոց։ Մայրաք օր ըստ օրէ ի Սրբութիւնս նորին. մոցուք հաւատովք, ընթացուք առ նա անբիծ փափաքանօք։ Այս է զոր ամենայն կատարել զընթրիսն Յիսուսի, որպէս անկն է քրիստոնէի։

ԾԴ. Հաղորդութիւն յարեալ ի հաստատակ սեղանն, ուստուցանէ սրբել զամենայն կերակուր որ ի սնուցիչ մարմնոյ։

Ասացէք զամենայն, ով Տէր. ասացէք ցանձն իմ, ասացէք եւ առ ամենեսին որք հանդիպիցին դրոցս[1] ըստ քոյ կամաց. ասացէք նոցա զոր ինչ միանգամ ազդիցես ի միտս իմ զսրբոց խորհրդոց քոց, բանիւ քով սրբով։ Տեսանեմ եւ այլ ինչ պատճառ կցորդելոյ քո զհաղորդութիւն՝ ընդ հասարակ սեղանոյ. կամք էին քո սուրբ առնել զամենայն կեանս մեր՝ գործոնքն՝ որ տածէ եւ պահէ զնոյն. կամք էին քո ընկերել մարմնաւոր կերակրոյս՝ զհոգեւորն. որպէս զի ուսցուք զամենայն հոգեւորապէս գործել, նա եւ զպիտոյսն ի պահուստ մարմնոյ մերոյ։ Զէ մեզ արժան

1 Զայս իմաստ՝ ոչ համարեալ մեզ կարեւոր՝ յերկարէ հեղինակն։

սնուցանել զմարմինս զայս, բայց միայն եբբեւ արժանաւոր գործի հոգւոյ. եւ զի այսու մտօք ընկալցուք զկերակուր եւ զըմպելի։ Ի դէպ էր Հաղորդութեան՝ յառաջ քան զկերակուրն ընկալեալ՝ լինել կեցուցիչ բարեխառնութիւն հեշտութեանց զգայութեան, զի մի զառածեսցուք նովիմբ, եւ մի յաղթահարեսցէ զհոգեկանն։ Եւ թէպէտ եկեղեցի՝ որում աւանդեաց Քրիստոս զբաշխումն խորհրդոցն, յետ ժամանակաց զատոյց, եւ քաջ իմաստութեամբ, զոր թուէր Քրիստոսի միացուցեալ, եւ կատարէ զհաղորդութիւն ոչ ի ժամու սովորական կերակրոյն, այլ ոչ ընչի խորհուրդ կամաց Քրիստոսի. իրաւն զոր էր մեզ՝ մնայ հանապազ։ Յառնուլ մեր զկերակուր սեղանոյ՝ արժան է մեզ յիշել, զի ըստ նախնական կարգիս դրութեան՝ անկ էր այնմ զուգակցել ընդ հաղորդութեան. զի այսպէս արար Յիսուս. այսպէս առնէր եկեղեցի առ առաքելովքն. զի կամէին այնու ուսուցանել քրիստոնէից՝ եթէ արժան էր նոցա զամենայն գործս իւրեանց՝ նաեւ ըստ յոյժ սովորականս՝ սրբութեամբ կատարել։ Այս իրաւ կայ մնայ հանապազ։ Յուտելս մեր եւ յըմպել՝ յիշեսցուք զհոգեւոր ուտելն եւ զըմպել սեղանոյ Քրիստոսի. յարեսցուք մտօք ի հոգեւորս, եւ մի ի բաց կացցուք ի նոցանէ. եւ եթէ ոչ կարիցեմք զուգել ի նոյն զընթերցումն սրբոց դրոց, որպէս առնեն ի տունս յատակպէս նուիրեալս Աստուծոյ, յարեսցուք խօսս սուրբս, գէթ մտածութիւնս սուրբս։ Մի ըս-

պաս հարցուք զգայարանաց. եւ մի առ մարմինս եղկելի, զոր ամենի է պարարել եւ մնուցանել, բայց եթէ դարմանելով իբրեւ պաշտօնեայ եւ ծառայ հոգւոյ. ապա թէ ոչ՝ մնուցանել՝ իցէ աշխատ լինել վասն մահու, պարարել զորս նորա, եւ որդանց՝ զկերակուր նոցին: Առցուք կերակուր՝ կանոնաւ, եւ որպէս ասէր ոմն ի հնոցն, կերիցուք այնչափ՝ որչափ պէտք իցեն մեզ ի պահուստ կենաց. արբցուք՝ որչափ ողջախոհից անձանց վայելէ, որք զգուշանան ի գրգռելոյ զկամս զգայարանաց: Եւ համբերեն ասել, որ զինչ եւ արասցուք, եթէ ուտիցեմք եւ եթէ ըմպիցեմք, եւ եթէ այլ ինչ սպաս մարմնոյ պարտ իցէ հարկանել, արասցուք ի փառս Աստուծոյ, եւ յանուն Յիսուսի Քրիստոսի, փառս տալով Նովաւ առ Աստուած Հայր: «Արքայութիւն Աստուծոյ ոչ է կերակուր և ըմպելի, այլ արդարութիւն և խաղաղութիւն եւ խնդութիւն ի Հոգին Սուրբ[1]»:

ԾԵ. Իշխանութիւն տուեալ Եկեղեցւոյ առ ի փոխել զոր ինչ ոչ է յիսկզբանէ աստուածային կարգադրութեան: — Հաղորդութիւն ընդ միով տեսակաւ՝ բաւական եւ կատարեալ:

Որպէս զի մեծ իշխանութիւն էա Քրիստոս եկեղեցւոյ իւրում՝ ի մնաւորութեան խորհրդոց

1 Ս. կորնթ. ԺԴ. 31: կող. Գ. 17: հռովմ. ԺԴ 17:

դոց իւրոց: Հաստատեաց զՀաղորդութիւն ի կոչումս, յընթրիս, յերեկոյեան պահու. եւ զայս արար ի խորհուրդ իւր եւ ի խրատ մեզ: Այլ սակայն թոյլ էա եկեղեցւոյ իւրում բաժանել՝ զոր ինքն զուգեալ էր ի միասին, թէպէտ եւ աշակերտք իւր եւս նովին օրինակաւ երկիւղածութեամբ վարեալ էին. եւ ոչ միայն դադարեաց եկեղեցի առնել՝ զոր արարն Յիսուս, եւ որում Առաքեալքն հետեւեցան, այլ նա եւ ազատօրէն արգել խստիւ՝ զայդ կերառութիւն: Ի սեղանի գոլով եւ ի խրախճանի, յուտելն զայլ կերակուրս՝ հրամայեաց Քրիստոս Առաքելոցն ընդունել զՀաղորդութիւն. իսկ եկեղեցի՝ արգել եւ անհրաժարելի պարտուք պարաւանդեաց հաղորդել ծոմապահութեամբ: Հաղորդութիւն՝ որ ի հաստատութեանն՝ ընթրիք էր, ոչ եւս է այնպէս. արդ առաւօտուց ընկալեալ լինի, եւ յառաջ քան զամենայն կերակուր. ընկալեալ լինի ուրոյն եւ զատ ի հասարակ ճաշոյ. եւ ոչ եւս է ներելի ընդունել զայն՝ որպէս Քրիստոս էա եւ որպէս Առաքեալքն ընկալան: — Արդ յայտ է թէ այս ամենայն չէ յիսկզբանէ կարգադրութեան Քրիստոսի: Այլ միթէ կամէր Յիսուս զի մարդիկ ըստ մտաց իւրեանց որոշեսցեն զիսկականն ի կարգադրութեան իւրում՝ յոչ իսկականէն: Ո՞չ մանաւանդ կամեցաւ ցուցանել նոցա՝ զի թողու զեկեղեցի իւր թարգման հաւատարիմ կամաց իւրոց եւ մնաւոր խնամատուն խորհրդոց իւրոց: Արդ, որ համարիցի եթէ զմի տեսակն

եւ եթ ընդունելով՝ անկասար իմն ընթրիս եւ հաղորդութիւն ընդունիցի, նա ոչ է խելամուտ եթէ Եկեղեցին է որ գիտէ զգաղտնիս Քրիստոսի. այն որ գիտէն զինչ ինչ իսկապէս պատշաճեցի կարգադրութեան նորին, զինչ առ իւրաքանչիւր ոք տալի եցէ, զինչ այլազգ քաշեալի՝ ըստ ժամանակին եւ ըստ այլեւայլ պատեհից:

Զարմանաս զի բաժանեն զեղեալսն ի միասին ի Քրիստոսէ, եւ ասն զմարմինն՝ ի Ճաշակելս առանց տալոյ ընդ նմին եւ զարիւնն յարբուսն. զարմացիր ուրեմն եւ ընդ որոշումն սրբազան ընթրեացն՝ ի հաստակ սեղանոյն: Այլ մանաւանդ մի զարմանար ընդ գործ զոր գործէ եկեղեցի: Ուսեալ ի Հոգւոյն Սրբոյ եւ յաւանդութենէ բովանդակ դարուց՝ գիտէ նա զոր կամեցաւն առնել Յիսուս. եւ զի զոր նա խորհրդական իմն ցուցակութեամբ զատոյց, ոչ միայն զօրութեամբ միացեալ կայ՝ այլ եւ իսկութեամբ բն: Էր արդարեւ ի դէպ՝ առ կատարեալ ցուցակութիւն մահուանն՝ որոշեալ երեւեալ մարմնոյն յարենէն, եւ ուրոյն ուրոյն ընդունել զնոսին. այլ գիտէ նա՝ զի եւ զօրութեան մարմնոյն տուեցելոյ՝ նոյն զօրութիւն է արեանն հեղելոյ. եւ զի ոչ միայն զօրութիւնն՝ այլ եւ գոյացութիւն երկոցունեաւ՝ յետ յարութեանն անբաժանելիք են: Թողու ապա զմարմինն եւ զարիւնն ի խորհրդականն բաժանման. այլ սակայն գիտէ քաջ՝ զի զոր եւ մասն եւ ոք ընդունիցի՝ ընդունի զբոլորին զօրութիւն: Արժան է միայն միտ դնել՝ եթէ որպէս կատարեաց Յիսուս զընթրիսն. քանզի եւ աւետարանիչքն նշանակեն որոշակի, եթէ զերկոսին մասունսն եւ սակաւ ինչ ընդմիջութեամբ միոյն ի միւսոյն. զի, ըստ Մատթէոսի, զմարմինն եւ ի ժամ ընթրեացն [1], իսկ զբաժակ արեանն՝ յետ ընթրեացն, ըստ Ղուկասու եւ Պողոսի: Եւ ոչ շատացեալ ընդ բաժանելն իմն զերկոսին գործսն՝ այսու կերպարանաւ, կամեցաւ ցուցանել զի եւ իւրաքանչիւր մասն գործոյն իւրոյ՝ կատարեալ էր ինքնին. քանզի եւ յետ միոյ միոյ՝ ասաց, ըստ որոշակի նշանակելոյ զայն Պողոսի, Զայդ արարէք առ իմոյ յիշատակի: Ապա զի՛ր եւ մասն ընկալայց՝ կատարեմ զյիշատակ մահուան Քրիստոսի, յարեմ յիս զբովանդակ զօրութիւնն, մարմնախառնիմ ի Յիսուս: Զի ոչ ապաքէն ընդխառնիմ ընդ մարմնոյ նորա յընդունել իմում զմարմինն զայն. ոչ ապաքէն այնու լինիմ ոսկր յոսկերաց նորա և մարմին ի մարմնոյ նորա [2], եւ մի մարմին ընդ նմին, որպէս տեսաք յառաջագոյն: Զինչ եւս այլ պիտոյ է ինձ ի լրումն գործոյ փրկութեան իմոյ, մանաւանդ ի Ճաշակելս զմարմինս զայս՝ որպէս զհացն ելեալ յերկնից, այսինքն է մարմին Աստուծոյ, մարմին միացեալ ընդ կենաց իսկ, եւ լցեալ վասն իմ հոգւով կենդանարարաւ: Մի՛թէ ոչ միահաղոյն ընկալայ զմարմին նորա եւ զոգին: Որ ինչ միայն՝ կարէ ինձ ընծայել արդյն եւս բացայայտութիւն մահուան Քրիստոսու

1 Մատթ. ԻԶ. 26: Ղուկ. ԻԲ. 20: — 2 Եփես. Ե. 30:

տոսի, այլ զբովանդակ իսկ զօրութիւն նորա ունիմ ես ի մարմնի անդ. վասն այնորիկ ոչ զարմանամ եթէ ասիցէ Առաքեալն Պօղոս, «Որ ուսիցէ զհացս զայս եւ որ ըմպիցէ զբաժակս՝ անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյն եւ արեանն Տեառն [1]»: Այո, ասէ, եւ քաջ իսկ որոշակի ասէ, որ ոք ընդունի անարժանութեամբ զմին կամ զմիւսն՝ պարտական լինի երկոցուն եւս. եւ յաղագս նմին երբ՝ որ հաղորդի արժանապէս ի միոյ յերկոցուն՝ զերկոսին եւս միանգամայն պատուէ, եւ ընդունի զօգուտն եւ զօրհնութիւն. զի յերկոսին եւս մի զօրութիւն է, մի եւ անբաժանելի սրբութիւն: Արդ որ ընդունի զմին եւ որ զմիւսն, եւ որ զերկոսին եւս ընդունիցի, հաւասար ընդունի զփրկութիւն իւր: Ոչ նուազ քան յերկոցուն՝ ի միումն եւս գտանի գոյացութիւնն. զի ուր գոյացութիւն Քրիստոսի է, անդ՝ որպէս բանիս կարգ է ասել, է եւ բոլոր գոյացութիւն կենաց եւ փրկութեան: Զի որպէս ասէ իսկ Եկեղեցի ի Ժողովին Տրիտենդեայ, Այն որ ասացն, «Եթէ ոչ կերիջիք ի մարմնոյ իմմէ եւ ոչ արբջիք յարենէ իմմէ ոչ ունիցիք կեանս յանձինս ձեր», եւ որ ասացն՝ թէ, «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ՝ կեցցէ ի յաւիտեան». ասաց եւս, «Հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի». եւ որ ասացն, եթէ «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ՝ նա յիս բնակեսցէ եւ ես ի նմա [2]»,

1 Ա. Դորնթ. ԺԱ. 27: — 2 Յովհ. Զ. 52–9:

նոյն եւ ասաց. «Որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան. եւ Որ ուտէն զիս՝ կեցցէ վասն իմ»:

Ի վերայ այսր անխախտելի հիման՝ մատակարարեաց Եկեղեցի զՀաղորդութիւն՝ բաղում օրինակաւ. եւ զայն յեկեղեցւոջ, տարաւ բացակայից. ընկալան զայն հիւանդք միով տեսակաւ, մանկունք մատաղք միւսովն. հաւատացեալք տանէին զայն ի տունս իւրեանց, թէպէտ եւ Քրիստոսի չէր արարեալ կամ ասացեալ ինչ այսպէս, եւ տանէին ընդ տեսակաւ հացին միայն: Յոյնք խառնեցին ընդ երեար զերկոսին տեսական, եւ այնպէս եռուն զերկոսին միանգամայն՝ ժողովրդեանն: Բարի է ամենայն. շատ է թէ ընդունիցի ոք զՔրիստոս ի ձեռանէ եկեղեցւոյ. զի այդ իսկ են ճշմարիտ արդիւնք՝ զոր անկ է ներգործել ի հաւատացեալս այլ եւ այլ եղանակաց հաղորդութեանն. անկ է ասել նոցին ուսուցանել մեզ, եթէ կատարելագոյն եւ կարեւորագոյն պատրաստութիւն յընդունելութիւն հաղորդութեան՝ է մատչելն աներկմիտ եւ կատարեալ սերտութեամբ յեկեղեցի. մարմին է նա Քրիստոսի. հարկ է ընդխառնել յեկեղեցի առ ընդխառնիլ ընդ Քրիստոսի:

Ո՛վ Յիսուս, այսպէս հաւատամ. վայ այնոցիկ որք խծբիծս դնեն եկեղեցւոյ քում. բծքանքդ այդ եւ վէճ՝ ընդդէմ քո են: Եթէ այդպիսեաց ոք բծկանաց միտ դիցէ՝ երկայնցի եւ ընդ մկրտութիւն նորին: Ասացեր դու, մկրտեցէք, ընկղմեալ ի ջուր, ի նշանակ թաղման

ընդ խ. իսկ Եկեղեցի քո բաւական համարի եւ
կաթիլս ինչ ջրոյ հեղուլ ի գլուխն։ Դու ասա-
ցեր, «Ուսուցէք եւ մկրտեցէք, եւ որք հաւա-
տան եւ մկրտին՝ կեցցեն[1]»։ այդ բանք նշանա-
կեն զհաւատս եւ զուսումն՝ որպէս պատրաս-
տութիւն մկրտութեան. այլ ներհակաբար՝ մեք
մկրտիմք մինչեւ եղեալ կարողք ի հաւատալ եւ
յուսանել. եւ ոչ եւս ուսումն է որ պատրաս-
տէ զմեզ ի մկրտութիւն, այլ մկրտութիւնն
հլուս առնէ զմեզ յընդունելութիւն ուսման։
Ընկալեալ լինիմք մեք հաւատովք այլոց. այլք
փոխանակ մեր ասեն, Հաւատամ, Հրաժարիմ.
եւ Եկեղեցի քո ընդունի զպատասխանին, թէ-
պէտ եւ չիք ինչ գրեալ զայնմանէ ի բանս քո։
Ո՞ր ապահովութիւն մնայր մեզ՝ եթէ ոչ իմա-
նայաք՝ եթէ հաստատուն հաւատք եկեղե-
ցւոյ, մեկնութիւն եկեղեցւոյ, անդրժելի կեր-
պութիւն եկեղեցւոյ՝ արդարեւ այնպէս բան
քո է, որպէս քո իսկ բանքն տառատպեալք ի
Գիրս։ Այլ. որ ինչ գրեալ է քո ի սիրոս, եւ
զոր մեզ քարոզեալ է Եկեղեցւոյ, ճշմարտու-
թիւն է այն։ Ցայս հաւատս կեամ ես. եւ ո-
գւով եւ մտօք միանամ ընդ Եկեղեցւոյ քում
եւ ընդ վարդապետութեան նորին. պարզ մը-
տօք միանամ ընդ Եկեղեցւոյ քում եւ ընդ վար-
դապետութեան նորին. պարզ մտօք դաւանե-
լով առաջի քո, զի հաճ եւ հաւան եմ ընդ
խորհուրդս քո (կարդեալս յեկեղեցւոջ), որ-

1 Մարկ. ԺԶ. 16։

պէս զիարդ եւ բաշխեցէ ինձ նա՝ զոր կարդեցեր
մնաս նոցին։

ԾԶ. Երկրպագութիւն, դնումն ի Բագնոցի, եւ պահումն Սրբոյ հրեան։

Եւ քանզի, ով Տէր, խծբիծք ապստամբացն
յԵկեղեցւոյ քումմէ՝ վարեն զիս առ լիակատար
ծանօթութիւն ճշմարտութեան քո, կամիմ ի
քէն առնուլ եւ զբաղայս նոցին որ զերկրպա-
գութենէ, զպահելոյ եւ զդնելոյ ի բազմոցն զեր-
կրպագելի խորհուրդ քո։ Ոչ նշանակի, ասեն,
յաւետարանս, եթէ առաքեալքն երկրպագու-
թեամբ ընկալան զմարմին եւ զարիւն Քրիստո-
սի։ — Իսկ երեւիցի՝ ուրեք եթէ երկրպագե-
ցին Քրիստոսի՝ որ հանապազ նստէր ընդ նոսա՝
երեւելի եւ բնական կերպարանօքն։ — Ա-
ստուած իմ, զիարդ ոչ տեսանեն վերնասէրքդ,
զի զոր ինչ եւ պատասխանիցես՝ անձամբ ան-
ձանց դատախազք լինին։ Առաքեալքն երկրը-
պագէին Քրիստոսի՝ ընդ սեփական եւ բնական
կերպարանաւն։ — Հաւատան այսմիկ, թէ-
պէտ եւ չիցէ գրեալ։ Ո՞չ երկրպագանէին նմա։
Եւ զինչ կամիցին ի վերայ բերել այնու՝ զի չէ
գրեալ եթէ երկրպագէին նմա ի հաղորդու-
թեան։ Քանի՞ թանձրամիտք են արդ այդոքիկ,
որք առ նրբամիտս ունին զանձինս, եւ զայլս
առ թանձունս. քանզի ոչ լինին խելամուտ է-

եթէ զի՞նչ էցէ Հնմարիտ երկրպագութիւն։ Զի եթէ եւ ըստ բառին եւեթ յառէսցուք ի պատմութիւն ընթրեացն, առանց լսացուցանելոյ զբան ինչ աւետարանին՝ այլովք նորին բանիւք, զի՞նչ էցէ՝ հաւատալ ի Յիսուս, յասել նորա՝ Առէք, կերայք, այս է մարմին իմ։ հաւատալն, ասեմ, առանց երկմտութեան, առանց հակառակութեան՝ յասելն նորա զայսպիսի զարմացուցիչ բան. առնել զոր ասացն, ուտել զհացն ըստ երեւութին՝ աներկբայ հաւատով՝ եթէ մարմին է նորա, նոյնպէս եւ զբաժակն առնել. այսպիսի պարզ եւ բարձր ներգործութիւն հաւատոյ առնել, էցէ՞ այս երկրպագել Քրիստոսի։ Խարեն ընդ Պօղոսի զմարմին Քրիստի, այնպէս խարել զի խմացի եթէ մարմին է՝ ոչ մարդոյ լոկոյ՝ այլ Աստուծոյ, եւ հաց Հնմարիտ ելեալ ի յերկնից. ի նա դնել զյոյս, ի նմին խնդրել զկեանս, ի նա յառել զամենայն սէր սրտի, մինթէ էցէ՞ այդ կատարելապէս պաշտել զնա. եւ զի՞նչ յաւելցէ յայդ հաւատս՝ ծնրադրութիւնն, խոնարհումն մարմնոյ, տարածումն ի գետին, միով բանիւ՝ արտաքին երկրպագութիւնն, եթէ ոչ՝ զդալի եմն վկայութիւն կրից սրտին։

«Հաւատա՞ս դու յՈրդի Աստուծոյ», ասէր Քրիստոս առ կոյրն ի ծնէ՝ զոր բժշկեացն [1]։ «Ո՞վ է զի հաւատացից, պատասխանեաց նա. եւ Յիսուս ասէ. Որ խօսիդ ընդ քեզ։ Եւ պատաս-

1 Յովհ. Թ. 35, և այլն։

խանի կոյրն, Հաւատամ Տէր. եւ երկիր եպագ նմա»։ Եւ զի՞նչ երկրպագութեամբն արար. բայց եթէ այլով օրինակաւ եւ այլով լեզուաւ՝ կրկնեաց զոր բերանովն ասէր «Հաւատամ, Տէր»։ Եւ որք ասեն Հաւատամ՝ առանց երկիր պագանելոյ առաջի նորա, պաշտիցէ՞ն զնա. եւ կամ այնոքիկ զորոց չէ գրեալ՝ թէ արարին այդպէս, մինթէ նուաճել քան զայլսն պաշտիցեն զնա։ Եւ կիսն որ մերձեցաւ ի նա՝ զի բժշկիցի, մինթէ ո՞չ երկիր եպագ նմա ի սրտին՝ մինչչեւ անկեալ առ ոտս նորա։ Եւ յորժամ ասէին Առաքեալքն, «Տէր, յաւել մեզ հաւատս», մինթէ ո՞չ գիտէին որպիսի ոք էր նա ամենայնիւ, եւ ո՞չ ի ներքուստ պաշտէին զնա որպէս զԱստուած, թէպէտ եւ ոչ անկեալ կային առ ոտս նորա։

Արդ ո՞ ոչ տեսանէ՝ եթէ հաւատալ ի Յիսուս՝ որ ասէ, Այս է մարմին իմ, Այս է արիւն իմ, եւ ընդունել զայն այսու հաւատով, եւ խըրել՝ զի մարմինն այն մարմին է Աստուծոյ՝ որով տուաւ մեզ կեանք, թէպէտ եւ աւելի քան զայս ոչ տեսանիցի, եւ ոչ գտանիցի ի Գիրս Սուրբ՝ որ ինչ պատշաճն է Քրիստոսի, էցէ գերօրինակ եմն երկրպագութիւն. եւ ամենայն տարածմունք ի գետին առաջի Քրիստոսի՝ չէ՞ցեն այլ ինչ՝ բայց բացատրութիւն եւ վկայութիւն այնորիկ։ Իրաւամբք ասա առադրի Հաղորդութեան՝ ներքին եւ արտաքին պաշտօն, այսինքն է խմացումն եւ նշանակն, հաւատքն եւ վկայութիւնն։ Իրաւամբք, ըստ Սրբոցն բանից,

արտաքուստ՝ դրուք մարմնոյն յայանիւր մտացն խոնարհումն, եւ թէ «Ոչ ոք ընդունի զմարմինն զայն՝ եթէ ոչ իցէ յառաջագոյն երկրպագեալ նմին», ըստ ասելոյ Սրբոյն Օգոստինոսի, եւ ըստ անայլայլակ վկայութեան հրահանգաց եկեղեցւոյ։ Այլ ընդէր է խնդրել վկայութիւնս, մինչ ուտեն եւ ըմպել զմարմինն զայն եւ զարիւնն՝ իբրեւ մարմին եւ արիւն Աստուծոյ, եւ յայն գնել զյոյսն, այնպիսի գերագոյն երկրպագութիւն է՝ զի հարկ է նմին բովանդակել յինքեան զայնն ամենայն։

Ասէք. Իսկ ընդէր գնել ի բազմոցի. ուր գերեալ իցէ այդ. կատարէր այդպիսի ինչ նախկին եկեղեցին։— Ո՛վ Թանձրամիտ եւ մարմնաւոր. որ մեծ իցէ, դնէին արտաքս յեկեղեցւոջ զմարմին Փրկչին, եթէ տանեն ընդ իւր եւ պահել ի տան։ Եւ յետինս այս գրեաալ իցէ առաւել քան թէ միւսն։ Արդ ո՞ ոք ոչ տեսանէ, զի խակութիւնն գոլով գրեալ եւ քաջ խնացեալ յեկեղեցւոյ, ամենայն որ ինչ զհետ նորին երթայ՝ պէսպէս օրինակաւ ի կիր արկաւ, ըստ ի մասաուն տնտեսութեան նորին ինքեան եկեղեցւոյ, ի շինութիւն ժողովրդեանն Սրբոյ։

Զուգընթաց լիցուք այսմիկ, եւ մի եւս յապաղեսցուք. երթիցուք երկիր պագանել Յիսուսի բազմելոյ ի վերայ սեղանոյն։ Ո՛հ, անդ պահի նա վասն իմ. անդուստ բերցի ինձ յաւուր միում ի թոշակ, առ ի տալ ինձ խաղաղութեամբ անցանել ի կենաց աստի ի հանդերձեալն։ Հա՛ց ուղեւորաց, որ լիցիս յաւուր միում

հաց ժամանելոյ, հաց այնոցիկ՝ որք կեցցեն յերկնաւորն հայրենիս, երկիր պագանեմ քեզ, հաւատամ ի քեզ. քեզ փափագեմ. զքեզ ճաշակեմ հոգւովս. դու ես կերակուր իմ. դու ես կեանք իմ։

Ծէ. Պատարագն։

Քաւ լիցի մեզ մոռանալ զսուրբ գործ պատարագին, եւ զիսորհուրդն սրբագործութեան։ Սեղան տեսանեմ. պատրաստութիւն է պատարագի. պատարագ քրիստոնէից. պատարագ եւ նուիրումն մաքուր, զորմէ գրեալ է[1], «Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու մատչի պատարագ սուրբ»։ Ոչ եւս այն պատարագ՝ զոր անկ էր մատուցանել ի տաճարին Երուսաղեմի, եւ ի միում եւեթ տեղւոջ ընտրելում Յաստուծոյ. այլ պատարագ որ մատչիցի ի միջի հեթանոսաց, եւ առ ամենայն ազգս երկրի։ Իսկ ո՞ւր իցեն սպասք պատարագիդ. ո՞ւր իցէ հուրն. ո՞ւր իցէ սուրն. ո՞ւր սպանդքն։ Հարիւր զուարակք եւ հարիւր երինջք՝ չեն բաւական ի ցոյց մեծութեան Աստուծոյ մերոյ. դեռ անգամ մատուցանէին հարիւրեղեան պատարագս։ Այլ աստանօր եւ ոչ մի յայդցանէ ոչ տեսանեմ։

Քանի՞ պարզագոյն է զոհ քրիստոնէի։ Հաց մի

1 Մաղաք. Ա. 11։

եւ թեսանեմ ի վերայ սեղանոյն, կամ եթէ շատ՝ հացս ինչ, եւ սակաւ մի գինեակ ի բաժակն. եւ այդ շատ է ի կատարումն սրբագունի, վեսմականի եւ Ճոխագոյն պատարագի՝ յոր հասանել բաւեցեն միւք մարդոյ։ Այլ չգուցէ՞ միս. չգուցէ՞ արիւն ի զոհիդ։ Այո, եցէ միս, այլ ոչ ի մեոյ սպանդեցս անասնոց. եցէ արիւն, այլ արիւն Քրիստոսի. եւ միսդ այդ եւ արիւն՝ խորհրդապէս բաժանեսցին ի մեմեանց։ Եւ ուստի՞ գայցէ միսդ այդ եւ արիւն։ Եղիցի ի հացէ այսի եւ ի գինւոյ այսի. հասցէ բան մի ամենազօր, որ զհացդ զայդ՝ արասցէ մարմին Փրկչին, եւ զգինեդ՝ արիւն նորին. զոր ինչ եւ արասաբերիցէ բանդ այդ՝ անգէն եւ անդ եղիցի ըստ արասաբերութեանն. զի այն բանն է որ արար զերկինս եւ զերկիր, եւ որ առնէ զոր կամի յերկինս եւ ի յերկրի։ Այդ բան ի սկզբանն արտասանեալ յՈրդւոյն Աստուծոյ՝ արար զհացդ մարմին իւր, եւ զգինեդ՝ արիւն իւր. այլ ասաց առ աշակերտսն. Զայդ արարէք. եւ աշակերտք նորա ուսուցին մեզ առնել զայն՝ մինչեւ եկեսցէ նա, մինչեւ ի վերջին դատաստանն [1]։ Այսպէս՝ նոյն բան կրկնեալ ի պաշտօնէից Քրիստոսի՝ ունելոյ զնոյն զօրութիւն մինչեւ յաւիտեան։ Փոխին հացն եւ գինին. զոեղն նոցա ունին մարմինն եւ արիւնն Քրիստոսի։ Ո՛վ Աստուած. նոյն իսկ մարմին եւ արիւն նորին են ի վերայ սեղանոյն. մարմինն այն տուեալ վասն մեր, արիւնն

1 Ա. Կորնթ. Թ. 24–6։

այն հեղեալ յաղագս մեր։ Որպիսի՞ հիահրաշ սքանչելիք են։ Զարմանալիք են վասն մեր. այլ ոչ ինչ զարմանալի առ Որդին Աստուծոյ, որ առնէ զամենայն բանիւ իւրով։ «Եղիջիր ողջ». եւ ողջանայ. «Արի [1]». եւ կենդանանայ, եւ վերադառնան կեանքն խուսափեալք։ Ասաց նա, «Այս է մարմին իմ». ոչ եւս է հաց. այլ որ ինչ ասաց. «Այս է արիւն իմ». ոչ եւս է գինի ի բաժակի, այլ որ ինչ ասացն Յիսուս։ Մարմին եւ արիւն նորա են այդոքիկ. անջատեալք են, այո, անջատեալք. աստի մարմինն, անտի արիւնն. սուրբ եղեւ բանն, սուրբ հատու՝ որ ապար զիսորհրդականդ որոշումն։ Զօրութեամբ բանին՝ մարմին եւթե է այնուհետեւ, եւ արիւն սոսկ. եւ զի գտանին մին ընդ միւսոյն, յայն սակս է՝ զի յետ յարութեանն Քրիստոսի անբաժանելիք են յայնմհետէ. զի ոչ եւս մեռանի նա այսուհետեւ։ Այլ առ ի տպաւորել ի վերայ Յիսուսի՝ որ ոչ եւս մեռանի, զտիպ մահուն զոր կրեացն ստուգապէս, դայ բանն եւ զատուցանէ զմարմինն ի մի կողմն, եւ զարիւնն ի միւս կողմն, եւ զերկաքանչիւր այլեւայլ նշանակօք. եւ ահա զգեցաւ զտիպ մահուն իւրոյ՝ Յիսուսդ այդ երբեմն զոհ մեր հեղմամբ արեանն իւրոյ, եւ արդ զոհ մեր՝ այլով օրինակաւ, խորհրդականն բաժանմամբ արեանն ի մարմնոյն։

Այլ զիա՞րդ այդ մարմին, զիա՞րդ այդ արիւն։ Իցէ՞ հնար այդմ լինել. իցէ՞ մարթ մարմնոյ մար-

1 Մարկ. Ե. 24։ — Յովհ. ԺԱ. 43, 44։

գոյ լինել ընդ անօսր տարածութեամբդ։ Եւ ՛ի ընդ այդ երկմտեցի՝ եթէ բանն այդպէս կամիցի։ Ամենազօր է բանն. բանն սուր է հատու որ հասանէ, որոշէ մինչեւ ի սպառ. որոյ եթէ կամք եղեն՝ բառնայ ի մարմնոյ այսի զսերտագոյն յատկութիւնն, թողլով մեզ զսոսկ եւ զպարզ գոյացութիւնն, զի այդ իսկ պիտոյ է ինձ. յայդ պարզ գոյացութիւն միացաւ Բանն Աստուծոյ. եւ միութիւն նորա գոյացական է. միութիւն նորա ի գոյացութեան կատարի. եւ միութիւն զոր ընդ ման կամի՝ եղիցի գոյացութեամբ մարմնոյ եւ արեան իւրոյ. ասաց զայն եւ եղեւ իսկ եւ իսկ։ — Այլ ես ոչ ինչ նոր տեսանեմ ի վերայ սեղանոյդ։ Այո, այդպէս է. բանն կարէ բառնալ ի զգայութեանց զոր ինչ եւ կամի, յորժամ հաճիցի կրթել զհաւատս։ Քրիստոս յորժամ կամեցաւն՝ աներեւոյթ արար զինքն ի մարդկանէ. էանց ի միջի նոցա, եւ ոչ ոք էտես զնա. աշակերտքն՝ ընդ որս խօսէր՝ ոչ ծանեան զնա, մինչեւ ի պահուն յորում կամեցաւ. Մարիամ՝ պարտիզպան կարծեաց զնա, մինչեւ սթափեցոյց զնա, եւ եբաց զաչս նորա բանիւն իւրով։ Մտանէ եւ ելանէ, եւ ոչ ոք տեսանէ զմուտս եւ զելս նորա. երեւի եւ անհերեւութանայ, որպէս եւ կամի։ Արդ ո՞երկբայիցի՝ թէ կարասցէ նա աներեւոյթ առնել մեզ զայն՝ որ ի բնէն չիցէ այնպէս։ Բանն, սուրն այն հատու, եհաս, եւ բաժանեաց ի մարմնոյ այսի եւ յարեւնէ, ոչ միայն զայն ամենայն՝ որ երեւելիս զնոսա առնէին, այլ եւ զամենայն՝ ո-

րովք ընդ այլս ի զգայարանաց մերոց հարկանէին։ — Այլ ես տեսանեմ զամենայն զոր եւ յառաջն տեսանէի. եւ եթէ հաւատացից զգայարանացս՝ ահա միայն հաց եւ գինի է ի վերայ խորհրդական սեղանոյդ։ — Իցէ՞ անդ հաց. իցէ՞ անդ գինի։ Ո՛չ, ամենայն ծախեցաւ. հուր անհերեւոյթ էջ յերկնից. էջ բանն ի յերկնից եւ թափ էանց ի ներքս ի հացդ եւ ի գինիդ. եւ չեթող ի սեղանի անդ գոյացութիւն՝ բայց զայնր զոր անուանեացն. մարմին եւ արիւն միայն կայարդ։ Իսկ զիա՞րդ։ — Ամենազօր է բանն. ամենայն ինչ տեղի ետ նմա, եւ չմնաց ինչ ասա՝ բայց այն զոր հոչակեացն. հուրն այն յինքն փոխեաց զամենայն. բանն այն փոխեաց զամենայն յոր ինչ եւ ասացն։ — Այլ միթէ՞ ոչ ըզնոյն արտաքինն (երեւոյթ) տեսանիցեմ։ — Այո. քանզի բանն եթող միայն զայն՝ որ պիտոյն էր ինքեան, առ ի ցուցանել մեզ՝ եթէ ՛ւր արժան եղեալ ընդունել զմարմինն եւ զարիւնն զայն. միանգամայն եւ սքօղել զնոսին յաչաց մերոց։ Հրեշտակք՝ մարդկեղէն կերպարանօք երեւեցան. նա եւ Հոգին Սուրբ՝ աղաւնակերպ յայտնեցաւ։ Կամք են բանին զի մարմին Քրիստոսի երեւեսցի մեզ ընդ տեսակօք հացին, քանզի պիտոյ էր նշանակի՝ առ ի յայտնել մեզ՝ եթէ ՛ւր արժան եղեալ ընդունել զայն. եւ զոր կամեցաւն՝ կատարեցաւ։ Ծախեաց նա զամենայն գոյացութիւնն, եւ զոր տեսանիցդ՝ մոխիր իմն է զոր եթող հուրն այն, նա մանաւանդ ոչ իսկ մոխիր, զի մոխրոյ է գոյացութիւն. եւ մնա-

ցորդդ այդ ողջակիզին՝ պատեան իմն է մարմնոյն եւ արեանն. եւ բովանդակ ասել, այն միայն է՝ զոր Թողուլ կամեցաւ բանն, առ ի նշանակել մեզ զծածկեալն՝ այլ զատոյգ ներկայութիւն մարմնոյ եւ արեանն Քրիստոսի, զոր կամէրն դնել անդ Ճշմարտապէս եւ գոյացապէս, այլ միայն հաւատոց մերոց կամէր ցուցանել։ Շատ լեցի այսքանս ասացեալ. զի այլն ամենայն անհասանելի է, եւ միայն արարողին իւրում տեսանելի։

Ահաւադիկ նշանն զոր եթող մեզ Քրիստոս. նշան՝ որով Ճանաչեմք զնա Ճշմարտապէս գոլ ներկայ. քանզի բանն ասէ մեզ զայդ։ Եւ չէ արժան տագնապել, եթէ որոմ օրինակաւ զասացեալն կատարիցէ. շատ է զմտաւ ածել զայն զոր նշանակէն. քանզի է ի նմա զօրութիւն առնելոյ զամենայն՝ զոր կամիցի առաքող նորին։ «Առաքեաց, ասէ, զԲան իւր եւ բժշկեաց զընոսա՝ փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց [1]»։ «Մի դարձցի դատարկ՝ բանն այն, մինչեւ կատարեսցէ զոր կամիցի [2]»։

Ասացեալ արդ միւսանգամ եւս, քաջ իմացիր զբանդ՝ «Այս է մարմին իմ». եթէ պարզ նշանակ մի եւեթ կամէր Թողուլ, ասէր ապաքէն. Այդ է նշանակ. եթէ կամէր զի մարմինն լեցի ընդ հացին, ասէր. Այսր է մարմին իմ. չասէ, այսր է այն, այլ Այս է. եւ այդու յայտ առնէ մեզ՝ զոր ինչ էրն եւ զոր էն։ Եթէ հարցցէն

1 Սաղմ. ճԶ. 20։ — 2 Ես. ԾԵ. 11։

զքեզ, Զի՞նչ է այդ, մի բան է քեզ պատասխանուց. Այս է մարմին նորա. բանն՝ արար զքանչելիսդ։ Ոչ զկայ առեալ ինայ, եւ ել ի բերանոյ քահանային որպէս ի բերանոյ Որդւոյն Աստուծոյ, արար ի վերայ սրբոյ սեղանոյն՝ զփոփոխութիւնդ հրաշալի. յետ այնր ի մեզ յամենեսին փոխանցէ զզօրութիւն իւր՝ ի ներկայքս պատարագին. ընդարմացուցանէ զամենայն զգայարանս մեր. ոչ եւս տեսանեմք, ոչ եւս ճաշակեմք՝ ըստ առ ի միտս խորհրդոյս։ Որ հաց երեւին մեզ՝ ոչ եւս է հաց, որ գինին երեւի՝ ոչ եւս է գինի. մարմին է եւ արիւն է Քրիստոսի։ Ոչ եւս հաւատամք դատման զգայարանացս. Բանին հաւատամք, որ զամենայն փոխեաց. եւ մեք իսկ ոչ եւս եմք՝ որ ինչ էաքըս, մարդիկ ընդ զգայարանօք գրաւեալք, այլ մարդիկ՝ բանին հնազանդեալք։ Ցայսմ պայմանի մերձենամք ի սեղանն սուրբ։ — Եկ, ցանկալիդ սրտի իմոյ. «Ծարաւեցաւ առ քեզ հոգի իմ. քանիսատիկ եւս եւ մարմին իմ [1]»։ Այո, մանակից լինի մարմինս՝ ըղձից հոգւոյս, քանզի ի նմա կատարի որ ինչ պատճառէ հոգւոյն զՀրաշնաւանան։ «Սիրա իմ եւ մարմին իմ ցընծացին առ Աստուած կենդանի. Եւ ամենայն ոսկերք իմ ասասցին, Տէր, ո՞վ նման է քեզ [2]»։ Ո՞ նման է քեզ ի զօրութեան։ Այլ ո՞նման իցէ քեզ եւ ի բարութեան եւ ի սէր։

1 Սաղմ. կԲ. 2։ — 2 Սաղմ. ԼԴ. 10։

ԾԸ. Պարզութիւն եւ մեծութիւն պատարագիս։

Քանի՛ մեծ, քանի՛ շքեղ է զոհ քրիստոնէից. այլ եւ քանի՛ պարզ, քանի՛ խոնարհ։ Սակաւիկ մի հացի, սակաւիկ մի գինւոյ, եւ բառք ջրբ. ահա բովանդակն։ Ճանաչեմ ես զտիպ կերպարանաց Տեառն Յիսուսի։ Զի՞նչ տեսանես. — մարդ մի. — Իսկ զո՞ հաւատաս. — զԱստուած։ Պօղոս ասէ. «Որ ուտէ ի հացէ այսի[1]». ասիցես, զհացէ խօսի դա։ Զերեւեցելոյն առ աչս՝ խօսի. եւ հաճի նշանակել որ ինչ խոնարհ, որ ինչ հասարակ եւ ծանօթ լցէ ի զոհիդ։ Այլ դու քաջ խորամուխ լեր ի պարզութիւն բանիդ. մի՛ դիր նա եւ յետ այնր եւ յառաջագոյն ասացելոցն, եւ ապա ի վերայ հասցես զօրութեան եւ մեծութեան բանիդ. «Որ ուտէ ի հացէ այսի»։ Քանզի հացդ այդ, այսինքն հացդ մարմին եղեալ, հացդ ըստ երեւութի, այլ իսկապէս մարմին, հացդ՝ որով այլ հաց, եւ հաց կենաց յաւիտենականաց՝ տուեալ է մեզ։ Ահա զայդ նշանակէ հացդ։ Զնոյն է խմանալ եւ զբաժակէ Տեառն։ Բաժակք խորհրդոյ հաղորդութեան ի պատուականագոյն նիւթոց կազմեցան, անդատին ի սկզբանց քրիստոնէութեան, եւ անդամ ի ժամանակի հալածանաց եւ աղքատութեան եկեղեցւոյ։ Ոչ զարմանամ ընդ

1 Ա Կորնթ. ԺԱ. 27։

այդ. զմեծ արժանաւորութիւն մարմնոյ իւրոյ ծանոյց մեզ Քրիստոս, յորժամ թոյլ ետ եւ հաւանեցաւ այնքան անուշահոտ իւղովք եւ խնկօք՝ ոչ միայն ի կենդանութեանն պատուել, այլ եւ յետ մահուն օծանել։ — Բայց թէպէտ հաճի նա ընդ այս, եւ եկեղեցի հետեւի այդմ, այլ ոչ յարտաքին երեւոյթդ այդ յարեալ կայ։ Մարթ է հալածանաց կողոպտել ի նմանէ զոսկին եւ զարծաթ՝ զկարգեալն ի սպաս Որդւոյն Աստուծոյ. այլ միթէ կարիցէն տալ նմա կորուսանել զփարթամութիւն զոհին։ Ոչ. շատ են նմա սակաւիկ մի հացի, սակաւիկ մի գինւոյ՝ առ ի մատուցանել Աստուծոյ զվերհագոյնն պատարագաց, եւ ի պարգեւել մարդկան զմեծամեծարն խրախճան։ Ահաւադիկ ճշմարիտ ճոխութիւնք եկեղեցւոյ. զայն ամենայն ոչ միայն մարթ է վերծուլ ի նմանէ, այլ եւ ինքնին իսկ բաղում անդամ ի բաց թողու։ Գովեաց զեպիսկոպոսունս՝ որք առ ի պաշտել զպէտս աղքատաց՝ կարօտանային կողովով տանել զմարմին Քրիստոսի, եւ պարզ սոսկ ապակեաւ զարիւն նորին. եւ զայնոսիկ՝ որք ի փրկանս գերեաց եւ ի գին գետնոյ թաղման մեռելոց՝ ծախէին զսպասս սրբութեան։ Արդ՝ ի պատիւ խորհրդոյ՝ նախանձու եռանդեան պէտք են. եւ ոչ է պարտ խնայել յոսկի եւ յականս պատուականս՝ եթէ պէտք լցեն յորդորել այնու զժողովուրդն ի մեծարանս։ Այլ սակայն մի լիցեն ի մէջ մոռացօնք, զի ճոխագոյնն ինչ ի զոհի ասա՝ ծածկագոյնն եւ խոնարհագոյնն է։

Իսկ զի՞նչ գործէ անդանօր Քրիստոս. — Չտեսանեմ ինչ արժանաւոր ինքեան գործել: Եւ այդ իսկ է մեծ. քանզի այդու իսկ յայտ առնէ եթէ ամենայն մեծութիւն իւր յինքեան է. այդու իսկ ցուցանէ՝ եթէ ամենայն մեծութիւն իւր եւ ամենայն երանութիւն մեր՝ ի մահու անդ իւրում է: Որքան առաւել ունայնանայ, որքան յաւէտ մեռանի, այնքան առաւել փոխէ ի մեզ զկեանս իւր: Արժանաւոր յիշատակ Աստուծոյ՝ որ ունայնացոյց զանձն իւր:

ԾԹ. Գառնն առաջի արքոյն Աստուծոյ: Յայտն. Ե. 6:

Երկինք բացեալ լինին. Թափ անցանեմ ընդ վարագոյրն. մտանեմ ի սրբութիւնն յաւիտենականս. եւ ընդ Սրբոյն Յովհաննու տեսանեմ առաջի աթոռոյն, զԳառնն զենեալ, եւ շուրջ զնովաւ զբսան եւ չորս երիցունսն [1]: Զայս տեսանեմ յերկինս. զայս տեսանեմ եւ յերկրի: Անդ Յիսուս որպէս զենեալ, որպէս մեռեալ՝ սպեօք խոցուածոյն, ի միջի սրբոց իւրոց. ատ նոյն ինքն Յիսուս՝ որպէս սպանեալ, եւ զգենեալ զսրբազան նշանս չարաչար մահուանն զոր կրեաց, շրջապատեալ ի քահանայից իւրոց: Զի՞նչ ասիցէ մեզ Պօղոս զՅիսուսէ՝ նկատելով յերկինս. զի « յանդիման լինի երեսացն Աս-

1 Յայտն Ե. 6:

տուծոյ վասն մեր... քանզի միշտ կենդանի է՝ լինել բարեխօս վասն մեր [1] ». բարեխօս լինի վասն մեր յանդիման կալով: Զի՞նչ եւ մեք ասասցուք՝ ըստ նորին օրինակի՝ զՅիսուսէ եղեալ ի վերայ սեղանոյն սրբոյ, եթէ ոչ՝ զի միայն յանդիմանակացութիւն նորա եւ կերպարանաւորութիւն մահուն՝ մշանջենաւոր բարեխօսութիւն է վասն ազգի մարդկան: — Յաւելցուք ուրեմն ի գործս յայս՝ աղօթս մաքուրս. բարձցուք զուխտս մեր ի վերայ Յիսուսի յանդիմանակացն: Ոչ կարեմք աղօթել, բայց Յիսուսիս. եւ ահա առաջի մեր կայ. արդ աղօթեսցուք նովաւ եւս քան զեւս:

Գառն անարատ, գառն՝ որ բառնաս զմեղս աշխարհի, ի բաց դարձո զաչս Հօր քո ի մեզ ցայ խոց [2]: Յանդիման լինիմ աթոռոյ նորա, յորմէ տեսանեմ ելանել փայլատակունս եւ ոլորտունս, եւ ձայնս ահաւորս եւ շառափնաթափս ի վերայ իմ եւ ի վերայ անօրէնութեանց խոց [2]: Ո՞ւր թաքեայց. ի կորուստ մատնիմ. շանթահար լինիմ: Այլ տեսանեմ ըզքեզ միջնորդ կացեալ, ո՛վ գառն անարատ. արդեւսս դու զկայծակունսն, եւ հուր արդարութեանն Աստուծոյ նուազի առաջի քո. ոչ առնում, յուսամ եւ կեամ: — Այլ գառնդ այդ քաղցրիկ եւ հեզիկ՝ ասէ ցիս յառաջոյ աթոռոյն. « Երթ, եւ մի եւս մեղանչեր [3] »: Այսու եւեթ պայմանաւ թողու զմեզս:

1 Եբր. Թ. 24. Է. 25: — 2 Յայտն. Դ. 5: — 3 Յովհ. Ը. 11:

Կ. Յիսուս զոհ մեր տուեալ ի խաչին, տուեալ ի Հաղորդութեան։ — Ղուկ. ԻԲ. 19–20։

Քանի՛ քաղցր է ինձ խոկալ ի բանս քո. քանի՛ քաղցրութիւն է ի բանիդ՝ որով հաստատես եւ յարակայես զկոչումդ, որ եւ զոհ է։ Ոչ ձանձրանամ ի խոկալոյ յայդ. քննեմ ամենայն մաստմբ. որոճամ խակ եւ յեղյեղեմ անդադար ի բերանի իմում՝ առ ի ճաշակել, առ ի ծծել զամենայն հիւթ նորին։ Այս է մարմին իմ որ տուեալ վասն ձեր, ըստ ներկայ ժամանակի. «Որ տուեալ լինի». Այս է արիւն իմ հեղեալ, վասն ձեր». ի նմին ժամանակի. «Որ հեղանի». այսպէս ասէ Մատթէոս, այսպէս Մարկոս, Ղուկաս, Պօղոս, զորս վկայք համաձայնք բանի քում։ Զորեքին եւս ասեն ըստ ներկայի. որպէս է ընթեռնուլ ի ընագիրսն. եւ լատինն որ թարգմանէ յապառնի, տացի, հեղուցու, ի խաչն վերաբերելով, յորում արդարեւ տուեալ լինելոց էր մարմին եւ հեղլոց էր արիւն, պահէ զներկայ ժամանակ ի Ղուկաս. Այս մարմին որ վասն ձեր տուեալ լինի [1]. որպէս զի ծանիցուք թէ ոչ միայն՝ յասելն Այս է մարմին իմ, իմանայր Քրիստոս զնոյն զմարմինն որ տուեալ լինելոց էր վասն մեր, այլ իմանայր եւս, զի նոյն մարմին որ մատնելոցն էր եւ տուեալ լինելոց

1 Hoc corpus quod pro vobis datur.

վասն մեր, տուեալ խակ էր կանխագոյն ի խորհրդական սրբագործութեանն, եւ այնպէս լինելոց էր յամենայն նուագս մատուցման պատարագին։ Հաւատացուք ուրեմն՝ զի ոչ միայն մարմինն Քրիստոսի տուեալ լինելոց էր վասն մեր ի խաչին, եւ եղեւ խակ, այլ զի եւ յամենայն նուագի յասելն զնոյն բան, նովին բանիւ ներկայապէս տուեալ լինի մեզ. Այս մարմին իմ որ վասն ձեր տուեալ լինի։ — Այսպա միտք բանին են, թէ ոչ միայն մարմինն այն տուեալ է մեզ ի հաղորդութեան, «Առէք կերայք, այս է մարմին իմ», այլ եւ զի տուեալ է ի նմին՝ վասն մեր, ընծայեալ վասն մեր, որպէս եղեւն ի խաչին. եւ այս յայտ առնէ զի եւ աստանօր զոհ մեր է նա, եւ դարձեալ նուիրի ասա, թէ պէտ եւ այլով օրինակաւ։ Արդ բանն՝ «Տուեալ վասն ձեր» ասի զՅիսուսէ ի խաչին, ասի եւ զՅիսուսէ ի հաղորդութեան, եւ ի դէպ դայ երկաքանչիւր եւս պայմանի Յիսուսի՝ մարմնոյն ներկայ եղելոյ յերկոսին եւս։ Վասն այնորիկ Փրկիչն ոչ միայն ներկայ ժամանակաւ խօսի առ ի ցուցանել՝ եթէ ասա է որպէս եւ էն ի խաչին՝ ի տալն մեզ զինքն ներկայապէս, այլ եւ ընտրէ ասացուած՝ որ պատշաճիցի սրբազան մարմնոյ իւրում յերկոսին եւս պայմանն։ Եթէ ասացեալ էր, Այս է մարմին իմ որ խաչեցաւ, բեւեռօք վիրաւորեցաւ, եւ ի մահ մատնեցաւ վասն ձեր, չէր ի դէպ ասել թէ պատշաճիցի այդ ի հաղորդութեան, զի ոչ մեռանի ի սմին. եւ անկ էր բացատրել հարկաւորապէս

եւ սոսկապէս, եթէ Այս է մարմինն որ ի խաչ
ելանիցէ վասն ձեր, եւ աւանդեսցէ ի նմին զոգի
իւր ի փրկութիւն ձեր: Այլ ասաց. «Այս է
մարմին իմ տուեալ», որ ի ճահ գայ երկոցուն
եւս պայմանացն. մարմինս այս տուեալ է ի
խաչ. նոյն մարմին տուեալ է եւ ի հաղորդու-
թեան. եւ յերկոսին եւս դէպ՝ տուեալ վասն
ձեր: Անդէն ընդ լինելն ի հաղորդութեան առ
ի տուեալ լինել ձեզ, տուեալ է ձեզ. մինչեւ
տուեալ ձեզ յուտել, բանն Քրիստոսի յան-
դիման կարգէ զայն. եւ այն իսկ յանդիմանա-
կացութիւնն՝ վասն ձեր է: Քրիստոս յանդի-
ման կայ վասն ձեր առաջի Հօր իւրոյ. յանդի-
ման կայ ձեզ, նուիրէ զանձն վասն ձեր. և յան-
դիմանակացութիւնն իսկ՝ ամենազօր բարեխօ-
սութիւն է վասն ձեր: Ահա զայս գործէ ի հա-
ղորդութեան պատուական ասացուածն՝ «Այս
է մարմին իմ»:

Այլ միթէ եւ այլքն ասացուածոց՝ զոր սրբա-
զան գրիչքն աւանդեցին, չիցէ՞ն նովին ընտրու-
թեամբ արտասանիչք, եւ չպատշաճիցէ՞ն զու-
գապէս երկոցուն եւս պայմանաց ներկայու-
թեան Քրիստոսի: Տեսցուք, ընթերցցուք, քնը-
նեսցուք: «Այս է արիւն իմ հեղեալ». հեղեալ
է ի խաչին. այլ միթէ չիցէ՞ հեղեալ եւ ի բաժա-
կին: Միթէ չիցէ՞ ի բաժակիդ յայդմիկ փրկաւէ-
տագոյն հեղումն առ Աստուած՝ ի փրկութիւն
անձանց մերոց: Է անդ արիւն հեղլի ի վերայ
հաւատացելոց. անդ է ի վիճակի հեղման եւ ընդ
հեղանիւթ տեսակաւ, որոյ յատուկ է հեղա-

նիլն: Արիւնն որ հեղաւ ի խաչին եւ հոսեաց
յամենայն պատառուածոց երակաց Փրկչին,
հեղու դարձեալ ի բաժակին յայնմիկ՝ յամենայն
վերաց նորին, եւ առաւել ի սրբազան կողին.
յայս սակս սակաւ ինչ ջուր խառնեմք ի բաժա-
կին, ի յիշատակ ջրոյն՝ որ ընդ արեան հոսեցաւ
ի կողէն բացելոյ: — Տէր Յիսուս, դու ես բան.
եւ բանք քո ասացան քոյինավայել ընտրանօք.
յասելդ «Այս է արիւն իմ հեղեալ վասն ձեր»,
ներկայ եղանակաւ, նշանակես ինձ՝ եթէ հեղաւ
վասն իմ ոչ միայն ի խաչին, այլ զի հեղանի
վասն իմ եւ ի Թողութիւն մեղաց իմոց՝ ի բա-
ժակին, առ հաւատարիմ առնել ինձ, առ վե-
րածել յիս եւ առ յարակայել մշտնջենաւորա-
պէս զամենազօր բարեխօսութիւնդ՝ զոր վասն
իմ արեամբդ այդու առնես:

Որոճեսցուք դարձեալ զսրբազան բանդ.
Այս է մարմին իմ տուեալ վասն ձեր, ըստ ա-
ւետարանչին Ղուկայ. իսկ Պօղոս փոխանակ
այսր բանի՝ ասէ. Այս է մարմին իմ բեկեալ
վասն ձեր[1], ըստ յոյն բնագրին. եւ զի՞նչ կա-
միցի ասել բանդ այդ՝ ըստ ոճոյ Սուրբ Գրոց:
— Եսայի մեկնեաց մեզ զայդ, ասելով, «Բար-
դեա զհաց քո քաղցելոց[2]». տուր նմա զհացդ,
հան նմա մասն. ապա քաշ մեկնաբանէ Պօղոս
զբանն՝ Այս է մարմին իմ տուեալ վասն ձեր,
բանիւն՝ Այս է մարմին իմ բեկեալ վասն ձեր:
Մարմինն այն փոխեալ է ի վիճակ տուեալ լի-

1 Ա. Կորն. ԺԱ. 24: — 2 Ես. ԾԸ. 7:

նելոյ մեզ, բաշխելոյ մեզ, եւ բեկանելոյ վասն մեր ի հաղորդութեան. եւ անդէն ընդ մտանելն յայդ վիճակ՝ արդէն բեկեալ է եւ տուեալ վասն մեր, ըստ սահմանելոյն եւ ըստ բանից Քրիստոսի: Այ՝ սոյն խակ ասացուած վերաբերի եւ առ մարմինն ի խաչին, առ մարմինն սրբորեալ հարուածովք եւ խոցեալ վերօք, կախեալ ի խաչի՝ այնպէս բռնաբար, զի յամենայն կողմանց երակքն պատառեալք՝ վտակս հոսեն արեան: Արդ, բառն բեկման ի դէպ գայ երկոցուն. եւս պայմանացն, եւ խաչեցելոյ Յիսուսի եւ պատարագեցելոյ Յիսուսի. յերկոսին եւս պայմանքդ՝ տուեալ լինի մարմինն, յերկոսին եւս բեկանի. նոյնպէս եւ արիւնն: Այնեանց ուրեք տուեալ է մեզ մարմինն. ամենայն ուրեք զոհ մեր է այն. ամենայն ուրեք հեղանի վասն մեր արիւնն. հեղաւ վասն մեր ի խաչին, հեղանի վասն մեր եւ ի սրբազան բաժակին:

Ո՛վ, որպիսի՞ պատարագ, Քրիստէ՛ իմ. քանի՞ քաղցր է խորհել ի բանս քո. նորանոր ճաշակս գտանեմ ի նմա՝ որպէս ի մանանայն. մարմին քո եւ արիւն՝ նուէրք իմ են, պատարագ իմ, զոհ իմ, եւ ի վերայ խաչին եւ ի վերայ սրբոյ սեղանոյն. եւ հանգոյն խաչին մատուցարան է եւ սեղանդ այդ: Այո, արդարեւ ստոյգ է բան Առաքելոյն. « Ունիմք մեք սեղան՝ ուստի ոչ ունին իշխանութիւն ճաշակել որք պաշտեն զպաշտօն խորանին » հնոյ, եւ ի սեղանն օրինաց յաբեալ կան: Առ ի հաղորդել սմին՝ պարտ է մատնել մտօք « ի տապանակն անձեռագործ:

ԿԱ. Հաղորդուրիւն՝ արիւն է նորոյ ուխտի:
— Մատթ. ԻԶ. 28:

Դառնամ վերստին նորով ախորժանօք ի բանս հաստատութեան խորհրդոյն, եւ գտանեմ զայս բան գորովալի. « Այս է արիւն իմ, նորոյ ուխտի »: Ոչ գիտեմ որպիսի՞ ինչ է ի բառիդ յայդմ՝ Ուխտի, որ ընդոստուցանէ եւ գորովէ զիս: Ուխտ՝ կտակ է աստանօր. գրաւական ժառանգութեան իմոյ. այլ հարկ է առ այս՝ մահ կտակողին: Բանամ զաստուածախօս Թուղթն՝ որ առ Եբրայեցիս, եւ գտանեմ ի նմին զբանքս. « Ուր կտակ է՝ հարկ է զմահ ի մէջ բերել ըզկտակագրին. զի կտակ յետ մահու հաստատուն է. ապա թէ ոչ՝ զիա՞րդ լցէ հաստատուն, մինչ կտակագրին կենդանի է: Ուստի եւ ոչ առաջինն (կտակ) առանց արեան նորոգէր: Քանզի իբրեւ պատմեցաւ ամենայն պատուիրանք օրինացն ի Մովսիսէ՝ ժողովրդեանն, առեալ զարիւն ցլուցն եւ նոխազացն... զկտակարանաւքն իսկ եւ զամենայն ժողովրդեամն սրսկեաց, եւ ասէ. Այս է արիւն կտակին՝ զոր պատուիրեաց ձեզ Աստուած [1] »: Տեսանեմ արդ աւադիկ զերկնաւորն ժառանգութիւն տուեալ կտակաւ՝ առ որդիսն նորա. Քրիստոս է կտակագիրն. հարկ

1 Եբր. Թ. 16–8:

է զի մեռցի։ Կտակ՝ ոչ է հաստատուն եւ ոչ ընդունի զվերջին զօրութիւն՝ բայց մահուամբ կտակագրին. մինչեւ զայն վայր ոչ ինչ զօրէ, եւ մարթ իսկ է փոփոխել զայն. վասն այնորիկ համարի սրբազան եւ անդրժելի. տուչութիւն լիակատար զօրութեանն, եւ իշխանութիւն ժառանգին ի ստանալ զթողեալն ի կտակագրէն՝ մահուամբն կատարի։ Այս ամենայն լիովին կատարի ի Յիսուս, որ մեռանի առ ի հաստատուն առնել մեզ զժառանգութիւնս զայս. վասն այնորիկ եւ հին ուխտն՝ որ նորոյս էր օրինակ, ոչ առանց արեան սրբեցաւ. ամենայն ժողովուրդն եւ գիրք օրինացն եւս՝ յորում խոստումն ժառանգութեանն բովանդակեալ էր՝ սրբէին սրսկմամբ արեան. ամենայն ինչ արիւնայ. յամենայնի մահուն կերպարան տեսանի. եւ ի սրսկել Մովսիսի զարիւնն զգրովք ուխտին, զկտակի օրինակ տայր նմին, ասելով՝ ըստ մեկնութեան Պօղոսի, «Այս է արիւն կտակին՝ զոր պատուիրեաց (կամ պատրաստեաց) ձեզ Աստուած[1]». զայս կատարեաց Յիսուս՝ ասելովն, «Այս է արիւն, ոչ հնոյ՝ այլ նորոյ ուխտի»։

Արդ բանքս այսոքիկ, եւ յարընչութիւն նոցին ընդ հնոյ օրինակաց՝ յայտ զայս առնեն, զի արիւնն Յիսուսի հեղեալ ի խաչին, եւ հեղեալ ամենեւին իրապէս եւ ստուգապէս, թէպէտ եւ այլով եղանակաւ, է «արիւն նորոյ ուխ-

1 Եբր. Թ. 18։

տի». այսինքն է՝ արիւն հեղեալ առ ի տալոյ նմա լիովին զօրութիւն։ Եւ կտակք՝ զորս պահանջեն օրէնք դրել ձեռամբ կտակողին. իսկ օրինաց կտակին Յիսուսի՝ վայել էր հաստատել եւ իբրու բովանդակ դրել արեամբ իւրով։ Պատճէն կտակիս՝ է գործն յորում դրեցաւ, այս է՝ Հաղորդութիւնն։ Խոստմունք Քրիստոսի եւ նորոյ ժառանգութեանն՝ եղեն մեզ ի ձեռն մահուան նորին, որով թափէ զմեզ ի դժոխոց եւ երաշխաւորէ զերկինս. եւ պատճէնն յորում խոստմունքն յօդեալ են, մուրհակն՝ յորում կամք եւ հրամանք Հօր մերոյ դրեալ են, պատճէնն այն, մուրհակն այն՝ ամենայնն արեամբ նորին գրեալ է. միով բանիւ, կտակ նորա՝ Հաղորդութիւն է։ — Եւ արդ, ո՞ ոչ խանդաղատիցի՝ լսելով զոր ամենայն զբանս Քրիստոսի, «Այս է արիւն իմ նորոյ ուխտի», կամ որպէս Ղուկաս փոխաբերէ, «Այս բաժակ է նոր ուխտ՝ իմով արեամբ վասն ձեր հեղլոյ[1]». զի այսպիսի է բնութիւն կտակիս՝ զի բովանդակ դրեսցի արեամբ կտակողին։ — Եկայք ընթեռնուլ՝ քրիստոնեայք, ընթեռնուլ զկտակս զայս զարմանալի. եկայք լսել զհրապարակագոչ քարոզուսին նորին ի մատուցման սրբոյ Խորհրդոյն. եկայք վայելել զբարութիւնս Քրիստոսի ձերոյ, Հօր ձերոյ, զաստուածային կտակագրին. որ արեամբ իւրով գնէ զժառանգութիւն ձեր, եւ նովին արեամբ գրէ զկտակն՝ որով թողու ձեզ զայն։

1 Ղուկ. ԻԲ. 20։

Եկայք ընթեռնուլ զկտակդ զայդ. եկայք ստանալ, եկայք վայելել. ձեր է ժառանգութիւնն երկնային:

ԿԲ. Նոր Ուխտ է արեամբ Փրկչին մերոյ:

«Այս բաժակ նոր ուխտ իմով արեամբ». այսպէս փոխաբերեն Ղուկաս եւ Պօղոս զասացեալն ի Մատթէէ եւ ի Մարկոսէ՝ «Այս է արիւն նորոյ ուխտի[1]»: Զկնք երկայեալ զի ի տալ Քրիստոսի զմարմին իւր՝ զայս բանս ասաց, «Այս է մարմին իմ». քանզի ամենեքին որք գրեցին զհաստատութիւն խորհրդոյն, Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Պօղոս՝ միաբան այսու բանիւք աւանդեն: Զկնք դարձեալ երկայե՛ զի եւ նովին բանիւք՝ որով զմարմինն սրբագործեաց՝ եւ զարիւնն նոյնպէս սրբագործեաց. այսինքն, ըստ աւանդելոյն ի Մատթէոսէ եւ ի Մարկոսէ, «Այս է արիւն իմ նորոյ ուխտի[2]»: Այլ քանզի էր ինչ մտադիր ինն ուշով նկատելի՝ յ'արեան անդ նորոյ ուխտին, եւ զի անկ էր արեանն հեղլոյ վասն մեր ի խաչին, եւ հեղլոյ վասն մեր եւ փոխելոյ յընդկելի ի Հաղորդութեան, լինել հաստատութիւն եւ վկայ հաւատարիմ յետին կամաց Հօր մերոյ,

1 Ղուկ. ԻԲ. 20: — Ա. Կորնթ. ԺԱ. 25: — 2 Մատթ. ԻՁ. 28: — Մարկ. ԺԴ. 24:

Ղուկաս եւ Պօղոս պարզաբանեն այսպէս. «Այս բաժակ նոր ուխտ է՝ իմով արեամբ». որպէս թէ ասիցէ. Զոր օրինակ թուղթս յորում գրեալ է ձեռամբ Հօր ձերոյ յետին կամք իւր՝ կտակ նորին է, այսպէս եւ բաժակս սուրբ՝ կտակ է Յիսուսի, արեամբն բովանդակեալ ի նմին, եւ որոյ յետին կամք գրեալոյ էին:

Զկնք պարզագոյն քան զբանս Քրիստոսի՝ զոր ասացն. «Այս է մարմին իմ. Այս է արիւն իմ նորոյ ուխտի». չկնք բնաւ առակ օրինակի ի դմին. եւ ամենայնն սոյգ է ըստ գրոյն: Ի բանս անդ Ղուկայ եւ Պօղոսի, կամ մանաւանդ ի բանս Քրիստոսի՝ ըստ փոխաբերելոյ երկոցուն սրբազանեալ գրչացս, «Այս բաժակ է նոր ուխտ իմով արեամբ», ձեւաւոր իմն է ոչ՝ ասացուածոյն, այլ դիւրիմաց եւ ընտրելագոյն եղանակաւ, նման այնմիկ որ կտակ կոչէ զմուրհակն յայտարար յետին կամաց կտակողին: Այլ ընդ նմին հզօրագոյն եւս օրինակաւ նշանակի ստուգութիւն արեանն. քանզի յայտնապէս նշանակի այս, զի թէ բաժակն որ ընծայի մեզ՝ եցէ ուխտ Քրիստոսի, եթէ եցէ մուրհակ սրբազան՝ յորում յետին կամք իւր բացարին, ի ձեռն արեանն Քրիստոսի է բովանդակեալ ի նմին. քանզի կտակն այն՝ որպէս եւ տեսաք՝ գրեալ իմն էր, ոչ իւրով իսկ ձեռամբ, այլ նորին իսկ արեամբ կտակողին: Եւ զայս իմաստ քաջայայտ առնեն բանք Ղուկասու. քանզի եթէ թարգմանել ոք կամիցի ի ընդգրէն՝ բառ առ բառ, հարկ է թէ բանն «հեղեալ վասն ձեր», ոչ

յարիւնն վերաբերցի, այլ ի բաժակն, և հարկ է թարգմանել այսպէս. Այս բաժակ հեղեալ վասն ձեր՝ նոր ուխտ է խմով արեամբ. ոչ միայն արիւնն հեղեալ է վասն ձեր, այլ բաժակն. որպէս եւ սովորութիւն է հանապազ ասել վասն հեղուկի թափելոյ, եթէ հեղաւ ամենն յորում էր այն: Այսպէս եւ աստ խմացուք զբաժակն հեղեալ վասն մեր. այսինքն, եթէ ոչ միայն արիւնն որ ի նմին՝ հեղաւ վասն մեր ի խաչին, այլ ցորչափ հեղանի նա ի բաժակին եւ անտի ի վերայ մեր, հեղումն է ի փրկութիւն մեզ, եւ նուիրումն Աստուծոյ:

Գոհացուք զՔրիստոսէ, որ այսքան բազմապատիկ օրինակաւք եւ այսպէս պարզ եւ մեկին բացատրեաց զլոհն, զոր հանապազորդ մատուցանէ վասն մեր ի Հաղորդութեան: Տեսցուք տակաւին ի նմին հեղեալ վասն մեր զարիւնն փրկութեան՝ Աստուծապէս, որպէս ի խաչին, թէպէտ եւ ընդ օտար կերպարանաւ: Հզօր է նա ի կատարել զամենայն զոր ասացն. աստ է արիւն նորա. լի է նովիմբ բաժակս այս, յորում հեղու նա զոր ամենայն. այսու արեամբ գրեալ է կտակ Հօր մերոյ: Եւ ո՞ր իցէ կտակն՝ եթէ ոչ այն զորմէ գրեալ է. «Այս է ուխտն զոր ուխտեցից... տաց զօրէնս իմ ի միտս նոցա, եւ ի սիրտս նոցա գրեցից զնոսա... եւ զմեղս նոցա ոչ եւս յիշեցից [1]»:

Եւ առ ի՞նչ կտակիցէ մեզ զուխտ քաւու-

1 Երեմ. ԼԱ. 31, 33, 34:

թեան մեղաց. — որպէս զի բարձցէ զարդելիչն մոլց մերոց յերկինս, որ Աստուծոյ ժառանգութիւն մեր է: Եւ վասն էր կտակաւ կացուսցէ զայս: — Առ յուշ առնելոյ մեզ՝ եթէ առ ուսնել իրաւունս կտակելոյ մեզ զերկնաւորն ժառանգութիւն, հարկ էր մեռանել կտակողին մեզ զայն՝ իւրով ուխտիւ: Եւ վասն էր տայցէ մեզ զարիւն նորոյ ուխտին, կամ՝ որպէս Ղուկաս եւ Պօղոս փոխաբանեն, ինքեալ, հաստատեալ, գրեալ արեամբ կտակողին: — Առ ի հաստատել զհաւատս մեր եւ ի բորբոքել զսէր մեր: Եւ ո՞ ոչ խանդաղատիցի՝ տեսանելով կտակ այսպիսի օրինակաւ գրեալ: Քանի՜ մեծ է ժառանգութիւնն ուխտեալ մեզ այսպիսի վսեմական եւ պատուական կտակաւ: Ո՞ր սիրտ սալացեալ՝ տեսանելով հեղուլ տակաւին ի բաժակէ այսի սրբոյ՝ զարիւն ուխտիդ՝ որով մեղք մեր ջնջին, ո՞չ գարշիցի ի նոցունց, եւ ո՞չ արմատաքի խլիցէ զնոսին, յանդիման կալով արեանն եւ զօրութեամբ նորին:

ԿԳ. Պատարագ՝ հանապազորդութիւն է Ընդրեաց Քրիստոսի:

Արդ, ի միտ առցուք, ո՛ քրիստոնեայք, զի ամենայն բարեօք լի եւ առաւելեալ է զոհս այս: Մի անգամ մեռաւ Յիսուս, եւ չէր մարթ այնու օրինակաւ միւսանգամ նուիրիլ. ապա թէ

ոչ՝ հարկ էր անբաւական ասել զզօրութիւն մահուան. այլ զոր արար միանգամ այնու օրինակաւ, այսինքն է նուիրել արիւնաթաթաւ եւ վիրալից, եւ աւանդել զոգին ընդ արեանն, զնոյն հանապազորդէ զոր ամենայն՝ նորով իմն օրինակաւ յերկինս, ուր, որպէս տեսաք ընդ Պօղոսի, ոչ դադարէ յանդիման լինել վասն մեր, եւ յեկեղեցւոջ՝ ուր զոր ամենայն առաջի կայ ընդ այսու կերպարանաւք մահուան: — Ո՛վ ժողովուրդ գնեալ, խուսմբ առեալ գումարեալ ի բարեբանել զողորմութիւնս Հօր քո երկնաւորի, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի՝ զենլոյ վասն քո: Ուր մարմին Յիսուսի է՝ անդ եւ տեղի գումարման քո. ուր մարմինս այս՝ անդ ժողովեսցին արծուիք [1]: Եւ զի՞նչ արասցուք անդ: — Զի՞նչ արար Յիսուս: « Էառ զհացն, օրհնեաց գոհացաւ ». ասաց աղօթս սուրբս. « Էառ բաժակ », եւ նոյնպէս արար: Զնոյն նմին նման առնէ եւ քահանայ. ուստի մարմինն այն, ըմպի արիւնն այն. գոհութիւնք մատուցանին, եւ ի բաց արձակին: Քաջ միտ դիցուք. հետեւեսցուք քահանային՝ որ յանուն մեր գործէ, խօսի փոխանակ մեր. յիշեսցուք եւ զառաջնոցն սովորութիւն, իւրաքանչիւր ուրուք զիւր հայ եւ զիւր գինին մատուցանելով՝ հայթայթել զնիւթ երկնաւոր զոհին: Զեւ արարողութեանն փոխեցաւ, ոգին մնայ: Ամենեքին մեք մատուցանեմք ընդ քահանային. հաւանիմք ամենայնի զոր գործէն, ամենայնի՝ զոր ասէն: Եւ զի՞նչ ասիցէ: — Աղօթս արարէք, եղբարք, զի հաճոյ լիցի Աստուծոյ մերոյ պատարագս իմ եւ ձեր: Եւ զի՞նչ տայք պատասխանի: — Ընկալցի Տէր ի ձեռաց քոց: Բա՛ւական, պատարագս մեր և քո: Եւ զի՞նչ դարձեալ ասիցէ քահանայն: — Յիշեա, Տէր, զծառայս քո, վասն որոյ մատուցանեմք քեզ: Ա՞յսչափ միայն: — Յաւելու նա. « Եւ որք մատուցանեն քեզ զպատարագս զայս »: Եւ արդ մատուցցուք եւ մեք ընդ նմին. մատուցցուք զՅիսուս. մատուցցուք զանձինս մեր ընդ համօրէն կաթողիկէ եկեղեցւոյ՝ սփռելոյ ընդ ամենայն երեսս երկրի:

Օրհնեմ քահանայն եւ գոհութիւն մատուցանէ ի վերայ հացին եւ գինւոյն՝ որ փոխելոց է ի մարմին եւ յարիւն. աղօթէ վասն ամենայն եկեղեցւոյ. Օրհնեցէք, գոհացարուք, աղօթեցէք: Ժամանեալ հասանէ յառանձինն յայն օրհնութիւն, որով սրբագործի մարմինն այն եւ արիւն: Լուարուք, հաւատացէք, հաւանեցարուք: Ընծայեցէք ընդ քահանային. ասացէք ամէն, յաղերսէն նորա, եւ յաղօթել: Եւ ահա աւադիկ, առաջի կայ. ներգործեցին աղօթքքն. ահաւադիկ Յիսուս այնպէս ներկայ՝ որպէս ի խաչին՝ ուր երեւեցաւն՝ անձամբ զանձն նուիրելով. այնպէս ներկայ՝ որպէս յերկինս է, եւ ուր յանդիման կայ վասն մեր առաջի երեսաց Աստուծոյ [1]: Այս նուիրագործութիւն,

1 Մատթ. ԻԴ. 28:

1 Եբր. Թ. 24, 26:

այս սուրբ արարողութիւն, այս պաշտօն արիւնալից՝ այլ ոչ արիւնաշաղախ, յորում մահ տեսանի յամենայնի, այլ կենդանի կայ նշխարն, այս է Ճշմարիտ պաշտօն քրիստոնէից. զգալի եւ հոգեւորական, խոնարհ՝ ընդ նմին եւ վսեմական:

Այլ դու, բաբէ, առաջի կալով այդքանոյ հրաշափառ խորհրդոյ, եւ ոչ մի հառաչանս արձակեցես ի վերայ մեղայ քոյ. եւ ոչ մի կերս ապաշաւանաց: Մարմնով միայն կաս առաջի: Իսկ Յիսուս մարմնով եւեթ կայցէ առաջի. միթէ ոչ եւ հոգի նորա ընդ մեզ էցէ: Եւ զի՞նչ կամիցի ասել քահանայն ի տալն ողջոյն մեզ եւ յասել. Տէր ընդ ձեզ (Խաղաղութիւն ամենեցուն). եւ դու պատասխանես. Եւ ընդ հոգւոյդ քում: Ապաքէն ընդ հոգւոյ քահանային, ընդ հոգւոյ զոհին՝ խնդրես միանալ. եւ տակաւին մարմին քո կայ անդանօր որպէս մեռեալ, անհոգի, անհաւատ: Եւ արդ զի՞արդ, ոչ ենչ ոչ զգայցես. չառնուցցուս ի միտ՝ եթէ տեսակքդ սրբազանք՝ պատեանք իսն են յորս պարունակի մարմին Փրկչին քո, որպէս ի պատանան՝ որովք պատեցաւ ի մահուն: Առ գերեզմանի կաս, յորում եդաւ հայր քո մեռեալ խոցուածովք վիրաց, առ ի փրկել զքեզ. եւ տակաւին թըմբեալ կայցես: Ընդոստնուս ի բանիցս. այլ ահիցես զի Յիսուս որ առաջիդ կայ՝ չկամի քեզ եւ ոչ դոյզն ինչ խեթ ունել ընդ եղբօր քում, կամ որպէս նա ինքն ասաց, եթէ եղբայր քո ունիցի ինչ խեթ զքէն: Այդպէս եւ յայլոց

անկարդ գնացիս քոց գարշի նա[1]: Երթայք ի. նէն, կեղծաւորք, որք շրթամբք եւեթ մեծարեալ պատուէք, եւ սրտիւք հեռացեալ մեկուսի էք յինէն. ի բաց գնացէք[2]: — Ոչ այդպէս. եկայք. ոգի առէք, զգաստացարուք: Հառաչեցէք դէթ առ անգամ մի ի վերայ ողորմելի պայմանի հոգւոց ձերոց. ասացէք գոգէք. «Պատեցիս ինձէն զմեղս իմ, եւ դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղայ իմոց[3]»: Այո, մարթ է քեզ խոստովանել այնքան զըղջմամբ եւ սրտի մտօք, մինչեւ արժանի լինել ներելոյ թողութեան:

ԿԴ. Հաղորդութիւն. Պարտ է հաղորդել գէր հոգւով:

Հասանէ ժամ հաղորդութեան. ժամ ահաւոր. ժամ ըղձալի: Հաղորդեցաւ քահանայն. պատրաստ լեր եւ դու. ահա ընդ հուպ հասցէ եւ քեզ կարդ: Հաղորդեաց նախ հոգւով. հաւատա, պաշտեա, ըղձա: Դա է կերակուր իմ. դա է կեանք իմ. փափագեմ զմին, կամիմ զայդ: Զիցէս պատրաստ ի հաղորդել. լաց եւ հառաչեաց: Եղուկ մեզ. ուր իցէ ժամանակն այն՝ յորում հաղորդողք միայն առաջի կային. յորում ի բաց հանէին, կշտամբէին, կամ դէթ

1 Մտթ. Ե. 23: — 2 Ն. ԺԵ. 7–8: — 3 Սղմ. ԼԱ. 5:

յանդիմանէին զայնոսիկ՝ որք կային առաջի եւ ոչ ճաշակէին։ Եւ արդարեւ, զի՞նչ լցեալ կալ առաջի եւ ոչ ճաշակել, եթէ ոչ՝ անպատուել զկոչունսն եւ խոտել զկերակուրսն։ Որպիսի՞ արհամարհանք, որպիսի՞ խօթութիւն, որպիսի՞ զզուանք։ Այլ չէ արդ սովորութիւն։ — Լուր, զինչ ասէ Տրիտենդեան ժողովն. Փափագեր Սուրբ ժողովս՝ զի որք առաջի կան պատարագին՝ հաղորդ եւս լինէին։ — Եւ առ իսկ՝ փափագեցէ ժողովն, բայց զի փափագէ եւ Յիսուս. զի ոչ վայրապար փոխն նա ի կերակուր՝ այլ զի ճաշակիցի։ Արդ եղէ՛ եկեղեցւոյ՝ զի որք միանգամ կայքդ առաջի պատարագին՝ հաղորդեսջիք եւս։ Սակայն չասէ ժողովն՝ փափագի, այլ փափագեր[1]։ Եւ վասն ի՞ր։ — Զիշխէ Եկեղեցի բացարձակ յայտնել զփափագն առ մեծագոյնդ բարեաց. փափագեր՝ զի ամենայն որ այդպէս առնէր, ամենայն որ լինէր արժանի։ Փափագեցարուք եւ դուք, քահանայքդ, զի ժողովուրդդ առ հասարակ ընդ ձեզ հաղորդեսցի։ Եւ դուք ամենեքին՝ որք կայք առաջի՝ կատարեցէք զփափագ Եկեղեցւոյ եւ զպաշտօնէի նորին։ Եւ եթէ ոչ հաղորդեսջիք, ասացից միւսանգամ, գէթ լացէք եւ ողբացէք, եւ ի միտ առէք դողալով, եթէ անկ էր քրիստոնէի կեալ այնպէս՝ զի կարիցէ հաղորդել զոր ամենայն։ Խոստացարուք Աստուծոյ՝ պատրաստ լինել վաղ վաղ ի հաղորդութիւն. եւ գոնեա հաղորդիք հոգեւոր-

1 Optaret sancta Synodus.

բասէս։ Հաղորդի քահանայն. կատարէ զխորհուրդն, տրամելով զի ոչ ոք գտաւ հաղորդակից։ Զեն ինչ նմա մեղք. զի թէպէտ եւ ոչ ոք մերձեցցի, սակայն արժան է ուղղել զսեղանն։ Այդպէս առատ եւ բարերար է տանուտէրն մեծ։ — Արդ կատարեցաւ պատարագն. մեկնեցարուք տրամելով զի ոչ ընկալայք լիովին ըզբաժինն որ վիճակեալ էր ձեզ։

ԿԵ. Գոնուրիւն։ — Մտ. Ի՛Զ. 30։

«Եւ օրհնեցին. եւ ելին ի լեառն Ձիթենեաց»։ Ելեալ գնացին արդարեւ, այլ մինչեւ էր մեկնեալ Յիսուսն՝ բազում անգամ անցք անցին, զորս տեսցուք յառաջիկայդ։ Միա դեցուք առ վայր մի օրհնութեանս, երգոց գոհութեան եւ խնդութեան, որով աւարտեցին Փրիսատոս եւ աշակերտքն՝ զխորհուրդն սրբութեան։ Զի՞նչ կարէին երգել՝ որք յագեալքն էին Յիսուսիւ եւ արբեալ գինեաւ բաժակի նորին, բայց զայն՝ որով լցեալն էին։ «Արժան է Գառնդ զնեալ՝ առնուլ զմեծութիւն եւ զիմաստութիւն, եւ զզօրութիւն եւ զպատիւ եւ զփառս, եւ զօրհնութիւն[1]։ Եւ ամենայն արարածք որ են յերկինս եւ յերկրի եւ ի ծովս, եւ որ ի նոսա, լուայ զի ասէին. Որ նստի յաթոռն եւ

1 Յայտն. Ե. 12–3։

Գառնն՝ օրհնեալ բարձրացեալ եւ փառաւորեալ, յաւիտեանս յաւիտենից»։ Երգէ աշխարհ՝ զաշխարհիս հրճուանս. իսկ զինչ մեք՝ որք զերկնաւոր պարգեւսն ընկալաք. զինչ երգեսցուք, բայց եթէ զհրճուանսն յաւիտենական։ Աշխարհ՝ երգէ զախտս կրեցն, զանհանճար եւ զանիրաւ տուփանսն. իսկ զինչ երգեսցուք մեք. բայց զսիրելին մեր։ Աշխարհ հրաչակէ առհասարակ զպեղծ բերկրանսն. իսկ զինչ հռչակեսցեն բերանք մեր՝ յեւ ըմպելոյ զգինին անուշարար կուսից[1], բայց զերգս ժուժկալութեան եւ պարկեշտութեան։ Լցեալք մահուամբ բըն Քրիստոսի՝ որ յանդիման մեզ ցուցաւ, եւ ի մարմնոյ զոհի նորա, զինչ երգեսցուք մեք, եթէ ոչ՝ զի «Աշխարհ ի խաչ ելեալ է վասն իմ, եւ ես՝ աշխարհի[2]»։

Մինչեւ ասացեալ զգոհութիւնս ցայս, մինչեւ երգեալ զերգ փրկութեան ազգի մարդկան, մի մեկնիր ի սեղանոյ այսի։ Բա՛ւական տես, քանի՛ խնդութեամբ երգեցին Մովսէս եւ ժողովուրդն հին՝ զերգ փրկութեան իւրեանց՝ յելանելն Յեգիպտոսէ եւ յանցանելն ընդ ծովն Կարմիր։ Երգեա՛ եւ դու ժողովուրդ փրկեալ, զմովսիսականն երգ, եւ զերգ Գառնն, ասելով. «Ո՛րպէս զի մեծամեծ եւ սքանչելի են գործք քո, Տէր Աստուած ամենակալ. արդար եւ ճշմարիտ են ճանապարհք քո, թագաւոր ամենայն հեթանոսաց։ Եւ ո՞վ ոք ոչ երկիցէ

1 Զաքար. Թ. 17։ — 2 Գաղատ. Զ. 14։

եւ փառաւորեսցէ զանուն քո սուրբ. զի դու միայն ես սուրբ եւ արժանի երկրպագելոյ. զի ամենայն հեթանոսք եկեսցեն եւ երկիր պագցեն առաջի քո, Տէր, յորժամ արդարութիւն քո յայտնեսցի[1]։ Զի մահուամբ քով խափանեցեր զայն որ ունէր զիշխանութիւն մահուն[2]. եւ զիշխան աշխարհիս այսորիկ ի բաց անկաւ[3]։ Դու ընչեցեր զձեռագիր մերոյ հակառակութեանն հրամանովք քովք. որ կայր մեզ հակառակ՝ բարձեր զայն ի միջոյ, եւ բեւեռեցեր ընդ խաչափայտին. մերկացեր զիշխանութիւնս եւ զզեղեցութիւնս. յայտ յանդիման խայտառակեցեր՝ նշաւակեալ զնոսա խաչիւ քով[4]»։ Եւ արդ յիշատակաւ այսպիսւոյ սքանչելի քո յաղթութեանդ, մատուցանեմք քեզ եւ քեզ Հօր քում երկնաւորի՝ զպատարագս զայս օրհնութեան եւ գոհութեան, որ իսկապէս ոչ այլ ինչ է՝ բայց դու ինքն. քանզի չիք մեր այլ ինչ՝ բայց դու, ի նուէր գոհութեան ամենայն ընծայիցս՝ զոր ի ձեռն քո ընկալաք։

1 Յայտն. ԺԵ. 3–4։ — 2 Եբր. ԺԱ. 14։ — 3 Յովհ. ԺԲ. 31։ — 4 Կող. Բ 14–5։

ՀՀ Ազգային գրադարան
NL0028044